ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2020 Թ. ԱՊՐԻԼ – 2021 Թ. ՄԱՐՏ)

ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 2016-2018 թթ. և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինան-սավորող համահայկական հիմնադրամի ֆինանսվորմամբ հետազոտական խմբի կողմից «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» թեմայի շրջանակներում իրականացվել էր հետազոտություն, որի արդյունքում 2019 թ հրատարակվեց նույն վերնագրով ստվարածավալ կոլեկտիվ մենագրությունը:

Հաշվի առնելով թեմայի գիտաքաղաքական կարևորությունը և տարողությունը, որոշվեց այս ուղղությամբ հետազոտությունները շարունակել, և 2020 թ. ավելի նեղ մասնագիտացված հետազոտական խումբ ձևավորվեց, որի առջև ավելի կոնկրետ գիտական խնդիր դրվեց՝ հետազոտել Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը: Ի տարբերություն նապխորդ հետազոտական խմբի, այս դեպքում կոլեկտիվ մենագրության աշխատանքների մեջ մասնագետ ընդգրկվեց նաև Սփյուռքից:

Նշված գիտահետազոտական թեմայի շրջանակներում հաշվետու մեկամյա ժամանակահատվածում հետազոտական խմբում ընդգրկված գիտաշխատողները կողմից ուսումնասիրվել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված մշակութային և նյութական վնասների վերաբերյալ արխիվային փաստաթղթերում,

ականատեսների վկայություններում և մամուլի նյութերում պարունակվող հսկայածավալ նյութեր, որոնցից հավաքագրված տեղեկությունները համակարգվել ու դասակարգվել են:

Ակնհայտ է, որ թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ զանգվածային բնաջնջման ինչպես նաև նրա մշակութային ժառանգության ոչնչացման ու նյութական արժեքների բռնազավթման քաղաքականությունը միայն Արևմտյան Հայաստանի նահանգներով չի սահմանափակվել, այլ ընթացել է Օսմանյան կայսրության ողջ տարածքով՝ բոլոր այն բնակավայրերում, որտեղ հայեր են բնակվել: Այս իրողությունը ամրագրելու նպատակով կոլեկտիվ մենագրության շրջանակներում Արևմտյան Հայաստանի նահանգներից բացի ուսումնասիրության են ենթարկվել մասնավորապես Օսմանյան կայսրության Իզմիթի և Ադանայի նահանգներում հայ բնակչության մշակութային ժառանգության ոչնչացման և ունեցվածքի բռնազավթման դրսևորումները, որոնք հանդիսանում են մեկ կենտրոնից ղեկավարվող ընդհանուր հայատյաց քաղաքականության առանձին դրսևորումներ:

Հետազոտական խմբի համակարգող, պ.գ.դ., պրոֆեսոր, Ա. Մարուկյանի կողմից կոլեկտիվ մենագրության շրջանակներում արխիվային՝ այդ թվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվային փաստաթղթերի, ինչպես նաև թեմային վերաբերող հետազոտությունների հիման վրա համակողմանիորեն ներկայացվել Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում, մասնավորապես Կիլիկիայում երիտթուրքերի, նրանց փոխարինած քեմալականների ու հանրապետական Թուրքիայի հաջորդ վարչակարգերի կողմից հայերի նյութական ունեցվացքին տիրանալու և մշակութային արժեքները յուրացնելու ու ոչնչացնելու «օրենսդրական» մեխանիզմների և դրանց գործադրման հատվածը:

Բացի դրանից ներկայացվել են նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ու Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացուների ազդեցությանը վերաբերող բաժինները: Այս համատեքստում կատարվել է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի քննական վերլուծություն:

Հետաղոտական խմբի սփյուռքահայ մասնագետ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Գասպարյանի կողմից ներկայացվել է ցեղասպանության իրագործմանը զուգահեռ մշակութային

ցեղասպանության (կուլտուրոցիդի), ինչպես նաև նյութական ունեցվածքի զանգվածային բռնազավթման հետևանքով հայ ժողովրդին հասցված մշակութային և նյութական վնասների ծավալների հստակեցման, հաշվառման ու դրանց վերականգնման (հատուցման) մեթոդաբանության ուսումնասիրության բաժնինը:

Հետազոտական խմբի անդամ, Մատենադարանիո գիտաշխատող Ա. Աստոյանի կողմից համատեղ հաետազոտության մեջ ներկայացվել է Իզմիթի գավառի հայերի տնտեսական վիճակի և Հայոց ցեղասպանության հետևանքով նրանց կրած նյութական կորուստներին նվիրված բաժինը, որում համգամանորեն լուսաբանված են Իզմիթի, Ադաբազարի, Կեյվեի, Գարամուսալի և Յալովայի (վերջին երկու գավառակներում հայկական բնակավայրերը սակավաթիվ էին, ուստի դրանք ներկայացված են միասին) գավառակների հայաբնակ քաղաքների, ավանների և գյուղերի հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի և տեղահանության ընթացքում նրանց կրած նյութական կորուստների մասին: Ուսումնասիրության այս հատվածում փորձ է արվել ցույց տալ Իզմիթի գավառի հայերի տնտեսական վիճակը, վեր հանել նրանց տնտեսության զարգացման առանձնահատկությունները: Թեև ուսումնասիրության մեջ ներկայացվել են Իզմիթի գավառի հայերի տնտեսական բարգավաճ վիճակի և ունեզրկման մասին բազմաթիվ փաստեր, սակայն չի հաջողվել հասնել անգամ նրանց կրած նյութական կորուստների մոտավոր սահմանին:

Հետազոտության տվյալ բաժնում մեծ տեղ է հատկացվել XIX դարի կեսերից գավառում գործած ընկերությունների գործունեությանը, քանզի դրանցով է պայմանավորված եղել գավառի հայության կրթական, մշակութային և տնտեսական զարգացումը: Սկզբնական շրջանում հիմնված կրթասիրաց և ուսումնասիրաց ընկերությունները նպաստեցին կրթված հարության ստեղծմանը, որի ներկայացուցիչներից շատերը ծանոթանալով տնտեսության եվրոպական նորագույն մեթոդներին՝ նպաստեցին գավառի հայության տնտեսական զարգացմանը: Այս գավառում հայերի տնտեսությունը զարգացել է ոչ այնքան հայ անհատ ձեռներեցների և գործարարների, որքան իզմիթահայության հավաքական ջանքերի շնորհիվ: 1908 թվականից հետո ի թիվս կրթական, բարեսիրական, մշակութային ընկերությունների՝ Իզմիթի գավառի հայաբնակ վայրերում սկսեցին կազմավորվել հայկական տնտեսական և ֆինանսական ընկերություններ, համագործակցական (կոպերատիվ) միություններ,

խնայողական գանձանակներ և նման կարգի բազմաթիվ այլ կազմակերպություններ, որոնց նպատակն էր օգնել բանվորներին, գյուղացիներին, առևտրականներին՝ իրականացնելու համար շինարարական, առևտրական, գյուղատնտեսական և արդյունաբերական ձեռնարկներ, պայքարել վաշխառուների դեմ՝ ցածր տոկոսով փոխառություն, իրենց անդամներին էժան ապրանքներ, սերմացու տրմադրել և այն: Բաժնետիրական հիմունքներով կազմավորված ընկերությունները նպատակ ունեին մուտքի տուրքերով և անդամավճարներով որոշակի ժամանակաշրջանում ստեղծել անհրաժեշտ դրամագլուխ՝ իրենց ծրագրերը գործադրելու համար: Տնտեսական այս ընկերություններն ապահովեցին իզմիթահայության տնտեսության թռիչքաձև զարգացումը: Իզմիթի հայերը ոչ միայն իրենց ձեռներեցության, աշխատասիրության և ստեղծագործական մտքի, այլև բարեգործության ոգու և մեկը մյուսին օգնելու ձգտման շնորհիվ կարողացան թե՛ Օսմանյան կայսրության տնտեսության և թե՛ հայ մշակույթի կարևոր կենտրոններ ստեղծել:

Հետազոտական խմբի անդամ, գիտաշխատող Ա. Ոսկանյանի կողմից հեղինակվել է ցեղասպանության իրագործմանը զուգահեռ մասնավորապես Ադանայի նահանգի հայ բնակչության մշակութային կորուստների և նյութական ունեցվածքի բռնազավթման բաժինը: նահանգի հայ բնակչության մշակութային և տնտեսական ներուժին վերաբերող բաժնում Պոլսի Հայոց պատրիարքարանի, օսմանյան արխիվային հրատարակված նյութերի, դիվանգիտական փաստաթղթերի, ականատեսների հուշագրությունների, միսիոներների վկայությունների, ժամանակի մամուլի տեղեկությունների ու թեմայի առնչությամբ կատարված հետազոտությունների հիման վրա ցույց է տրվել Այնթապի գավառի ժողավրդագրական պատկերը, ինչպես նաև 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբին Այնթապի հայերի տնտեսության և կրթական վիճակը: Հանգամանորեն ներկայացվել է Այնթապի գավառի հայ բնակչության կրթամշակութային վերելքը, կրթական հաստատությունների ու դրանց հետ սերտորեն փոխկապակցված հայկական խոշոր առևտրական տների, վաճառականների ու արտադրությունների գործունեությունը՝ անդրադառնալով նաև Հայոց ցեղասպանության տարիներին Այնթապի գավառի հայկական ազգապատկան ու անհատական գույքի բռնագրավման գործընթացին: Հավելվածների ձևով վերջում ամփոփված են Այնթապի գավառի հայկական կալվածքների, վաճառականների, արհեստավորների, աշակերտության,

կրթական հաստատությունների ֆինանսական հավետվությունների ցուցակները, ինչպես նաև տեղական հայկական իշխանության ներկայացուցիչների ցանկերը:

Կոլեկտիվ մենագրությունը գտնվում է խմբագրման և սրբագրման փուլում և նախապատրաստվումէ հրատարակման:

Հետազոտական խմբի համակարգող

պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Ց. Մարուքյան**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ԻՍԼԱՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ (ՎՐԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱ). ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ, ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ (2021 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ) ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակաշրջանում **«Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան).արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ»** թեման կատարող գիտահետազոտական խումբը /Արաքս Փաշայան պ.գ.թ., դոցենտ՝ ղեկավար, Նազելի Նավասադրյան, պ.գ.թ., դոցենտ, Լիլիթ Հարությունյան պ.գ.թ., դոցենտ, Տաթևիկ Մանուկյան/ ամփոփել է աշխատանքի հիմնական արդյունքները, ներկայացրել ՀՀ և Արցախի ազգային անվտանգությանը սպառնացող իրողություններն ու մարտահրավերները: Հետազոտության նպատակներ և խնդիրներ՝ կախված ՀՀ և Արցախի Հանրապետութան, անվտանգային միջավայրի նոր իրողությունների հետ, հիմնովին վերանայվել են և հաշվետու ժամանակահատվածում արտացոլվել են խմբի հետազոտական աշխատանքներում: Ինչպես նշել էինք նախավերջին եռամսյակի հաշվետվության մեջ՝ կապված արցախյան պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետության և ԱՀ ազգային անվտանգության տեսանկյունից ի հայտ եկած միանգամայն նոր մարտահրավերների և խնդիրների, գիտահետազոտական խմբի անդամների կողմից առանձնացվել են կարևոր խնդիրներ, որոնք բնականաբար

ընդգրկված չեն եղել ծրագրի ռազմավարության մեջ, սակայն դրանց վերհանումը համարվել է հրամայական՝ նշված աշխատանքն ամբողջացնելու համար։ Այդ նկատառումներից ելնելով, հրատարակության է հանձնվել երկու հոդված, որոնցից մեկը վերնագրված է՝ «Աշխարհաքաղաքական կերպափոխումները Հարավային Կովկասում և իսլամական գործոնի ակտիվացումը արցախյան պատերազմից հետո. տեսակետ Երևանից» /հեղինակ՝ Արաքս Փաշայան/, հրատարակվելու է արաբերեն, Եգիպտոսի Ալ-Ահրամ վերլուծական կենտրոնի «Դիմուկրատիյա» հանդեսում, և մյուսը՝ «Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին 2020 թ. արցախյան պատերազմի ընթացքում. իսլամական համերաշխությունից մինչև ջիհադականություն /հեղինակներ՝ Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան/, հրատարակվել է «Գիտական Արցախ» պարբերականում, 2021 թ 8 (1) համարում։

Գիտահետազոտական խմբի անդամները կազմել են նաև ծրագրի ամփոփագիրը (policy paper): Ամփոփագրի նպատակն է համակարգված ներկայացնել հետազոտության ամբողջացված հիմնական դրույթներն ու եզրահանգումները, որոնք արտացոլվել են հեղինակների մի շարք հոդվածներում և կարող են օգտակար լինել հետպատերազմյան Հայաստանի արտաքին քաղաքականության վերալիցքավորմանը՝ մշակելու նոր գործիքակազմեր իսլամական աշխարհի տարբեր սեգմենտներ հետ հարաբերվելու, և արտաքին քաղաքականության «հայկական փափուկ ուժ» ձևավորելու համար։ Ամփոփագիրը կցված է սույն հաշվետվությանը (էջ 3-10):

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն աչքի է ընկնում գիտական արդիականությամբ և քաղաքական կարևորությամբ։ Թեմայի ուսումնասիրությունը նորույթ է Հայաստանի հասարակական գիտությունների ոլորտում, քանի որ նման ձևաչափով ու շեշտադրումներով հետազոտություն՝ համապարփակ ու համակողմանի, Հայաստանում արվում է առաջին անգամ։ Չնայած Ադրբեջանում և Վրաստանում էթնոդավանական և իսլամական գործոնին առնչվող առանձին խնդիրներ ժամանակ առ ժամանակ եղել են Հայաստանի առանձին հետազոտողների ուշադրության մեջ, սակայն այս պարագայում Վրաստանում ու Ադրբեջանում իսլամական գործոնով պայմանավորված աշխարհա-

քաղաքական զարգացումները դիտարկվել են ՀՀ ազգային անվտանգային միջավայրի տեսանկյունից, քննարկվել են նաև արցախյան վերջին պատերազմին առնչվող իրողություններ: Հետազոտական խմբի կողմից օգտագործված մոտեցումները կարող են օգտակար լինել մյուս ուսումնասիրողների համար ևս՝ նպաստելով Հայաստանում ադրբեջանագիտության հետագա զարգացմանը: Բացի այդ, հետազոտական խմբի անդամները աշխատանքի ընթացքում ներդրել են ՀՀ պետական շահերի տեսանկյունից կարևոր մի գործառույթ՝ խորհրդատվություն գերատեսչական մարմինների գործընկերների հետ, որոնց կողմից ստացել են հավանություն՝ խորհրդատվական նշանակություն ունեցող հանդիպումները շարունակելու հետ կապված, ընդգծվել է դրա կարևորությունը, ինչը հետագայում նույնպես հաշվի է առնելու՝ ստեղծելով համագործակցության երկուստեք շահեկան ձևաչափ:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Հարավային Կովկասը մշտապես գտնվել է կրոնների և քաղաքակրթությունների խաչմերուկում, վերածվել ազգամիջյան ու միջպետական հարաբերությունների բարդ հանգույցի, որում ներգրավված են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային դերակատարներ: Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ու հետաքրքրությունների փոխակերպումները և վերադասավորումներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում տարածաշրջանային զարգացումների վրա: Իսլամական գործոնի ակտիվացմամբ պայմանավորված տարածաշրջանային զարգացումները լրջագույն սպառնալիք են Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

2020 թ. արցախյան պատերազմի հետևանքով սահմանների վերափոխման արդյունքում ձևավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերն ու առաջացած անկայունությունը հարավկովկասյան տարածաշրջանում այսօր առավել քան երբևէ արժևորում է իսլամական գործոնի և հետայսու դրա ծավալման հեռանկարների ուսումնասիրության կարևորությունը:

«Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան). արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ» հետազոտական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և վեր հանվել հետխորհրդային Ադրբեջանում և Վրաստանում արտաքին և ներքին գործոնների նշանակությունն իսլամական զարթոնքի, իսլամական

ինքնագիտակցության, նոր իսլամական ինքնությունների ձևավորման, իսլամի քաղաքականացման հիմնախնդիրները:

Ամփոփագրի հիմնական դրույթներ.

- ✓ 1991 թ. անկախությունից հետո Ադրբեջանում տեղի ունեցավ ազգային և կրոնական զարթոնք: Իսլամը դարձավ Ադրբեջանում հասարակական առանձին շրջանակների ինքնության կարևոր բաղկացուցիչը: Արտաքին՝ թուրքական, իրանական և արաբական կրոնական ներթափանցումները մեծ ազդեցության ունեցան նոր ինքնությունների ձևավորման, նոր տպի կրոնական մշակույթի զարգացման և կրոնական ընկալումների վերալիցքավորման հարցում: Մասնավորապես սուննիական նոր ինքնությունների ձևավորման և սուննի իսլամի զարգացման հարցում մեծ դեր խաղացին «արաբական- սալաֆիական իսլամը» և «թուրքական իսլամը»: Պետությունը կրոնի նկատմամբ խիստ սահմանափակումներ իրականացնելու նպատակով մեկ տասնյակից ավել լրամշակումներ իրականացրեց «Կրոնի ազատության մասին» օրենքում՝ մշակելով համապատասխան գործիքակազմ:
- ✓ «Թուրքական իսլամն» Ադրբեջան ներթափանցեց երկու ճանապարհով՝ պաշտոնական, որը համակարգեց Թուրքիայի Կրոնի հարցերով նախագահությունը՝ Դիյանեթը, և ոչ պաշտոնական, որի ամենահանգուցային ուղղությունը գյուլենականությունն էր: Ադրբեջանում գյուլենականության հետագա ընդլայմանը խոչընդոտեցին Էրդողանի և Գյուլենի միջև հակասությունները. Անկարայի ճնշմամբ՝ գյուլենականների գործունեությունն Ադրբեջանում արգելափակվեց: Գյուլենականության «փափուկ ուժի» գործառույթները ստանձնեց Դիյանեթը: Թուրքական երկու ուղղություններն էլ «փափուկ ուժի» դրսևորումներ են: Թուրքիայի և Ադրբեջանի փոխլրացված տնտեսական կապերը, համագործակցությունը ամենատարբեր ոլորտներում և ռազմաքաղաքական դաշինքը սնուցվում են Թուրքիայի «փափուկ ուժի» լայն գործիքակազմով, որի բաղադրիչներից են՝ հանրային, խորհրդարանական և թվային դիվանագիտությունը, սոցիալ-մշակութային, կրթական տարատեսակ ծրագրերը, դրամաշնորհները և այլն:

- ✓ Ադրբեջանի թուրքական կողմնորոշումը կարևոր դեր խաղաց ոչ միայն ադրբեջանական ինքնության կերպափոխումներում, այլ նաև շիա իսլամի նահանջի և սուննի իսլամի դիրքերի ամրապնդման հարցում: Ադրբեջանում թուրքական «փափուկ ուժի» գործիքակազմի շնորհիվ հնարավոր դարձավ ձևավորել թուրքական կենսակերպի, բարքերի և թուրքական մշակույթի գրավչությունն ադրբեջանական հասարակության թիրախային լսարանին:
- ✓ Թուրքական «փափուկ ուժի» ընդլայնումն առաջիկա տարիներին կհանգեցնի շիա իսլամի և Իրանի կրոնական դիրքերի էլ ավելի թուլացմանը, ինչն անմիջական կապ ունի ոչ միայն Իրանի կրոնապետական քաղաքական համակարգից եկող վտանգների և վախերի, այլև Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական սերտ համագործակցության հետ: Ադրբեջանում Թուրքիայի շոնդալից հաջողություններն ուղիղ կապ ունեն նաև Արցախյան 2020 թ. պատերազմում Ադրբեջանին Թուրքիայի անվերապահ աջակցության և Ադրբեջանի հաղթանակի հետ: Ենթադրելի է, որ առաջիկա տարիներին Ադրբեջանում ավելի մեծ թափ կստանան սուննի մզկիթների կառուցումը, սուննի աստվածաբանության թուրքական (հանաֆիական) մեկնաբանության զարգացումը, հասարակության մեջ սուննիական ընկալումների խորացումը, որը կզուգորդվի «թուրքական փափուկ» ուժի հարաճուն ընդլայնմամբ:
- ✓ Մյուս կողմից, սալաֆիական պլատֆորմի կամ «արաբական իսլամի» շրջանակներում գործող սուննի իսլամի պահանողական մեկնաբանությունները, որոնցից մեկն էլ վահաբականությունն է, Ադրբեջանում այլևս իրողություն է, որը «թուրքական իսլամի» հետ համեմատած կմնա ավելի ստվերային դիրքում: Նման իրավիճակում սալաֆիականությունն Ադրբեջանում առաջիկայում հնարավոր է մշակի ադապտացման նոր մեխանիզմներ՝ «թուրքական իսլամի» նկատմամբ հավասարակշռությունը պահպանելու նպատակով: Պետությունը կշարունակի խիստ վերահսկողության տակ պահել սալաֆիականներին՝ հաշվի առնելով նրանց հակվածությունը ջիհադիզմի ու թաքֆիրիզմի գաղափարներին: Ադրբեջանից բավական մեծ թվով վարձկան ջիհադականների մասնակցությունը մերձավորարևելյան

հակամարտություններում վկայում է Ադրբեջանում կրոնական պահպանողական և ծայրահեղական տրամադրություններ ձևավորման մասին։

- ✓ Ադրբեջանի ազգային անվտանգությունը հետանկախության և դրան հաջորդած տարիներին, ընդհանուր առմամբ, կարողացավ կասեցնել երկրում Իրանի կրոնական և քաղաքական ազդեցությունը, որի հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ ադրբեջանական հասարակության առավելապես աշխարհիկ բնույթը, հասարակության շրջանում խոմեյնիզմի գաղափարների նկատմամբ վախերը, Բաքվի թուրքամետ կողմնորոշումը, իրանական կրոնական ազդեցության դեմ «պաշտոնական իսլամի» կամ «պաշտոնական շիայականության» ու պետական մեքենայի կոշտ հակազդեցությունը։ Այս հարցում ոչ պակաս դեր ունի Ադրբեջանի սուննիականացման միտումը, որի արդյունքում Ադրբեջանում վերջին շրջանում փոխվել է սուննիների և շիաների հավասարակշռությունը՝ ձգտելով դառնալ 50/50։
- ✓ Չնայած սահմանափակումներին, Իրանի ազդեցությամբ Ադրբեջանում պարարարտ հող ստեղծվեց «քաղաքական իսլամի», կրոնասիրության, շիայական քաղաքացիական ակտվության, նաև՝ շիայական պահպանողական հայացքների զարգացման համար։ Իրանական կրոնական և մշակութային ազդեցությունն այլևս կայուն հիմքեր ունի Ադրբեջանի իրանական ծագում ունեցող տեղաբնիկների շրջանում (թալիշներ, կովկասյան պարսիկներ՝ թաթեր և այլն)։
- ✓ Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը կարելի է համարել հաջողված։ Այն նպաստեց իսլամական աշխարհում Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանը։ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի ինտեգրումը իսլամական ընտանիքին՝ ումմային, շոշափելի դեր խաղաց մուսուլմանական միջավայրում Ադրբեջանի ճանաչելիության ընդլայնմանը, Հայաստանի դեմ օրակարագ ձևավորելուն, ինչպես նաև Արցախի դեմ 2020 թ. պատերազմում Ադրբեջանի տեղեկատվական և ռազմական հաղթանակին։
- ✓ Իսլամական և թյուրքական համերաշխության գաղափարների գեներացմամբ Ադրբեջանին և Թուրքիային հաջողվեց ավելի խորացնել իսլամական

միջավայրում հակահայկական տրամադրությունների ալիքը՝ ստեղծելով անվտանգային խնդիրներ ամբողջ աշխարհում ապրող հայ համայնքների համար:

- ✓ 2020 թ. Արցախյան պատերազմի հետևանքով Հարավային Կովկասում ի հայտ եկան աշխարհաքաղաքական նոր իրողությունները, նկատվեց իսլամական գործոնի ակտիվացում, որի արդյունքում ստեղծված ուժային նոր հարաբերակցությունը փաստորեն դարձավ լրջագույն սպառնալիք Հայաստանի տարածքային ամբողջականության ու ազգային անվտանգության համար:
- ✓ Հայաստանի սահմանակից չորս պետություններից երեքն իսլամադավան են իրենց բնակչության բացարձակ մեծամասնությամբ: Միակ քրիստոնյա երկիրը Վրաստանն է, որտեղ իսլամը երկրորդ ամենատարածված կրոնն է: Մուսուլմանական համայնքները Վրաստանում համակարգված ապրում են Պանկիսի կիրճում, Քվեմո Քարթլիի շրջանում և Աջարիայի ինքնավար հանրապետությունում: Կան նաև փոքր մուսուլմանական բնակավայրեր Կախեթիի, Քվարելի, Թելավի և Սագարեջո վարչական շրջաններում (էթնիկ ադրբեջանցիներ), ինչպես նաև Ծալկայի, Ջավախքի և Գուրիայի շրջաններում (Աջարիայից այստեղ հաստատվածներ և մսխեթցի թուրքերի փոքր խմբեր): Թբիլիսիում բնակվում է մոտ 16.000 մուսուլման: Ակներև է, որ բացի Ջավախքից, մուսուլմանները գերակշիռ մեծամասնություն են կազմում Հայաստանի հետ սահմանակից բոլոր բնակավայրերում:
- ✓ Վրաստանի՝ Հայաստանին սահմանակից շրջանների մեծ մասը բնակեցված է մուսուլմաններով՝ գլխավորապես շիաներով, որտեղ առկա են մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես՝ զգալի թվով շիաներ չեն խոսում վրացերեն և հաղորդակցության հիմնական լեզուն շարունակում է մնալ ռուսերենը: Վերջին շրջանում պետությունն իրականացնում է ինտեգրման մի շարք ծրագրեր, որոնց նպատակը երկրի շիա բնակչության առավելագույն ներգրավումն է վրացական հասարակությունում:
- ✓ Վրաստանի շիայաբնակ շրջաններում տարածաշրջանային երեք պետությունները՝ Իրանը, Թուրքիան և Ադրբեջանը փորձում են իրենց ազդեցությունը

տարածել տնտեսական, էթնիկ, մշակութային և կրոնական գործիքակազմի շեշտադրմամբ:

- ✓ Վրացական կողմից Հայաստանի սահմանակից բնակավայրերում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հետևողականորեն իրականացվում է «փափուկ ուժի» վտանգավոր քաղաքականություն, ինչի արդյունքում մեծանում է թյուրքական տարրի ազդեցությունը, փոփոխվում է ժողովրդագրական պատկերը: Այս իրողությունը հետագայում հնարավորություն կտա Վրաստանի տարածքում ստեղծել Թուրքիան Ադրբեջանին կապող թյուրքական բնակավայրերի միջանցք, ինչն ակնհայտ անվտանգային խնդիրներ է առաջացնելու ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի համար:
- ✓ Վրաստանում Թուրքիայի քաղաքականությունն ուղիղ կապ ունի նաև մուսուլման աջարների հետ, որոնց նկատմամբ նույնպես կիրառվում է թուրքական «փափուկ ուժը»: Նախքան արդի խնդիրներին անդրադառնալը, նշենք, որ աջարների իսլամացման մասին կան հստակ պատմական փաստեր: Ըստ այդմ՝ աջարների իսլամացման գործընթացն ընթացել է ուժային հարկադրման և կամավոր դավանափոխության իրողությունների համատեղմամբ: Աջար մուսուլմանների համար հոգեբանորեն ծանր տեղահանություններն ու արտագաղթը երկուստեք ձեռնտու էր Ռուսական կայսրությանը և Օսմանյան Կայսությանը: Ռուսական իշխանությունն ազատվում էր իր համար «անհուսալի և անվստահելի» իսլամադավան բնակչությունից, իսկ օսմանյան իշխանությունը, խրախուսելով «մուհաջիրոբան», իր համար կարևոր ժողովրդագրական խնդիր էր լուծում՝ աջարներին վերաբնակեցնելով քրիստոնեաբնակ կամ սակավաթիվ բնակչությամբ շրջաններում:
- ✓ Վրաստանի խորհրդայնացումից հետո աթեիզմի և կոմունիստական գաղափարախոսության ճնշման տակ Աջարիայի մուսուլնական համայքն էականորեն թուլացավ. իսլամական ինքնությունն անկում ապրեց: Հետզհետե ձևավորվող վրացական ազգային ինքնության մեջ ներառվեց ուղղափառ քրիստոնեական բաղադրիչը:
- ✓ Աջարիան վերաքրիստոնեացնելու տեսլականը դարձավ նորանկախ Վրաստանի իշխանությունների առաքելությունը, քանի որ տարածաշրջանը

պատմական դարպաս է քրիստոնյա և իսլամադավան քաղաքակրթությունների սահմանագծին: Վրաց Ուղղափառ եկեղեցին, կենտրոնական իշխանություններից ստացած իր արտոնություններով, պետական կրթական քաղաքականությունը, վրացականության և քրիստոնեության օրգանական միասնականության ընկալումը, էականորեն խթանեցին ուղղափառ քրիստոնեության տարածումն Աջարիայում:

- ✓ Հետխորհրդային Աջարիան դարձավ ցանկալի թիրախ «փափուկ ուժի» քաղաքականությամբ թուրքական ներթափանցման համար, սակայն պատմական ոչ միանշանակ ընկալվող անցյալը, վրացական էթնիկ, լեզվական և մշակութային ինքնությունների առանձնահատկությունները դեռևս դիմադրում են Թուրքիայի համաիսլամական ու համաթուրքական գաղափարաբանության տոտալ ազդեցությունը աջարական համայնքի վրա:
- ✓ Հակված ենք համարել, որ առաջիկա տարիներին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շարունակվելու են կիրառվել Վրաստանի ազգային անվտանգության համար սպառնալիքներ, որոնց թիրախը կմնան մի կողմից՝ մուսուլման աջարները, մյուս կողմից՝ Վրաստանի ադրբեջանական համայնքը:
- ✓ Թուրքիայի համար Վրաստանն ունի և՛ աշխարհաքաղաքական և՛ աշխարհատնտեսական կարևորություն՝ դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա ամենակարճ և կայուն տարանցիկ ծառայելու տեսանկյունից: Հարավային Կովկասում ուժերի նոր վերադասավորման պայմաններում Անկարան, ինչպես նաև Բաքուն շարունակելու են գործադրել հնարավոր ամբողջ գործիքակազմը՝ ներդրումային, մշակութային, կրոնական, գաղափարական և ռազմական, Վրաստանն իրենց ուղեծրում պահելու համար:
- ✓ 2020 թ. արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սուննի ահաբեկչական տարրով (գերազանցապես թուրքմենական, նաև՝ քրդեր, արաբներ և այլն) վերաբնակեցման վերաբերյալ շրջանառվող ծրագրերն իրենց հերթին նպաստելու են տարբեր իսլամական ուժերի և դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանում առկա հավասարակշռությունը: Տարածաշրջանում նոր տիպի

իսլամական տարրի ներթափանցումը կարող է նպաստել ծայրահեղական իսլամի՝ տարածաշրջան ներթափանցմանը:

- ✓ Հայաստանը կարիք ունի մշտադիտարկման ենթարկել նաև ոչ միայն տարածաշրջանում իսլամական գործոնի ակտիվացմանը վերաբերող գիտական հարցեր, այլև՝ սպառնալիքներ պարունակող այն գործընթացները, որոնք գալիս են իսլամական և թյուրքական աշխարհից, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Կովկասում ձևավորված իսլամական արմատականությունց և ծայրահեղականությունից: Հայաստանը պետք է հաշվի առնի բոլոր այն մարտահրավերները, որոնք հակահայկական տրամադրություններ են գեներացնում իսլամական միջավայրում և ուղղված են ՀՀ-ի, ԱՀ և համայն հայության շահերի ու հետաքրքրությունների դեմ:

Այդ նկատառումից ելնելով, առաջարկում ենք ՀՀ ԳԱԱ շրջանակներում ստեղծել Հարավային Կովկասում իսլամական գործոնի ուսումնասիրման գիտահետզոտական հարթակ, որը կզբաղվի նշված խնդիրների մշտադիտարկմամբ, վերլուծությամբ և հետազոտությամբ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք ՀՀ գերատեսչական մարմինների հետ

Հետազոտական խմբի անդամները թեման փորձաքննության են ենթարկել ՀՀ գերատեսչություններում՝ հավատարիմ մնալով թեմայով ամրագրված ծրագրային սկզբունքներին: Վերջին՝ չորրորդ եռամսյակի ընթացքում գիտահետազոտական խմբի անդամները թեմայի հիմնական դրույթները քննարկել են ՀՀ արտաքին գործերի նախարարության Սահմանակից երկրների վարչությունում՝ վարչության ղեկավարի՝ Արսեն Ավագյանի նախագահությամբ (2021 թ. հունվար) և ՀՀ Անվտանգության խորհրդի Մերձավոր Արևելքի վարչությունում՝ վարչության ղեկավարի՝ Արմեն Ոսկանյանա նախագահությամբ (2021 թ. փետրվար): Այդպիսով հետազոտական խմբի անդամաները ծանոթանացել են նաև վերհանվող հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ պաշտոնական մոտեցումներին: Գիտահետազոտական խմբի անդամները ներկայացրել

են սահմանակից երկրներից և իսլամական աշխարհից ՀՀ և ԱՀ սպառնացող մարտահրավերները, առաջարկել դրանց լուծման մեխանիզմները։

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2021 թ. մարտի 17- ին գիտահետազոտական խմբի անդամները ՀՀ ԳԱԱ կլոր դահլիճում կազմակերպել են աշխատաժողով, որի ժամանակ ներկայացրել թեմայի ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված արդյունքները։ Աշխատաժողովին ներկա են եղել ՀՀ տարբեր գերատեսչությունների, գիտական, վերլուծական կենտրոնների մասնագետներ, գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ, դիվանագետներ և ուսանողներ։ Վրաստանի և Ադրբեջանի գծով և տարբեր հարցերի վերաբերյալ իրենց հետազոտությունները ներկայացրել են գիտահետազոտական խմբի բոլոր անդամները։ Ներկաների կողմից կարևորվեց թեմայի գիտական և քաղաքական նշանակությունը ՀՀ և ԱԻ անվտանգային և ռազմավարական շահերի տեսանկյունից և առաջարկվեց խորացնել ուսումնասիրությունը՝ ձևավորելով քննարկումների ընդլայնված հարթակ՝ հայաստանյան գերատեսչական համապատասխան մարմինների և գիտակրթական, վերլուծական կազմակերպությունների ներառմամբ։ Աշխատաժողովին ներկայացված սլայդները ppt ձևաչափով կցված է հաշվետվությանը**:** Աշխատաժողովին ներկայացված սլայդները ppt ձևաչափով կցված է հաշվետվությանը (էջ 145-170)**:**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի արդյունքում հեղինակները պատրաստել են թվով ութ վերլուծական հոդված, որոնցից հինգը տպագրության են հանձնվել հաշվետու ժամանակաշրջանում, (Հոդվածների տեքստերը կցված են հաշվետվությանը՝ էջ 17-144)։

Արաքս Փաշայան, Իսլամական համագործակցություն կազմակերպության դիրքորոշումը արցախյան հակամարտության հարցում, *Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Արևելագիտության հարցեր, XXXIII (2), Երևան, 2020 թ. էջ 181-207:*

Հոդվածում քննարկվում է Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը, համագործակցությունը միջազգային իսլամական կառույցների՝ մասնավորապես Իսլամական համագործակցություն կազմակերպության։ Վերլու-

ծության է ենթարկվում իսլամական աշխարհի աջակցությունը Ադրբեջանին՝ արցախյան հարցում, այդ թվում՝ արցախյան երկրորդ պատերազմում:

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան, *Շիայականության գործոնը ադրբեջանիրանական հարաբերություններում,* *«Գիտական Արցախ», 4 (7), 2020, էջ 104-114:*

Հոդվածում քննարկվում է Ադրբեջանում Իրանի կրոնական ազդեցության նպատակները, շարժառիթները, դրսևորման ձևերն ու առանձնահատկությունները: Հատուկ ուշադրություն է դարձվել Ադրբեջանում իրանական կրոնական ազդեցության հետևանքների ուսումնասիրությանը, ինչը հանգեցրել է Ադրբեջանում կրոնական նոր ինքնությունների, քաղաքական իսլամիզմի, կրոնական պահպանողական և արմատական տրամադրություն ունեցող շրջանակների և կրոնասեր խմբերի ձևավորմանը:

Լիլիթ Հարությունյան, Տաթևիկ Մանուկյան, Շիայական համայնքը Վրաստանում. իրողություններ և առանձնահատկություններ, Արևելագիտության հարցեր, Երևանի պետական համալսարան, Արևելագիտության ֆակուլտետ, 16/17, 2020 (հրատարակման մեջ է, ժողովածուն կտպագրվի 2020 թ. թվագրմամբ):

Հոդվածում քննարկվում է Վրաստանի շիայաբնակ շրջաններում տարածաշրջանային երեք պետությունների՝ Իրանի, Թուրքիայի և Ադրբեջանի տնտեսական, էթնիկ, մշակութային և կրոնական քաղաքականությունը: Վրացական կողմից Հայաստանի սահմանակից բնակավայրերում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հետևողականորեն իրականացվում է «փափուկ ուժի» վտանգավոր քաղաքականություն՝ մեծացնելով թյուրքական տարրի ազդեցությունն ու փորձելով փոփոխել ժողովրդագրական պատկերը: Հետագայում սա հնարավորություն կտա Վրաստանի տարածքում ստեղծել Թուրքիան Ադրբեջանին կապող թյուրքական բնակավայրերի միջանցք, ինչն ակնհայտ անվտանգային խնդիրներ է առաջացնելու ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի համար: Նշվում է, որ Թուրքիայի համար Վրաստանն ունի և՛ աշխարհաքաղաքական և՛ աշխարհատնտեսական կարևորություն՝ դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա ամենակարճ և կայուն տարանցիկ ծառայելու տեսանկյունից: Հարավային Կովկասում ուժերի նոր վերադասավորման պայմաններում Անկարան և Բաքուն շարունակելու են գործադրել հնարավոր ամբողջ գործիքակազմը՝

ներդրումային, մշակութային, կրոնական, գաղափարական և ռազմական, Վրաստանն իրենց ուղեծրում պահելու համար:

Արաքս Փաշայան, «Աշխարհաքաղաքական կերպափոխումները Հարավային Կովկասում և իսլամական գործոնի ակտիվացումը արցախյան պատերազմից հետո. տեսակետ Երևանից», հրատարակվելու է արաբերեն, Եգիպտոսի Ալ-Ահրամ վերլուծական կենտրոնի «Դիմուկրատիյա» («ժողովրդավարություն») հանդեսի 2021 թ. երրորդ համարում:

Հոդվածում քննարկվում է պատերազմի հետևանքով ստեղծված Արցախի նոր ստատուս քվոն, «Թավշա հեղափոխության» ազդեցությունը ՀՀ -ի և ԱՀ շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների վրա, Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի մոտեցումները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրողություններին, ներկայացվել է պատերազմի ընթացքում իսլամական գործոնի նշանակությունը Ադրբեջանին ցույց տրվող միջազգային աջակցության հարցում, վեր է հանվել Ադրբեջանի այլատյաց դիրքորոշումը Հայաստանի, հայության, հայ ռազմագերիների հարցում:

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան, «Իսլամական աշխարհի աջակցությունը Ադրբեջանին 2020 թ. արցախյան պատերազմի ընթացքում. իսլամական համերաշխությունից մինչև ջիհադականություն, հրատարակվելու է «Գիտական Արցախ» պարբերականում, 2021 թ. մարտի վերջին ապրիլի սկզբին:

Հոդվածում քննարկվում է Ադրբեջանին Արցախի հարցում ցույց տրված լայնածավալ ու բազմավեկտոր աջակցությունը՝ Թուրքիայից, թյուրք-իսլամական շրջանակներից, իսլամական համերաշխության շարժման աջակիցներից, Իսլամական համագործակցություն կազմակերպության, մուսուլման աստվածաբանների, Պակիստանից կողմից: Ներկայացվել է միջազգային վարձկան ջիհադականների մասնակցությունը արցախյան պատերազմին: Հետազոտվել է նաև Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղության գրանցած հաջողությունները Լեռնային Ղարաբաղի հարցում աջակցություն ստանալու հարցում:

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան, «Սուննիականացման հիմնական միտումներն Ադրբեջանում. կրոնական ինքնության վերափոխումները», տպագրվելու է

Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանի «Հայկական քաղաքագիտական հանդեսում» 2021 թ. ապրիլ-մայիս ամսիներին:

Հոդվածում քննարկվել է Ադրբեջանի հասարակական, այդ թվում՝ տեղաբնիկ սուննիադավան ժողովուրդների շրջանում իսլամական զարթոնքը, սուննիական կրոնական նոր ինքնությամբ աչքի ընկնող շրջանակների ձևավորումը: Քննարկվել է թուրքական «պաշտոնական իսլամի» /Դիյանեթ/ և «ոչ պաշտոնական իսլամի» /գյուլենականություն, նուրջու, սուֆականություն և այլն/ նշանակությունը Ադրեջանում աստիճանաբար թափ ստացող և թուրքական «փափուկ ուժի» գործիքկազմի ներդրմամբ ընթացող թուրքականացման և սուննիականացման գործընթացի վրա: Քննարկվել է նաև սալաֆիականության դերն Ադրբեջանի հասարակական կյանքում: Սուննիականության առաջընթացն Ադրբեջանում ուսումնասիրվել է շիա իսլամի և Իրանի դիրքերի որոշակի նահանջի ֆոնին:

Տաթևիկ Մանուկյան, Լիլիթ Հարությունյան, «Աջարիայի իսլամադավան համայնքը. ձևավորման փուլեր և ինքնության առանձնահատկություններ» տպագրվելու է Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանի «Հայկական քաղաքագիտական հանդեսում» 2021 թ. ապրիլ-մայիս ամսիներին:

Հոդվածն անդրադառնում է Աջարիայի իսլամադավան համայքի ինքնության ձևավորման, կայացման գործընթացին ու առանձնահատկություններին պատմական տարբեր շրջափուլերում՝ Օսմանյան տիրապետությունից մինչև Վրաստանի անկախացումը: Քննարկվում են Օսմանյան տիրապետության շրջանում (XV-XIX դդ.) Աջարիայի իսլամացման գործընթացն իր առանձնահատկություններով, Ցարական Ռուսաստանի, իսկ այնուհետև ԽՍՀՄ-ի կազմում Աջարիայի մուսուլմանների առջև ծառացած կրոնական և ինքնության պահպանման մարտահրավերները: Լուսաբանվում են Վրաստանի անկախացումից հետո պետության և Վրաց Ուղղափառ եկեղեցու՝ աջար մուսուլմաններին վերաքրիստոնեացնելու և այդպիսով թուրքական կրոնական ներթափանցումը կանխելու փորձերը, որոնք համայնքում առաջ բերեցին խորը հակազդեցություն, ինչն արդեն Թուրքիայի անմիջական ներգործությամբ հանգեցրեց երկրամասում «իսլամական վերածնունդին»:

Տաթևիկ Մանուկյան, Լիլիթ Հարությունյան, «Իսլամական արմատականությունը Վրաստանում. նոր միտումներ և մարտահարավերներ», հրատարակվելու է «Գիտական Արցախ» պարբերականում, 2021 թ. մարտի վերջին ապրիլի սկզբին:

Հոդվածում քննարկում են Վրաստանի իսլամադավան համայնքներում (Պանկիսի կիրճ, Աջարիա, Քվեմո Քարթլի) սուննի իսլամի արմատական ուղղությունների տարածման ներքին և արտաքին դրդապատճառներն ու ազդակները, նախադրյալները և հետևանքները, վրացական հասարակության մեջ վերջիններիս ինտեգրման խնդիրները: Հետազոտվում են Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների շրջանում, որոնք շիաներ են, սալաֆիականության և սուննի իսլամական ծայրահեղականության նպատակաուղղված քարոզչության պատճառներն ու հետևանքները: Ուսումնասիրվում են Վրաստանում՝ մասնավորապես Պանկիսի կիրճում և Աջարիայում, սալաֆիականության և իսլամական արմատականության ծավալման հիմնական առանձնահատկություններն ու միտումները, վեր հանվում այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնց բախվում է Վրաստանը՝ հետևապես նաև տարածաշրջանը: Նշվում է, որ Վրաստանի իշխանությունները կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան կարող է որոշակի զարգացումների դեպքում վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»

Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան. արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ»)» գիտահետազոտական խմբի ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Ա.Փաշայան

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

Գիտական Արցախ պարբերականում, 2021, 1 (8)

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՋԻՀԱԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ, ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի նպատակն է՝ վեր հանել իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին Արցախյան 2020 թ. պատերազմի[1] ընթացքում՝ քննության ենթարկելով Բաքվին մուսուլմանական աշխարհի աջակցության ձևաչափերը, աջակցող կողմերին, աջակցության կրոնական ու աշխարհաքաղաքական շարժառիթներն ու մեխանիզմները: Քննության են ենթարկվել նաև Ադրբեջանի արտաքին քաղաքականության իսլամական ուղղությանը և այդ համատեքստում՝ արցախյան խնդրին կրոնական գունավորում տալու թուրք-ադրբեջանական քաղաքականությանն առնչվող հարցեր: Առանձնացվել է պատերազմի ընթացքում Թուրքիայի դերը. Անկարան իսլամական և թյուրքական համերաշխության գաղափարները գեներացնելով՝ միջազգային ամենատարբեր հարթակներում ձևավորեց հակահայկական տրամադրություններ՝ շփման գոտի նետելով իր վերահսկողության տակ գտնվող սիրիացի՝ թուրքմեն և արաբ վարձկան ջիհադականների: Անկարայի ռազմաքաղաքական աջակցության շնորհիվ Ադրբեջանը հաղթեց պատերազմում:

Հոդվածը գրվել է միջազգային մամուլի՝ նշված թեմային վերաբերող նյութերի մշտադիտարկման և արցախյան հակամարտության տարբեր կողմերին վերաբերող մասնագիտական գրականության լայն ուսումնասիրության հենքի վրա: Աշխատանքը կատարվել է քննական, վերլուծական և պատմահամեմատական մեթոդաբանության

*Հետազոտությունն իրականացվել է **ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող Համահայկական հիմնադրամի** դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

[1] 44 օր տևած պատերազմը հանգեցրեց 2020 թ. նոյեմբերի 10-ի Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան եռակողմ՝ Երևանի համար կապիտուլյացիոն հայտարարության ստորագրմանը: Հայկական կողմը կորցրեց չճանաչված Արցախի Հանրապետության 75 տոկոսը, այդ թվում՝ Արցախի Հադրութի շրջանը և հայկական հնամենի քաղաք Շուշին: Տե՛ս Azerbajan and Armenia: Conflict in Nagorno-Karabakh,https://reliefweb.int/sites/reliefweb.int/files/resources/20201120_acaps_short_note_update_nagorno-karabakh_0.pdf

կիրառմամբ: Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփված են Եզրակացություն բաժնում:

Բանալի բառեր՝ *իսլամական համերաշխություն, ումմա, թյուրքական համերաշխություն, Արցախ, Ադրբեջան, Թուրքիա, ջիհադ, վարձկան, պատերազմ:*

Ներածություն

Ընդունված է ասել, որ՝ արցախյան հակամարտությունը էթնոքաղաքական և տարածքային վեճի բնույթ ունի: Սակայն կրոնական գործոնը միշտ էլ որոշակի դեր է խաղացել թե՛ քրիստոնյա հայերի և թե՛ մուսուլման ադրբեջանցիների փոխադարձ ընկալումների ձևավորման հարցում: Հակամարտության սկզբնավորումից ի վեր էթնիկությունը, նաև՝ կրոնը, ընդհանուր դիսկուրսի մաս են կազմել[2]: 2006 թ. Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ալլահշյուքյուր Փաշազադեն արձանագրեց, որ՝ «պատրաստ է ջիհադ հայտարարել Ադրբեջանի գրավյալ տարածքներն ազատագրելու համար...»[3]: Իր հերթին, ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը 2008 թ. արտերկրյա հանդիպումներից մեկի ժամանակ հայտարարեց, որ կրոնը ամենամեծ դերն ունի արցախյան հակամարտության մեջ[4]: Մասնավորապես Ադրբեջանի համար կրոնական գործոնը ժամանակի ընթացքում դարձավ գործուն միջոց միջազգային իսլամական հանրության՝ ումմայի, բայց նախևառաջ՝ Իսլամական համագործակցություն կազմակերպության (ԻՀԿ) շրջանակներում Արցախի հարցում միջազգային աջակցություն ձեռք բերելու հարցում: Բացի այդ, ինչպես Առաջին արցախյան պատերազմի ժամանակ, այնպես էլ հիմա հայկական կողմի դեմ օգտագործվեց վարձկան ջիհադականների ներուժը:

2020 թ. արցախյան պատերազմի շրջանում (սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը) Ադրբեջանի իշխանությունները Թուրքիայի անվերապահ աջակցության շնորհիվ նախ օգտագործեցին թյուրքական աշխարհի թե՛ սուննիական և թե՛ շիայական հատվածների ներուժն ամենատարբեր ոլորտներում՝ Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու և պատերազմում բազմակողմ աջակցություն ստանալու հարցում: Զուգահեռաբար, նաև Թուրքիայի հրահրմամբ Մերձավոր Արևելքում և իսլամական աշխարհում

[2]Artyom Tonoyan, Armenia-Azerbaijan: Rethinking Role of Religion in the Nagorno-Karabakh Conflict, Religion, Conflict, and Stability in the Former Soviet Union. Editors: Katya Migacheva, Bryan Frederick, Rand Corporation, 2018, p. 17.

[3] Նույն տեղում, էջ 31:

[4] Նույն տեղում, էջ 16:

ընդհանրապես, ձևավորվեցին Հայաստանի և հայության նկատմամբ կրոնական գունավորմամբ խիստ բացասական, շատ դեպքերում՝ նույնիսկ թշնամական, մոտեցումներ, ինչը անվտանգային մարտահրավեր է աշխարհասփյուռ հայության, այդ թվում՝ Հայաստանի և Արցախի նկատմամբ: Ադրբեջանին աջակցելու հիմնական շարժառիթը ոչ միայն թյուրքական, այլև՝ իսլամական համերաշխության գաղափարն է, որը թուրք-ադրբեջանական տանդեմն օգտագործեց բազմավեկտոր կերպով:

Ուսումնասիրության ընթացքում հեղինակները հանգել են հետևյալ եզրակացության՝ 2020 թ. արցախյան պատերազմի ընթացքում թուրք-ադրբեջանական տանդեմը օգտագործեց կրոնական գործիքակազմ՝ ձեռք բերելու իսլամական աշխարհ բազմավեկտոր աջակցությունը: Օգտագործվեցին իսլամական, թյուրք-իսլամական համերաշխության, ջիհադականության գաղափարները, նաև՝ վարձկան ջիհադականների, թյուրքական աշխարհի սուննիական և շիայական հատվածների ներուժը: Թուրք-ադրեջանական շահերին ծառայեցվեցին մուսուլմանական աշխարհի տարբեր ռեսուրսներ՝ ԶԼՄ-երը, սոցիալական ցանցերը, աստվածաբանական շրջանակները և այլն:

Արցախյան հարցում Իսլամական համագործակցություն կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին

Արցախյան հարցում Ադրբեջանին կրոնական գործոնով պայմանավորված առաջին ամենալուրջ աջակցությունը ցույց է տվել իսլամական աշխարհի ամենամեծ կրոնաքաղաքական կառույցը՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունը արդեն 1992 թ. սկսած[5]: ԻՀԿ-ն իսլամական աշխարհի շահերն ու հետաքրքրությունները ներկայացնող միջազգային կազմակերպություն է, որի հիմքում ընկած են՝ իսլամական համերաշխության և համագործակցության, ինչպես նաև իսլամական արժեքների պահպանման ու պաշտպանության գաղափարներ[6]:

Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ իսլամական ուղղությունն ամրապնդվեց Հեյդար Ալիևի իշխանության օրոք (1993-2003) և իր շարունակությունը գտավ

[5]Մանրամասն տե՛ս Արաքս Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003:
[6] Charter, Organisation of Islamic Cooperation, https://www.oic-oci.org/page/?p_id=53&p_ref=27&lan=en

Իլհամ Ալիևի նախագահության շրջանում[7]: Հատկանշական է, որ աշխարհիկ հիմքեր ունեցող Ադրբեջանն իրեն անվերապահորեն համարեց իսլամական ումմայի բաղկացուցիչը՝ ձգտելով իսլամական աշխարհը ներկայացնող պետությունների հետ սերտ ու համապարփակ համագործակցության հաստատմանը[8]: Ադրբեջանի իշխանությունները ԻՀԿ հարթակն առավելագույնս օգտագործեցին Հայաստանի դեմ օրակարգ ձևավորելու համար[9]: Այլատյացության վերաճած հակահայկական քարոզչությունը Բաքուն իրականացրեց թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանի համար: Արտաքին լսարանի հիմնական թիրախներից մեկը, փաստորեն, դարձավ իսլամական աշխարհը[10]:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից սանձազերծված 2020 թ. պատերազմի հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով «Հայաստանի զինված ուժերի կրկնվող սադրանքներն ու ագրեսիան» Ադրբեջանի դեմ: ԻԿՀ-ն իր համերաշխությունը հայտնեց Ադրբեջանին, Հայաստանից պահանջեց ամբողջովին և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը գրավյալ տարածքներից, երկու պետություններին կոչ արեց քաղաքական լուծման հասնել՝ հարգելով Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը[11]:

2020 թ. դեկտեմբերի վերջին ԻՀԿ արտգործնախարարների 47-րդ համաժողովին ընդունվեց «Իսլամական սրբավայրերի պաշտպանության» մասին բանաձևը, որտեղ դատապարտվեց «հայ ագրեսորների կողմից բարբարոսական գործողությունների իրականացումը, որոնք նպատակաուղղված են եղել իսլամական պատմական և մշակութային ժառանգության ամբողջական ոչնչացմանը»[12]: ԻՀԿ-ն «իր խոր մտահոգու-

---

[7] Արաքս Փաշայան, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Եր., 2014, էջ 135:

[8] Addresses by the Minister of Foreign Affairs of the Republic of Azerbaijan Elmar Mammadyarov, Journal of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, No. 15, 2006, p. 7.

[9]Մոտ երեք տասնամյակ է՝ ինչ ԻՀԿ-ն դատապարտում է հայկական կողմի ռազմական գործողություններն Ադրբեջանի նկատմամբ՝ անտեսելով Արցախի հայ բնակչության ազգային իրավունքները, շրջանցելով բռնության և էթնիկ զտումների այն բազմաթիվ դեպքերը, որ հայ ազգաբնակչության դեմ իրականացրել է Ադրբեջանը: ԻՀԿ-ն Հայաստանը դատապարտել է ամենակոշտ ձևով՝ որպես «ցեղասպան պետություն»՝ բացառապես իսլամական համերաշխության գաղափարներից ելնելով:

[10]Մանրամասն տե՛ս Ա. Փաշայան, Իսլամական համագործակցություն կազմակերպության դիրքորոշումը արցախյան հակամարտության հարցում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդներ, հ.XXXIII , Եր., 2020, էջ 181-207:

[11]OIC condemns repeated provocations and aggression by Armenian military forces against Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=23879&t_ref=14184&lan=en, (28.09.2020).

[12] OIC Expresses Concern over Destruction of Islamic Historical Shrines in Occupied Territories of Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=24928&t_ref=15226&lan=en, (11.11.2020).

թյունն է արտահայտել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ գտնվող պատմական հուշարձանների ոչնչացման և կողոպտվելու կապակցությամբ, որոնք իսլամական ժառանգության անբաժան մասն են, մասնավորապես՝ վերջերս ազատագրված Կուբաթլուի շրջանի Մամար գյուղի ավերված մզկիթը»[13]: Տեքստի շարունակության մեջ մասնավորապես նշված է. «Գրավյալ տարածքներում դարավոր հնություն ունեցող ժառանգությունների ոչնչացումը միջազգային իրավունքի և կոնվենցիաների ակնհայտ խախտում է, մասնավորապես զինված հակամարտությունների ընթացքում մշակութային արժեքների պաշտպանության 1957 թ. Հաագայի և դրան հաջորդած՝ 1954 թ. և 1999 թթ. կոնվենցիաների»[14]:

Ակնհայտ է, որ ԻՀԿ-ն տասնամյակներ շարունակ Հայաստանի դեմ օրակարգ ձևավորել է բացառապես ադրբեջանական աղբյուրների հիման վրա: Եթե գրավյալ տարածքներում մզկիթները ոչնչացվել են, ապա ինչպե՞ս բացատրել Շուշիում հայկական հիմնադրամների կողմից հիմնովին վերանորոգված Գոհար տիկնոջ Վերին մզկիթի և մեդրեսեի գոյության փաստը[15] և հակառակը՝ պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած տարածքներում բարբարոսաբար վնասվող և անարգվող բազում հայկական քրիստոնեական հուշարձանների, դրանք ալբանական ժառանգությանը վերագրելու Ադրբեջանի սադրիչ քաղաքականության փաստերը[16]: Ինչպե՞ս բացատրել Շուշիի գրավումից անմիջապես հետո բարեկարգ մզկիթում տեղի ունեցած իսլամական աղոթքն ու հնչեցված ազանը: Հակադարձելով Արցախում մզկիթների վիճակի մասին ադրբեջանական կեղծիքներին, իրանական բլոգերներից մեկը, հղում անելով Շուշիի մզկիթը, նշում է, որ Արցախում մզկիթներն ավելի լավ վիճակում են, քան Բաքվում[17]:

Վարձկան ջիհադականների մասնակցությունը պատերազմին

[13]Նույն տեղում:
[14] Նույն տեղում:
[15]Շուշիում վերականգնվել է Գոհար տկնոջ Վերին մզկիթը, https://escs.am/am/news/5191
[16]ՀՀ ԳԱԱ հայտարարությունը Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքների մշակութային ժառանգության պահպանության և մշտադիտարկման կազմակերպման մասին, https://www.sci.am/newsview.php?id=370&langid=1, (03.02.2021):
[17]إيران تكشف أكاذيب أردوغان والحكومة الأذربيجانية حول حماية الآثار الإسلامية, https://www.vetogate.com/, (27.02.2001).

Արցախյան վերջին պատերազմի ընթացքում Թուրքիայի նախաձեռնությամբ պատերազմական գործողությունների մեջ են նետվել Թուրքիայի անմիջական վերահսկողության տակ գտնվող վարձկաններ Սիրիայի տարբեր, այդ թվում՝ քրդական շրջաններից՝ թուրքոմաններ և սիրիացի արաբներ[18]: Տեղեկատվական արտահոսքեր են եղել նաև՝ Պակիստանից[19], Աֆղանստանից[20] և Լիբիայից[21] վարձկանների մասին: Այս իմաստով, սխալված չենք լինի, եթե նշենք, որ հայկական զինված ուժերը պայքարում էին միջազգային ահաբեկչության դեմ: Չնայած Բաքուն և Անկարան հերքեցին ջիհադական գաղափարներով տոգորված վարձկանների մասնակցությունը պատերազմին, սակայն վերոնշյալի մասին կան բազմաթիվ ապացույցներ ու արձանագրումներ: Վարձկանների մասնակցությունը հաստատեց Լոնդոնում գործող Մարդու իրավունքների սիրիական դիտարանը՝ նշելով, որ ադրբեջանական կողմից պատերազմին մասնակցել է մոտ երկու հազար վարձկան Սիրիայից[22]: Սիրիացի վարձկանների մասնակցությունը պատերազմին հաստատեց նաև Սիրիայի նախագահ Բաշար Ալ-Ասադը՝ նշելով նաև, որ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման մեղավորը Թուրքիան է[23]: Նշված խնդրին անդրադարձան Ֆրանսայի նախագահ Է. Մաքրոնը՝ նշելով, որ իրենք հստակ տեղեկություններ ունեն, թե ինչպես են ջիհադական խմբավորումների զինյալները Գազի Այնթապով տեղափոխվում Լեռնային Ղարաբաղ[24]: Տեղեկությունը հաստատեց նաև ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը՝ նշելով, որ ղարաբաղյան հակամարտության գոտում Մերձավոր Արևելքից վարձակների թիվը հասնում է երկու հազարի և, որ Ռուսաստանը բազմիցս զգուշացրել է արտաքին խաղացողների կանխելու դրանք: Խնդիրը շոշափվել էր նաև հոկտեմբերի 27-ին

---

[18]Վարձկանները հիմնականում Սիրիայում ալ-Կաիդայի ճյուղավորումը համարվող «Հայա Թահրիր ալ-Շամից», որը հայտնի է նաև «Ջաբհաթ ալ-Նուսրա» անունով, նաև՝ «Սուլթան Մուրադից», «Համզայից», «Սուլեյման շահից», «Սիրիայի ազատ բանակից» և այլն:

[19] Pakistan cradles terror in Azerbaijan-Armenia war, https://www.newdelhitimes.com/pakistan-cradles-terror-in-azerbaijan-armenia-war/, (26.10.2020).

[20]As Kabul backs Azerbaijan in conflict with Armenia, Afghans recall in fighting previous war, https://www.rferl.org/a/as-kabul-backs-azerbaijan-in-conflict-with-armenia-afghans-recall-fighting-in-previous-war/30880802.html, (07.10.2020).

[21]Лавров назвал число наемников в Ближнего Востока в Карабахе, https://www.gazeta.ru/army/2020/11/03/13345573.shtml, (03.11.2020).

[22]Nagorno-Karabakh battles: Over 2,000 mercenaries sent to Azerbaijan, nearly 135 killed so far, https://www.syriahr.com/en/188669/, (18.10.2020).

[23] Асад назвал Эрдогана инициатором конфликта в Карабахе, https://ria.ru/20201006/karabakh-1578356443.html, (06.10.2020).

[24]Macron says Syrian mercenaries operating in Karabakh, https://www.arabnews.com/node/1742811/world (01.10.2020).

կայացած Պուտին-Էրդողան հեռախոսազրույցի ընթացքում[25]: Հատկանշական է, որ թեման շատ լայն ու արագ տարածում գտավ միջազգային լրատվամիջոցներում[26], միջազգային տարաբնույթ կառույցների հրապարակումներում, ամրագրվեց Ռուսաստանի և Իրանի ԱԳՆ հայտարարություններում, որտեղ մտահոգություն էր հայտնվում տարածաշրջանում ահաբեկիչների հայտնվելու փաստով[27]: Վարձկան ջիհադականների ներգրավումը ռազմական գործողություններին միանգամայն նոր իրավիճակ ստեղծեց հայկական կողմի համար, որը կռվում էր ոչ միայն Ադրբեջանի, այլև՝ Թուրքիայի և թուրքական խողովակներով ներդրված վարձկանների դեմ: Վերջիններս եկել էին շփման գիծ՝ առանց իմանալու թե որտեղ են եկել, բայց իմացել են, որ գալիս են հանուն ջիհադի՝ կռվելու «անհավատների» դեմ[28]:

Հատկանշական է, որ վարձկանության նշված խնդրին արձագանքեց Ալ-Ազհարի միաբանության անդամ, սուննի աստվածաբան դր. Մուհամմադ Աբդ Ալ-Ատին: Իր հայտարարության մեջ, որը հրապարակվեց եգիպտական մամուլում, նա նշում է, որ Ադրբեջանում վարձկանների վարքագիծն անընդունելի է իսլամի տեսանկյունից: Հղում անելով Արցախում գերի ընկած սիրիացի վարձկանի վկայությանը, ով նշել էր, որ հայերի դեմ կռվում է որպես «գյավուրի»՝ ամեն գլխի համար ակնկալելով ստանալ խոստացված հարյուր դոլարը[29], Ալ-Ատին, մեջբերելով Ղուրանից և հադիսներից համապատասխան հատվածներ՝ նշում է, որ այդ վարձկանները գլխատելով, անդամահատելով մարդկանց, իրականում հանցագործություն են անում մարդկության դեմ՝ իսլամի անունից, ինչը ենթադրում է երկրային տանջանքներ ու պատիժներ: Ազհարի միաբանը նշված համատեքստում խստորեն դատապարտեց նաև Թուրքիայի քաղաքականությունը, նշելով, որ Էրդողանը ձգտում է վերականգնել օսմանյան

[25]Лавров заявил о почти 2 тысячах наемников в карабахской зоне конфликта, https://russian.rt.com/ussr/news/799092-karabah-lavrov-nayomniki, (03.11.2020).

[26]The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh, https://www.bbc.com/news/stories-55238803, (10.12.2020).

[27] Комментарий Департамента информации и печати МИД России относительно переброски иностранных наемников в зону нагорно-карабахского конфликта, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363834, (30.09.2020), Глава МИД Ирана выразил обеспокоенность присутствием террористов в районе Карабаха, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9885921, (01.11.2020)

[28]Matteo Pugglies, The role of foreign fighters in the Nagorno-Karabakh conflict, https://www.ispionline.it/en/pubblicazione/role-foreign-fighters-nagorno-karabakh-conflict-27764 (08.10.2021).

[29]'We were ordered to slaughter every Armenian in the village', https://armenpress.am/eng/news/1033852/E28098we-were-ordered-to-slaughter-every-armenian-in-the-villageE28099-captured-syrian-mercenary-says.html, (04.11.2020).

գերիշխանությունը, դառնալ մուսուլմանների սուլթանը, ինչպես իր նախնիները՝ հրի, արյան ու սրի միջոցով[30]:

Մուսուլման աստվածաբանների ու հոգևորականների աջակցությունն Ադրբեջանին

Հարկ է նշել, որ պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո Ադրբեջանին իրենց աջակցությունը հայտնեցին ոչ միայն առանձին իսլամական կրոնա-քաղաքական կառույցներ, որոնց մեջ առանձնանում է Թուրքիայի կողմից հովանավորվող պաղեստինյան «Համաս» շարժումը[31], այլև զգալի թվով մուսուլման աստվածաբաններ ու հոգևորականներ աշխարհի տարբեր կողմերից: Նրանցից շատերը պատերազմի ավարտից հետո ջերմորեն շնորհավորում էին Ադրբեջանի նախագահին՝ հաղթանակի առիթով: Ադրբեջանի և նրա դաշնակից ուժերի քարոզչության արդյունքում տասնամյակների ընթացքում ձևավորված ընկալումների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը «մուսուլմանական տարածք» է, որը զավթվել է և պետք է ազատագրվի: Իսլամական աշխարհընկալման տեսանկյունից՝ Լեռնային Ղարաբաղը «դար ալ-հարբ» («պատերազմի աշխարհ») է, որը պետք է ազատագրել՝ դարձնելով «դար ալ-իսլամ» («իսլամի աշխարհ»): Ըստ այդմ՝ Արցախում և նրա շուրջ կան բազմաթիվ մզկիթներ, իսլամական սրբավայրեր և հուշարձաններ, որոնք թշնամու կողմից «ավերվել» են և պետք է վերականգնվեն:

Պատերազմի ավարտից մեկ օր անց Ալլահ Շյուքյուր Փաշազադեի գլխավորությամբ հեռակա տեսակապով անցկացվեց համաժողով «Արդի աշխարհի խնդիրները. ատելության, ահաբեկչության, ծայրահեղականության, իսլամաֆոբիայի դրսևորումները և Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիան» խորագրով, որին մասնակցում էին մուսուլման աստվածաբաններ, ԻՀԿ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, Դիյանեթի նախագահը, Ադրբեջանում Իրանի հետ մշակութային

---

[30] (03.11.2020), https://www.vetogate.com, عالم أزهري: النظام التركي اعتاد على استخدام المرتزقة

[31] Hamas congratulates Azerbajan over Karabakh victory, https://www.aa.com.tr/en/azerbaijan-front-line/hamas-congratulates-azerbaijan-over-karabakh-victory/2038618, (10.11.2020).

կապերի իսլամական կազմակերպության նախագահը և այլք[32]: Համաժողովը ևս մի քայլ էր Ադրբեջանի կողմից՝ այլատյացության շուրջ ձևավորել Բաքվին աջակցող միջազգային շրջանակ:

Ադրբեջանի հաղթանակի հետ կապված բավական մեծ ոգևորություն նկատվեց Ռուսաստանի Դաշնության մուսուլմանների շրջանում ևս: Ռուսաստանի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Ռավիլ Գայնուդինը Ի. Ալիևին հղած շնորհավորական ուղերձում մասնավորապես արձանագրում է. «Մեծ ուրախությամբ նշում եմ, որ Ադրբեջանը և ողջ ադրբեջանական ժողովուրդը, ձեր իմաստուն ղեկավարության ներքո, հաջողությամբ անցան այս մեծ փորձությունը: Հանրապետության պետական իշխանությունը պատվով կատարեց իր պարտավորությունները սեփական ժողովրդի և ողջ միջազգային հանրության առջև»[33]: «Մեծ գոհունակությամբ միանում եմ իսլամում իմ ադրբեջանցի եղբայրների ուրախությանը՝ կապված պատմամշակութային հուշարձանների վերադարձի հետ, որոնց թվում կան Ամենազոր Ալլահի առջև ծնկի իջնելու շատ հնագույն վայրեր: Համոզված եմ, որ բոլորը կվերականգնվեն և ծառայելու են ընդհանուր մեծ գործին, որը Սուրբ Ղուրանը կտակեց մեզ. . .»[34]:

Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ ի համերաշխություն Ադրբեջանի. շիայականությունից մինչև թյուրքականություն

Պատերազմի սկզբից իրանական քաղաքական վերնախավի և հասարակության շրջանում նկատելի էր Արցախի վերաբերյալ պաշտոնական Թեհրանի արձագանքի շուրջ որոշակի բևեռացվածություն: Այս խոսույթում ներգրավված հանրույթի մի մասը համարում էր, որ կրոնական և մշակութային նկատառումներից ելնելով՝ Իրանը պետք է սատարի Ադրբեջանին, ինչը զուգորդվում էր էթնիկ ադրբեջանցիների կողմից Բաքվին

[32]Online conference on Armenian aggression against Azerbaijan held, https://www.azernews.az/nation/172506.html, (11.11.2021).
[33]Председатель Духовного управления мусульман России поздравил Президента Ильхама Алиева, https://www.trend.az/azerbaijan/politics/3340899.html, (26.11.2020).
[34]Նույն տեղում:

սատարող հանրային ճնշումներով ու բողոքի ցույցերով: Երկրոդ բևեռը մատնանշում էր, որ Լեռնային Ղարաբաղի անցումն Ադրբեջանին լուրջ աշխարհաքաղաքական հարված է Իրանին և նշանակելու է ոչ միայն թուրքական, այլ նաև իսրայելական ազդեցության աճ Հարավային Կովկասում: Այսուհանդերձ, իրանական պաշտոնական արձագանքը պատերազմին ընդգծված ադրբեջանամետ էր: Իրանի հյուսիս-արևմտյան թյուրքախոս շրջանների շիայական համայնքները պատերազմի հենց սկզբից ևս իրենց աջակցությունը հայտնեցին Ադրբեջանին: Հոկտեմբերի սկզբին սոցիալական ցանցերում ձևավորվեցին շարժումներ, իսկ իրանական մի շարք քաղաքներում, այդ թվում Թեհրանում և Թավրիզում կազմակերպվեցին բողոքի ցույցեր՝ ի աջակցություն Ադրբեջանի, որոնց ընթացքում քննադատվում էր ԻԻՀ պաշտոնական դիրքորոշման չեզոք գիծը[35]:

Այաթոլլա Ալի Խամենեին[36] այս կապակցությամբ իր պաշտոնական դիրքորոշումը հայտնեց նոյեմբերի 3-ին՝ ընդգծելով, որ Ադրբեջանն իրավունք ունի ազատագրել բռնազավթված տարածքները, որոնք պետք է վերադարձվեն Ադրբեջանին [37]: Նա ընդգծեց նաև տարածաշրջանում ապրող հայերի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, ինչը բխում է կրոնադավանական փոքրամասնությունների պաշտպանության շիայականության սկզբունքներից[38]: Միաժամանակ, Խամենեին հիշատակեց հակամարտության գոտում ահաբեկիչների առկայության մասին տեղեկությունները՝ զգուշացնելով, որ իրանական սահմանների մերձակայքում նման խմբերի տեղակայման պարագայում Իրանի կողմից վճռական հարված հասցնելն անխուսափելի կդառնա[39]:

Հարկ է նկատել, որ թե՛ իրանական մամուլում և թե՛ գրեթե բոլոր պաշտոնական հայտարարություններում, այդ թվում ուժային կառույցների, առանձին ձևով կարևորվել է պատերազմում վարձկան ահաբեկիչների ներգրավման խնդիրը և ուղղակի կամ

---

[35]Protests Erupt in Iran Backing Azerbaijan In Nagorno-Karabakh Conflict, https://www.rferl.org/a/protests-erupt-in-iran-backing-azerbaijan-in-nagorno-karabakh-conflict/30870217.html, (02.10. 2020).

[36] Հարկ է նշել, որ Ալի Խամենեին սերում է ադրբեջանախոս շիաների ընտանիքից, հայրական ընտանիքը ծագումով Ատրպատական նահանգի Խամանե քաղաքի իրանաադրբեջանական համայնքից է:

[37]راهحل پایان مناقشه قره باغ, (Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծում, ԻԻՀ Հոգևոր առաջնորդի կայք էջից), https://farsi.khamenei.ir/others-note?id=46775, (03.11.2020).

[38]بیانات مقام معظم رهبری در خصوص جنگ قره باغ؛ دیگر جای بهانه نیست, (Գերագույն առաջնորդի հայտարարությունները Լեռնային Ղարաբաղի պատերազմի վերաբերյալ. այլևս ոչ մի արդարացում), https://www.irna.ir (04.11.2020):

[39] Նույն տեղում:

անուղղակի կերպով շեշտադրվել է այդ հարցում Թուրքիայի ապակառուցողական ներգործությունը[40]: Փաստացի, ահաբեկիչները, որոնց ոչնչացումն Իրաքում, Սիրիայում, Լիբիայում Իրանի անվտանգային գերակայություններից է, այս պատերազմի արդյունքում ուղղակի սպառնալիք դարձան Իրանի հյուսիսային սահմանների համար ևս:

Իր հերթին, Ադրբեջանական ԱԳՆ-ն բարձր գնահատեց ԻԻՀ հոգևոր առաջնորդի աջակցությունը և կարևորեց հակամարտության կարգավորման նախաձեռնությամբ՝ ԻԻՀ նախագահի հատուկ բանագնաց ԱԳ փոխնախարար Սեյեդ Աբբաս Արակչիի այցը տարածաշրջան[41]: Նոյեմբերի 9-ին Բաքվում ԻԻՀ դեսպանատունը, վերստին հաստատելով Ադրբեջանին տարածքները վերադարձնելու հոգևոր առաջնորդի հնչեցրած դրույթները՝ շնորհավորել էր Ադրբեջանին Շուշիի ազատագրման կապակցությամբ՝ ընդգծելով, որ քաղաքն Իրանի և Ադրբեջանի ժողովուրդների մշակութային ընդհանրության խորհրդանիշներից մեկն է և որ՝ «Աստված տա, որ Շուշիի (հայտարարության մեջ՝ Շուշա) մզկիթի մինարեթների թաքբիրի կանչը շուտով դիպչի տարածաշրջանի բոլոր մուսուլմանների և վելայաթի կողմնակիցների հոգիներին»[42]:

Ուշագրավ է, որ մինչև Ալի Խամենեի ելույթը պատերազմական իրադարձությունների վերաբերյալ բավականին հստակ դիրքորոշումներ էին հնչեցրել Իրանի թրքախոս՝ Արդեբիլի, Արևելյան և Արևմտյան Ադրբեջան, Զանջան նահանգների օրենսդիր մարմնի ու հոգևոր առաջնորդի ներկայացուցիչները: Մեջլիսում ներկայացված հյուսիս-արևմտյան նահանգների պատգամավորների համատեղ հայտարարությունը, հղում անելով ՄԱԿ-ի չորս բանաձևերին, շեշտադրում էր, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, և որ գիտական և պատմական փաստաթղթերի համաձայն՝ իսլամական աշխարհի մաս է կազմում: Նրանք դիմում էին Իրանի կառավարությանը և մասնավորապես, ԱԳՆ-ին՝ հստակեցնելու Իրանի դիրքորոշումը՝ ի աջակցություն Ադրբեջանի Հանրապետության մուսուլման ժողովրդի և Ղարաբաղի

---

[40] *Maryam Sinaee,* Iran Warns Again Over Sunni Militants In Nagorno-Karabakh War, https://iranintl.com/en/world/iran-warns-again-over-sunni-militants-nagorno-karabakh-war, (07.11.2020).

[41] قدردانی جمهوری آذربایجان از بیانات مقام معظم رهبری درباره مناقشه قره باغ, (Ադրբեջանի Հանրապետությունը բարձր է գնահատում Հոգևոր առաջնորդի հայտարարությունները հակամարտության վերաբերյալ), https://www.irna.ir (04.11.2020).

[42] Iran congratulates Azerbaijan on liberation of Shusha, https://www.tehrantimes.com/news/454457/Iran-congratulates-Azerbaijan-on-liberation-of-Shusha, (09.11.2020).

«կեղեքված շիաների»՝ համաձայն ԻԻՀ սահմանադրության 3 և 152 հոդվածների[43]: Հոգևոր առաջնորդի ներկայացուցիչների հայտարարության մեջ նույնպես նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին և այն պետք վերադարձվի «Ահլ ալ-բեյթի» (Մուհամմադ մարգարեի տան՝ ընտանիքի ժողովրդի) երկրին, որի կառավարության գործողություններն օրինաչափ են ոչ միայն ՄԱԿ-ի չորս բանաձևերի շրջանակում, այլ նաև հիմնված են շարիաթական իրավունքի վրա, ինչն ըստ էության օրինակարգ էր դարձնում Ադրբեջանի սանձազերծած պատերազմը նաև կրոնական տեսանկյունից[44]:

Ադրբեջանում հոգևոր առաջնորդի պաշտոնական ներկայացուցիչ հոջաթ-ալ էսլամ Ալի Աքբար Աջաղնեժադը, ով զգալի հեղինակություն է վայելում հարավկովկասյան շիայական կրոնական համայնքներում՝ իր հերթին շնորհավորել էր Բաքվին հաղթանակի կապակցությամբ և ադրբեջաներեն հատուկ տեսաուղերձով, ցավակցություն էր հայտնել զոհված զինծառայողների՝ «իսլամի նահատակների» ընտանիքներին[45]:

Հարկ է նշել, որ Թեհրանի համար Ադրբեջանում շիայական ներկայացվածության հավասարակշռման հարցը մեծ կարևորություն ունի՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին շիա իսլամի և Իրանի կրոնական դիրքերի թուլացումն և սուննի իսլամի, մասնավորապես «թուրքական իսլամի» առաջխաղացումն Ադրբեջանում[46]: Ադրբեջանի շուրջ գոյություն ունեցող իրանաթուրքական հակազդեցության առավելապես զգայուն հարցերից է Իրանական Ադրբեջանի (Ատրպատական) հարցում թուրքական ազգայնական շրջանակներից եկող իրանաշիայական ինքնագիտակցության

---

43 قره باغ بیانیه مجمع نمایندگان شمالغرب در مورد, (Հյուսիսարևմտյան պալատի ներկայացուցիչների հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ), https://www.isna.ir (11.10.2020).

44 عکس / بیانیه نمایندگان ولی فقیه در استان های آذربایجان شرقی، آذربایجان غربی، اردبیل و زنجان در مورد مناقشه قره باغ, (Արևմտյան Ադրբեջանում, Արևելյան Ադրբեջանում, Արդաբիլում և Զանջանում Գերագույն առաջնորդի ներկայացուցիչները համատեղ հայտարարություն են տարածել Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաբերյալ), https://qafqaz.ir (10.10.2020).

45 حجت الاسلام والمسلمین علی اکبر اجاق نژاد نماینده ولی فقیه در سروس بن الملل خبرگزاری رسا، به گزارش جمهوری آذربایجان در خصوص درگیری های نظامی اخیر در منطقه قره باغ پیامی صادر کرد (Ադրբեջանի Հանրապետությունում Գերագույն առաջնորդի ներկայացուցիչ Հոջաթ-ուլ-իսլամ Ալի Աքբար Աջաղնեջադը հաղորդագրություն է տարածել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում վերջին ռազմական բախումների հետ կապված), https://rasanews.ir (11.11.2020).

46 Իրանա-շիայական գործոնին և դրա շուրջ Ադրբեջանում առկա միտումներին հեղինակներն անդրադարձել են առանձին հոդվածով: Մանրամասն տե՛ս Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան, Շիայականության գործոնն ադրբեջանահիրանական հարաբերություններում, Գիտական Արցախ, № 4(7), «Արցախ» հրատարակչություն, Եր., 2020, էջ 104-114:

թուլացմանն և թյուրքական էթնոլեզվական բաղադրիչի ուժեղացման միտումները, ինչն առավել ակնառու դարձավ ղարաբաղյան հարցի շուրջ վերջին գործընթացներում: Այս համատեքստում ուշագրավ է առանձնացնել երկու երկրների միջև հայտնի միջադեպը, երբ դեկտեմբերի 10-ին Բաքվի ռազմական շքերթի ժամանակ Էրդողանն արտասանեց ազերի բանաստեղծ Բախթիար Վահաբզադեի «Արազ, Արազ» բանաստեղծությունը, որը համարվում է թյուրքական ժողովուրդների միացումը քարոզող անջատողականների կարգախոսը և մատնանշում է Արաքս գետով Իրանի թյուրքախոս ժողովուրդի «բռնի բաժանումը երկու հատվածի»[47]: Այս համատեքստում Էրդողանի նշված ելույթը համահունչ է նաև ծայրահեղ ազգայնական գաղափարներ ունեցող «Գորշ գայլերի» առաջնորդ Դեվլեթ Բահչելիի մոտեցումներին: Վերջինս, չնայած թուրք-իրանական «թյուրըմբռնումը» կարգավորելու փորձին, շարունակեց կոշտ արձագանքների շարքն Իրանի ուղղությամբ՝ թվիթերյան իր էջում տեղադրելով վերոնշյալ բանաստեղծությունը[48]: Նշենք, որ Դ. Բահչելին ունի նաև Ռ.Էրդողանի և Ի. Ալիևի նախնական համաձայնությունը՝ Շուշիում հիմնելու «Գորշ գայլերի» բարձրագույն դպրոց[49]:

Էրդողանի գեղարվեստական զեղումների արդյունքում երկու երկրների միջև դիվանագիտական լարվածությունն ուժեղացավ: Իրանական ԱԳՆ կանչված Թեհրանում Թուրքիայի դեսպանին կոշտ կերպով նախազգուշացվեց, որ Իրանը թույլ չի տա միջամտելու իր տարածքային ամբողջականության հարցերին և Իրանի փառապանծ պատմությունը ցույց է տալիս, որ նա ոչ մի թիզ չի զիջելու, երբ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը: Նաև նշվեց, որ ռազմատենչ և ծավալապաշտ կայսրությունների տարածքային պահանջների դարաշրջանն ավարտված է[50]: Իրանի ԱԳ նախարար Ջ. Զարիֆն իր թվիթերյան պաշտոնական էջում հրապարակեց հետևյալը. «Նախագահ Էրդողանին չե՞ն տեղեկացրել, որ այն, ինչ նա արտասանել է Բաքվում, վերաբերում է Արաքսից հյուսիս գտնվող տարածքներն իրանական հայրենիքից բռնի

[47]«Նրանք բաժանեցին Արազ գետը և լցրեցին այն ավազով: Ես չեմ բաժանվի քեզանից: Նրանք բաժանեցին մեզ ուժով»:

[48]Amberin Zaman, Turkey-Iran tensions spike over Azerbaijan, Dec 14, 2020, https://www.al-monitor.com/pulse/originals/2020/12/turkey-iran-tensions-erdogan-azerbaijan-arrests-drug-baron.html?emailaddress=Mukuchik1209#, (18.12.2020).

[49]Grey Wolves announce opening in Nagorno Karabakh, https://www.persecution.org/2021/01/27/terrorist-organization-grey-wolves-announce-school-opening-nagorno-karabakh/, (01.27.2021).

[50]Senior official urges Erdoğan to read history accurately, https://en.irna.ir/news/84143270/Senior-official-urges-Erdo%C4%9Fan-to-read-history-accurately, (11.12.2020).

կերպով անջատելուն: Նա չգիտե՞ր, որ խարխլում է Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը: ՈՉ ՄԵԿ -ը չի կարող խոսել ՄԵՐ սիրելի Ադրբեջանի մասին»[51]:

Այսուհանդերձ, Իրանի շուրջ ձևավորված բարդ աշխարհաքաղաքական իրադրությունը և միջազգային մեկուսացվածությունը ստիպում է Թեհրանին ճկունություն դրսևորել և խնդիրները կարգավորել դիվանագիտական հարթությունում: Լարվածությունը որոշակիորեն հարթվեց արտգործնախարարներ Ջ. Զարիֆի և Մ. Չավուշօղլուի, ապա նաև նախագահներ Ռ. Էրդողանի և Հ. Ռոհանիի հեռախոսազրույցների արդյունքում[52]:

Այսպիսով, ի տարբերություն Առաջին արցախյան պատերազմի, 2020 թ. պատերազմում իրանական պաշտոնական դիրքորոշման ձևավորման հարցում էթնոկրոնական գործոնի դերը շատ ավելի զգալի էր: Այս իրողությունը պայմանավորված էր նախ և առաջ հյուսիսային շրջանների թյուրքախոս բնակչության շրջանում Բաքվի գործողությունները խրախուսող հանրային տրամադրությունների աճով և հանրային պահանջով, որոնք թեև ճնշվում էին կենտրոնական իշխանությունների կողմից, սակայն լարվածություն և սպառնալիք էին ձևավորում ներքին կայունության համար: Մյուս կողմից՝ պայմանավորված էին հակամարտության մեջ Թուրքիայի և Իսրայելի աննախադեպ դերակատարման աճով, ինչպես նաև իրանական սահմանների մոտ սուննի ահաբեկչական տարրի կենտրոնացմամբ, որը նույնպես ուղղակի սպառնալիք է Իրանի անվտանգությանը:

Պակիստանի աջակցությունը թուրք-ադրբեջանական տանդեմին

Պատերազմի ընթացքում իսլամական համերաշխության թեզի և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ռազմավարական սերտ համագործակցության շրջանակներում Իսլամաբադը հանդես եկավ Ադրբեջանի աջակցությամբ: Պակիստանը միջուկային պետություն է, մուսուլմանական աշխարհի առանցքային երկրներից է, որը մեծ ազդեցություն ունի միջազգային ջիհադական ռեսուրսի վերահսկման հարցում: Պակիստանը մինչ օրս, արցախյան հարցով պայմանավորված, չի ճանաչել Հայաստանի

[51] Javad Zarif, Twitter official, https://twitter.com/JZarif/status/1337280285398999041?s=20

[52] Turkey underlines friendly ties with Iran, https://en.irna.ir/news/84144638/Turkey-underlines-friendly-ties-with-Iran, (12.12.2020).

Հանրապետությունը, ընդգծված կերպով պաշտպանել է Ադրբեջանին ՄԱԿ-ում և միջազգային այլ հարթակներում: Հայտնի է, որ արցախյան առաջին պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմից ռազմական գործողություններին մասնակցել են պակիստանաաֆղանական վարձկան մոջահիդներ: Պակիստանը մշտապես աջակցել է թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից խրախուսվող հակահայկական հռետորաբանությունը և վերջինիս կողմից արցախյան հակամարտությունը ուժային ճանապարհով լուծելու քաղաքականությանը: Իր հերթին, թե՛ Թուրքիան, թե՛ Ադրբեջանը լիովին սատարում են Քաշմիրի խնդրի կարգավորման հարցում Պակիստանի դիրքորոշումը:

Արցախի հարցն Իսլամաբադի համար կարևորվում է նախ և առաջ Թուրքիայի հետ ռազմավարական գործընկերության ամրապնդման համատեքստում: Սուննիական ինքնությամբ երկու խոշոր ավտորիտար պետությունների և դրանց իսլամամետ առաջնորդների միջև ամրապնդվող ռազմավարական հարաբերությունների շրջանակի անդամ են նաև Թուրքիայի ազդեցության գոտու երկրները, այդ թվում՝ շիայական ինքնության համարում ունեցող Ադրբեջանը: Նշված իրողությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Կենտրոնական Ասիայի հետխորհրդային տարածք թուրք-պակիստանյան ռազմական և տնտեսական ազդեցության ընդլայնմանը համար ևս[53]: Պատահական չէ, որ պատերազմի ընթացքում համացանցում տեղեկություններ շրջանառվեցին, որ փուշթունների շրջանում գործող պակիստանյան ահաբեկչական «Ջամաաթ-ե էսլամ» և աֆղանական «Հեզբ-ե էսլամ» կառույցներից վարձական ջիհադականներ են ուղարկվել Լեռնային Ղարաբաղ: Համարվում է, որ պակիստանյան «Ջամաաթ-ե էսլամը», որին սատարում են պակիստանյան բանակի գեներալ Զիյա Ալ-Հակը և Գուլբեդդին Հեքմաթիյարի ղեկավարած աֆղանական «Հեզբ-ե էսլամ» կազմակերպությունները, նաև Էրդողանի կողմից հովանավորվող «Մուսուլման եղբայրների» գաղափարական ջատագովներն են[54]: Պատերազմի առաջին օրերից Պակիստանը հակահայկական տեղեկատվական գրոհ սկսեց մասնավորապես

[53] Александр Хроленко, “Одно сердце” в Карабахе: кому выгоден союз Азербайджана, Турции и Пакистана, Лазаревский клуб, https://lazarevsky.club/analitika/odno-serdce-v-karabakhe-komu-vygoden-s/, (19.01.2021).

[54] В Карабах из-за Гиндукуша, В противостояние Баку и Еревана включается Исламабад, https://www.kommersant.ru/doc/4549481, (28.10.2020).

թվիթերում[55]: Որպես գոհունակություն՝ ադրբեջանցիները սոցցանցերում Թուրքիայի, Ադրբեջանի դրոշների կողքին կախում էին նաև Պակիստանի դրոշը[56]:

Չնայած՝ թե՛ Իսլամաբադը, թե՛ Բաքուն, տարբեր մակարդակներում, հերքում էին Պակիստանից զինյալների ներգրավումը հակամարտության մեջ, շեշտադրելով աջակցության միայն քաղաքական և դիվանագիտական բաղադրիչները[57], ակնհայտ էր, որ արցախյան վերջին պատերազմն էապես նպաստեց Թուրքիայի, Պակիստանի և Ադրբեջանի մերձեցմանը՝ տարածաշրջանում ռազմավարական նոր առանցքի ակտիվացմամբ: Ասվածի ապացույցն է հետպատերազմական շրջանում ակտիվ եռակողմ հանդիպումները և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում վերականգնողական աշխատանքներին Իսլամաբադի ակտիվ ներգրավման ցանկությունը[58]:

Կրոնական հարցերը ևս Թուրքիայի, Ադրբեջանի և Պակիստանի օրակարգի անքակտելի մասն են: 2021 թ. հունվարին արտգործնախարարների մակարդակով եռակողմ հանդիպմանը կողմերը պայմանավորվեցին խթանելու համատեղ ջանքերը իսլամաֆոբիայի, մուսուլմանական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դեմ պայքարում, մասնավորապես տարածաշրջանային և միջազգային մակարդակներում[59]: Հարկ է նկատել, որ Պակիստանն անթաքույց շահագրգռվածություն է դրսևորում Ադրբեջանում Իրանի կրոնական և մշակութային ազդեցության թուլացման հարցում: Սուննիական ճնշման ներքո գտնվող Իրանի համար, շիայական Ադրբեջանի ակտիվ ներգրավումը Թուրքիայի և Պակիստանի քաչղաքական և կրոնական ուղեծիր բավական խնդրահարույց է Թեհրանի համար:

Եզրակացություն

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամսիներին Արցախում և նրա շուրջ լայնածավալ ռազմական գործողություններին զուգահեռ Մերձավոր Արևելքում, նրա սահմաններից

---

[55] Pakistani bots on Twitter vow to fight for Muslim majority Azerbaijan after clashes erupt with Armenia over border issue, https://www.opindia.com/2020/09/pakistanis-on-twitter-vow-to-fight-for-azerbaijan-against-armenia/, 27.09.2020.

[56]Tufail Ahmad, Pakistan's military involvement in the Nagorno-Karabakh war, https://www.memri.org/reports/pakistans-military-involvement-nagorno-karabakh-war, (09.02.2021).

[57]Tufail Ahmad, Pakistan's military involvement in the Nagorno-Karabakh war, https://www.memri.org/reports/pakistans-military-involvement-nagorno-karabakh-war, (09.02.2021).

[58]Pakistan PM assures to rebuild newly liberated lands of Azerbaijan, https://www.islamabadscene.com/pakistan-pm-assures-support-to-rebuild-newly-liberated-lands-of-azerbaijan/, (15.01.2021).

[59]Azerbaijan, Turkey and Pakistan: Countries Issue Joint Declaration of Cooperation, https://worldview.stratfor.com/situation-report/azerbaijan-turkey-and-pakistan-countries-issue-joint-declaration-cooperation, (4, 12, 2021).

անդին և ընդհանրապես՝ իսլամական միջավայրում ի հայտ եկան և ամրապնդվեցին կրոնական գործոնով պայմանավորված և իսլամական համերաշխության գաղափարներով աչքի ընկնող հակահայկական օրակարգեր ու տրամադրություններ, որոնք դրսևորվեցին Իսլամական համագործակցություն կազմակերպության հայտարարություններում և բանաձևերում, Ադրբեջանի և Թուրքիայի քաղաքական և հասարակական դիսկուրսում, միջազգային տեղեկատվական դաշտում ու սոցիալական ցանցերում: Դրանք ուղղորդվում էին Անկարայի, Բաքվի և նրանց դաշնակիցների կողմից՝ տեղեկատվական լայն գործիքակազմերի օգտագործմամբ: Բացի այդ, Ռ.Էրդողանի նախաձեռնությամբ և նրա անմիջական վերահսկողության տակ գտնվող մեծ թվով վարձկան ահաբեկիչներ նետվեցին շփման գիծ: Թուրքիայի նախագահը ռազմական, քաղաքական, դիվանագիտական, մարդկային, տնտեսական, քարոզչական ռեսուրսներ ներդրեց՝ ի սպաս Ադրբեջանի: Թուրք-ադրբեջանական տանդեմը չխորշեց կրոնական ատելություն հրահրելով ևս գեներացնել հակահայկական տրամադրություններ, ինչը անվտանգային սպառնալք դարձավ ամբողջ աշխարհում ապրող հայության համար: Պատերազմի ընթացքում հակահայկական տրամադրությունների ձևավորման հարցում թուրք-ադրբեջանական տանդեմի դաշնակիցներ դարձան Իրանի Ատրպատական նահանգի թուրքախոս շիա ադրբեջանական էլիտաները և հասարակական լայն շրջանակներ, բարձրաստիճան մուսուլման հոգևորականներ և աստվածաբաններ ամբողջ աշխարհում, առանձն մուսուլմանական պետություններ, ինչպես օրինակ՝ Պակիստանը, Աֆղանստանը և այլն: Պատերազմում հաղթանակն էլ ավելի ամրապնդեց Ադրբեջանի դիրքերը իսլամական միջավայրում, որտեղ լեգիտիմանալու և ներգրավվելու համար Բաքուն մեծ ռեսուրսներ էր ծախսել: Կարելի է արձանագրել, որ մեծամասամբ շիայական ինքնություն ունեցող Ադրբեջանին առավելապես սատարեց սուննիական աշխարհը, որն անմիջական կապ ունի Թուրքիայի գործոնի հետ:

Поддержка мусульманского мира Азербайджана во время Арцахской войны 2020 г.: от исламской солидарности к джихадизму

Параллельно с широкомасштабными боевыми действиями в Арцахе в сентябре-ноябре 2020 г., на Ближнем Востоке, за его пределами- в исламской среде в целом,

усилились и укрепились антиармянские настроения, основанные на идеях исламской солидарности. В политическом и общественном дискурсе Анкара, Баку и их союзники, с использованием широкого набора информационных инструментов, направляли публичный антиармянский религиозный дискурс как внутри своих стран, так же на международном информационном поле и социальных сетях. Турция вложила военные, политические, дипломатические, человеческие, экономические и пропагандистские огромные ресурсы в поддержку Азербайджана. При посредничестве Эрдогана на линию соприкосновения было переброшено большое количество сирийских наемников. Турецко-азербайджанский тандем не уклонялся от генерации религиозной ненависти путем разжигания антиармянских настроений, что стало угрозой безопасности армян, проживающих во всем мире. Во время войны в Иране тюркоязычные шиитские азербайджанские политическая и религиозная элита провинции Иранского Азербайджана (Атрпатакан) стали широкими союзниками в формировании антиармянских настроений. Можно констатировать, что Азербайджан, имеющий преимущественно шиитскую идентичность, при безоговорочной поддержки Анкары был поддержан также суннитским миром. Победа в войне еще больше укрепила позиции Азербайджана в исламской среде. Баку в целом смог добиться легитимизации своей агрессии в исламском мире.

Ключевые слова: *исламская солидарность, умма, тюркская солидарность, Арцах, Азербайджан, Турция, наемник, война, джихад.*

Muslim World Support to Azerbaijan in the course of 2020 Artsakh war: from Islamic solidarity to jihadism

From the time between September-November 2020, in parallel with the large-scale hostilities in Artsakh, anti-Armenian agendas and moods based on the religious factor and obvious ideas of Islamic solidarity were advanced and strengthened in the Middle East, beyond its borders, and primarily in the Islamic environment, which were manifested in both political and public discourse of Turkey and Ankara, also in international media and social networks. They were directed by Ankara, Baku and their allies using a wide range of information tools.

Besides that, on Erdogan's initiative and direct control, large number of mercenaries were thrust into the line of contact. The President of Turkey invested military, political, diplomatic, human, economic and propaganda resources in support/in favor of Azerbaijan. The Turkish-Azerbaijani tandem was not repulsive to inciting religious hatred by generating anti-Armenian sentiments, which became a security threat to Armenians living around the world. During the war, the Turkish-speaking Shiite Azeri elites of the Iranian Azerbaijan (Atropatene) province of Iran, broad public spectrum, high-ranking Muslim theologians around the world and some Muslim countries, such as Pakistan, Afghanistan, etc. became allies in the formation of anti-Armenian sentiments. The victory in the war strengthened Azerbaijan's position in the Islamic environment, where Baku had spent considerable resources to gain legitimacy and involvement. It can be stated that Azerbaijan, which has a predominantly Shiite identity, was mostly supported by the Sunni world, which has a direct connection with Ankara's unconditional support to Baku.

Key words: *Islamic solidarity, Ummah, Turkic solidarity, Artsakh, Azerbaijan, Turkey, mercenary, war, jihad.*

Аракс Пашаян, к.и.н., ведущий научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА, доцент факультета Востоковедения, ЕГУ, a_pashayan@hotmail.com

Назели Навасардян, к.и.н., старший научный сотрудник отдела Ирана, Института Востоковедения НАН РА, доцент, преподаватель Российско-армянского университета, naznav24@gmail.com

Araks Pashayan, PhD, Leading Research Fellow, Department of Arab Countries, Institute of Oriental Studies, NAS RA

Assoc. Prof., Faculty of Oriental Studies, YSU, a_pashayan@hotmail.com

Nazeli Navasardyan, PhD, Senior Research Fellow, Department of Iran, Institute of Oriental Studies, NAS RA, Assoc. Prof., lecturer at Russian-Armenian University, naznav24@gmail.com

Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանի «Հայկական քաղաքագիտական հանդես» 2021 թ. (I)

ՍՈՒՆՆԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ*

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ, ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համառոտագիր

Հետազոտության խնդիրն է՝ ուսումնասիրել Ադրբեջանի հասարական գործընթացներում սուննիական գործոնի ազդեցությունը, սուննիական արտաքին ներթափանցումների հիմնական ուղղությունները, սուննիական նոր ինքնությունների ձևավորման հիմնահարցերը և դրանց նշանակությունը սուննիական կենսատարածքի ստեղծման հարցում:

Սուննիականությունը հետխորհրդային Ադրբեջանում հիմնականում ակտիվացել է թուրքական և արաբական ուղիղ և անուղղակի ներթափանցումների արդյունքում: «Արաբական իսլամը»՝ սալաֆիականության տարբեր մեկնաբանությունների, այդ թվում՝ վահաբականության շրջանակներում, Ադրբեջան է ներթափանցել Պարսից ծոցի արաբական երկրներից՝ հիմնականում Սաուդյան Արաբիայից և Քուվեյթից: Հընթացս, Հյուսիսային Կովկասից՝ Չեչնիայից և Դաղստանից, միջնորդավորված ձևով Ադրբեջան են ներթափանցել սուննի իսլամի պահպանողական և արմատական մեկնաբանություններ: Նշված գործընթացն էապես խթանել է սուննիականության տարածումն Ադրբեջանում: «Թուրքական իսլամը», ավելի ստույգ՝ սուննի իսլամի հանաֆիական ուղղությունը Ադրբեջան է ներթափանցել ինչպես պաշտոնական՝ պետական ինստիտուտների, այնպես էլ ոչ պաշտոնական խողովակներով՝ հիմնականում գյուլենականության և սուֆիական տարիկաթների միջոցով:

Բանալի բառեր՝ Ադրբեջան, Թուրքիա, սուննիականություն, սալաֆիականություն, «փափուկ ուժ», ինքնություն, թյուրքացում:

Ներածություն

---

*Հոդվածը տպագրվել է «Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան. արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ)» **ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող Համահայկական հիմնադրամից գիտական հետազոտության** դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ադրբեջանը մուսուլմանական ինքնությամբ, քաղաքական աշխարհիկ համակարգ ունեցող երկիր է, ինչն ամրագրված է պետության սահմանադրությամբ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Ադրբեջանի մուսուլման բնակչության մեծամասնությունը շիաներ են: Անկախությունից հետո սուննիների և շիաների թվային համամասնության մասին գիտավերլուծական աղբյուրներում տարբեր տվյալներ են հրապարակվել: Որպես կանոն՝ աղբյուրների մեծ մասի վկայակոչմամբ՝ շիաները Ադրբեջանի մուսուլման բնակչության ճնշող մեծամասնությունն են: Համաձայն «CRC Report for Congress» 2004 թ. զեկույցի տվյալների՝ շիաները կազմում 67 տոկոս, սուննիները՝ 29

[1]: Ոչ պաշտոնական տվյալներով՝ վերջին տարիներին Ադրբեջանում զգալիորեն ակտիվացել են սուննիականացման միտումները և վերջին տարիներին շիաները կազմում են Ադրբեջանի բնակչության 65 տոկոսը[2]: Առանձին տվյալներով՝ սուննի-շիա դավանական հարաբերակցությունը մոտեցել է 50-50 տոկոսային շեմին[3]: Այս տեսանկյունից հետաքրքիր են առանձին փաստեր. անկախացումից հետո մինչ օրս Ադրբեջանում զգալի թվով շիայական ծագում ունեցող երիտասարդներ ընդունել են սուննիականություն: 2013 թ. ադրբեջանական մամուլում տարածվեցին տեղեկություններ, որ ոչ պաշտոնական ձևով խրախուսվում է շիայականությունից անցումը սուննիականության: Բացի սուննիական պահպանողականության կենտրոնը համարվող Սումգայիթից, 2013 թ. դեպքեր են գրանցվել Ադրբեջանի այլ քաղաքներում ևս՝ Բաքվում, Գյանջայում, Ղուբայում և Զաքաթալայում[4]:

Սուննիադավան են հիմնականում Ադրբեջանի հյուսիսային՝ ՌԴ Դաղստանի Հանրապետությանը սահմանակից շրջաններում ապրող փոքրամասնությունները՝ լեզգիները, ավարները, ցախուրները, ինգիլոյները և այլն: Հյուսիսային հատվածում ապրող տեղաբնիկ ժողովուրդները հիմնականում սուննի իսլամի շաֆիայական կրոնաիրավական ուղղության՝ մազհաբի հետևորդներ են: Բավական մեծ թվով

---

[1] CRC Report for Congress. Islam: Sunnis and Shiits, 2004, http://www.investigativeproject.org/documents/testimony/337.pdf

[2] Ronen A. Cohen, Dina Lisnyansky, Salafism in Azerbaijan: Changing the Sunni-Shiite Balance from Within, Iran and the Caucasus 23, Brill, 2019, p. 407, Galib Bashirov, Islamic discourses in Azerbaijan: the securitization of "non-traditional religious movements", Central Asian Survey, Volume 37, Issue1, 2018, p. 33.

[3]Sofie Bedford, One religion – two states?, Turkish-Azerbaijani Relations. One nation – two states?, Ed. by Murad Ismayilov and Norman A. Graham, Routledge, 2016, p. 144.

[4]Иран в тюркско-суннитском кольце: выход в союзе с Россией?, https://eadaily.com (21.12.2020)

սուննիներ են ապրում Բաքվում և Ադրբեջանի կենտրոնական շրջաններում: Ադրբեջանի անկախացումից հետո սուննիադավան ժողովուրդների շրջանում ազգային և կրոնական ինքնության զարթոնքը, արտաքին կրոնական ներթափանցումների աճին զուգահեռ, նպաստեցին սուննիական միջավայրում կրոնասիրության վերածննդին: «Պաշտոնական իսլամն» Ադրբեջանում ներկայացնող Կովկասի մուսուլմանների վարչությունը (ԿՄՎ) կարգավորում է թե՛ սուննիների, թե՛ շիաների կրոնական գործերը: Դավանական համամասնությունը պահպանելու համար վարչության շրջանակներում որպես մուֆթի պաշտոնավարում է Հաջի Սալման Մուսաևը[5]:

Ունենալով մուսուլմանական ինքնություն՝ Ադրբեջանը անկախություն ձեռք բերելուց հետո պարարտ հող դարձավ արտաքին իսլամական ներթափանցումների համար: Ադրբեջանում իրենց քաղաքական և կրոնական ազդեցությունը, բացի Իրանից, սկսեցին տարածել նաև Թուրքիան, ինչպես նաև Ծոցի սուննիական արաբական միապետությունները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Կատարը, որոնց ազդեցությունն Ադրբեջան սկսեց ներթափանցել ոչ միայն ուղղակիորեն՝ Մերձավոր Արևելքի նկատմամբ Ադրբեջանի վարած «բաց դռների» քաղաքականության արդյունքում, այլ նաև՝ անուղղակի, առաջին հերթին՝ Դաղստանի ու Չեչնիայի, նաև՝ Կենտրոնական Ասիայի միջոցով: Արտաքին սուննիական ազդեցությունները՝ հիմնականում թուրքական-սուննիական և արաբական-սալաֆիական, նպաստեցին Ադրբեջանում «ազգային իսլամի» վերաձևավորմանը, որոշակիորեն լրացրեցին գաղափարական այն բացը, որն ի հայտ էր եկել Ադրբեջանի անկախությունից հետո[6]: Թուրքիան և արաբական առանձին պետություններ քարոզչական խնդիրները լուծելու նպատակով Ադրբեջանում ներդրեցին կրոնական «փափուկ ուժի» ներթափանցման ողջ գործիքակազմը, ֆինանսական և մարդկային զգալի ռեսուրսներ: Մեծ միջոցներ ծախսվեցին սուննիական մզկիթների նորոգման ու կառուցման, կրոնական ուղղվածությամբ կրթական և մշակութային հաստատությունների ստեղծման, կրոնական կադրերի պատրաստման, ինչպես նաև ադրբեջանցի փախստականներին և

[5]2018 թ. Ի. Ալիևը Ադրբեջանում կրոնական-հոգևոր արժեքները պահպանելու համար Ս. Մուսաևին պարգևատրել է «Ադրբեջանի Հանրապետության նախագահի պատվավոր վկայականով», Салман Мусаев награжден "Почетным дипломом президента Азербайджанской Республики", https://report.az/ru/vnutrennyaya-politika/salman-musaev-nagrazhden-pochetnym-diplomom-prezidenta-aze/ (06.09.2018):

[6]Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

սոցիալական անապահով խավերին օգնելու, հետևաբար նաև՝ նրանց իսլամական կրոնական առանցք ներգրավելու համար[7]:

Արտաքին կրոնական ներթափանցումներն Ադրբեջան սահմանափակելու նպատակով 1992-2011 թթ. ընթացքում իշխանությունները «Դավանանքի ազատության մասին» օրենքում 14 անգամ փոփոխություններ ու լրամշակումներ իրականացրեցին: Կրոնական զարթոնքի ու վերափոխման տարբեր փուլեր անցնելուց հետո իսլամն Ադրբեջանում ենթարկվեց պետական խիստ վերահսկողության: 2009 թ.-ից սկսած Ադրբեջանի կառավարությունն ընդունեց մի շարք օրենքներ ու իրավական ակտեր՝ իսլամական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանափակումների և պետական վերահսկողության մեխանիզմների հստակեցման վերաբերյալ: Սահմանափակվեցին կրոնական քարոզչության հնարավորությունները, իսկ կրոնական գործիչներին արգելվեց մասնակցել համազգային ընտրություններին: 2001 թ.-ին Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի (ԿԿԱՊՀ) ստեղծմամբ կրոնական բոլոր կառույցներն անցան նրա իրավասության ներքո, և 2009 թ.-ին «Դավանանքի ազատության մասին» օրենքում արված փոփոխությամբ՝ Ադրբեջանում կրոնական քարոզչությունը հնարավոր դարձավ միայն պետական այդ կառույցի թույլտվությամբ: Նշված փոփոխությունների համաձայն՝ խստացվեց կրոնական կազմակերպությունների գրանցման կարգը և լրացուցիչ լիազորություններ շնորհվեց Կովկասի մուսուլմանների վարչությանը: 2009 թ.-ին քրեական ու վարչական օրենսգրքերի լրացուցիչ փոփոխություններով քրեականացվեցին կրոնական գրականության հրատարակումը, տարածումն ու ներմուծումը՝ առանց պատկան մարմինների համաձայնության: 2013 թ.-ին նախագահի հաստատմամբ՝ «Դավանանքի ազատության մասին» օրենքում արված լրամշակումների համաձայն՝ կրոնական գրականության, տեսաձայնագրված նյութերի օգտագործումը, հրատարակումը, տարածումն ու ներմուծումը կարգավորվում էր համապատասխան պետական մարմինների՝ ԿՄՎ-ի և ԿԿԱՊՀ-ի թույլտվությամբ: Այսուհանդերձ, լիովին մեկուսացնել կրոնի ներթափանցումն Ադրբեջանի հասարական ու քաղաքական կյանք, չհաջողվեց: Արգելքները կրոնական գործունեությունը դարձրեցին ընդհատակյա, ինչն էլ իր հերթին

7Юнусов, Ариф (2012), Исламская палитра Азербайджана. *Института мира* и *демократии, Баку*, с. 13.

իշխանություններին մղեց բռնաճնշումների: Պետությունը չխուսափեց «պաշտոնական իսլամից» դուրս գործող կրոնական առաջնորդների ու ակտիվիստների ձերբակալություններից ու բանտարկություններից[8]: Պետական մեքենայի այս հակազդեցությունն առավելապես սահմանափակեց իրանական կրոնական ազդեցությունը և նպաստեց սուննի իսլամի, մասնավորապես «թուրքական իսլամի» առաջխաղացմանն Ադրբեջանում[9]:

«Ադրբեջանական ինքնության» փնտրտուքը հետանկախության շրջանում

Անկախացումից ի վեր ադրբեջանական ինքնությունը ձևավորման նոր փուլ թևակոխեց: Ադրբեջանական ինքնության ձևավորման գործընթացը գիտական հանրույթում պայմանականորեն բաժանում են երեք հիմնական պատմական փուլի: Առաջին փուլը թվագրվում է XIX դ. երկրորդ կեսից-1920-ական թվականներ, երբ Այսրկովկասի պարսկական տիրապետությունից Ռուսական կայսրության կազմ անցումով, տեղի մուսուլմանական բնակչության շրջանում պարսկական ինքնությունը թուլացնելու նպատակով, ռուսական իշխանությունների որոշակի խրախուսմամբ, վերսկսվեց այս արեալի թյուրքականացման գործընթաց: Օսմանյան ազդեցությամբ՝ ներկայիս Ադրբեջանի հասարակական-քաղաքական միտքը, թյուրքական ինքնության շեշտադրմամբ, նոր ձևափոխումներ առաջ բերեց և որպես հետևանք, շրջանառության մեջ դրվեցին «կովկասյան թաթարներ», «ադրբեջանցի թուրքեր», «կովկասյան մուսուլմաններ» ընդհանրական հասկացությունները, որոնք կոչված էին մեկ ինքնության տակ տիպաբանելու այսրկովկասյան էթնոկրոնական և էթնոլեզվաբանական խմբերի խճանկարը[10]: Երկրորդ փուլը թվագրվում է 1930-ականներից թթ. մինչև 1990 թ., երբ խորհրդային կարգերի հաստատմամբ ազգային ինքնության ապաթյուրքականացումից անցում կատարվեց ստալինյան

[8]Տե՛ս Ter-Matevosyan Vahram & Minasyan Nelli. Praying Under Restrictions: Islam, Identity and Social Change in Azerbaijan, Europe-Asia Studies, Vol. 69, No. 5, July 2017, p. 821-827.

[9]Իրանա-շիայական գործոնին և դրա շուրջ Ադրբեջանում առկա միտումներին հեղինակներն անդրադարձել են առանձին հոդվածով: Մանրամասն տե՛ս Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան, Շիայականության գործոնն ադրբեջանահիրանական հարաբերություններում, Գիտական Արցախ, № 4(7), «Արցախ» հրատարակչություն, Երևան, 2020, էջ 104-114:

[10] Harun Yilmaz, The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity in the 1930's, Iranian Studies , Volume 46, 2013 - Issue 4, Routledge, 511-533, https://doi.org/10.1080/00210862.2013.784521

ադրբեջանականացման մոդելին և սկիզբ դրվեց ադրբեջանցի նոր էթնոսի ձևավորմանը, որում ըստ էության բախվեցին երկու չավարտված էթնոմոդելներ՝ թյուրքականացումը, որն ընդհատվեց խորհրդայնացմամբ և ադրբեջականացումը, որն ընդհատվեց ԽՍՀՄ փլուզումով: Այսպիսով, առաջին փուլն ընթացավ կրոնական (իրանա-շիայական) ինքնագիտակցության թուլացմամբ և թյուրքական էթնոլեզվական բաղադրիչի ուժեղացմամբ, իսկ երկրորդ փուլում ներդրվեց ինքնության ձևավորման միաժամանկյա երկու՝ «ադրբեջանցի» և «խորհրդային մարդ» սահմանումների մոդելը: Եվ չնայած խորհրդային իշանությունների ներդրած հսկայական ջանքերին՝ «ադրբեջանական էթնոսի» կառուցումը մինչև ԽՍՀՄ փլուզումը այդպես էլ չհասցվեց ավարտին, իսկ ադրբեջանցի էթնոնիմը այդպես էլ լիարժեքորեն չմտավ համընդհանուր հանրային կիրառության դաշտ[11]: Երրորդում՝ հետխորհրդային շրջանում ինքնության ձևավորման գործընթացի համար բնորոշ դարձավ խորհրդային շրջանից ժառանգած «ադրբեջանականացման» հայեցակարգի միաձուլումը համաթյուրքականության բաղադրիչին: Ադրբեջանում շարունակվեցին ինքնության փնտրտուքի խորհրդային շրջանից ժառանգած հայտնի միտումները, որոնք արհեստականորեն սնուցվեցին պատմության կեղծարարությամբ, հարևան ժողովուրդների մշակութային արժեքների յուրացմամբ և աղավաղմամբ, մասնավորաբար նկատի է առնվում՝ հայկականն ու վրացականը՝ ալբանականի, իրանականը՝ ադրբեջանականի վերածելու ադրբեջանական քաղաքականությունը: Եթե խորհրդային մոդելն ուղղված էր թյուրքական բաղադրիչի չեզոքացմանը, ապա հետխորհդայինը հիմնվեց գերազանցապես դրա վրա՝ երկրորդ տեղ մղելով Ադրբեջանում առկա ազգային փոքրամասնությունների էթնոդավանական և էթնոլեզվաբանական առանձնահատկությունները: Մինչդեռ թյուրքական բաղադրիչը լուսանցքայնացնող խորհրդային մոդելը շատ ավելի ճկուն էր, ընկալելի և սահմանափակում էր հանրապետության ազգային փոքրամասնությունների էթնիկական այլ ծրագրերի ստեղծման հնարավորությունները[12]:

---

[11] Harun Yilmaz, The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity in the 1930's, Iranian Studies , Volume 46, 2013 - Issue 4, Routledge, 511-533, https://doi.org/10.1080/00210862.2013.784521

[12]Մանրամասն տե՛ս Tadeusz Swietochowski, "Azerbaijan's Triangular Relationship: The Land Between Russia, Turkey and Iran," in The New Geopolitics of Central Asia, ed. Ali Banuazizi and Myron Weiner, p. 125-130, Тамара Варданян, Азербайджанцы: история одного незавершенного проекта, историко-этнологический очерк, М., Русская панорама, 2012, с. 30-45, 66:

Հատկանշական է, որ հետխորհրդային առաջին երկու տասնամյակներում Ադրբեջանի պետական մեքենան, բյուրեղացնելով կրոնական քաղաքականությունը և լուսանցքայնացնելով թե՛ իրանա-շիայական, թե՛ «արաբական իսլամի» կրոնաքաղաքական ազդեցության ընդլայնումը, ըստ էության, ադրբեջանականացման մոդելի ներդրման գործընթացը շեղեց դեպի էթնիկացում (թյուրքացում): Այս համատեքստում, կարևոր արդիականություն է ձեռք բերում հետխորհրդային Ադրբեջանում ազգային ինքնության ձևավորման կրոնական բաղադրիչի կերպափոխումների ուսումնասիրությունը: Անհերքելի է այն փաստը, որ հետանկախության շրջանում ազգային զարթոնքին զուգահեռ տեղի ունեցավ նաև իսլամական վերածնունդ, որը էթնոմշակութային բնույթ ուներ: Իսլամը «տակիայից» (Ղուրանով արտոնված իրական հավատքի քողարկումը կամ հավատուրացություն՝ հարկադրանքի և սպառնալիքների ազդեցությամբ)՝ խորհրդային շրջանին բնորոշ ոչ հրապարակային դավանման շրջանից անցում կատարեց դեպի ինքնահաստատման փուլ՝ մաս դառնալով կերպափոխվող ադրբեջանական ինքնությանը[13]:

«Արաբական իսլամն» Ադրբեջանում. սալաֆիական պլատֆորմների ձևավորումը

Հետանկախության շրջանում Ադրբեջանում ակտիվացան սալաֆիական տարբեր մեկնաբանություններ, այդ թվում՝ վահաբականությունը, որը ձևավորվելով 18-րդ դարում, Նեջդում, հետագա ժամանակահատվածներում ներթափանցել է նաև Կովկաս: Հետանկախության շրջանում այն ավելի ակտիվ ձևով Ադրբեջանում սկսեց դրսևորվել 1990-ականների սկզբին հիմնականում Ղարաբաղյան պատերազմի (1991-1994թթ.), ռուս-չեչենական պատերազմների (1994-1996 թթ., 1999 թ.) արդյունքում, սուննի-սալաֆիական քարոզիչների, Ադրբեջանում հաստատված չեչեն փախստականների, ինչպես նաև Սաուդյան Արաբիայում, Ծոցի տարբեր երկրներում կրթություն ստացած ադրբեջանցի ուսանողների միջոցով: Ադրբեջանի հյուսիսային շրջաններում սուննի իսլամի վահաբական մեկնաբանության ներթափանցմանը նպաստեց Դաղստանի հետ Ադրբեջանի սահմանը, որը տարանցիկ ճանապարհ դարձավ թե՛ վահաբական

[13]Тадеуш Светоховский, Ислам и национальное самосознание на *пограничных территориях: Азербайджан,* Религия и политика на Кавказе. Материал*ы* международной конференции. общая редакция А. Искандаряна, Ер. 2004, с. 30.

քարոզիչների, թե՛ այդ գաղափարներով տոգորված «մարտնչող իսլամիզմի» մարտիկների՝ ջիհադականների համար:

Ադրբեջանում մասնավորապես վահաբականության ակտիվացմանը մեծապես նպաստեց 1997 թ. քուվեյթցի մի բարերարի մեկենասությամբ և Իսլամական վերածննդի ժառանգության քուվեյթական կազմակերպության անունից Բաքվի Նարիմանով թաղամասում Աբու Բաքր[14] մզկիթի կառուցումը: 1998 թ., առանց Կովկասի մուսուլմանների վարչության հավանության, Քամեթ Սուլեյմանովը, ով աստվածաբանական կրթություն էր ստացել Սաուդյան Արաբիայի Մադինայի համալսարանում, որը հայտնի է որպես վահաբական ուղղվածությամբ աստվածաբանական կադրեր պատրաստող կենտրոն[15]: Մադինայից վերադառնալուց հետո համայնքի կողմից Սուլեյմանովը օրինական ճանապարհով ընտրվեց Աբու Բաքր մզկիթի, որ նույնն է թե՝ համայնքի իմամ[16]:

Աբու Բաքր մզկիթի համայնքն իրեն համարում էր ահլ ալ-սուննա վա ալ-ջամաա (*Əhli* Sünnə *vəl Cəmaə)*, այսինքն՝ սուննի իսլամի հետևորդ: Սուլեյմանովի հեղինակության շնորհիվ Աբու Բաքրը, որն Ադրբեջանի ամենամեծ սուննիական մզկիթն էր, դարձավ սուննիականության կենտրոնը: Մզկիթի գործունեությունը Բաքվի ընդգծված աշխարհիկ քաղաքային մշակույթի մեջ ստեղծեց որոշակի իսլամական մթնոլորտ, կարճ ժամանակահատվածում մզկիթը մեծ ճանաչում ձեռք բերեց: Քամեթ Սուլեյմանովի խարիզմատիկ անձը, նրա՝ արաբերենի իմացությունը, հռետորական տաղանդը, ուրբաթ օրվա՝ խուտբայի քարոզները, նպաստեցին համայնքի ճանաչմանն ու ընդլայնմանը[17]: Իշխանություններն ու «պաշտոնական իսլամի» ներկայացուցիչները արաբական երկրներից և Իրանից ներթափանցած իսլամի տարածմանը խոչընդոտելու, վարկաբեկելու, դրանցից եկող արտաքին և ներքին վտանգները վերհանելու ուղղությամբ զգալի աշխատանք իրականացրեցին: Իշխանությունների համար հատկապես մտահոգիչ էին «ոչ ավանդական կրոնական շարժումները», որոնց

[14]Մզկիթն անվանակոչվել է ի պատիվ Մուհամեդ մարգարեի զինակից և առաջին արդարադատ խալիֆա Աբու Բաքր Աս-Սիդդիկի (632-634թթ.), որի դստեր հետ մարգարեն ամուսնացած էր:
[15]Մանրամասն տե՛ս Araks Pashayan, The Saudi concept of Exporting of Wahhabism and the Islamic University of Madinah, Contemporary Eurasia, vol VI (2) 2017, p. 35-51.
[16]Sattarov, Rufat (2010) Islamic Revival and Islamic Activism in Post-Soviet Azerbaijan: Radical Islam in the former Soviet Union /ed. Galina Yemelianova/. Routledge. London, p. 187-188.
[17] Արաքս Փաշայան, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Եր., 2014, էջ 116:

հիմնական մարտահրավերը կապված էր Ադրբեջանում վերջիններիս կողմից շարիաթական պետություն ստեղծելու հեռանկարի հետ[18]:

2008 թ. օգոստոսի 17-ին Աբու Բաքր մզկիթում իրականացված ահաբեկչությունը պատճառ դարձավ, որպեսզի մզկիթը փակվի՝ անվտանգային խնդիրների պատճառաբանությամբ: Ահաբեկչության կազմակերպման մեջ մեղավոր ճանաչվեց «Անտառային եղբայրներ» անունով արմատական մի խմբավորում, որի բազմաթիվ անդամներ նշված գործով դատապարտվեցին ազատազրկման[19]: Չնայած մինչ օրս տրված խոստումներին, Աբու Բաքր մզկիթն այդպես էլ չբացվեց:

Հարկ է նկատի ունենալ, որ իշխանությունները միշտ էլ վտանգ էին տեսնում վահաբականությունից: Հատկապես մտահոգիչ էր այն հանգամանքը, որը վահաբական ուղղվածությամբ առանձին մզկիթներում հավաքագրվում էին զինյալներ՝ հարևանության և մերձավորարևելյան հակամարտություններին մասնակցելու համար: Միջազգային հակամարտություններում ադրբեջանցի զինյալների և վարձկանների մասնակցության կրոնական շարժառիթների փաստը դարձավ Ադրբեջանին մտահոգող գլխավոր թեմաներից մեկը՝ արձագանք գտնելով նաև միջազգային մամուլում: Ադրբեջանական հասարակական կարծիքը խիստ բացասական արձագանքեց հատկապես Սիրիայում ադրբեջանցի մոջահիդների փաստին: Նշված թեման առիթ դարձավ, որպեսզի արցախյան հարցը նոր հնչեղություն ստանա: Կոչեր արվեցին Սիրիայի փոխարեն կռվել Լեռնային Ղարաբաղի համար: Նշված խնդրին անդրադարձավ նաև Կովկասի մուսուլմանների վարչությունը: Շեյխ ուլ-իսլամ Փաշազադեի հավաստիացմամբ՝ Ադրբեջանում սխալ պատկերացումներ կան «հավատքի պատերազմի»՝ ջիհադի և նահատակության՝ շահիդականության մասին: Այս համատեքստում, 2014 թ. հունվարի վերջին, ԿՄՎ կադիների խորհուրդը հրապարակեց ֆեթվա, որտեղ ուրվագծվեցին ոչ միայն շահիդ հասկացողության սահմանները, այլև Սիրիայում կռվող ադրբեջանցիների ոչ շահիդ լինելու հանգամանքը[20]: Սիրիայում ադրբեջանցիների հիմնահարցին արձագանքելով՝ Ադրբեջանի խորհրդարանը 2014 թ. մարտին Քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարեց,

---

[18]Galib Bashirov, Islamic discourses in Azerbaijan: the securitization of ‘’non-traditional religious movements’’, Central Asian Survey, 2018, vol 37, no.1, p. 34-35.

[19]В Азербайджане осуждены террористы, напавшие на мечеть в Баку, https://rg.ru/2009/11/06/baku-site-anons.html, (06.11.2009)

[20]Фетва УМК по уезжающим воевать в Сирию, http://www.radioazadlyg.org (28. 01. 2014).

համաձայն որի՝ խստացան պատիժները վարձկանության և ահաբեկչության համար: Վարձկանության հոդվածով անցնողներն Ադրբեջանի նոր օրենքով պետք է դատապարտվեին 8-12, ահաբեկչության հոդվածով անցնողները՝ 10-15 տարի ազատազրկման[21]: Այսպիսով, Ադրբեջանի իշխանություններն օգտագործեցին ուժային կառույցներն ու պետական քարոզչամեքենան՝ չեզոքացնելու սալաֆիականության հետագա ընդլայնումն Ադրբեջանում, որի բաղկացուցիչներից մեկն էլ վահաբականներն էին, ոչ միայն վարկաբեկելով, այլև ստեղծելով վախեր վերջիններիս գործունեության նկատմամբ: Հարկ է նկատի ունենալ, որ սալաֆիական պլատֆորմի շրջանակներում Ադրբեջանում կենսունակ են եղել թե՛ ապաքաղաքական և թե՛ քաղաքական ու ռազմաքաղաքական ուղենիշները: Սուննիական ռազմաքաղաքական ուղղվածությամբ խմբավորումներից առանձնանում է «Սումգայիթ ջամաան»[22]: Ադրբեջանական իսլամի փորձագետ Ա. Յունուսովը հակված է համարել, որ 2001 թ. դրությամբ՝ վահաբականների տիրապետության տակ կար մոտ հարյուր մզկիթ (գործող 130- ից), իսկ նրանց մոտավոր թիվն Ադրբեջանում 25-30.000-ի շրջանակներում էր[23]: Իշխանությունները ժամանակ առ ժամանակ ներկայացնում էին Ադրբեջանի ազգային անվտանգությանը վահաբականներից եկող սպառնալիքները[24]:

Հարկ է նշել, որ Ադրբեջանում սուննի սալաֆիական հետևորդների թվի վերաբերյալ գոյություն ունեն հակասական տվյալներ: Առանձին հեղինակներ սալաֆիականների թիվը հասցրել են նույնիսկ մեկ միլիոնի[25]: Մյուս կողմից, Ադրբեջանում սալաֆիականության շրջանակներում կենսունակություն ունեցող ջիհադականության խնդիրները մտահոգության առարկա էին ոչ միայն Ադրբեջանի իշխանությունների, այլև՝ Իրանի և Ռուսաստանի համար: Շիայականության դիրքերի թուլացումը հարված է Ադրբեջանում առաջին հերթին Իրանի քաղաքական դիրքերին: Ադրբեջանի սուննիական ներուժի փոխգործակցումը Հյուսիսային Կովկասի ռուսաստանյան սուննիական համայնքների ինչպես արմատական, այնպես էլ չափավոր շրջանակների հետ լուրջ խնդիրներ է ստեղծում ռուսական անվտանգության համար:

---

[21] Воюющим в Сирии азербайджанцам грозит 12 лет тюрьмы, http://www.yenizaman.az (14.03.2014).

[22]Ronen A. Cohen, Dina Lysnsky, Salafism in Azerbaijan, նշվ. աշխ., էջ 411-414:

[23]Ариф Юнусов, Азербайджан в начале XXI века: конфликты и потенциальные угрозы http://elibrary.bsu.az/books_460/N_418.pdf, Баку, 2007, с. 117.

[24]Նույն տեղում, էջ 122-123:

[25]Ronen A. Cohen, Dina Lysnsky, Salafism in Azerbaijan, նշվ. աշխ, էջ 415:

Ասվածի ապացույցն է Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում տարբեր ժամանակահատվածներում գոյություն ունեցող համակրանքը «Կովկասի էմիրության», «Իսլամական պետության», ինչպես նաև միջազգային այլևայլ սուննիական արմատական կառույցների նկատմամբ, որոնցից շատերն, ի դեպ, մասնաճյուղեր ունեին Ադրբեջանում մինչև 2001 թ. սեպտեմբերի 11-ի Նյու-Յորքի ահաբեկչությունը[26]:

Թուրքական կրոնական ազդեցությունն Ադրբեջանում. «պաշտոնական իսլամից» մինչև գյուլենականություն

Ադրբեջանի կողմնորոշումը դեպի Թուրքիա նպաստեց, որպեսզի Անկարան օգտագործի ազգակցական և լեզվական կապերը՝ ամրապնդելու թուրքական-հանաֆիական իսլամի ներկայությունն Ադրբեջանում: Հետանկախության շրջանում Ադրբեջանի իշխանությունները սկսեցին ակտիվորեն համագործակցել թուրքական Կրոնական հարցերի նախագահության՝ Դիյանեթի (Diyanet İşleri Başkanlığı) հետ[27]: Ի տարբերություն նույն իրանցի քարոզիչների, թուրք քարոզիչներն Ադրբեջանում գործում էին ազատ ու անկաշկանդ: Թուրքիան ֆինանսավորում էր մզկիթների ու մադրասաների շինարարությունն ու նորոգումը, վերապատրաստում էր հոգևորականների, ադրբեջանցի ուսանողներին դրամաշնորհներ էր տրամադրում՝ Թուրքիայի ուսումնական, այդ թվում՝ իսլամագիտական կենտրոններում սովորելու համար, թուրք ուսուցիչներ գործուղում Ադրբեջանի տարբեր քաղաքներ, իրականացնում փորձի փոխանակում և այլն: Բացի այդ, Թուրքիան մեծ աջակցություն ցուցաբերեց Բաքվի պետական համալսարանում իսլամագիտության ֆակուլտետի ստեղծմանը: «Թուրքական իսլամի» ամրապնդման ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարվում նաև Նախիջևանում: Կասկածից վեր է, որ Դիյանեթը մեծ դեր է խաղացել Ադրբեջանում սուննիական աստվածաբանությունը և «թուրքական իսլամը» զարգացնելու հարցում[28]:

---

[26] Valiyev, Anar, The Rise of Salafi Islam in Azerbaijan, in: Terrorism Monitor, The Jamestown Foundation, Washington DC, Volume 3, Issue 13, 1 July 2005, http://www.jamestown.org/terrorism/news/uploads/ter_003_013.pdf

[27] Թուրքիայի Կրոնական հարցերի նախագահությունը (Դիյանեթ) ստեղծվել է 1924 թ. Օսմանյան կայսրության փլուզումից հետո, Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի կողմից, որպես շեյխ ուլ-իսլամի ինստիտուտի ժառանգորդ: Կառույցը պատասխանատու է Թուրքիայի թե՛ ներքին, թե՛ արտաքին կրոնական գործերը վարելու համար: Նախագահության պաշտոնական կայք էջը՝ www.diyanet.gov.tr:

[28] Raoul Motika, Islam in Post-Soviet Azerbaijan, *Archives de sciences sociales des religions*, 115, 2001, p.35.

Հարկ է նշել, որ Թուրքիայից Ադրբեջան մուտք գործեց ոչ միայն թուրքական «պաշտոնական իսլամը», այլ նաև՝ Թուրքիայում խոր արմատներ ունեցող սուֆիական տարիկաթները, որոնք Ադրբեջանում հիմքեր ունեին: Հարկ է նկատել, որ տարիկաթների տարածումն Ադրբեջանում դիտարկվում էր որպես «պաշտոնական իսլամից» դուրս գործող իրողություն, հետևաբար՝ ոչ ցանկալի: Տարիկաթների շեյխերը լայն հեղինակություն էին վայելում մասնավորապես էթնիկ փոքրամասնությունների՝ Ադրբեջանի տեղաբնիկների շրջանում: Սուֆիական-դերվիշական ավանդույթների հենքի վրա ստեղծված երգերը (մուղամներ) Ադրբեջանում ի դեպ բավական լայն տարածում ունեն[29]:

Ադրբեջան թուրքական «ոչ պաշտոնական» իսլամի ներթափանցման առումով զգալի կարևորություն և հաջողություն ունեցավ գյուլենականությունը: Ավելի քիչ հաջողություն ունեցավ սուֆիական միաբանություն համարվող նուրչիականությունը[30]: Շարժման հիմնադիրը՝ թուրք-իսլամական քարոզիչ իմամ Ֆեթուլահ Գյուլենը[31], քրդական ծագումով աստվածաբան Սայիդ Նուրչիի (1877-1960) ուսմունքի հետևորդն է: Իսլամական աշխարհի առաջընթացի նախապայման համարելով աշխարհիկ և որակյալ կրթությունը, ինչպես նաև աջակցելով իսլամի և արդիականության համատեղելիության և մյուս կրոնների հետ երկխոսության գաղափարին՝ Գյուլենը հանդես էր գալիս որպես իսլամական բարեփոխիչ և մուջթահիդ՝ իսլամական դրույթների ազատ մեկնող՝ ձգտելով մուսուլմանական հասարակությունների շրջանում ձևավորել ժամանակակից մտածողություն, ինչը կարող է համադրվել հոգևոր և համամարդկային *ընդհանրական* արժեքներով:

Առաջին անգամ գյուլենականները կամ ֆեթուլահչիները (*Fethullahcilar)* Ադրբեջան, ավելի ստույգ՝ Նախիջևան են եկել 1991 թ. վերջերին՝ ձեռք բերելով Հեյդար Ալիևի աջակցությունը: 1992 թ.-ից ի վեր գյուլենականներն Ադրբեջանում իրավունք են ստացել հրապարակել թերթեր, բացել դպրոցներ, հեռարձակել հեռուստաալիքներ, հիմնել մասնավոր ձեռնարկություններ և ընկերություններ: Ադրբեջանի իշխանությունների

[29]Ариф Юнус, Исламский фактор в Азербайджане, Баку, 2013, стр. 70-76, https://www.ipd-az.org/wp-content/uploads/2020/06/islam-fak-rus.pdf

[30]Նուրչու շարժման մասին տե՛ս Anar Valiyev, Islamic Movements in Azerbaijan, https://mesbar.org/islamic-movements-in-azerbaijan/

[31] Ֆեթուլահ Գյուլենի և գյուլենական շարժման մասին մանրամասն տե՛ս International Conference Proceedings- Muslim World in Transition: Contributions of the Gülen Movement, Dr. Ihsan Yilmaz, etc /Eds./, Leeds Metropolitan University Press, London, 2007, p. 754:

համար գյուլենականությունը կարևոր գործոն էր ոչ միայն Թուրքիայի հետ հարաբերությունների ակտիվացման, այլև Ադրբեջանում կրթական ոլորտի զարգացման, արդիականացման և թուրքական մշակույթի տարածման հարցում: Ընդհանուր առմամբ շարժումն Ադրբեջանում գրավիչ դարձավ շնորհիվ նրա, որ սինթեզում էր իսլամական և թյուրքական ուղղվածությունները, նպատակ չէր հետապնդում փոխել պետության աշխարհիկ համակարգը և առավել տարածվելու մեծ ներուժ ուներ[32]:

Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի առաջին նախագահ Ռաֆիկ Ալիևը, գյուլենականներին համարելով ջամաաթի (համայնքի) անդամներ, փաստում է, որ նրանց Ադրբեջանում հաջողվել էր էապես ընդլայնվել և ընդհուպ մուտք գործել պետական կառավարման համակարգ: Իսկ ահա 2019 թ. տված հարցազրույցում Ռ.Ալիևը նշում է, որ շիաները Ադրբեջանում մեծամասնություն են, նրանց շարքեր շատ մարդիկ են մտնում, և դա վտանգավոր է, սակայն հույս է հատնում, որ շիաները ձեռք չեն բարձրացնի Ադրբեջանի իշխանության վրա[33]:

Չնայած Ադրբեջանի մուսուլման բնակչության շիայադավան մեծամասնությանը, իշխանությունների կողմից թուրքական սուննի իսլամը դիտարկվում էր որպես ընդունելի տարբերակ, որը կարող էր չեզոքացնել Իրանից եկող քաղաքական շիայականության վտանգը: Մյուս կողմից, աշխարհիկ պետության թուրքական մոդելը համընկնում էր Ադրբեջանի իշխանությունների ձգտումներին: Չնայած դրան, որ թուրքական «ոչ պաշտոնական» խողովակներով եկող իսլամական այս գաղափարախոսությունը հրապարակայնորեն հովանավորվում էր Ադրբեջանի բարձրաստիճան իշխող վերնախավի կողմից, այնուհանդերձ 2013 թ. վերջերին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ֆեթուլահ Գյուլենի միջև սկիզբ առած հերթական հակամարտությունից, ինչպես նաև Թուրքիայում 2016 թ. հեղաշրջման փորձից հետո, որի կազմակերպման մեջ մեղադրվեցին գյուլենականները, Անկարայի ճնշմամբ գյուլենական կառույցները, այդ թվում՝ կրոնական, որոնք շատ մեծ ժողովրդականություն էին վայելում, Ադրբեջանում աստիճանաբար փակվեցին[34]:

---

[32]Տե՛ս Ариф Юнус: В Азербайджане ислам становится выражением протеста, 31.08.2016, https://www.rfi.fr/ru/kavkaz/20160829-arif-yunus-v-azerbaidzhane-islam-stanovitsya-vyrazheniem-protest

[33] В Баку нет никаких предпосылок к исламской революции, https://eadaily.com/ru/news/2019/12/08/v-baku-net-nikakih-predposylok-k-islamskoy-revolyucii-intervyu, (08.12.2019)

[34]Azerbaijan Continues Anti-Gulen Campaign, Institute for War and Peace Reporting, Sept 2, 2016, https://www.refworld.org/docid/57d02ac14.html

Ադրբեջանում կրոնական ինքնության վերաձևավորման միտումները թուրքական «փափուկ ուժի» ազդեցությամբ. «թուրքական իսլամի» ընդլայնումը

2016 թ. հեղաշրջման փորձի արդյունքում, Թուրքիայի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունն էական վերաձևավորման ենթարկվեց, որի նեոօսմանական գաղափարախոսության մեջ շեշտադրվեցին ավտորիտարիզմի, միլիտարիզմի, ազգայնական իսլամիզմի հռետորաբանության տարրերը: Նորացված հայեցակարգը գիտավերլուծական տիրույթում բնորոշվեց «էրդողանիզմ» եզրույթով[35]:

Գյուլենական շարժումը ճնշելուց և հեղափոխության փորձը կանխելուց հետո Էրդողանին հաջողվեց ձևակերպել արտաքին քաղաքականության «փափուկ ուժի» նոր մոդելը, որը թուրքական աշխարհիկությունը սինթեզեց թուրքական ազգայնականության և սուննի իսլամի թուրքական կամ հանաֆիական մեկնաբանության հետ: Արդյունքում, թյուրքական քաղաքակրթական ծավալապաշտությունն ինստիտուցիոնալացվեց պետական մակարդակում[36]: Ժամանակին պետության կողմից գյուլենականությանը պատվիրակված «փափուկ ուժի» թյուրքական մշակութային, քաղաքակրթական մոդելի արտահանման ու տարածման գործառույթն ամբողջապես դրվեց պետական ինստիտուտների, մասնավորապես Դիյանեթի վրա, որի ազդեցությունն արտաքին քաղաքականության մեջ անհամեմատ աճեց: 2017 թ. ապրիլի 16-ի սահմանադրական հանրաքվեի փոփոխություններով, որով Թուրքիան վարչապետական կառավարման համակարգից անցում կատարեց նախագահականին, Դիյանեթի նշանակությունը առավել կարևորվեց: Կառույցն ուղղակիորեն մտցվեց նախագահի աշխատակազմի մեջ[37]: Անհամեմատ ավելացավ կառույցի բյուջեն և աշխատակիցների թիվն արտասահմանում, ինչը թույլ տվեց Թուրքիայի սահմաններից դուրս ագրիսիվորեն առաջ մղել պետության շահերը[38]:

Արտաքին քաղաքականության այս վերաձևումները կիրառական նոր դրսևորումներ ստացան ոչ միայն Թուրքիայի արտաքին քաղաքական

---

[35]Տե՛ս Ihsan Yilmaz & Galib Bashirov, The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/01436597.2018.1447371?scroll=top&needAccess=true, (22, 03, 2018)

[36]Ahmet Erdi Ozturk, Islam and Foreign Policy: Turkey's Ambivalent Religious Soft Power in the Authoritarian Turn, https://www.mdpi.com/2077-1444/12/1/38/htm?fbclid=IwAR29rFOPp90iZm7hZLhFUyKcB6tdpMEykuqJWzQc8LosGqBm_qQ-7TvTT7M

[37]Նույն տեղում:

[38]Նույն տեղում:

մերձավորարևելյան, այլև հետխորհրդային և մասնավորապես ադրբեջանական ուղղության մեջ: Թուրքական «փափուկ ուժը», ընդհանուր առմամբ, կերպափոխեց Ադրբեջանի կրոնական դաշտը: Խոսքը վերջին տարիներին Ադրբեջանում թափ հավաքող սուննիականացման գործընթացի մասին է, որն ուղղակիորեն զուգակցվում է համաթուրքականության գաղափարախոսության հետ:

Էթնիկ և լեզվական ընդհանրության շնորհիվ Թուրքիային լավագույնս հաջողվեց համապատասխանեցնել իր կրոնական քարոզչությունը տեղական պահանջմունքներին և առավել գրավիչ դառնալ ադրբեջանական թիրախային լսարանների համար: Իր հերթին, ադրբեջանական հասարակության համար թուրքական մոդելը գրավիչ և ընկալելի է ոչ միայն լեզվամշակութային ընդհանրության և փոխլրացված տնտեսական կապերի, այլ նաև «զանգվածային մշակույթի» տեսանկյունից: Թուրքական «փափուկ ուժը» տևական ժամանակ է, ինչ կլանում է ադրբեջանական հասարակությունը ոչ միայն արդյունաբերական սպառողական ապրանքանիշների և հյուրընկալության ոլորտի ծառայությունների, այլ նաև աշխարհում լայն տարածում ստացած կինոարտադրության, մասնավորապես թուրքական հեռուստանովելների միջոցով[39]: Դրանց բովանդակության առանցքում հիմնականում ընկած են ընտանեկան կյանքի և ռոմանտիկ պատումների սյուժեներ՝ դրական լույսի ներքո ցուցադրելով իսլամական ավանդական կենցաղավարության և պահպանողական միջավայրի յուրօրինակությունն ու ինքնատիպությունը: Այդ ճանապարհով Թուրքիան ներկայացվում է որպես մի երկիր, որտեղ մարդիկ ապրում են՝ ներդաշնակորեն համադրելով ժամանակակից, աշխարհիկ և մուսուլմանական կենսակերպերը: Գլխավոր հերոսներն ազատորեն ոգելից խմիչք են օգտագործում, պարում են ակումբներում, համբուրվում են, սակայն կրոնասեր են, աղոթում են և հետամուտ են պահպանողական արժեքներին և ավանդական ընտանիքի մոդելին[40]:

Ադրբեջանում առանձնակի լայն սպառում ունեն պատմական հեռուստանովելները, որոնք գովազդում են օսմանյան շրջանի փառահեղ հաղթական ուղին, քարոզում են իսլամի կարևորությունը, Թուրքիայի առաջնորդության օրինակարգությունը մուսուլմանական աշխարհում, թյուրք-օսմանական ինքնության

[39]Թուրքիան ԱՄՆ-ից հետո աշխարհում հեռուստասերիալների երկրորդ խոշոր արտահանողն է, որի լսարանը հասնում է 400 միլիոնի 75 երկրներում:

[40]The influence of Turkish Soap operas in the Balkans and in the Middle East, https://www.futurelearn.com/info/courses/cultural-diplomacy/0/steps/46511

գերազանցությունը, ռազմատենչությունն ու ծավալապաշտությունը[41]: «Զանգվածային մշակույթի» և հանրային դիվանագիտության շուկայական (մարքեթինգային) ժամանակակից գործիքակազմի կիրառմամբ՝ Թուրքիայի, որպես Օսմանյան կայսրության ժառանգորդի, դիրքավորումն անթաքույց նպատակաուղղված է թյուրքական տարրի, ինչպես նաև օսմանյան նախկին հպատակ տարածքների կլանմանը[42]: Կինոարտադրության միջոցով կենսագործվում են ոչ միայն տնտեսական խնդիրներ (դրանց վաճառքից ստացվող եկամուտներ, զբոսաշրջության ծավալների աճ և այլն), այլև տարածում են ստանում թյուրքական քաղաքակրթական արժեքները: Թուրքական կինոարտադրությունն աշխարհում «մշակութային հեղափոխություն» իրականացրած հսկայածավալ ինդուստրիա է, որն էապես բարձրացրել է Թուրքիայի՝ մուսուլմանական երկրի գրավչության մակարդակը[43]: Այսպիսով, Ադրբեջանում թուրքական մշակութային, այդ թվում կրոնական ազդեցության լավագույն գործիքներից են թուրքական կինոարտադրությունը, մասնավորապես հեռուստանովելները, որոնք նպաստում են ոչ միայն թուրքական մշակույթի ու պատմության լայն հանրայնացմանը, այլ նաև թուրքերենի տարածմանը: «Փափուկ ուժի» միջոցով թիրախային լսարանները հեշտությամբ ներգրավվում են թյուրքական ինքնության արժեքաբանական դաշտ՝ խթանելով մասնավորապես ադրբեջանցի երիտասարդների շրջանում Թուրքիայի մասին դրական ընկալումների ձևավորմանը: Այս ամենն Անկարային Ադրբեջանում մրցակցային մեծ առավելություններ է տալիս՝ մուսուլմանական աշխարհի այլ երկրների և մասնավորապես Իրանի նկատմամբ[44]: Հարկ է նկատել, որ թուրքական հեռուստաալիքները մեծ տարածում ունեն նաև Իրանական Ադրբեջանում՝ էապես նպաստելով իրանական ազերիական շրջանում թյուրքական ինքնության ամրապնդմանը[45]:

---

[41]What remains from Turkish soft power in the Caucasus?, April 24, 2019, http://turkishpolicy.com/blog/31/what-remains-from-turkish-soft-power-in-the-caucasus?fbclid=IwAR1qTb2bXLKg1WVwPvbBy0Sx7Zb6Ixi-oIfvLVdPWJICtexFAjz8ZBNJwDs#_ftnref22

[42]Mathieu Rousselin, Turkish Soap Power: International Perspectives and Domestic Paradoxes, Online Journal of the Center for Governance and Culture in Europe University of St. Gallen, p. 16-23, May 27, 2013.

[43] David Rohde, The Islamic World's Culture War, Played Out on TV Soap Operas, March 9, 2012, https://www.theatlantic.com/international/archive/2012/03/the-islamic-worlds-culture-war-played-out-on-tv-soap-operas/254247/

[44]Ahmet Erdi Öztürk. The many faces of Turkey's religious soft power, Berkley center for religion, peace & world affairs | Brookings institution, geopolitics of religious soft power policy brief #2, August 2020.

[45]Mohammad Salehi & Aydin Neysani, Receptive intelligibility of Turkish to Iranian-Azerbaijani speakers, https://www.tandfonline.com/doi/full/10.1080/2331186X.2017.1326653?fbclid=IwAR2cGtSJP2GA30GmTPrJzWlop

Թուրքիայի բազմակողմ ներգրավումն Ադրբեջանում մեծապես ընդլայնել է երկու երկրների միջև դաշնակցային համագործակցության օրակարգը, որը մեծ թափ ստացավ վերջին շրջանում տարածաշրջանային անվտանգային համակարգում տեղի ունեցած ռազմաքաղաքական կերպափոխումների, մասնավորապես Իրանի միջազգային մեկուսացման, սիրիական հակամարտության և վերջապես՝ արցախյան հիմնախնդրի համատեքստում: Բնականաբար, աշխարհիկ Ադրբեջանի համար «թյուրքական եղբայրության», «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսներն ավելի համոզիչ են և հեռանկարային, քան «շիայական եղբայրության» թեզերը, որոնք որոշակի վախեր են ծնում Իրանի պահպանողական և կրոնապետական քաղաքական համակարգի նկատմամբ, ինչ էլ ռեալպոլիտիկի տեսանկյունից Բաքվին ավելի է մղում թուրքական ձգողականության ծիր[46]: Հատկանշական է, որ չնայած գոյություն ունեն բազմաթիվ տեսակետներ Իրանի Ատրպատական նահանգում ապրող թյուրքախոս շիայադավան իրանցիների և ադրբեջանցիների միջև առկա սերտ ընդհանրությունների և նույնական ինքնությունների մասին, սակայն իրականում փոխադարձ ընկալումների ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք առնչվում են նաև Իրանի նկատմամբ Ադրբեջանում առկա մոտեցումների հետ[47]:

Չնայած Ադրբեջանում հետանկախության շրջանում Իրանի կրոնական ադեցությունը բավական մեծ էր թիրախային խմբերի շրջանում, և իրանաշիայական ազդեցությունը բավականին մեծ թափ ստացավ անկախ Ադրբեջանի պատմության մեջ, այնուհանդերձ, ներկա փուլում ադրբեջանական բնակչության անհամեմատ փոքրաթիվ հատվածն է միայն ներգրավված Իրանի կրոնական առանցքում: Ադրբեջանի պետական քարոզչամեքենային հաջողվեց ժամանակի ընթացքում ձևավորել ադրբեջանական պետության աշխարհիկությանը սպառնացող «իրանական վտանգի» մասին հանրային նարատիվը, որի հիման վրա էլ ձևավորվեց օտարերկրյա կրոնական ազդեցության

---

xNg-6WnNnv0kAWIjcbBcEjyJR_0PhXQboM, Omid Shokri Kalehsar, Mehdi Solhi, Popularity of Turkish Media and its Effect on Turkish Language Learning of Azerbaijani Minority in Iran, Journal of Advanced Social Research Vol.2 No.5, July 2012, p. 252-259.

[46]Murad Ismayilov, Together but apart for twenty years, Azerbaijan and Turkey in pursuit of identity and survival, Turkish-Azerbaijani Relations. One nation – two states?, Edited by Murad Ismayilov and Norman A. Graham, Routledge, 2016, p. 4-6:

[47] Mostafa Khalili, A comparative study of ethnic identity among Azerbaijani speakers in the Islamic Republic of Iran and the Republic of Azerbaijan, http://www.apu.ac.jp/rcaps/uploads/fckeditor/publications/journal/RJAPS34_14_Khalili.pdf?fbclid=IwAR22FD6Rb1fcTOzSdSYW2gcOHws356skDYQPSD_pPi7TqKZYC8LzQelNZw4

տարածումը սահմանափակող նորմատիվային-իրավական դաշտը և ճնշման ոստիկանական գործիքակազմը:

Ադրբեջանի ազգային անվտանգությանը կրոնից եկող սպառնալիքներին, ինչպես նաև կրոնական հարցերի նկատմամբ հասարակության իրազեկվածության աճին համընթաց, ալիևյան քարոզչամեքենան կոշտացրեց կրոնական քաղաքականությունը, ոչ ավանդական կրոնական ուղղությունները ենթարկվեցին կոշտ վերահսկողության: 2009 թ. օրենքով Ադրբեջանի իշխանությունները թեև կոշտ սահմանափակումներ իրականացրեցին նույնիսկ Թուրքիայից գործուղված քարոզիչների նկատմամբ, սակայն այս պարագայում դրանք մեծապես կապված էին նաև 2009 թ. Շվեյցարիայում հայ-թուրքական հաշտության բանակցությունների հետ: Ասվածի ապացույցն է Դիյանեթի ջանքերով Բաքվի կենտրոնում կառուցված Շեհիդլար մզկիթի փակումը: Իսկ ահա 2011 թ. Բաքվի պետական համալսարանի իսլամագիտության ֆակուլտետից, Դիյանեթի բարձրագույն դպրոցից և բոլոր թուրքական մզկիթներից հեռացվեցին թուրք պաշտոնյաները, որը հիմնավորվում էր «Կրոնի ազատության մասին» օրենքի լրամշակումներով, որտեղ սահմանափակումներ կան օտար երկրների քաղաքացիների նկատմամբ: Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններում նկատված որոշ սառնությունը սակայն կարճ տևեց: Բացի այդ, պարբերաբար ստուգումներ էին իրականացվում սուննիական մզկիթներում, հայտնաբերվում, առգրավվում էր արմատական ուղղվածությամբ կրոնական գրականություն[48], կանխվում էին մզկիթներում հավաքագրման դեպքերը:

Այսպիսով, թեև պետությունը նպաստեց օտարերկրյա կրոնական ներթափանցումների նկատմամբ հանրային մերժողական ընկալումների ձևավորմանը, այնուհանդերձ, բացառություն արեց «թուրքական իսլամին», որը ձեռք բերեց ազատորեն գործելու բացառիկ մենաշնորհ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի տվյալներով՝ 2014 թ. Ադրբեջանում գործող սուննիական մզկիթների թիվը, առանձին տեղեկությունների համաձայն, ավելի շատ է[49]: Ինչպես նշում է ադրբեջանական իսլամի փորձագետ Սոֆի Բեդֆորդը. «Ադրբեջանում սուննի իսլամը ներկայացնող թուրքական կրոնական

[48] Նույն տեղում, էջ 44:

[49] Sofi e Bedford, One religion – two states?, Turkish-Azerbaijani Relations. One nation – two states?, Edited by Murad Ismayilov and Norman A. Graham, Routledge, 2016, p. 144.

շարժումներին համեմատաբար ազատ գործելու ընձեռված հնարավորությունը գիտակցված պետական քաղաքական ռազմավարություն էր»[50]:

Թուրքիայի հետ կապերի ամրապնդմանը զուգահեռ պետությունը նպաստեց հանաֆիական մազհաբի ամրապնդմանը, որի արդյունքում հարաբերականորեն թուլացավ երկրի հյուսիսային շրջաններում արմատավորված շաֆիայական մազհաբի դիրքերը[51]: Ադրբեջանի իշխանությունները, չնայած իսլամի կրոնաիրավական ուղղությունների՝ մազհաբների միջև առկա որոշակի տարբերություններին, ինչպես նաև «թուրքական իսլամի» առաջնահերթությանը, ամեն դեպքում փորձում են համահարթեցնել թե՛ սուննի-շիա հակազդեցության, թե՛ պահպանողական՝ սալաֆիական (հանբալիական) և չափավոր (հանաֆիական) սուննիական մազհաբների միջև սահմանները: Նշենք, որ Ադրբեջանը մուսուլմանական աշխարհի այն քիչ պետություններից է, որտեղ թե՛ խորհրդային, թե՛ ներկա շրջանում եղել են և կան «խառը» մզկիթներ, որոնցում հաջորդականությամբ աղոթում են շիաներ և սուննիներ: Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում Pew Reserch Center-ի 2011-2012 թթ. իրականացված հարցախույզը սուննի և շիա բնակչություն ունեցող մուսուլմանական հինգ երկրում սուննի-շիա ընկալումների մասին: Հակասությունների ամենացածր ցուցանիշով աչքի է ընկել Ադրբեջանը, որտեղ հարցվածների միայն մեկ տոկոսն է, որ երկրում սուննի-շիա լարվածության վտանգ է նկատել[52]: Հատկանշական է նաև, որ հետխորհրդային Ադրբեջանում սուննիների և շիաների միջև հանդուրժողականությունը որոշ չափով պայմանավորված էր իսլամի ճյուղերի միջև եղած տարաձայնությունների մասին խորքային գիտելիքների բացակայությամբ:

Կրոնական հարցերում պետության կոշտ սահմանափակումների հետևողական քաղաքականությունը որոշ դեպքերում մերձեցրել է տարբեր դավանական համայնքներին: Իլհամ Ալիևը վերախմբագրեց նաև «բազմամշակութայնության» (multiculturalism) այն հայեցակարգը, որին մասին խոսում էր նաև Հեյդար Ալիևը՝ նորովի սահմանելով թե՛ «ադրբեջանական ինքնության» մոդելը, թե՛ դրա կրոնական բաղադրիչը: Եթե Հ. Ալիևը ձգտում էր որոշակիորեն պահպանել «ադրբեջանական

[50]Նույն տեղում, էջ 145:

[51] Sofi e Bedford, One religion – two states?, Turkish-Azerbaijani Relations. One nation – two states?, Edited by Murad Ismayilov and Norman A. Graham, Routledge, 2016, p. 144

[52]Many Sunnis and Shias worry about religious conflict; Pew Research Center global survey of Muslims Q87, Q87IRN, Nov.7, 2013, https://www.pewforum.org/2013/11/07/many-sunnis-and-shias-worry-about-religious-conflict/

ինքնության» անկախությունը թուրքական, իրանական և արաբա-իսլամական բաղկացուցիչներից, ապա Ի. Ալիևը արդեն 2016 թ.-ից հետո «ադրբեջանական ինքնությունը» տարավ թուրքացման ճանապարհով: 2016 թ. հունվարի 11-ին Ադրբեջանի նախագահը 2016 թվականը հայտարարեց «բազմամշակութայնության տարի»: Մի քանի օր անց Բաքվի Հեյդար մզկիթում տեղի ունեցավ շիա և սուննի մուսուլմանների առաջին «միասնության աղոթք» հանդիսավոր արարողակարգը, որը շարունակական բնույթ ձեռք բերեց և տեղի է ունենում ամեն շաբաթ[53]: Հատկանշական է, որ Արցախյան վերջին պատերազմից հետո, 2020 թ. դեկտեմբերի 10-ի Բաքվում ռազմական շքերթից առաջ, Իլհամ Ալիևը, ով պաշտոնապես շիայադավան է, Ռեջեփ Էրդողանի հետ նույնպես համատեղ աղոթք (նամազ) իրականացրեց Շեհիդլար թուրք-սուննիական մզկիթում՝ սուննիական աղոթքի արարողակարգին համապատասխան[54]: Նշենք նաև, որ 2020 թ. ամռանը, երբ Սուրբ Սոֆիայի հռչակավոր թանգարան-տաճարը վերաբացվեց որպես մզկիթ, Ի.Ալիևը իր հերթին հրավիրված է եղել Ռ. Էրդողանի հետ մասնակցելու Այա Սոֆիայի միասնական նամազին[55]:

Հարկ է նկատել, որ շիա-սուննի հանդուրժողականության մասին իրականում Ադրբեջանում ձևավորվել են միֆոլոգեմներ, որոնք բնականաբար լիովին չեն համապատասխանում առկա իրողություններին: Խնդիրն այն է, որ 2003 թ. Իրաքում, իսկ հետո 2011 թ. «արաբական գարնան» դեպքերից հետո մի կողմից՝ սուննի-շիա, մի կողմից՝ ներդավանական հակասությունները սուննի իսլամի ներսում, չէին կարող անմասն մնալ և իրենց ազդեցությունը չունենալ Ադրբեջանում: Մյուս կողմից, սուննի և շիա իսլամի միջև գոյություն ունեցող դավանաբանական հակասությունները և արդի աշխարհաքաղաքական իրողությունների մասին հակոտնյա իրողությունները նույնպես կարևոր են հակասությունների սահմանները հասկանալու համար: Սակայն կրոնական հանդուրժողականության մասին թեզն իրականում պետք է Ի.Ալիևին՝ այն շաղախելու «բազմամշակութայնության» հայեցակարգին, որը մշակվել է՝ Ադրբեջանն արտաքին աշխարհում ներկայացնելու համար: Այդ նպատակին էր ծառայում նաև Ադրբեջանում

[53]Svante E. Cornell, Halil M. Karaveli and Boris Ajeganov, Azerbaijan's Formula: Secular Governance and Civic Nationhood, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, 2016, November 23, 2016, p. 111-112.
[54]Başkan Erdoğan, Azerbaycan Cumhurbaşkanı İlham Aliyev'le birlikte törenler öncesi Bakü'de bulunan Şehitler Mescidi'ne gitti, https://www.takvim.com.tr/guncel/2020/12/10/baskan-recep-tayyip-erdogan-ile-azerbaycan-cumhurbaskani-ilham-aliyev-zafer-gecidi-toreni-oncesinde-sehitler-mescidinde-sukur-namazi-kildi (10.12.20)
[55]Ильхам Алиев приглашен на первый намаз в мечеть Айя-София, https://moscow-aku.ru/news/politics/ilkham_aliev_priglashen_na_pervyy_namaz_v_sobore_svyatoy_sofii/

ազգային ուղղվածությամբ հոգևորականների դաս ստեղծելու իշխանական ձգտումները, որոնք ընդունելի կլինեն ինչպես սուննիների, այնպես էլ շիաների համար, մասնավորապես թույլ չտալով շիայական համայնքների համար կարևորագույն բարձրաստիճան հոգևորականների՝ մուջթահիդների և «մարջայ-ե թաղլիդի» ինստիտուտների ձևավորումն Ադրբեջանում[56]:

Իշխանություններն անում են հնարավոր ամեն ինչ՝ պահպանելու միջդավանական հանդուրժողականության ընդհանուր պատկերն Ադրբեջանում՝ ձգտելով քողարկել խնդիրները: Ակնհայտ է, որ սուննիների և շիաների միջև գործող զսպման մեխանիզմները ցանկացած մուսուլմանական երկրում բավական փխրուն են, միշտ էլ ենթակա արտաքին ու ներքին գործոնների ազդեցությանը: Ներկայումս, թյուրքական բաղադրիչի շեշտադրմամբ ազգաշինության պաշտոնական քաղաքականությունը էթնո-կրոնական, էթնո-լեզվական հակասությունների մեջ մտնելով ազգային փոքրամասնությունների ինքնությունների հետ՝ Ադրբեջանում արդյունավետություն կարող է ապահովել միայն այն պարագայում, եթե կովկասյան և իրանական ծագում ունեցող փոքրամասնությունները պատրաստ լինեն ներգրավվել և մասնակցել թյուրքականացման էթնոնախագծին, որը ենթադրում է ներհասարակական հակասությունների աճ, այդ թվում արտաքին շահառուների ներգրավմամբ, և ձուլման ոչ հարթ գործընթաց[57]:

Մեր պատկերացմամբ՝ Ադրբեջանում դավանական հանդուրժողականության կարևոր հենասյուներից մեկը հակահայկական տրամադրությունների ահագնացող թափն է, որի միջոցով Ադրբեջանի իշխանությունները փորձել ու փորձում են համախմբել հասարակության տարբեր շերտերի: Հետանկախությունից ի վեր Ադրբեջանի իշխանությունները արմատավորեցին քրիստոնյա հայերի նկատմամբ արտաքին թշնամու կերպարը, որին մեղավոր համարեցին 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումների (ըստ ադրբեջանական դիսկուրսի՝ «հայ-մուսուլմանական պատերազմ»), հետագայում՝ արցախյան պատերազմում իրականացված «պատերազմական հանցագործությունների» համար[58]: Հակահայկական քսենոֆոբիան

[56]Ronen A. Cohen, Dina Lisnyansky, Salafism in Azerbaijan: Changing the Sunni-Shiite Balance from Within, Iran and the Caucasus 23, Brill, 2019, p. 409-410.
[57] Նույն տեղում, էջ 67:
[58]Nijal Mammadli, Islam and Youth in Azerbaijan, Baku research Institute, 7 June, 2018, https://bakuresearchinstitute.org/islam-and-youth-in-azerbaijan/, (20.12.2020)

դարձավ ոչ միայն կրոնական համախմբման կարևոր գործիքակազմ, այլ նաև լրացուցիչ շաղախ ադրբեջանաթուրքական գործակցության համար։

Վերոշարադրյալն էլ ավելի ակնհայտ դրսևորվեց 2020 թ. Արցախում Ադրբեջանի ռազմական հաղթանակից հետո։ Ադրբեջանը ձգտում է արտաքին աշխարհին ներկայանալ նոր կերպարով՝ որպես հանդուրժողականության, մուսուլմանական աշխարհիկության, բազմամշակութայնության և խաղաղասիրության «ջատագով»՝ չխորշելով շարունակել հակահայկական ռասիզմի և քսենոֆոբիայի իր ավանդական քաղաքականությունը։

Ամփոփում

Այսպիսով, անկախացումից հետո Ադրբեջանի հասարակական, այդ թվում՝ տեղաբնիկ սուննիադավան ժողովուրդների շրջանում նկատվեց իսլամական զարթոնք։ Բացի այդ, արտաքին՝ թուրքական և արաբական, կրոնական ներթափանցումների ձևավորման արդյունքում, ինչպես նաև հետանկախության շրջանին բնորոշ արժեքային կերպափոխման ազդեցությամբ ձևավորվեցին նաև կրոնական նոր ինքնությամբ աչքի ընկնող շրջանակներ։ Այս գործընթացի վրա, ինչպես նշեցինք, մեծ ազդեցություն ունեցավ նախ «թուրքական իսլամը»։ Այն Ադրբեջան ներթափանցեց երկու ճանապարհով՝ պաշտոնական, որը համակարգեց Կրոնի հարցերով նախագահությունը՝ Դիյանեթը, և ոչ պաշտոնական, որի ամենահանգուցային ուղղությունը գյուլենականությունն էր։ Գյուլենականության հետագա ընդլայմանն Ադրբեջանում խոչընդոտեց Էրդողանի և Գյուլենի միջև ձևավորված հակասությունները, ինչպես նաև Թուրքիայիում հեղաշրջման անհաջող փորձը։ Անկարայի ճնշմամբ՝ գյուլենականների գործունեությունն Ադրբեջանում արգելափակվեց։ Գյուլենականության «փափուկ ուժի» գործառույթները ստանձնեց Դիյանեթը։ Թուրքական երկու ուղղություններն էլ «փափուկ ուժի» դրսևորումներ էին։ Թուրքիայի և Ադրբեջանի փոխլրացված տնտեսական կապերը, համագործակցությունը ամենատարբեր ոլորտներում և ռազմաքաղաքական դաշինքը սնուցվում են Թուրքիայի «փափուկ ուժի» լայն գործիքակազմով, որի բաղադրիչներից են՝ հանրային, խորհրդարանական և թվային դիվանագիտությունը, սոցիալ-մշակութային, կրթական տարատեսակ ծրագրերը, դրամաշնորհները և այլն։

Ադրբեջանի թուրքական կողմնորոշումը կարևոր դեր խաղաց ոչ միայն ադրբեջանական ինքնության կերպափոխումներում, այլ նաև շիա իսլամի նահանջի և սուննի իսլամի դիրքերի ամրապնդման հարցում: Ադրբեջանում թուրքական «փափուկ ուժի» գործիքակազմի շնորհիվ հնարավոր դարձավ ձևավորել թուրքական կենսակերպի, բարքերի և թուրքական մշակույթի գրավչությունն ադրբեջանական հասարակության թիրախային լսարանին: Թուրքական «փափուկ ուժի» ընդլայնումն առաջիկա տարիներին կհանգեցնի շիա իսլամի և Իրանի կրոնական դիրքերի էլ ավելի թուլացմանը, ինչը անմիջական կապ ունի ոչ միայն Իրանի կրոնապետական քաղաքական համակարգից եկող վտանգների և վախերի, այլև Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական սերտ համագործակցության հետ: Ադրբեջանում Թուրքիայի շոնդալից հաջողություններն ուղիղ կապ ունեն նաև Արցախյան վերջին պատերազմում Ադրբեջանին Թուրքիայի անվերապահ աջակցության և Ադրբեջանի հաղթանակի հետ: Ենթադրելի է, որ առաջիկա տարիներին Ադրբեջանում ավելի մեծ թափ կստանան սուննի մզկիթների կառուցումը, սուննի, մասնավորապես աստվածաբանության թուրքական (հանաֆիական) մեկնաբանության զարգացումը, հասարակության մեջ սուննիական ընկալումների խորացումը, որը կզուգորդվի «թուրքական փափուկ» ուժի հարաճուն ընդլայնմամբ:

Մյուս կողմից, սալաֆիական պլատֆորմի կամ «արաբական իսլամի» շրջանակներում գործող սուննի իսլամի պահանողական մեկնաբանությունները, որոնցից մեկն էլ վահաբականությունն է, Ադրբեջանում այլևս իրողություն է, որը «թուրքական իսլամի» հետ համեմատած ավելի ստվերային դիրքում է: Նման իրավիճակում սալաֆիականությանն Ադրբեջանում առաջիկայում անհրաժեշտ կլինեն ադապտացիոն նոր մեխանիզմներ՝ «թուրքական իսլամի» նկատմամբ հավասարակշռությունը պահելու նպատակով:

THE MAIN TRENDS OF SUNNIZATION IN AZERBAIJAN: TRANSFORMATIONS OF RELIGIOUS IDENTITY

After the independence, an Islamic awakening was observed in certain public circles of Azerbaijan, including the indigenous Sunni peoples. Besides, as a result of the externalization of Turkish-Arab religious penetrations, as well as under the influence of value transformations

typical of the post-independence period, prominent circles with a new religious identity were formed. As we mentioned "Turkish Islam" had a great influence on this process. It infiltrated into Azerbaijan in two ways: official, which coordinated the Presidency of Religion-Diyanet, and unofficial, the most crucial direction of which was Gulenism, which was later ousted after being banned in Turkey under pressure from Erdogan. The whole introduction of the Turkish "soft power" toolset in Azerbaijan, which consists of the wide coverage of modern Turkish culture, gradually led to the Turkification of the "Azerbaijani identity", which will naturally gain new momentum after the last Karabakh war. Meanwhile universal model of religious and ethnic tolerance and “multiculturalism” is presented to the outside world by the Aliyev regime to move forward in a new transformed manner.

On the other hand, the "Arab Islam" was spread in the independent Azerbaijan by the Gulf countries, mainly Saudi Arabia and Kuwait, with the help of Arab missionaries, Azerbaijani students studying in the Persian Gulf, and also penetrated through Dagestan, Chechnya, etc., contributing to the spread of Salafist interpretations of Islam. Unlike the "Turkish" /Hanafi mazhab/, "Arab Islam" is more strictly controlled by the national security services of Azerbaijan, in order to prevent its politicization and radicalization. Broadly speaking, Sunnism, which stands out in Azerbaijan with both moderate, conservative and radical accents, has become an important component of religious identity. It should be noted that Sunni expansion and Turkization tendencies, as well as a tough state policy to oust Iranian religious influence, over time dealt a significant blow to the political influence of Iran and the positions of Shiite Islam in Azerbaijan.

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ СУННИТИЗАЦИИ В АЗЕРБАЙДЖАНЕ: ТРАНСФОРМАЦИИ РЕЛИГИОЗНОЙ ИДЕНТИЧНОСТИ

После обретения независимости в определенных общественных кругах Азербайджана, включая коренные суннитские народы, наблюдалось пробуждение ислама. Кроме того, в результате турецко-арабских религиозных проникновений, а также под влиянием культурно-ценностных трансформаций, характерных для периода после независимости, сформировались социальные круги с новой религиозной идентичностью и «турецкий ислам» оказал большое влияние на данный процесс. «Турецкий ислам»

проникал в Азербайджан двумя путями: официальным, который координировало Управление по делам религии - Diyanet, и неофициальным, наиболее важным направлением которого стал «гюленизм», который позже, после подавления в Турции был запрещен также в Азербайджане. Усиленное внедрение турецкого инструментария «мягкой силы» в Азербайджане, с упором на распространение турецких культурно-религиозных ценностей, постепенно усилил процесс тюркизации «азербайджанской идентичности», повлияв также на популяризацию «турецкого ислама», которая получила новый импульс после последней карабахской войны 2020 г.. Официальная политика построения нации, с упором на тюркский компонент, со стороны режима Алиева преподносится внешнему миру как исламская универсальная модель религиозно-этнической толерантности и «мультикультурализма», что во многом противоречит этнорелигиозной, этнолингвистической идентичности национальных меньшинств. В независимом Азербайджане «арабский ислам» распространялся странами Залива, в основном, Саудовской Аравией и Кувейтом, с помощью арабских миссионеров, азербайджанскими студентами, обучающимися в Персидском заливе, а также опосредованно проникал через Дагестан, Чечню и т.д., способствуя распространению салафитских интерпретаций ислама. В отличии от «турецкого» (ханафитского мазхаба) «арабский ислам» более строго контролируется службами национальной безопасности Азербайджана, с целью предотвращения его политизации и радикализации. В целом, суннизм, который выделяется в Азербайджане как умеренными, консервативными, так и радикальными акцентами, стал важным компонентом религиозной идентичности. Суннитская экспансия и тенденции тюркизации, а также жесткая государственная политика по вытеснению иранского религиозного влияния, со временем нанес значительный удар по политическому влиянию Ирана и позициям шиитского ислама в Азербайджане.

«Գիտական Արցախ» պարբերական, 2021 թ., 1-ին (8-րդ) համար

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀԱՐԱՎԵՐՆԵՐ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Վրաստանում սալաֆիականության և իսլամական արմատականության ծավալման հիմնական առանձնահատկություններն ու միտումները, վեր հանել այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնց բախվում է Վրաստանը՝ հետևապես նաև տարածաշրջանը:

Հոդվածի խնդիրներն են՝ քննարկել Վրաստանի իսլամադավան համայնքներում սունի իսլամի արմատական ուղղությունների տարածման ներքին և արտաքին դրդապատճառներն ու ազդակները, նախադրյալները և հետևանքները, վրացական հասարակության մեջ վերջիններիս ինտեգրման խնդիրները: Հետազոտվում են Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների շրջանում, որոնք շիաներ են, սալաֆիականության և սունի իսլամական ծայրահեղականության նպատակաուղղված քարոզչության պատճառներն ու հետևանքները:

Հոդվածը գրվել է բազմալեզու գիտական վերլուծությունների և միջազգային մամուլի, թեմային առնչվող նյութերի, հայտարարությունների, ելույթների, վերլուծական զեկույցների, պաշտոնական և ոչ պաշտոնական լրատվության մշտադիտարկման հիման վրա՝ պատմավերլուծական և պատմաքաղաքագիտական քննության մեթոդաբանությամբ:

Հետազոտության արդյունքում հեղինակները հանգել են այն եզրակացության, որ Վրաստանում հետևողականորեն ծավալվող սունի իսլամի սալաֆիական ուղղությունը և արմատականությունը լրջագույն սպառնալիք են ոչ միայն Վրաստանի, այլ նաև տարածաշրջանում անվտանգային միջավայրի համար: Վրաստանի իշխանություններն կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Հետևաբար, այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ հարակից տարածքներ անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան կարող է որոշակի զարգացումների դեպքում վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Ծայրահեղական սունիի իսլամական գաղափարաբանության ծավալումը Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջի: Այս երևույթը, բնականաբար, ազդում է ոչ միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլ փոխում է առկա աշխարհաքաղաքական ուժային հարաբերակցությունը: Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

Հիմնաբառեր՝ *Վրաստան, Պանկիսի կիրճ, Աջարիա, իսլամական արմատականություն, սալաֆիականություն, Իսլամական պետություն (ԻՊ):*

Ներածություն

2020 թ. արցախյան պատերազմի հետևանքով տարածաշրջանում սահմանների վերափոխմամբ պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերն ու ձևավորված անկայունությունն արժևորում են իսլամական գործոնի և դրա ծավալման հեռանկարների ուսումնասիրության կարևորությունը:

Հարավային Կովկասը մշտապես գտնվել է կրոնների և քաղաքակրթությունների խաչմերուկում, որտեղ բախվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային դերակատարների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը, որոնց փոխակերպումները և վերադասավորումներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում տարածաշրջանային ընդհանուր անվտանգային միջավայրի վրա:

Ակներև է, որ 2020 թ. արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սունիի ահաբեկչական տարրով (գերազանցապես թուրքմեններ) վերաբնակեցման շրջանառվող ծրագրերն էապես նպաստելու են տարբեր իսլամական ուժերի և դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանում առկա հավասարակշռությունը: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանի՝ տվյալ

դեպքում Վրաստանի իսլամադավան համայքների ուսումնասիրությունը, որոնք կարող են կամրջել ավանդական իսլամական կրոնամշակութային արժեհամակարգերը և դառնալ գործիք՝ ծայրահեղական իսլամի տարածաշրջան ներթափանցման համար:

Հայաստանի սահմանակից չորս պետություններից երեքն իսլամադավան են՝ իրենց բնակչության բացարձակ մեծամասնությամբ: Միակ քրիստոնյա երկիրը Վրաստանն է, որտեղ իսլամը երկրորդ ամենատարածված կրոնն է[59]: Մուսուլմանական համայնքները Վրաստանում պարփակ ապրում են Պանկիսի կիրճում, Քվեմո Քարթլիի շրջանում և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում: Կան նաև փոքր մուսուլմանական բնակավայրեր Կախեթիի, Քվարելի, Թելավի և Սագարեջո վարչական շրջաններում (էթնիկ ադրբեջանցիներ), ինչպես նաև Ծալկայի, Ջավախքի և Գուրիայի շրջաններում (Աջարիայից այստեղ հաստատվածներ և մսխեթցի թուրքերի փոքր խմբեր)[60]: Թբիլիսիում բնակվում է մոտ 16.000 մուսուլման[61]: Ակնհայտ է, որ բացի Ջավախքից, մուսուլմանները գերակշիռ մեծամասնություն են կազմում Հայաստանի հետ սահմանակից բոլոր բնակավայրերում:

Պանկիսի կիրճի մուսուլմանական համայնքն «ավանդական իսլամի» և սալաֆիականության առանցքում

Պանկիսի կիրճում քիստերը[62] սկսեցին հաստատվել դեռևս 1840-ական թվականներից և վրացական համայնքների հետ սոցիալ-տնտեսական սերտ շփման արդյունքում կարողացան ինտեգրվել տեղական միջավայրում՝ չնայած կրոնական տարբերակվածությանը: Քիստերը սուննի իսլամի շաֆիայական մազհաբի՝

[59]2014 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում բնակվում է 400.000 մուսուլման, որը կազմում է երկրի բնակչության 10.7 %-ը: National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf(10.03.2021).

[60]Kahraman A., Azeris and Muslim Ajarians in Georgia: The Swing between Tolerance and Alienation." Nationalities Papers, vol. 49:2, 2020, p. 309, Mikadze E., "L'islam en Ge´orgie", Me´moire de DEA, IEP de Paris, 1995, Mikadze E., "L'islam en Adjarie: Trajectoire historique et implications contemporaines", Cahiers d'Etudessur la Me´diterrane´e Orientale et le Monde Turco–Iranien, No 27, 1999, pp. 241–261.

[61] Сихарулидзе А., Урушадзе М., Ислам в Грузии и политика интеграции, Пути к миру и безопасности, 2016. № 2(51), стр. 72. DOI: 10.20542/2307-1494-2016-2-71-86.

[62]Քիստերը չեչենական էթնիկ ենթախումբ են, Վրաստանում ապրում են Պանկիսի կիրճում՝ Կախեթ շրջանի Ախմեթ համայնքում: National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf. (10.03.2021).Վրաստանում քիստական համայքի մասին մանրամասն տե՛ս https://osgf.ge/wp-content/uploads/2019/05/Analytical-Report-ISSA-ARM.pdf

կրոնաիրավական դպրոցի հետևորդներ են: 2014 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն Վրաստանում էթնիկ քիստերի թիվը 5700 է[63]: Տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների համաձայն՝ Պանկիսի կիրճում բնակվում է նաև 230 չեչեն, որոնք երկրում հաստատվել են դեռևս 1990-ականներին[64]: Վերջիններս թեև փախստականի կարգավիճակ ունեն, այնուամենայնիվ բավական լավ ինտեգրված են տեղի քիստ բնակչության շրջանում[65]:

Քիստական համայնքի մեկուսացումը վրացական միջավայրից սկսվեց երկրի անկախացումից հետո: Խորհրդային Միության կազմալուծման, աթեիզմի և կոմունիստական գաղափարախոսության քայքայման արդյունքում առաջացած «գաղափարական վակուումը»[66] խորհրդային ժողովուրդներին և ազգություններին կանգեցրեց ազգային և էթնոդավանական ինքնությունների փնտրտուքի առաջ[67]: Վրաստանում կրոնական ինքնությունների նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ վերելք ապրեց. հետզհետե ուղղափառ քրիստոնեությունը դարձավ վրաց ազգայնական ինքնության և գաղափարախոսության կարևոր բաղադրիչը: Ի հակադրություն՝ մուսուլմանները սկսեցին ինտեգրվել ինչպես իսլամական տարբեր երկրներում գործող, այնպես էլ վերազգային իսլամական կառույցներին՝ դառնալով արտաքին ազդեցության հնարավոր թիրախ:

1990-ական թվականներին Վրաստանում տիրող քաղաքական, տնտեսական և սոցիալական ծանր իրավիճակը Պանկիսի կիրճում կրկնապատկվեց նաև կենտրոնական և տեղական իշխանությունների շրջանում կոռուպցիայի լայն տարածմամբ: Ըստ որոշ հետազոտողների՝ Չեչնիայում զինված հակամարտությունը դաձավ քիստերի՝ վրացական հասարակությունից մեկուսացման հիմանական

---

[63] National statistics office of Georgia (Geostat), 2014, General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf. (13.03.2021).

[64] 2002 թ. մարդահամարի տվյալներում՝ Կիրճի քիստերի թիվը 7110 է, չեչեններինը՝ 1271, ինչը վկայում է արտագաղթի մեծ տեմպի մասին, Искандарян А,.Локальный очаг джихадизма в условиях расколотой исламской общины Грузии, Исламские радикальные движения на политической карте современного мира, Выпуск 2, Северный и Южный Кавказ, от. ред. Саватеев А., Нефляшева Н., Кисриев Э., М. 2017, стр. 522.

[65]Islam in Georgia: Policy and integration, Research report, Caucasian House, The Center of cultural relations, Tbilisi, 2016, p. 16

[66]Huntington S. P., The Clash of Civilizations Remaking of World Order, 1997. New York, Simon and Schuster, p. 96.

[67]Agadjanian A.,Revising Pandora's Gifts: Religious and National Identity in the Post-Soviet Societal Fabric, Europe-Asia Studies, 2001,53 (3), 473-488, p. 474.

պատճառներից մեկը[68]: Տարբեր աղբյուրների համաձայն՝ Չեչենական առաջին և երկրորդ պատերազմների արդյունքում հազարավոր չեչեն փախստականներ հաստատվեցին Պանկիսի կիրճում, ինչն էականորեն փոխեց երկրամասի սոցիալական պատկերը[69]: Այստեղ հաստատվեցին նաև զինված խմբավորումներ, որոնք պարբերաբար անցնում էին Վրաստանի սահմանը՝ ընտանիքներին այցելելու, անհրաժեշտ նյութական ու սննդային պաշարներ ձեռք բերելու և բուժում ստանալու նպատակով[70]: Զուգահեռաբար Կիրճ ներթափանցեց սուննի իսլամի սալաֆիական ուղղությունը[71]: Սոցիալական ինտեգրման, մասնագիտական կայացման և առաջխաղացման հնարավորությունների սակավությունը, երկրում կրթության ցածր որակը, ինչպես նաև մեկուսացվածությունը Վրաստանի այլ շրջաններից, ստիպեցին տեղացի երիտասարդներին հակվել դեպի սալաֆիական իսլամը՝ որպես ինքնադրսևորման և ինքնարտահայտման հնարավոր միջոց:

Հյուսիսային Կովկասում պատերազմական իրողություններով պայմանավորված՝ Վրաստանի կառավարությունը բախվեց նաև Պանկիսում անվտանգային իրավիճակի սրմանը: 2000-ական թվականներից Վրաստանի կառավարությունը լայնածավալ միջոցառումներ սկսեց իրականացնել կիրճում իրավիճակը վերահսկողության տակ առնելու ուղղությամբ: Ռուսաստանի Դաշնությունը ևս ընդգծված կոշտ դիրքորոշում որդեգրեց Պանկիսի կիրճի գործընթացների նկատմամբ՝ դրանք դիտարկելով բացառապես իր անվտանգության և հակահաբեկչական գործողությունների առանցքում:

Մինչ 2000-ական թվականները Պանկիսի կիրճը վերահսկողությունից դուրս տարածք էր, որտեղ անարգել գործում էին հանցագործ զինյալ խմբավորումներ, որոնցից ամենահայտնին Ռուսլան Գելաևի[72] ջոկատն էր. կիրճն այդ տարիներին ասոցացվում էր երեխաների առևանգման, թմրանյութերի, զենք-զինամթերքի առքուվաճառքի և այլ

---

[68]Hahn G. M., The Caucasus Emirate Mujahedin: Global Jihadism in Russia's North Caucasus and Beyond, 2014, p. 33.

[69]Shultz R. H., Dew Andrea J., Insurgents, Terrorists, and Militias: The Warriors of Contemporary Combat, 2006, p. 144.

[70]Նույն տեղում:

[71] Goguadze G., Kapanadze S., Daesh and Challenges Facing Georgia, Georgia's Reforms Associates (GRASS) Policy Document, p. 10.

[72] Sageman M., Hutzley J. D., and Unmasking Terror, A Global Review of Terrorist Activities, Volume 3, 2007, p. 332.

հանցագործությունների հետ[73]: 2002 թ. վրացական իշխանությունները սկսեցին հետզհետե վերահսկել Կիրճի անվտանգային իրավիճակը՝ երկրից վտարելով անօրինական զինյալ խմբերին և հանցագործ տարրերին[74]: Սալաֆիականությանը հարող շրջանակները, սակայն, մնացին և փորձեցին համակեցության ուղիներ գտնել Վրաստանի կառավարության վերահսկողության ներքո:

2015 թ.-ից Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը տարեկան 14 անվճար տեղ է հատկացնում Պանկիսի քիստ երիտասարդներին[75]: Այս ծրագիրը նաև նպատակ է հետապնդում լուծել երիտասարդների զբաղվածության, վրաց հասարակության մեջ նրանց ինտեգրման և գաղափարական կողմնորոշման խնդիրները: Վրացերենը կիրճի բոլոր դպրոցներում կրթության միակ պաշտոնական լեզուն է[76]:

Մինչդեռ բարձրագույն կրթությամբ երիտասարդներին աշխատանքով ապահովումը շարունակում է Պանկիսում լրջագույն խնդիր մնալ՝ պարբերական արտագաղթի պատճառ դառնալով: Երիտասարդ քիստները, աշխատանք գտնելու նպատակով, մեկնում են Ռուսաստանի Դաշնություն՝ մասնավորապես Չեչնիա[77] և Թուրքիա: ԵՄ երկրներում աշխատանքային ներգաղթյալների թվաքանակն ավելի ցածր է: Անդրադառնելով քիստերի կրոնական նախապատվությանը՝ նշենք, որ երիտասարդների 70–75 տոկոսը (մինչև 35 տարեկան) հարում է սալաֆիականությանը, իսկ համայնքի ավելի տարեց անդամները՝ «ավանդական իսլամին»[78]: Կիրճում «ավանդական իսլամին» հարող համայնքը 5 մզկիթ (որոնցից սակայն պաշտոնապես գրացված է միայն Դուիսի գյուղի մզկիթը) և 7 կրոնական դպրոց (մադրասա) ունի, որոնց

---

[73]Beyond al-Qaeda. The Global Jihadist Movement, Editors: Rabasa A., Chalk P., Cragin K., Daly A. S., RAND Corporation, Part 1,2006, p. 109.

[74] Ozeren S., Understanding Terrorism: Analysis of Sociological and Psychological Aspects, (NATO Security Through Science Series E: Human and Societal), 2007 , p. 57.

[75]2016 թ. տվյալներով՝ Պանկիսի կիրճից 80 և ավելի ուսանողներ բարձրագույն կրթություն էին ստանում երկրի տարբեր ուսումնական հաստատություններում: Sikharulidze A.l ,Urushadze M, Khmaladze G., Chichinadze R., Islam in Georgia: Policy and Integration: Research report, Tbilisi 2016, p. 16

[76]Նույն տեղում:

[77]Որոշ տվյալներով 1200 քիստ բնակվում է Չեչնիայում և Ռուսաստանի քաղաքացիություն ունի: Նրանք բավականին լավ ինտեգրված են չեչեն հասարակությունում, սակայն սերտորեն կապված են Վրաստանի իրենց համայնքի հետ: Сихарулидзе А., Урушадзе М., Хмаладзе Г., Чичинадзе Р., նշվ. աշխ., էջ 17:

[78] Yearbook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Racius E., Volume 6, Brill, 2014, p. 251

բնականոն գործունեությունը համակարգում և հոգևորականներին ամսական աշխատավարձ է վճարում Վրաստանի Մուսուլմանների հոգևոր վարչությունը[79]: Սալաֆիական իսլամի հետևորդները Կիրճում իրենց առանձին 7 մզկիթ և աղոթատունն ունեն[80]: Փաստենք, որ սալաֆիական միաբանությունները չեն ճանաչում այդ վարչության գործառույթները և կրոնական ծեսերն անցկացնում են իրենց արտաքին հովանավորների աջակցությամբ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ «ավանդական իսլամի» հետևորդները փորձում են պայքարել Կիրճում սալաֆիականության տարածման դեմ՝ հիմնավորելով, որ այն կարող է հանգեցնել շրջանի հետագա արաբականացմանն ու քիստ–չեչենական ավանդույթների և արժեքների վերացմանը: Այդ մտահոգությունների նախադրյալներն արդեն իսկ առկա են համայնքում. քիստ սալաֆիականները, հարելով սուֆիական միաբանության Նակշբանդի և Կադիրիյա տարիկաթներին, հետևողականորեն փորձում են «ավանդական իսլամի» հետևորդներին բերել դեպի «անաղարտ իսլամ», ստիպել նրանց հրաժարվել քիստ-չեչենական կրոնական առանձնահատկություններից և ավանդական սովորույթներից՝ դրանք փոխարինելով շարիաթի օրենքներով[81]: Սալաֆիականները պնդում են, որ Պանկիսի կիրճի «ավանդական իսլամը» հիմնված է Հյուսիսային Կովկասի ավանդույթների և սովորույթների վրա. այն լիովին տարանջատվել է Ղուրանի վրա հիմնված «անաղարտ» և «իրական» իսլամից: Ավելին, նրանք նշում են, որ արաբերենին չտիրապետող անձիք չեն կարող իսլամ քարոզել՝ երևույթ, որ տարածված է կիրճի «ավանդական իսլամի» հետևորդների շրջանում: Այս իրողությունները հետզհետե կհանգեցնեն քիստ հանրույթի «արաբականացմանը»[82]:

---

[79]Վարչությունը հիմնադրվել է 2011 թ.: Նպատակն է համակարգել Վրաստանի շիա և սուննիիսլամադավան համայնքների գործունեությունը, հետամուտ լինել դրանց շահերի պաշտպանությանն ու սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը: Սակայն վերջին շրջանում բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ Վարչությունը գործում է հիմնականում պետության հետ համաձայնեցված և ուղղորդված: УрушадзеМ., Клиффорд Б., Управление мусульман Грузии должно представлять интересы жителей, а не правительства, https://oc-media.org/ru/mneniya/upravlenie-musulman-gruzii-dolzhno-predstavlyat-interesy-zhiteleyo-a-ne-pravitelstva/, (22. 03. 2017)

[80]Yearbook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Racius E. Volume 6, Brill, 2014, p. 251

[81] Sanikidze G., Islamic Resurgence in the Modern CaucasianRegion: "Global" and "Local" Islam in the Pankisi Gorge, Empire, Islam, and Politics in Central Eurasia, Ed. by U.Tomohiko, Slavic Eurasian Studies, No.14, pp. 271-272, https://src-h.slav.hokudai.ac.jp/coe21/publish/no14_ses/contents.html. (13.03.2021)

[82]Matteo Z., Cassano E., Pankisi, the land of the offspring. 17/10/2016. https://www.balcanicaucaso.org/eng/Areas/Georgia/Pankisi-the-land-of-the-offspring-174711 (28.02.2021)

Հակասություններն իսլամական ուղղությունների հետևորդների միջև ավելի են խորանում նաև Վրաստանի իշխանությունների երկբևեռ քաղաքականության արդյունքում: Մ. Սաակաշվիլիի կառավարությունը փորձում էր Կիրճում իրավիճակը վերահսկելի պահել՝ սերտորեն համագործակցելով սալաֆիականների հետ, ինչը հանգեցրեց «ավանդական իսլամի» դիրքերի թուլացմանը: Ի հակադրություն՝ ներկա իշխանությունները, գրեթե չեն շփվում Կիրճի սալաֆիական շրջանակների հետ՝աշխատելով հիմնականում «ավանդական իսլամի» հետևորդների հետ[83]:

Սալաֆիականության ծավալումը կիրճում պայմանավորված է ոչ միայն արտաքին գործոններով, այլ նաև «ավանդական իսլամի» թույլ դրսևորվածությամբ: Ավանդական իսլամական հոգևորականների կրթական շեմն ու հմտությունները ցածր մակարդակի վրա են. շատ հաճախ մզկիթներում իմամներ են դառնում կրոնական կրթություն չստացած անձիք[84]: «Ավանդական իսլամի» ներկայացուցիչները չեն կարող համեմատվել սալաֆի քարոզիչների հետ, ովքեր գերազանց կրոնական կրթություն են ստանում արաբական երկրներում: Վրաստանի Մուսուլմանների հոգևոր վարչությունը չի կարողանում արդյունավետորեն լուծել այս խնդիրը՝ մասամբ նաև երկրում համարժեք կրոնական կրթության բացակայության պատճառով: Քիստական համայնքի Ավագների խորհրդի ավանդական ինստիտուտը տարիներ շարունակ գործում էր որպես ոչ պաշտոնական գործադիր և դատական իշխանություն՝ ըստ շարիաթի և չեչենական ավանդույթների, ներքին գաղափարական հակասությունների պատճառով թուլացած և արժեզրկված է[85]: Պետական կառվարման ուժեղացման և սալաֆիականության ծավալման արդյունքում՝ Ավագների խորհուրդը կորցրել է իր երբեմնի հեղինակությունն ու գործառույթների կարևորությունը:

Սալաֆիական գաղափարների տարածումը Վրաստանում զուգորդվեց ծայրահեղական իսլամականության ներթափանցմամբ: Մինչ Սիրիական ճգնաժամը թվում էր, թե արմատական սալաֆիականներն առանձնակի ակտիվ չեն, սակայն

[83]2016 թ. Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելիին Պանկիսի կիրճ իր այցի ժամանակհրաժարվեց ընդունել սալաֆիական առաջնորդներին՝ հանդիպելով միայն «ավանդական իսլամի» ներկայացուցիչների հետ: Տ՛ես Islam in Georgia: Policy and integration, p. 16

[84]Interview with Mamuka Areshidze. "ISIS" Caucasus Wilayat is fairly dangerous, as fighters that previously went to Syria will stay here and operate in situ." Kviris Palitra. 25 June 2015. See full interview: http://www.kvirispalitra.ge/politic/25595-qisis-is-kavkasiis-vilaiethi-me (13.03.2021)

[85] YearBook of Muslims in Europe, Editors: Scharbrodt O., Akgönül S., Alibašić A., Nielsen J., and Racius E. Volume 7, 2015, p. 254

տասնյակ երիտասարդ (մինչև 25 տարեկան)[86], նույնիսկ դեռահաս(Մ. Կուշտանիշվիլի, Ռ. Բագակաշվիլի, ովքեր զոհվեցին Սիրիայում[87]) մուսուլմանների անդամակցումն ԻՊ–ին, Պանկիսի իմամի ձերբակալությունը, ով մեղադրվեց ահաբեկչական գաղափարախոսություն տարածելու և զինյալ խմբավորումներին աջակցելու մեջ[88], փաստում են, որ կիրճում հետևողական քարոզչական աշխատանքներ են տարվել: Կիրճի Ավազների խորհրդի ներկայացուցիչ Խ. Խանգոշվիլին վկայում է, որ սալաֆիականներն ակտիվորեն աշխատում էին դեռահասների և դպրոցականների հետ[89]: Ակտիվ քարոզչության արդյունքում դեռահասները, որոնք հեշտությամբ ընկալում էին սալաֆիական գաղափարները, եռանդուն անդամագրվում էին արմատական շրջանակներին:

Այդուհանդերձ հետազոտությունները փաստում են, որ Վրաստանում սալաֆիականության հետևորդներն ունեն հավատքի ազատություն, աղոթում են իրենց մզկիթներում, ուսանում են կրոնական դպրոցներում: Սալաֆիականներն ինքնուրույն են համակարգում իրենց վարչակազմակերպչական գործունեությունը՝ փորձելով համայնքը հնարավորինս տարանջատել ու հեռու պահել Իսլամական պետության ներգործությունից և հավաստում են, որ հետևողական են Կիրճի երիտասարդներին ԻՊ գաղափարական ազդեցությունից զերծ պահելու համար: Նշվում է նաև, որ ԻՊ խմբավորումների զինյալ ահաբեկիչների մեջ Պանկիսի կիրճի սալաֆիական համայքնի ներկայացուցիչների թիվը խիստ սահմանափակ է և չի արտահայտում սալաֆիական համայնքի և ղեկավարների դիրքորոշումը: Սալաֆիականները փորձում են չհակադրվել Վրաստանի իշխանություններին և ընդհանուր առմամբ պատրաստակամ են՝ աշխատելու պետական կառույցների հետ:

Պանկիսի կիրճում իսլամական արմատականությանծավալման ներքին պատճառներից են նաև չզարգացած ենթակառուցվածքները, իշխանությունների կողմից նախընտրական խոստումների չիրագործումը և տեղական ինքնակառավարման

[86] Goguadze G., Propaganda of the Islamic Caliphate and the Methods of Recruitment of Georgian Citizens, 2017,p. 8.

[87]18-year-old Muslim Kushtanashvili Died in Syria, 02/10/2017. https://radioway.ge/news/people/item/538-siriashi-18-xlis-muslim-kushtanashvili-daigupa (13.03.2021)

[88]Имам из Панкисского ущелья получил в Грузии 14 лет за вербовку для ИГ 07.03.2016, https://www.bbc.com/russian/international/2016/03/160307_georgia_syria_recruiting_sentence (13.03.2021)

[89]Khangoshvili Kh., The Customs and Traditions of Kists, 2015, p. 10.

մարմինների պասիվ գործունեությունը, ինչը չի նպաստում համայնքի ինտեգրմանը վրացական հասարակությանը, խորացնում է մեկուսացվածությունը և գաղափարական տարանջատվածությունը: Համայնքում առկա ներքին կրոնական հակասությունները ևս սաստակցնում են այս իրողությունները: Շատ հաճախ տեղացի մուսուլմանների խնդիրներն ուղղակիորեն անտեսվում են կենտրոնական իշխանությունների կողմից՝ առաջ բերելով վերջիններիս դժգոհությունը և մղելով նրանց այդ խնդիրների լուծման այլ արտաքին հովանավորներ և միջոցներ փնտրելուն:

«Իսլամի վերածնունդն» Աջարիայում. արտաքին ներգործություն և արմատականության դրսևորումներ

Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի միակ երկրամասն է, որտեղ իսլամադավան հիմնական բնակչությունն էթնիկ վրացիներ են՝ մեծամասնությամբ սուննի հանաֆիական մազհաբի՝ կրոնահիրավական դպրոցի հետևորդներ[90]: Աջարիայի իսլամադավան համայքն ադրբեջանականից հետո երկրորդ ամենամեծ մուսուլմանական համայքն է Վրաստանում, որը պարփակ բնակվում է Բաթումում, Խուլո, Քեդա, Խելվաչաուր, Շուախևի, Քոբուլեթի շրջաններում, ինչպես նաև հարևան Գուրիա և Ջավախքի մարզերում[91]:

Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան փորձեց ակտիվացնել իր ներկայությունը Վրաստանում, ինչն այդ ժամանակ միանշանակ չընկալվեց թե՛ իշխանությունների, թե՛ նորահայտ ազգայնականների և թե՛ մտավորականների շրջանում: Թուրքիայի կողմից տնտեսական ներթափանցման փորձերն այդ տարիներին լուրջ խոչընդոտների բախվեցին՝ արմատական իսլամի ներթափանցման և թուրք զավթիչների հնարավոր վերադարձի սպառնալիքի հիմնավորմամբ: Թուրքիայից հնարավոր վտանգները կանխելու համար նորանկախ Վրաստանի իշխանությունները և Վրաց ուղղափառ եկեղեցին Աջարիաում սաստկացրին ազգայնական և

[90] Ըստ 2014 թ. պաշտոնական մարդահամարի՝ շրջանն ունի 333 953 բնակիչ, որի 132 852-ը կամ 39,6% իսլամադավան է, National statistics office of Georgia (Geostat), 2014 General Population Census Main Results General Information, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf(21/02/2021):

[91] Kahraman A., Azeris and Muslim Ajarians in Georgia: The Swing between Tolerance and Alienation. Nationalities Papers, p. 309.

քրիստոնեական ինքնության գաղափարաբանությունը՝ խթանելով և խրախուսելով դավանափոխության գործընթացը:

Այդուհանդերձ Թուրքիայի անմիջական ներգրավվածությամբ հնարավոր եղավ մուսուլման աջարների շրջանում կրոնական զարթոնք առաջացնել և համայնքը վերաինտեգրել իսլամական համայնքին (ումմային): Կապեր հաստատվեցին Թուրքիայի և այլ երկրների իսլամական կառույցների միջև, որոնք համակարգում էր Բաթումի մուֆթիաթը՝ իրականացնելով մզկիթների և մադրասաների վերակառուցում և վերաբացում, աջար երիտասարդների կրոնական կրթության կազմակերպում և ֆինանսավորում, իսլամական գրականության տարածում և ինքնության վերաարժևորման ծրագրեր: 1992 թ. 50 մուսուլման աջարների մասնակցությունը Մաքքայում Հաջին սկզբնավորեց «իսլամական վերածնունդն» Աջարիայում[92]:

Եթե սալաֆիականության տարածումը Պանկիսում պայմանավորված էր Հյուսիսային Կովկասի պատերազմական իրողություններով, ապա Աջարիայում դրա տարածման սկզբաղբյուր դարձան արտերկրում կրթություն ստացած երիտասարդները:

Մինչև 2016 թ . Աջարիայում սալաֆիականության մոտ 70 հետևորդ կար[93]: Ի տարբերություն Պանկիսի կիրճի, նրանց չի հաջողվել ձևավորել միասնական համայնք, քանի որ տարալուծված են ինքնավար հանրապետության տարբեր բնակավայրերում: Այդ է պատճառը, որ նրանք էական գաղափարական և քարոզչական ազդեցություն չունեն հասարակության վրա: Այդուհանդերձ Աջարիայում Վրաց ուղղափառ եկեղեցու և իշխանությունների վերաքրիստոնեցմանը միտված գործողություններն իրապես խթանում են աջար մուսուլմանների շրջանում իսլամական արմատականության տարածմանը:

Երկուստեք ծայրահեղական մոտեցումները և առճակատումն ավելի խորացավ Բաթումում երկրորդ մզկիթի կառուցման և այլ բնակավայրերում արդեն գոյություն ունեցող մզկիթներին մինարեթներ ավելացնելու մուսուլմանների պահանջների արդյունքում: Օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից՝ մուսուլման վրացիները տասնյակ էջեր են ստեղծել տարբեր սոցիալական հարթակներում և

[92] Pelkmans M., Religion, Nation and State in Georgia: Christian Expansion in Muslim Ajaria, Journal of Muslim Minority Affairs, 2002, 22 (2), 251-273, p. 262.

[93]Sikharulidze A.l ,Urushadze M, Khmaladze G., Chichinadze R Islam in Georgia: Policy and Integration: Research report, Tbilisi 2016, p.24

բավականին ագրեսիվ ծայրահեղական կրոնաքաղաքական քարոզչություն են տարածում[94]՝ ընգծված իսլամաֆոբիա ձևավորելով վրացական հասարակության շրջանում: 2015 թ. նոյեմբերի 23-ին համացանցում հայտնվեց «Վրացիներին ուղղված հաղորդագրություն» անվամբ տեսաֆիլմը[95], որում Իսլամական պետության աջար իմամ 22-ամյա Խվիչա Գոբաձեն (2016 թ. սպանվեց Սիրիայում)՝ վրացի այլ արմատականների հետ սպառնում էր Վրաստանին[96]: Սպառնալիքներով մի քանի տեսնյութեր տարածեց նաև Թամազ Չագալիձեն (Ահմեդ ալ–Ջուրջի)[97]: Վերջինս սոցիալական ցանցերից մեկում տեղադրել էր կոչ Մուվահիդ Մուվահիդի անունից և առաջարկել էր իրեն ուղարկել «իսլամի թշնամիների» ամբողջական անունները, նկարները և հասցեները[98]:

Նույն թվականին ընտանիքի հետ Սիրիայի ահաբեկիչներին միացավ Ծալկայի աջար իմամ Մերման Պայչաձեն, ով սերտ կապեր ուներ վերոնշյալ Թ. Չագալիձեի հետ, ով հերթական մյուս տեսանյութում սպառնում էր. «Ալլահի անունով երդվում եմ, որ դուք անհավատներ ձեր կեղտոտ արյունով պատասխան կտաք ամեն ինչի համար»: Տեսանյութը բավականին լայն արձագանք ունեցավ ինչպես Վրաստանում, այնպես էլ միջազգային լրատվամիջոցներում[99]:

Դժվար է ասել, թե Սիրիայում և Իրաքում ահաբեկչական գործողություններին Աջարիայից որքան մուսուլման է մասնակցում: Շատերը ԻՊ-ին միանում են Թուրքիայից, որտեղ մեկնել էին սեզոնային կամ մշտական աշխատանքի: Այս

---

[94] «Ես սիրում եմ իսլամը», «Ղուրանը վրացերեն», «Ղուրանի նշանակությունը վրացերենով», «Իսլամի հետքերով», «Մուսուլման վրացիներ», «Ես վրացի մուսուլման եմ» «Իսլամի դպրոց», «Հաղիս-Վրաստան», «Վրաստանը և իսլամը», «Վրաստանի մուսուլմանների միությունը», «Ես հավատում եմ ճշմարտությանը» տարբեր սոցիալական հարթակների այս խմբերը 2011-2017 թթ.. առավել տարածվածներն էին աջար մուսուլմանների շրջանում՝ լցված իսլամական քարոզչությամբ և ծայրեհեղ անհանդուրժողականությամբ:Асланидзе А., К вопросу активизации ислама в Аджарии; Ислам и тюркский мир. проблемы образования, языка, литературы, истории и религии. https://core.ac.uk/download/pdf/197411088.pdf

[95]"ISIS Threatens Georgia in New Video". 24.11.2015. http://dfwatch.net/isis-threatens-georgia-in-new-video-39060 (10.03.2021)

[96] Նույն տեղում:

[97] Chagalidze T., "You Will Beg on Your Knees!"—Radical Islamist from Batumi Threatens Georgian Christians. 13.01.2015. https://www.georgianjournal.ge/society/29310-qyou-will-beg-on-your-kneesq-radical-islamist-from-batumi-threatens-georgian-christians.html (13.03.2021)

[98] "Send Us Photos, Names and Addresses of the People Who Are Enemies of Islam"—ISIS's New Threat to Georgia? 19.09.2016, (In Georgian). http://www.kvirispalitra.ge/versia/31526-qmogvatsodeth-mtrebis-misamarthebiq.html (13.03.2021)

[99] Крикорян О. Д.,Идентификация угрозы Исламского государства для Грузии, 08.02.2016, https://iwpr.net/ru/global-voices/identifikaciya-ugrozy-islamskogo-gosudarstva-dlya-gruzii, (11.03.2021)

իրողություններն առաջին հերթին վտանգավոր են Վրաստանի համար, որի իշխանություններն աստիճանաբար կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով»Թուրքիային: Այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ հարակից տարածքներ անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան կարող է որոշակի զարգացումների դեպքում վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Վրաստանում իսլամական արմատականության զարգացման առանձնահատկություններ և արդի մարտահրավերներ

Կովկասի ներառամբ Իսլամական խալիֆայության ստեղծման տեսլականը լայն տարածում ունի նույնիսկ Վրաստանի մուսուլմանների այն շրջանակներում, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն ահաբեկչական կազմակերպությունների գործունեության մեջ: Իսլամիստները խալիֆայությունը ներկայացնում են որպես մուսուլմանների իրավունքների պաշտպանության միակ հնարավոր ձևաչափ և առաջ են տանում այն գաղափարը, որ իսլամական իրական բարքերը հնարավոր են միայն խալիֆայության կազմում[100]:

Արմատական քարոզիչներն ուղղակիորեն քաջալերում են Վրաստանի քաղաքացիների ներգրավվումը սիրիական ահաբեկչական խմբավորումներում՝ նրանց անվանելով «հավատքի և արդարության մարտիկներ», որոնքպատրաստ են զոհվել հանուն սրբազան պատերազմի՝ ջիհադի:

Իսլամիստների կողմից Վրաստանի տարածքը որպես տարանցիկ, Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից Թուրքիա, ապա՝ Սիրիա[101], օգտագործումը նույնպես լրջագույն և սպառնալիք է տարածաշրջանի անվտանգային միջավայրի

---

[100]Omsarashvili G., Radical Islamism in Georgia, Philosophy Study, February 2018, Vol. 8, No. 2, pp. 78-86.

[101]Gunaratna R., Kam S., Handbook of Terrorism in the Asia-Pacific. Imperial Collage Press, 2016, p. 446.

Այս մասին 2016 թ. հաղորդում էր թուրքական Միլլիեթ պարբերականը՝ հղում կատարելով հատուկ ծառայություններին."ISIL Transfers Suicide Bombers from Syria to Europe through Azerbaijan, Cyprus, Georgia: Report".11.07.2016.https://www.hurriyetdailynews.com/isil-transfers-suicide-bombers-from-syria-to-europe-through-azerbaijan-cyprus-georgia-report-101451 (13.03.2021)

համար: Ռուսաստանի Դաշնությունը, պարբերաբար օգտագործելով Վրաստանում իսլամական արմատականության ծավալման վտանգը, մեղադրելով պաշտոնական Թբիլիսիին ահաբեկիչներին ապաստան և տարանցիկ ուղի տրամադրելու մեջ[102], դիվանագիտական ճնշումներ է կիրառում վերջինիս նկատմամբ[103]: Ռուսական հատուկ ծառայությունների և արտաքին գերատեսչությունների ներկայացուցիչները բազմիցս խոսել են Պանկիսի կիրճից հնարավոր ահաբեկչական վտանգների տարածման մասին[104]:

Այդուհանդերձ, Մերձավոր Արևելքում ԻՊ դիրքերի թուլացումից հետո վտանգ կար, որ Վրաստանից մեկնած ահաբեկիչները կարող են վերադառնալ և հաստատվել այստեղ: Վրաստանը, լինելով հակաահաբեկչական տարբեր կոալիցիաների անդամ, գտնվում է նաև ահաբեկչական կազմակերպությունների հարձակման թիրախում՝ համացանցում պարբերաբար տարածվող սպառնալիքներով[105]:

Սիրիայի և Իրաքի ահաբեկչական գործընթացների ազդակները Վրաստանում արտացոլվեցին, երբ 2013 թ. սեպտեմբերի 13–ին Վրաստանի Ներքին գործերի նախարարությունը հայտարարություն տարածեց Փրիուզ Ցուլուկիձեի, Թեմուր Բախունտարիձեի և էթնիկ չեչեն Ռուսաստանի քաղաքացի Յուսուպ Լականի ձերբակալության մասին: Ցուլուկիձեն, Բախունտարիձեի և Լականի աջակցությամբ, պլանավորել էր օտարերկրացի զինյալին անօրինաբար Վրաստանի սահմանով անցկացնել Թուրքիա: Լականը, սահմանային անցակետում անձը հաստատող փաստաթուղթի ներկայացման պահանջին ի պատասխան, կրակեց ոստիկանների ուղղությամբ[106]: Ձերբակալությունից հետո հաստատվեց նրանց անդամակցությունը ԻՊ–ին[107]:

ԻՊ աջակից վրացի ծայրահեղականներն ակտիվ գործունեություն են ծավալում Վրաստանի համացանցային տիրույթում. ստեղծել են խալիֆայության վրացական

---

[102]Roots ofViolent Radicalization: Nineteenth Report of Session 2010-2012, Volume I. Great Britain: Parliament: House ofCommons: Home Affairs Committee, 2012, p. 127.

[103]Fawn R., Realignments in Russian Foreign Policy, 2005, p. 140.

[104]Russia: ISIL Training Base Located in Georgia's Pankisi. 26.01.2016. http://www.aljazeera.com/news/2016/01/russia-isil-training-base-georgia-pankisi-160126131853851.html (13.03.2021)

[105]Islamic Caliphate Threatens Georgia as well. 16.11.2015.https://www.amerikiskhma.com/a/islamic-state-threatens-georgia-too/3059802.html (13.03.2021)

[106]"Russian Prosecutor Asks Georgia to Extradite Murder Suspect." 05.11.2013. http://dfwatch.net/russian-prosecutor-asks-georgia-to-extradite-murder-suspect-80138-23894 (13.03.2021)

[107]Նույն տեղում:

տեղեկատվական կայք՝ https://xalifati.wordpress.com և, ինպես արդեն նշել ենք, բաց և փակ խմբեր սոցիալական տարբեր հարթակներում: Երբ արմատականների գործունեությունը տեղափոխվեց հիմնականում համացանցային տիրույթ, նրանց նկատմամբ Վրաստանի Հակաահաբեկչական կենտրոնի հսկողությունը խստացվեց:

2015 թ. դեկտեմբերին Հակաակաբեկչական կենտրոնը, իրականացրած հետախուզական աշխատանքների արդյունքում, Պանկիսի կիրճում, Գուրիայում և Աջարիայում մի շարք քաղաքացիների մեղադրեց ահաբեկչական կազմակերպություններին անդամակցելու կամ աջակցելու մեջ[108]: Որպես ԻՊ անդամ ձերբակալվեց իմամ Ժոկոլո Ա. Բորչաշվիլիին[109], իսկ Ջ. Կուպրավան, Ջ. Խուտունիշվիլին և Դ. Ֆիրիսեբիան, ովքեր մուսուլմաններ չէին, մեղադրվեցին ահաբեկչական գործողություններին աջակցելու մեջ[110]:

Այդ կառույցի տվյալների համաձայն՝ 2015 թ. Վրաստանի մոտ 50 քաղաքացի[111] (հիմնականում Պանկիսի կիրճից, Աջարիայից և Վրաստանի արևելյան շրջաններից, որտեղ բնակվում են էթնիկ ադրբեջանցիներ) մեկնել են Սիրիա և Իրաք՝ անդամակցելու տարբեր ահաբեկչական գործողությունների[112]: Նրանցից 26-ը զոհվել է հակամարտության ընթացքում[113]:

---

[108]"Counterterrorism Centre under the State Security Service of Georgia Detained 4 Persons." 01.12.2015. https://ssg.gov.ge/en/news/73/Counterterrorism-Center-under-the-State-Security-Service-of-Georgia-detained-4-persons (13.03.2021)

[109]Tsereteli G., Alleged IS Recruiter Arrested in Georgia's Pankisi Gorge, 22.06.2015, https://jamestown.org/alleged-is-recruiter-arrested-in-georgias-pankisi-gorge/(13.03.2021)

[110]"The Court Found A. Borchashvili and Three Persons Guilty." 03.07.2016. http://old.pog.gov.ge/eng/news?info_id=881 (13.03.2021), The Court Found Ayuph Borchashvili and Three Persons Guilty.03.07.2016. http://old.pog.gov.ge/eng/news?info_id=881 (13.03.2021)

[111] Որոշ հետազոտողներ նշում են մինչև 200 վրացի զինյալների մասին, որոնք կռվում են ԻՊ տարբեր զինված խմբավորումներում: Մանրամասն տե՛ս՝ Գրիգորյան Ս., Իսլամական արմատականությունը Կովկասում, Երևան, 2017, էջ 96:

[112]Khutsishvili I., The directions of Economic Intelligence and Counter-Intelligence, Scientific and practical cyber security journal (SPCSJ), 4 (2), pp. 72-84. https://journal.scsa.ge/papers/the-directions-of-economic-intelligence-and-counter-intelligence/ (13.03.2021)

[113]Giorgi Margoshvili (Faizula Kushtanashvili) from Pankisi Died in Syria.18.12.2017. http://radioway.ge/news/people/item/627-siriashi-pankiseli-giorgi-margoshvili-peizula-kushtanashvili-daigupa, (13.03.2021),

Georgia: The Situation of the Kist Community and the Chechens, Joint Report by the Danish Immigration Service and the Danish Refugee Council, November, 2018, pp. 8-12, https://www.justice.gov/eoir/page/file/1309611/download (13.03.2021)

Հակաահաբեկչական կենտրոնը 2016 թ. հուլիսին Դուիսի գյուղի բնակիչ Վ. Խանգոշվիլիին մեղադրեց ահաբեկչությանը սատարելու մեջ՝ Դաու Լևսկի օգտատիրոջ անվամբ համացանցում ահաբեկչական սպառնալիքներ տարածելու համար[114]:

Պանկիսի կիրճից ահաբեկչական տարբեր գործողություններում ակտիվորեն ներգրավված զինյալներից են Թարխան Բատիրաշվիլին (Աբու Օմար ալ-Շիշանի), ով ԻՊ գլխավոր հրամանատարներից էր[115], Ջիորջի Կուշտանաշվիլին, Փաիզուլ Մարգոշվիլին (Սալահ ադ-Դին ալ-Շիշանի)[116], Ռուսլամ Մաչալիկաշվիլին (Սեյֆուլ Շիշանի) և այլոք[117]:

2017 թ. նոյեմբերին Վրաստանում հակաահաբեկչական անենահայտնի գործողության արդյունքում Թբիլիսիում սպանվեցին Իսլամական պետության անդամներ Ահմեդ Չատանը (Ահմեդ ալ-Շիշանի) և նրա 3 զինյալները[118]: Վրաստանի դատախազության հրապարակման համաձայն՝ Չատանը պահանջել էր ազատ արձակել 2015 թ. ձերբակալված Վրաստանի քաղաքացի իսլամիստներին և սպառնացել իրականացնել ահաբեկչական գործողություններ[119]: ԱՄՆ հետախուզական վարչության տվյալների համաձայն՝ Ահմեդ Չատանը ներառված է միջազգային ահաբեկիչների ցուցակում[120]: Չատանի անունը կապվում է նաև Ստամբուլի Աթաթուրքի անվան օդնավակայանում պայթուն կազմակերպելու և իրականացնելու հետ[121]: 2017 թ. դեկտեմբերի 26-ին Վրաստանի ԱԱԾ հակաահաբեկչական կենտրոնը հայտարարեց Չատանի խմբավորման հետ կապված Վրաստանի հինգ քաղաքացու ձերբակալության

---

[114]"Counterterrorism Centre under State Security Service of Georgia Detained One Person." 30.07.2016. http://ssg.gov.ge/en/news/156/Counterterrorism-Center-under-State-Security-Service-of-Georgia-Detained-One-Person (13.03.2021)

[115]Williams B. G., "Inferno in Chechnya: The Russian-Chechen Wars, the Al Qaeda Myth, and the Boston Marathon Bombings", 2015, p. 224.

[116]"Al-Qaeda Commander from Pankisi Reported Dead in Syria." 18.12.2017 http://dfwatch.net/al-qaeda-commander-pankisi-reported-dead-syria-49623 (13.03.2021)

[117]Georgia: The Situation of the Kist Community and the Chechens, Joint Report by the Danish Immigration Service and the Danish Refugee Council, November, 2018, pp. 8-12, https://www.justice.gov/eoir/page/file/1309611/download (13.03.2021)

[118]"Wanted Chechen Is Jihadist Chatayev Killed in Georgia Siege." 01.12.2017. http://www.bbc.com/news/world-europe-42193273 (13.03.2021)

[119]Նույն տեղում:

[120]"Counter Terrorism Designation." 10/5/2015. https://www.treasury.gov/resource-center/sanctions/OFAC-Enforcement/Pages/20151005.aspx (13.03.2021)

[121]"Chatayev: The Man Suspected of the Attack in Istanbul." 02.07.2016. https://www.dw.com/en/chatayev-the-man-suspected-of-the-attack-in-istanbul/a-19373830 (13.03.2021)

մասին, որոնք կասկածվում էին ահաբեկչական գործողությունների համար ֆինանսական և այլ աջակցություն տրամադրելու մեջ: ԱԱԾ հրապարակմամբ՝ Չատանն ու նրա աջակիցները պլանավորել էին ահաբեկչական գործողություններ իրականցնել Վրաստանում և Թուրքիայում գործող տարբեր դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ[122]:

Իսլամական ծայրահեղականության դեմ պայքարում Վրաստանի իշխանությունների առաջին քայլերից էր նաև երկրի քրեական օրենսգրքում մի քանի կարևոր հոդվածների ավելացումը[123]: Քրեական օրենսգրքի խստացմանը զուգահեռ՝ Վրաստանի իշխանությունները փորձում են նաև խիստ իրավիճակը սահմանի երկայնքով՝ իսլամիստների հետ առնչություն ունեցող անձանց մուտքը Վրաստան թույլ չտալու, իսկ կասկածելի անձանց հաշվառելու և հսկողության տակ պահելու համար: Վրաստանը միջազգային գործընկերների հետ իրականացնում է ինֆորմացիայի ակտիվ փոխանակում: Ահաբեկչության դեմ պայքարի Վրաստանի ջանքերը դրական են գնահատվում ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցներում[124]:

Տվյալներ կան, որ այսօր էլ Սիրիայում ահաբեկչական գործողություն են իրականացնում Մուրադ Մարգոշվիլին (Աբու Վալիդ Ալ-Շիշանի)[125] և Ադամ (Գուրամ) Գումաշվիլին, ովքեր ձայնային հաղորդագրություններ էին հղել համագյուղացիներին և կոչ արել միանալ ԻՊ-ին[126]:

Իսլամական արմատականության երևույթներ տեսանելի են նաև Թբիլիսիի Պոնիչալա մուսուլմանաբնակ շրջանում, որտեղ բնակիչներից մեկը նույնպես մեկնել էր

---

[122]ISIS Threatens Georgia in New Video. 24.11.2015. https://dfwatch.net/isis-threatens-georgia-in-new-video-39060 (13.03.2021)

[123]Վրաստանի քրեական օրենսգրքի 3232 հոդվածի (մասնակցություն միջազգային ահաբեկչությանը) համաձայն՝ միջազգային ահաբեկչությանը մասնակցությունը և/կամ զինված աջակության ցուցաբերումը օտար երկրին կամ այդ երկրի իշխանությանը, մարդկանց խմբին կան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք մեղադրվում են ահաբեկչության մեջ, ենթական 12–ից 17 տարվա ազատազրկման։Այլ հոդվածների մասին մասին մանրամասն տե՛ս The Law of Georgia on Making Changes to the Criminal Code of Georgia, Entry into Force. 04/04/2014.
https://matsne.gov.ge/ka/document/view/2319468?publication=0 (13.03.2021)

[124]U.S. Department of State, Bureau of Counterterrorism, Country Reports on Terrorism_ 2016, Chapter 2, Country Reports: Europe, July 2017. https://www.state.gov/reports/country-reports-on-terrorism-2016/ (13.03.2021)

[125]Մ. Մարգոշվիլին Ջունդ ալ-Շամի նախկին ղեկավարներից է, որն անցյալում մասնակցել է չեչենական երկու պատերազմներին և պատասխանատու էր չեչեն և արաբ ահաբեկիչների միջև կապերի հաստատման համար:

[126]Guram (Adam) Gumashvili's liquidation is not yet confirmed in Pankisi.https://reginfo.ge/people/item/3869-guram-adam-gumashvilis-likvidazias-pankisshi-am-dromde-ar-adastureben (13.03.2021)

Սիրիա[127]: Պոնիչալայի սալաֆիական համայնքի իմամը, սակայն, հակառակ դիրքորոշում ունի. նա կարծում է, որ «իսլամական արմատականները սպառնալիք են ոչ միայն քրիստոնյաների և ուրիշ կրոններ դավանողների համար, այլ նաև հենց իսլամի, քանի որ հանցանք են գործում«հանուն» իսլամի[128]:

Արմատական իսլամի դրսևորումներ նկատվում են նույնիսկ Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների շրջանում, որոնք թեև շիաներ են, սակայն հակված են սալաֆիականության և իսլամական ծայրահեղականության: Նպատակաուղղված քարոզչական աշխատանք է իրականացվում ադրբեջանաբնակ համայնքներում՝ հավատացյալներին արմատականության և ահաբեկչական գործունեության մեջ ընդգրկելու համար: Սալաֆի ոչ վրացի հոգևորականներն իրականացնում են ոչ միայն կրոնական, այլև իսլամագիտության հետ առնչություն չունեցող գաղափարական քարոզչություն՝ օգտագործելով արտերկրում տպված կրոնական գրականություն, որն ազատորեն տարածվում է Վրաստանում[129]: Վերոնշյալ ակտիվ քարոզչության արդյունքում առաջին երկու կանայք, ովքեր Վրաստանից միացան Սիրիայիահաբեկիչներին, էթնիկ ադրբեջանական Քարաջալա գյուղից էին[130]: Այդտեղից էր նաև բժիշկ Բ. Մուխթարովը, ով 2016 թ. -ին պայթյունի հետևանքով զոհվեց Սիրիայում[131]:

Այս շրջաններում արձանագրվեցին դեպքեր, երբ սալաֆի իմամները նույնիսկ կտրում էին գողերի մատները՝ հղում կատարելով Շարիաթի իրենց համար ընդունելի մեկնությանը[132]:

Վրաստանի ադրբեջանական փոքրամասնության համար ևս արմատականությունն ինքնադրսևորման և համայնքի «ավանդական իսլամի» նորմերից տարանջատվելու միջոց է, քանի որ համայնքն այդ «ավանդական իսլամի միջոցով»

---

[127]"The Interview with Kamil Mamedov, the Imam of Peaceful Salafist Community in Ponichala", 16.04.2016. Տե՛ս Omsarashvili G., Radical islam in Georgia, Philosophy Study, February 2018, Vol. 8, No. 2, pp. 78-86.

[128]Նույն տեղում:

[129]Aslanadze A., Islam and Modern Era (In Georgian), Tbilisi, 2013, p. 128.

[130] Ի. Ղարիբովան և Ա. Սուլեյմանովան Թուրքիայով անցել էին Սիրիա, Ա. Գարիբովան ներառված է Ինտերպոլի ցուցակում և մեղադրվում է ահաբեկչական գործունեություն իրականցնելու մեջ: "Karajala Residents Report 5 More Women Plan to Move to Syria." 20.05.2015. http://www.humanrights.ge/index.php?a=main&pid=18286&lang=eng (13.03.2021)

[131]Georgian's Death on Syria Battlefield Shows Jihadist Lure, 07.03.2016, https://www.voanews.com/europe/georgians-death-syria-battlefield-shows-jihadist-lure.(13.03.2021)

[132]Крикорян О. Д., նշվ. աշխ.

կապված է վրացական պետությանը, նրա քաղաքական ինստիտուտներին, որոնք մերժում են վրացական ազգային ինքնության համատեղելիությունը մուսուլմանական ինքնության հետ:

Ակնհայտ է, որ ծայրահեղական սուննի իսլամական գաղափարախոսության ծավալումն այս շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջի: Այս երևույթը, բնականաբար, ազդում է ոչ միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլ փոխում է առկա աշխարահաքաղաքական ուժային հարաբերակցությունը: Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

Եզրակացություն

2020 թ. արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սուննի ահաբեկչական տարրով (գերազանցապես թուրքմեններ) վերաբնակեցման ծրագրերն էապես նպաստելու են տարբեր իսլամական ուժերի և դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանում առկա հավասարակշռությունը: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանի՝ տվյալ դեպքում Վրաստանի իսլամադավան համայքների ուսումնասիրությունը, որոնք կարող են կամրջել ավանդական իսլամական կրոնամշակութային արժեհամակարգերը և դառնալ գործիք՝ ծայրահեղական իսլամի տարածաշրջան ներթափանցման համար:

Չեչենական երկրորդ պատերազմից սկսած (1999-2000 թթ.) սուննիական իսլամի սալաֆիական ուղղությունը լայն տարածում գտավ Պանկիսի կիրճում: Սալաֆիականությունը ներթափանցեց հիմնականում Չեչնիայի Հանրապետությունից և արաբական մի շարք երկրներից: Մասնագիտական առաջխաղացման և սոցիալական ինտեգրման հնարավորությունների սակավությունը, երկրում կրթության ցածր որակը, ինչպես նաև մեկուսացվածությունը Վրաստանի այլ շրջաններից ստիպեցին տեղացի երիտասարդներին հակվել դեպի սալաֆիական իսլամը՝ որպես ինքնադրսևորման և ինքնարտահայտման հնարավոր միջոց:

Սալաֆիականության արագ տարածումը Պանկիսի կիրճում պայմանավորված է ոչ միայն արտաքին գործոններով, այլև «ավանդական իսլամի» թույլ դրսևորվամբ: Ավանդական իսլամական հոգևորականների կրթական շեմը և հմտությունները ցածր մակարդակի վրա են, և շատ հաճախ կրոնական կրթություն չստացած անձիք դառնում են մզկիթներում իմամներ: Ըստ սալաֆիականների՝ Կիրճի «ավանդական իսլամը» հիմնվում է Հյուսիսային Կովկասի ավանդույթների և սովորույթների վրա և հեռու է Ղուրանի վրա հիմնված «անաղարտ», «իրական» իսլամից:

2011 թ.-ից Սիրիայում զինված հակամարտությունը և 2014 թ. Իրաքի և Սիրիայի Իսլամական պետության կազմավորումը (ԻՊ) մեծապես նպաստեցին սալաֆիական գաղափարների ծավալմանը Վրաստանում: Այս իրողությունը Վրաստանի իշխանությունները երկրի անվտանգության իրական սպառնալիք են համարում:

Վրաստանի իշխանությունները հետզհետե կորցնում են իրական վերահսկողությունն Աջարիայի նկատմամբ՝ այն աստիճանաբար «հանձնելով» Թուրքիային: Այստեղ կարող է ձևավորվել «արմատականության հարթակ»՝ երկրի շիայաբնակ տարածքներ անմիջական ներթափանցման հնարավորությամբ: Թուրքիայի և իսլամական տարբեր կազմակերպությունների կողմից ակտիվորեն օգտագործվող Աջարիան, որոշակի զարգացումների դեպքում, կարող է վերածվել նաև Հայաստանի դեմ «ահաբեկչության օջախի»:

Արմատականացման խնդիրն առնչվում է նաև երկրում բնակվող էթնիկ ադրբեջանցիներին, որոնք թեև շիաներ են, սակայն հակված են սալաֆիականությանն ու սուննի իսլամական արմատականությանը: Ակնհայտ է, որ ծայրահեղական սուննի իսլամական գաղափարախոսության ծավալումն այս շրջաններում հանգեցնում է շիայական ավանդական իսլամի նահանջի: Այս երևույթը, բնականաբար, ազդում է ոչ միայն տարածաշրջանի կրոնական քարտեզի վրա, այլև փոխում է առկա աշխարահաքաղաքական ուժային հարաբերակցությունը: Թուրքիան, օգտագործելով նաև իսլամական գործիքակազմը, հետևողականորեն դուրս է մղում Իրանին Վրաստանի էթնիկ ադրբեջանաբնակ շրջաններից՝ Հայաստանի շուրջ սեղմելով ծայրահեղ իսլամական արմատականության օղակը:

RADICAL ISLAM IN GEORGIA:

NEW TRENDS AND CHALLENGES

LILIT HARUTYUNYAN

PhD, Leading Research Fellow, Head of the Department of Arab Countries,

Institute of Oriental Studies, NAS RA

Associate. Professor, Faculty of Oriental Studies, YSU

TATEVIK MANUKYAN

Researcher of the Department of Turkey, Institute of Oriental Studies, NAS RA

Lecturer, Faculty of Oriental Studies, YSU

The purpose of the paper is to study the main features and tendencies of Salafi Islam and Islamic radicalism in Georgia, to identify the threats and challenges facing Georgia as well as the region.

The objectives of the article are to discuss the internal and external motives and impulses, preconditions and consequences of the spread of Sunni radical Islam in the Muslim communities of Georgia, the issues of their integration into the Georgian society, the causes and consequences of the propaganda of Salafism and Sunni Islamic radicalismamong the ethnic Shi'i Azerbaijanis of Georgia.

The paper was written on the basis of monitoring of the international press and materials on this topic, an extensive study of professional literature on various sides of Radical Islam in Georgia.

In the course of the study, the authors concluded that the spreed of Salafism and radical Islam in Georgia poses a serious threat not only to Georgia, but also to the security environment of the region. The Georgian authorities are losing real control over Adjara, gradually "handing it over" to Turkey. Therefore, a "platform of radicalism" can be formed here with the possibility of direct penetration into the surrounding areas. Adjara, which is actively used by various Turkish Islamic organizations, may also become a "hotbed of terrorism" against Armenia in the event of certain developments.

The spread of radical Sunni Islamic ideology in the Azerbaijani-populated regions of Georgia is leading to the retreat of traditional Shi'i Islam. This phenomenon, of course, affects

not only the religious map of the region, but also changes the existing geopolitical balance of power. Turkey, using its Islamic tools, is consistently pushing Iran out of Georgia's ethnic Azerbaijani-populated regions, squeezing the circle of Islamic radicalism around Armenia.

Key words: *Georgia, Pankisi Gorge, Adjara, Islamic Radicalism, Salafism, Islamic State (ISIS).*

ИСЛАМСКИЙ РАДИКАЛИЗМ В ГРУЗИИ. НОВЫЕ ТЕНДЕНЦИИ И ВЫЗОВЫ

ЛИЛИТ АРУТЮНЯН

Кандидат исторических наук, ведущий научный сотрудник,

заведующая отделом Арабских стран

Института Востоковедения НАН РА, доцент факультета Востоковедения ЕГУ.

ТАТЕВИК МАНУКЯН

Научный сотрудник отдела Турции

Института Востоковедения НАН РА,

преподаватель факультета Востоковедения ЕГУ.

Цель статьи- изучение основных особенностей и тенденций развития исламского радикализма в Грузии иисходящих от него угроз и вызовов, с которыми сталкивается Грузия. Связанные с исламским радикализмом реалии оказывают прямое влияние на систему безопасности региона в целом, и на Армению в частности.

Задачи статьи- исследование причин распространения идейсоздания халифата Исламского государства (ИГ) среди грузинских мусульман и принадлежности некоторых мусульманских кругов Грузии к ИГ, выявление особенностей Панкисского ущелья и суннитских исламских общин Аджарии, проблемы их интеграции в грузинское общество, предпосылки и последствия распространения исламского радикализма в этих регионах, а также целевой пропаганды салафизма, суннитского исламского экстремизма среди этнических азербайджанцев-шиитов Грузии.

В ходе исследования авторы пришли к выводу, что салафитское направление суннитского ислама получило широкое распространение в Грузии, проникая в основном

из Чеченской Республики и ряда арабских стран. Отсутствие возможностей для профессионального роста и социальной интеграции, низкое качество образования в стране, а также изоляция от других частей Грузии вынудили местную молодежь обратиться в салафитский ислам, становясь средством самовыражения. Распространение салафизма в Грузии связано не только со внешними факторами, но и со слабым проявлением «традиционного ислама».

Власти Грузии стали терять реальный контроль над Аджарией, постепенно «передавая» ее Турции. Проблема радикализации также связана и с проживающими в стране этническими азербайджанцами, несмотря на то, что они шииты, некоторые из них склонны к салафизму и суннитскому исламскому радикализму. Здесь может быть создана «платформа радикализма» с возможным прямым проникновением в сопредельные с Арменией населенные шиитами районы страны.

Это явление, безусловно, влияет не только на всю религиозную карту региона, но и меняет существующий геополитический баланс сил. Турция, используя исламиский инструментарий, последовательно вытесняет Иран из регионов Грузии, населенных этническими азербайджанцами, сжимая вокруг Армении дугу исламского радикализма.

Ключевые слова: *Грузия, Панкисское ущелье, Аджария, исламский радикализм, салафизм, Исламское Государство (ИГ).*

Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանի «Հայկական քաղաքագիտական հանդես» 2021 թ., (I)

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՋԱՐԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Համառոտագիր

Արցախյան պատերազմի արդյունքում Հարավային Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական տեղաշարժերի, ուժային հարաբերակցությա նոր վերաձևավորումների առանցքում ՀՀ և Արցախի անվտանգային միջավայրի համար նշանակալի կարևորություն է ձեռք բերում տարածաշրջանում իսլամական գործոնի ուսումնասիրությունը: Ակնհայտ է, որ 2020 թ. արցախյան պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած շրջաններում Թուրքիայի՝ սուննի ահաբեկչական տարրով (գերազանցապես թուրքմեն) վերաբնակեցման ծրագրերն էապես նպաստելու են տարբեր իսլամական ուժերի և դերակատարների ակտիվացմանը՝ խաթարելով տարածաշրջանումառկա հավասարակշռությունը: Հայաստանի սահմանակից չորս պետություններից երեքն իսլամադավան են իրենց բնակչության բացարձակ մեծամասնության

[192]: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանի իսլամադավան համայքների ուսումնասիրությունը, որոնք կարող են կամրջել ավանդական իսլամական կրոնամշակութային արժեհամակարգերը և դառնալ գործիք՝ ծայրահեղական իսլամի տարածաշրջան ներթափանցման համար: Այդ տեսանկյունից զգալի կարևորություն ունի Վրաստանում ԱջարիայիԻնքնավար Հանրապետության իսլամական համայքի ուսումնասիրությունը՝ որպես արտաքին ազդեցության հնարավոր թիրախ: Վրաստանում, որտեղ էթնիկ և կրոնական պատկանելությունը գրեթե անբաժանելի են, և գոյություն ունի պատմականորեն ազդեցիկ և հզոր ինքնանկախ (ավտոկեֆալ) եկեղեցի, Աջարիայի էթնիկ կրոնական փոքրամասնությունն իր դավանանքն ընկալում է որպես ինքնությանպահպանման և քաղաքական մարտահրավերները հաղթահարելու հնարավորություն, քանզի հետխորհրդային Վրաստանում ազգայնականության աճը զուգակցվեցՎրաց Ուղղափառ եկեղեցու բացառիկ կարգավիճակի հաստատմամբ:Հոդվածը քննարկում է Աջարիայի իսլամադավան համայքի ինքնության ձևավորման, կայացման գործընթացն ու առանձնահատկություններըպատմական տարբեր շրջափուլերում՝ ներառելով Օսմանյան տիրապետությունից մինչև Վրաստանի անկախացումը: Աջարիայի իսլամադավան համայնքի հետազոտությունը կարևորէ նաև այն հիմնավորմամբ, որ 2021 թ. հոկտեմբերին լրանում է Կարսի պայմանագրի 100 տարին և Աջարիայի նկատմամբ Թուրքիայի հավակնությունները կարող են հերթական անգամ առաջնահերթություն ստանալ:

Բանալի բառեր՝ *Վրաստան, Աջարիա, ինքնություն, աջար մուսուլմաններ, էթնոդավանականություն*

<u>Ներածություն</u>

Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի միակ երկրամասն է, որտեղ իսլամադավան հիմնական բնակչությունն էթնիկ վրացիներ են՝ մեծամասնությամբ սուննի հանաֆիական կրոնահիրավական դպրոցի՝ մազհաբի

[192] Միակ քրիստոնյա երկիրը Վրաստանն է, որտեղ իսլամը երկրորդ ամենատարածված կրոնն է: 2014 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում բնակվում է 400.000 մուսուլման, որը կազմում է երկրի բնակչության 10.7 %-ը: http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf (22/02/2021):

հետևորդներ[193]: Տեղաբնակ քրիստոնյա ուղղափառ աջարները և մուսուլմանները (որոնց տարբերելու համար անվանում են «աջարելի» կամ «աքարելի») միասնական են լեզվական և էթնիկ ինքությամբ, տարբերակված՝ կրոնական կողմնորոշմամբ: Սակայն աներկբա է, որ էթնիկնույնությունը փոփոխական, շարժուն երևույթ է, և հասարակական կյանքի փոփոխությունները, ինչպես նաև արտաքին գործոնները կարող են դրդել վերաիմաստավորելու էթնիկ պատկանելիությունը, հանգեցնել էթնիկ նույնականության ձևափոխման:

Աջարիայի իսլամադավան համայքն ադրբեջանականից հետո երկրորդ ամենամեծ մուսուլմանական համայքն է Վրաստանում, որը պարփակ բնակվում է մայրաքաղաք Բաթումում, Խուլո, Քեդա, Խելվաչաուր, Շուախևի, Քոբուլեթի շրջաններում, ինչպես նաև հարևան Գուրիա և Սամցխե Ջավախեթի մարզերում: Աջարների նկատմամբ հետազոտական հետաքրքրությունը վերջին շրջանում բավականաչափ աճել է հատկապես թուրքական և մուսուլմանական գիտական հանրույթում, որում հետազոտությունները որոշակի սուբյեկտիվ բնույթ ունեն և միտված են աջաներին բացառապես առանձին էթնոդավանականխումբ ներկայացնելուն (ի հակադրություն՝ վրացական, խորհրդային, արևմտյան ընկալման, որտեղ աջաները ներկայացվում են որպես վրաց ազգի ենթաէթնիկ խումբ): Այսպիսի գիտական հետազոտությունները որոշ դեպքերում կարող են նաև հիմնավորել Թուրքիայի քաղաքական և տարածքային հավակնություններն Աջարիայի և նրա իսլամադավան համայքի նկատմամբ: Իսլամն Աջարիայում էականորեն տարբերվում է ադրբեջանականից ոչ միայն սունի-շիա տարանջատմամբ. իսլամացման պատմական գործընթացը, կրոնական երկփեղկվածությունը և աջարների՝ վրացական էթնոլեզվական ինքնությունն առաջնային կարևորություն ունի այդ համայնքի ձևավորման, կայացման և տարածաշրջանային զարգացումներում նրա ներգրավածության առանցքում:

<u>Աջարիայի իսլամադավան համայքի ձևավորումը. հակասություններ և առանձհատակություններ</u>

[193] Ըստ 2014 թ. պաշտոնական մարդահամարի, երկրամասն ունի 333 953 բնակիչ, որի 132.852-ը կամ 39,6% իսլամադավան է: http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf(21/02/2021):

Աջարիայում բնակչության զանգվածային իսլամացում տեղի է ունեցել Օսմանյան կայսրության տիրապետության շրջանում (XV-XIX դդ.)[194]: Այս գործընթացի վերաբերյալ գիտական հանրույթում կարծիքները հակասական և իրարամերժ են. որոշհետազոտողներ պնդում են, որ այն ընթացել է ուժային հարկադրմամբ[195], որոշները՝ կամավոր, երբեմն նաև անձնական նախաձեռնությամբ[196]:

Ըստ իսլամացման կամավոր թեզի՝ (հիմնականում լայնորեն շրջանառվում է թուրքական գիտական հանրույթում, այստեղից էլ անցնում արևմտյան որոշ շրջանակներ) Աջարիայում դավանափոխության դրսևորումները նախևառաջ նկատվեցին ազնվականության շրջանում[197], ինչը պայմանավորված էր տնտեսական և քաղաքական առավելություններով՝ պահպանել արդեն եղած հողային կալվածքները, ունեցվածքն ու ազդեցությունը, վճարել ավելի ցածր հարկեր, ավելացնել հավակնություններն ու հնարավորությունները: Մի կողմից օսմանյան սուլթանների՝ոչ մուսուլմանների նկատմամբ վարվողանհավասար հարկային քաղաքականությունը, իրականացվող բռնաճնշումները, իսկ մյուս կողմից «դարձի եկածների» համար սահմանված տարատեսակ խրախուսման մեխանիզմերը, հողհատկացումներն ու արտոնություններն Աջարիայի ազնվականության շրջանում հետևողականորեն մեծացնում էին կրոնափոխման պատրաստակամությունը: Նշանակալի ազդեցություն

---

[194]Վրաստանի հարավ արևմտյան շրջանները XV դարից մշտապես ենթարկվել են թուրքական ասպատակությունների՝ փոփոխական հաջողություններով, իսկ ավելի ուշ դարձել թուրք-պարսկական բախումների թատերաբեմ: XVII դարը որոշ վրացի պատամաբանները համարում են Վրաստանի պատմության ամենաաղետալի փուլերից մեկը. 1614 և 1619 թթ.. Շահ Աբբասի արշավանքները կործանարար հետևանքներ ունեցան վրաց ժողովրդի համար, իսկ 1627 թ. Բաթումն իր հարակից տարածքներով վերջնականապես անցավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ:Lordkipanidze M., Katchanava I., A Glimpse of Georgian History, Tbilisi, The Georgian Society for Cultural Relations with Compatriots Abroad, 1983, p. 15.

Meskhia Sh., An Outline of Georgian History. Tbilisi: Tbilisi University Press. 1968, p. 27

Sanikidze G., Walker E. W). Islam and Islamic Practices in Georgia. *UC Berkeley: Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies,*2004. https://escholarship.org/uc/item/7149d486).Барамидзе Р.,Ислам и его особенности в Аджарии, https://ge.boell.org/en/2005/01/16/islam-i-ego-osobennosti-v-adzharii(21/02/2021)

[196]Aydıngün A., Asker A. Yavuz Şir A.,Gürcistan'daki Müslüman Topluluklar, Azınlık Hakları, Kimlik, Siyaset,Ankara: Terazi Yayıncılık,2016, Balcı B., l Motika R., Islam in post-Soviet Georgia, *Central Asian Survey,* 2007, 26 (3), 335-353, p. 345, Uludağ S., Acara, İslam Ansiklopedisi, https://islamansiklopedisi.org.tr/acara#2-bolgede-islamiyetDiyanet%20Vakf%C4%B1, (21/02/2021)

[197]Առաջին փաստական վավերագրումը կրոնափոխ ազնվականի՝ Աջարիայի կառավարիչ Բեջանի մասին հիշատակումն է դեռևս 1563 թ.: Նա պարտվեց օսմանյան բանակին, կորցրեց իշխանությունը, սակայն երբ ներկայացավ սուլթան Սելիմ II-ին և ընդունեց իսլամ՝ ստանալով Մեհմեդ անունը, վերականգնեց այն՝ դառնալով Աջարիայի սանջակբեյ:**Два важных документа по истории юго-западной Грузии XVI в.,** http://www.vostlit.info/Texts/Dokumenty/Kavkaz/XVI/Dok_jug_zap_Gruzii/text.htm(21/02/2021)

ունեցավ նաև ազնվականների սերունդերի՝ Կայսրությունում հոգևոր և զինվորական կրթություն ստանալու հնարավորությունը: Աջար ազնվական երիտասարդներն այստեղ ծանոթանում էին իսլամական միջավայրին, բարքերին և լեզվին, ձեռք բերում ավելի որակյալ կրթություն, ինչն աստիճանաբար ազդում էր նրանց ինքնության ընկալումների և գիտակցության վրա, նպաստում օսմանյան հասարակական-քաղաքական միջավայրում նրանց ինտեգրմանը, զինվորական և հոգևոր առաջխացմանը[198]: Այս երևույթները տեսանելի են դառնում արդեն 1853-1856 թթ.. Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ իսլամացած աջարներն օսմանյան բանակի կազմում զբաղեցնելով բարձր հրամանատարական պաշտոններ՝ կռվում էին ռուսների և վրացիների դեմ:

Ինչ վերաբերում է գյուղացիությանը, ապա որոշ հետազոտողների կարծիքով նրանց կրոնափոխման հիմքում ևս ընկած է եղել բացառապես տնտեսական բաղադրիչը՝ վճարել ավելի քիչ հարկեր, նոր հողակտորների ձեռքբերման հնարավորություն ստանալ և խուսափելարդեն իսլամադավան տեղացի իշխանավորների հետապնդումներից և բռնաճնշումներից[199]:

Անդրադառնալով ուժային հարկադրմամբ և սպառնալիքներով Աջարիայի բնակչության իսլամացման թեզին՝ պետք է նշել, որ սրա կողմակիցները հիմանականում խորհրդային շրջանի պատմաբաններն են, ինչպես նաև վրացի ազգայնական և եկեղեցական շրջանակները ներկայացնող հետազոտողները: Նրանք պնդում են, որ կրոնափոխման գործընթացն Աջարիայում ընթացել է քանդված ու այրված եկեղեցիներով ու վանքերով, գյուղերով ու քաղաքներով, բնակչության խոշտանգումներով նկեղեքումներով, մահապատիժներով և արյունահեղությամբ: Այսպիսի պատմություններ են արձանագրում Աջարիայում դաշտային հետազոտություններն իրականացրած նաև որոշ մասնագետներ, ովքեր վավերագրել են տեղացիների՝ սերնդեսերունդ փոխանցված պատմություններն ու վկայությունները իսլամացման գործընթացի վերաբերյալ[200]:

---

[198]Pelkmans M.,Religion, Nation and State in Georgia: Christian Expansion in Muslim Ajaria, *Journal of Muslim Minority Affairs*,2002, 22 (2), 251-273, p. 253

[199]Aydıngun A., Koksal P.,Kahraman, A., Conversion of Muslim Georgians (Ajarians) into Orthodox Christianity: Contrasting Narratives and the Politics of Proselytizing in Georgia, *Europe-Asia Studies*, 2019, 71(2), 290-314, p. 293

[200]Sanikidze G., Walker E. W., Islam and Islamic Practices in Georgia. *UC Berkeley: Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies,*2004. https://escholarship.org/uc/item/7149d486

Օսմանյան սուլթանների նվաճողական և ձուլման քաղաքականությունն Աջարիայում սկսեց հաջողել միայն 19-րդ դարի սկզբում: Այն ավելի հետևողական և պարտադրված բնույթ ստացավ հատկապես ռուս-թուրքական պատերազմերի շրջանում՝ որպես ռուսական ազդեցության կասեցման բնական վահան: Օսմաներենը սկսեց թափանցել աջարների առօրյա կյանք 19-րդ դարի կեսերից. 1860 թ.-ից հետո Աջարիայի բնակիչների մեծ մասը երկլեզու էր, իսկ վրացերենն աստիճանաբար նահանջում էր[201]:Օսմանյան տիրապետության շրջանու մաջարների էթնիկ վրացի առաջնային ինքնությունը փոխարինվեց իսլամական ինքնությամբ. «աջար» անվանումը դարձավ մուսուլման վրացիների բնութագրիչ[202]:

Համադրելով և ուսումնասիրելով աջարների իսլամացման գործընթացի վերաբերյալ առկա հետազոտությունները՝ կարող ենք արձանագրել, որ այն ընթացել է վերոնշյալ երկու գործիքակազմերի համադրմամբ: Քաջատեղյակ լինելով Օսմանյան Կայսրության՝ ոչ մուսուլման քաղաքակրթությունների նկատմամբ վարվող քաղաքականությանը՝ կարծում ենք, որ աջարները չեն խուսափել բռնաճշումներից և հարկադրաբար դավանափոխությունից: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով նաև ընձեռնվող հնարավորություններն ու խրախուսուման գործիքակազմը, չենք բացառում, որ եղել է նաև կամավոր զանգվածային հավատափոխության գործընթաց:

<u>Աջար մուսուլմաններն արտաքին ազդեցությունների ջրբաժանում</u>

Երբ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Սան Ստեֆանոյի պայմանագրով Բաթումը վերջանականապես անցավ Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, բնակչության մեծամասնությունն արդեն իսլամադավան էր, ինչը լրջագույն բարդություններ առաջ բերեց ցարական կառավարության համար՝ այս տարածքներում վերահսկողություն հաստատելու և նոր իշխանությունների նկատմամբ հավատարմություն արմատավորելուգործում: Ներդրվեցին առանձին համակարգեր, որոնք միտված էին այդ գործընթացն իրականցնելուն. մուսուլմանական հոգևոր կառավարման կենտրոնի ստեղծում, տեղում կրոնական ուսուցման կազմակերպում և

[201]Hoch T., Kopeček V.,Transforming Identity of Ajarian Population (Why the 1991-2004 conflict did not assume armed character), *The Annual of Language & Politics and Politics of Identity*, vol. 5, 57-72

[202]Ցարական Ռուսաստանի իշխանությունները նրանց անվանում էին «թաթար»՝ ինչպես Անդրկովկասի բոլոր թյուրքալեզու մուսուլմաններին:Balcı B., l Motika R., նշվ. աշխ.:

կրթություն կամ հոգևոր կոչում ստանալու նպատակով արտերկիր մեկնելու սահմանափակում[203]:

Այս ամենին զուգահեռ XIXդարի երկրորդ կեսին սկիզբ առավ նոր միտում. վրացի ազվականները սկսեցին մեծամասամբ կրթություն ստանալ Ռուսաստանի համալսարաններում՝ ձևավորելով ուղղափառ ազգայնական մտավորականության նոր սերունդ[204]:

1878 թ. Աջարիան Վրաստանին միացնելուց հետոոսմանյան բարքերն ու կենսակերպը գերակայում էին Աջարիայի մուսուլմանների շրջանում (օրինակ՝ աշխարհիկ դպրոցների փոխարեն մեդրեսեներ հաճախել, հանդերձանք և այլն): Վրացի մտավորականները գաղափարական հիմնավորումներ և ուղիներ էին փնտրում, որոնք հնարավորություն կտային մուսուլման աջարներինետ բերել դեպի վրաց ազգային ինքնությունը՝ օգտագործելով ընդհանուր արժեքները՝ լեզուն, մշակութային առանձնահատկությունները և սովորությունները[205]:

Սկսվեց նաև ցարական իշխանությունների նկատմամբ թշնամաբար տրամադրված իսլամադավան երկրամասի ժողովրդագրական կազմի փոփոխության գործընթաց՝ ի հաշիվ մի կողմից Կախեթիից բերված քրիստոնյա վերաբնակիչների, մյուս կողմից՝ տեղացի մուսուլման բնակչության Կայսրություն արտագաղթով[206]: Երբ 1878 թ. սեպտեմբերի 7-ին ռուսները մտան Բաթում, 5500 մուսուլման արդեն գաղթել էր, իսկ հազարավորները նավահանգստում սպասում էին ծովային փոխադրումով

---

[203]Sanikidze G., Walker E. W.,նշվ. աշխ., էջ 10:

[204] Իրենց լիբերալ ազգայնականներ համարող այդ սերունդի ներկայացուցիչներ են Ի. Ճավճավաձեն, Գ. Ծերեթելին, Ն. Նիկոլաձեն, Յ. Գոգեբաշվիլին և այլոք, ովքեր կոչվեցին «թերգդալեուլերի» (բառ. Թերեք գետից ջուր խմածներ կամ Ռուսաստանում եղածներ), տպագրում էին «Ծիսկարի» (Ներքև) թերթը, պայքարում վրացական անկախ պետության վերականգնման համար՝ ժողովրդական ընդհանուր ընդվզման կազմակերպմամբ: Մանրամասն տե՛ս՝**Kolstø P.,**Rusetskii A.,Power differentials and identity formation: Images of self and other on the Russian–Georgian boundary, National Identities, 2012, 14(2), pp. 139-155

[205]Khalvashi T., Batiashvili N., Can Muslim be a Georgian? HistoricOverview of Discourse on Georgian "Essence", *Central Eurasian Studies:Past, Present and Future*, 2011, İstanbul: Maltepe Universitesi Yayınları, https://www.academia.edu/9955101/2009_March_Can_a_Muslim_be_Georgian_Co_Author_of_paper_with_Tamta_Khalvashi_presented_by_Tamta_Khalvashi_on_the_International_Conference_on_Central_Eurasian_Studies_Past_Present_and_Future_ (21/02/2021)

[206]Պատերազմից հետո հինգ տարվա ընթացքում տարբեր տվյալներով 150.000- 200.000 մուսուլման Աջարիայից գաղթեց Թուրքիա, Özel O., Migration and Power Politics: The Settlement of Georgian Immigrants in Turkey (1878–1908), *Middle Eastern Studies,*2010, 46 (4), 477-496, pp. 479, 493-494, http://repository.bilkent.edu.tr/bitstream/handle/11693/48662/Migration_and_power_politics_the_settlement_of_georgian_%C4%B1mmigrants_in_turkey_%281878%E2%80%931908%29.pdf?sequence=1 (21/02/2021)

Տրապիզոն մեկնելու:Օսմանյան իշխանությունները և Բաթումի մուսուլմանական էլիտաները խրախուսում և կազմակերպում էին արտագաղթը, որը ընդհատումներով տևեց մինչև 1890 թ.[207]: 1870-ական թթ.. Աջարիայի մուսուլմանների արտագաղթը վրաց պատմության մեջ անվանվում է *մուհաջիրոբա*[208]*:*

Մուսուլմանների արտագաղթը(ովքեր կոչվեցին *մոհաջիրներ*) և ունեցվածքի տեղափոխումն Օսմանյան Կայսրություն ամրագրված էր Սան Ստեֆանոյի պայմանագրի VI բաժնում, որը Բեռլինի կոնգրեսում ևս մնաց անփոփոխ: Այս արտագաղթի արդյունքում ձևավորվեց Թուրքիայի վրացի մուսուլմանների համայնքը, որոնց սերունդներն այսօր էլ ապրում են Ստամբուլում, Տրապիզոն, Կարս, Արդվին, Ռիզե, Սամսուն և Սինոպ նահանգներում[209]: Մուհաջիրները սակայն համակեցության խնդիրներ, բախումներ ունեցան տեղացիների հետ,ովքեր պահանջում էին որպեսզի աջարները վերադառնան իրենց երկրամաս: Բնակվելով Կայսրության ծայրամասում՝ աջարներն ապրում էին գրեթե ինքանկախ և կառավարվում տեղացի իշխանավորների կողմից, ուստի նոր, ավելի խիստ կրոնական ու կեցաղային կանոնակարգը և բարքերը ծանր ու անընդունելի էին նրանց համար՝ չնայած օսմանյան իշխանությունների հավաստիացումներին՝ առաջին տարիներին տրամադրել հարկային արտոնություններ, իսկ ավելի ուշ ազատել նաև զինվորական ծառայությունից[210]: Ոմանք փորձեցին վերադառնալ, սակայն Ռուսաստանի իշխանություններն առաջին տարիներին կանխեցին այդ գործընթացը՝ սպառնալով նրանց աքսորել Սիբիր[211], քանի որ դեռևս չէին արձանագրել իրենց նախագծած ժողովրդագրական պատկերը՝ քրիստոնյա բնակչության համալրմամբ: Միևնույն ժամանակ կային նաև ազդեցիկ աջար մուսուլման իշխաններ, բեյեր, ովքեր, ազգային ինքնությունը վեր դասելով կրոնականից,

---

[207]Özel O., նշվ աշխ, էջ 488:

İpek N., Kafkaslar'lan Anadolu'ya Göçer (1877-1900), *Ondokuz Mayıs Universitesi Eğitim Fakultesi Dergisi*, 1991, 6 (1), 97-135, s. 111, https://dergipark.org.tr/tr/download/article-file/188232, (21/02/2021)

[208]Մուհաջիրոբայի կազմակերպման և հետևանքների մասին մանրամասն տե՛ս Sanikidze G., Walker E. W., նշվ. աշխ., էջ 8-9

[209]Arslan Z., Batum Gocmenleri (1914-1930), *Bilig*,2014, 71,43-64, https://dergipark.org.tr/tr/download/article-file/233588 (21/02/2021)

[210]Pelkmans M., նշվ. աշխ., էջ 256:

[211]Tanrıverdi M., The Treaty of Berlin and the Tragedy of the Settlers from the Three Cities, *War and Diplomacy: The Russo-Turkish War of 1877-1878 and the Treaty of Berlin,* 2011, 449-478, p. 473, Salt Lake City, University of Utah Press, https://www.academia.edu/10972082/_The_Treaty_of_Berlin_and_the_Tragedy_of_the_Settlers_from_the_Three_Cities_ (21/02/2021)

համագործակցեցին ցարական վարչակարգի հետ՝ փորձելով նպաստել Վրաստանի վերամիավորմանը[212]:

Ակնհայտ է, որ մուհաջիրոբան ցավոտ գործընթաց էր վրացի ազգայնականների և հասարակության համար, ովքեր Աջարիան համարում էին վրացական հոգևոր ու քաղաքակրթական բնօրրան, կարևորում մուսուլման աջարներիհետ էթնիկ միասնականությունը և գիտակցում արտագաղթի ծանր հետևանքները: Այդ իսկ պատճառով ցարական իշխանություններին մոտ կանգնած վրացի ազգայնական մտավորականներին հաջողվեց ազդել վերջիններիս՝ մուսուլման աջարների տեղահանման որոշման վրա, սահմանափակել արտագաղթը և նույնիսկ ներգաղթի մի քանի փոքր ալիք ապահովել:

Վրացական քաղաքական էլիտաներին գոհացնելու և հասարակության հակառուսական տրամադրությունները մեղմելու նպատակով ցարական իշխանությունը 1880 թ. տարածեց մի հռչակագիր, որով փորձեց կասեցնել արտագաղթը: Հռչակագրով երաշխավորվում էր, որ իսլամն անձեռնմխելի կլինի, իսկ շարիաթական դատարանները կշարունակեն գործել: Մուսուլմանների համար հարկերը կմնան նույնը, ինչ Օսմանյան իշխանության օրոք, տղամարդիկ կազատվեն բանակային ծառայությունից և հնարավորություն կստանան Աջարիայում ավելի բարձր վարչական գործառույթներ ունենալու:

Այդուհանդերձ, ժողովրդի համար հոգեբանորեն ծանր տեղահանություններն ու արտագաղթը երկուստեք ձեռնտու էր Ցարական Ռուսաստանին և Օսմանյան Կայսրությանը: Ցարական իշխանությունն ազատվում էր իր համար «անհուսալի և անվստահելի» իսլամադավան բնակչությունից. նրանց առկայությունը սահմանին բնականաբար մտահոգիչ էր, քանի որ Բարձր Դռանն իրենց հավատարմության պատճառով մուսուլման աջարներն ընկալվում էին ավելի հաճախ որպես թուրքեր, կամ ինչպես ռուսներն էին նրանց անվանում «թաթարներ», քան վրացիներ: Իսկ օսմանյան իշխանությունը, խրախուսելով մուհաջիրոբան,իր համար կարևոր ժողովրդագրական խնդիր էին լուծում՝աջարներին վերաբնակեցնելով քրիստոնեաբնակ կամ սակավաթիվ բնակչությամբ շրջաններում:

[212]Sanikidze G., Muslim Minorities of Georgia, https://www.ayk.gov.tr/wp-content/uploads/2015/01/SANIKIDZE-George-MUSLIMS-MINORITIES-OF-GEORGIA.pdf (21/02/2021)

Աջարական համայքը խորհրդային գաղափարախոսության և ազգային ինքության փոխազդեցության միջև

Վրաստանի խորհրդայնացումից հետո 1921 թ. կազմավորվեց նաև Աջարիայի ԻԽՍՀ[213], որի գոյության առաջին տասնամյակները կարելի է համարել կրոնական ինքնության կորստի շրջափուլ տեղի մուսուլման բնակչության համար:Թեև նախկին Խորհրդային Միության կազմում Աջարիան բացառություն էր, որին առանձնահատուկ վարչական ինքնավարության կարգավիճակ տրվեց՝ հաշվի առնելով նանիսլամական բաղադրիչը, այդուհանդերձ իսլամի կիրառումը, հոգևոր, մշակութային և կրթական կենտրոնները հայտնվեցին Մոսկվայի կողմից հետապնդման և արգելափակման թիրախում:

1924 թ. խորհրդային իշխանությունների կողմից վերացվեց շարիաթական դատարանը, 1926 թ. լուծարվեց Աջարիայի մուսուլմանական հոգևոր վարչակազմը, իսկ 1929 թ. վերջնականորեն արգելվեց մուսուլմանական հանդերձանքի, մասնավորապես՝ հիջաբի կրումը[214]: Վերոնշյալ հակաիսլամական գործողությունները, ինչպես նաև տնտեսությունների կոլեկտիվացումն ընդվզումներ առաջացրին աջար մուսուլմանների շրջանում: Դրանք հաջողվեց ճնշել միայն ռուս զինվորների ներգրավմամբ, քանի որ վրացիները հրաժարվեցին ուժ գործադրել իրենց հայրենակիցների դեմ: Շուրջ 150 մուսուլման հաստատվեց Թուրքիայում[215]: Առհասարակ, ինչպես ցարական, այնպես էլ խորհրդային իշխանության կայացման և ամրապնդման գործընթացն Աջարիայում բավականին խնդրահարույց և զանգվածային դիմադրությամբ է ընթացել, ինչի մասին վկայում են 1925-30 թթ.. հակախորհրդային բողոքի ակցիաները, որոնք ընդգծված

[213]1918-իմայիսի 26-ին Վրաստանի անկախության հռչակումից մինչև խորհրդայնացում, Աջարիայում ներքին պայքար էր նույնիսկ ներմուսուլմանական համայնքում՝ միանա՞լ Օսմանյան Կայսրությանը, թե՞՝ նորանկախ, այնուհետև խորհրդային Վրաստանին: Sanikidze G., Muslim Communities of Georgia: Old Problems and New Challenges, Islamophobia Studies Journal 4 (2), 2018, 247-265, pp..250-251 https://www.jstor.org/stable/pdf/10.13169/islastudj.4.2.0247.pdf?refreqid=excelsior%3Ab1203951054c27be06365bba8b2b2f26:(21/02/2021) Ի վերջո, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Աջարիան տրվեց Խորհրդային Վրաստանին:

[214]Վրաստանի խորհրդայնացման սկզբնափուլում՝ մինչև 1929 թ., երբ ընդունվեց հանրակրթության կանոնակարգը և սկսվեց կրոնական դպրոցների վերացումը, Աջարիայումգործում էր շուրջ 158 մզկիթ, 150-170 կրոնական դպրոց, 5 բարձրագույն մեդրեսե, Барамидзе Р., Ислам и его особенности в Аджарии; https://ge.boell.org/en/2005/01/16/islam-i-ego-osobennosti-v-adzhari (21/02/2021)

[215]Blauvelt T. K., Khatiashvili G., The Muslim Uprising in Ajara and the Stalinist Revolution in the Periphery, *Nationalities Papers,*2016, vol. 44 (3), pp..359-379

թուրքամետ և իսլամական բնույթ ունեին: Հետագայում կանանց էմանսիպացիան, երեխաների համահավասար կրթության հնարավորությունը որոշակի մեղմեցին խորհրդային իշխանության նկատմամբ աջար մուսուլմանների վերաբերմունքը: Աջար կինը դարձավ խորհրդային նոր ինքնության ձևավորման պաշտոնական բաղադրիչ և անուղղակիորեն նպաստեց աթեիստական գաղափարախոսության ամրապնդմանը: Պետք է ընդգծել, որ խորհրդային տարիներին Աջարիայի իշխանությունների և տեղացի մտավոր վերնախավի ակտիվ գործողությունների շնորհիվ բացվեցին վրացական դպրոցներ՝ հասարակությանգրագիտության խթանման և ազգային ինքնագիտակցության բարձրացման նպատակով: Սկզբնական շրջանում Աջարիայի վրացալեզու դպրոցներում ուսուցիչներ բերվում էին այլ մարզերից, քանի որ տեղում վրացերենի իմացության լուրջ խնդիր կար: Ազգային կրթության հետևողական քաղաքականությունը զգալի ներդրում ունեցավգրագետ և էթնոկենտրոն հասարակության ձևավորման գործում:

Թեև 1926 թ. մարդահամարում աջարները տարորոշվեցին որպես առանձին դավանական խումբ, ապա 1939 թ.-ից արդեն համարվեցին վրացիներ. խորհրդային պաշտոնական վիճակագրությունը դադարեց գրանցել նրանց նաև կրոնական ինքնությունը[216]: Այդ իսկ պատճառով հետագա տարիների համար ևս խորհրդային շրջանի Աջարիայի մուսուլմանների ժողովրդագրական զարգացման պաշտոնական աղբյուրներ չկան: Նշենք, որ վրացի խորհրդային քաղաքական ղեկավարները հրաժարվել են աջարներին (ինչպես նաև մեգրելներին, սվաններին և լազերին) Խորհրդային Միության պաշտոնապես ճանաչվածա զգությունների ցանկում որպես առանձին էթնոդավանական խումբ գրանցել՝ հիմնավորելով, որ դա կարող է հանգեցնել լրջագույն խնդիրների, այդ թվում վրաց ազգային ինքնության, ազգային տիպի ու տեսակի մասնատման[217]:

---

[216]Hoch T., Kopeček V., նշվ. աշխ,, 1926 թ. մարդահամարի տվյալներով Աջարիայի բնակչության ընդհանուր թիվը նշվում է շուրջ 71.000, իսկ 1939թ.՝ 88.000:

[217] 1937 թ. Լ. Բերիան, ով այդ ժամանակ Վրաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարն էր, փորձեց կանխել վրաց ժողովրդի էթնիկ մասնատման քաղաքականությունը: Ստալինին ուղղված նրա նամակը դրա դրսևորումն է. «...Աջարները վրացիներ են, ինչպես աշխարհի մյուս ծայրերի վրացիները: Խնդրումեմ Ձեզ՝ հանձնարարել ԽՍՀՄ Պետպլանավորման խորհրդին շտկել Վրաստանի ազգությունների ոչ ճշգրիտ դասակարգումը և աջարներին ներառել վրաց ազգի մեջ» (Վրաստանի ՆԳՆ արխիվ, ֆոնդ 14, նկարագրություն, 11, ֆայլ 3 152), Путкарадзе Т.,Образобание и этноязыковая самоидентичность Грузии (по данным Аджарии), *Евразийский вестник гумманитарных исследований,* 2016, 1(4), 119-23

Խորհրդային շրջանում Վրաստանին ընդհանուր առմամբ հաջողվեց պահպանել ազգային առանձնահատկությունները լեզվի, մշակութային և կրոնական քաղաքականության առանցքում՝ մանևրելով խորհրդային գաղափարախոսության և ազգայնականության միջև: Սակայն ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանի իշխանությունների քաղաքականությունն այս շրջանում հակասական և փոփոխական էր. պայմանավորված նաև Մոսկվայի քաղաքական նախասիրություններով՝ առանձնահատուկ մոտեցումներ կային տարբեր էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Հնարավորինս սահմանափակվեց միջանձնական և միջհամայնքային շփումներն Աջարիայի և Թուրքիայի բնակչության միջև, ինչը միտված էր նաև արդեն աշխարհիկություն հռչակացած Թուրքիայից իսլամական տարրերի ներթափանցման կանխմանը[218]:

1930 թ. խորհրդային կառավարությանը հաջողվեց վերահսկողություն հաստատել իրավիճակի նկատմամբ՝ հանրային տիրույթում գրեթե չեզոքացնելով իսլամի դերն ու ազդեցությունը, գործելով «ժողովրդիանունից», վերջնականապես փակեց կրոնական կենտրոնները՝ մզկիթները, մեդրեսեներն ու դպրոցներըդարձնելով գյուղա-պետարաններ, հիվանդանոցներ, տնտեսականպահեստներ: Արդյունքում 1930-ական թթ.սկսվեց աջարների՝ Թուրքիա արտագաղթի նոր փուլ. 1745 մուսուման լքեց Վրաստանը[219]: 1937-1938 թթ..ստալինյան բռնաճնշումները, հետապնդումներն ու աքսորը չշրջանցեցին աջար մուսուլմաններին.մոտ 11.000 մարդ ձերբակալվեց, որոնցից 4000 մահապատժի ենթարկվեց «Թուրքիայի հետ բարեկամական կապերի, մաքսանենգության, լրտեսության և ահաբեկչական գործողությունների» մեղադրանքով[220]: Այնուհետև, խուսափելով բռնաճշումներից, մինչև 60-ական թթ.. աջարները, հնարավորինս թաքցնելու համար իրենց կրոնական ինքնությունը, նույնիսկ զանգվածաբար փոխում էին իրենց իսլամական ծագմամբ անունները[221]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նպատակ ունենալով ստանալ բնակչության և հոգևորականության աջակցությունը, խորհրդային

---

[218]Sanikidze G., Muslim Communities of Georgia: Old Problems and New Challenges, *Islamophobia Studies Journal,* 2018, 4 (2), 247-265, p. 251.
[219]Arslan Z., նշվ. աշխ., էջ 61:
[220]Kaiser C. P.,Lived Nationality: Policy and Practice in Soviet Georgia, 1945-1978, Publicly Accessible Penn Dissertations. 1795, 2015, The University ofPennsylvania, p. 180.
[221]Hoch T., Kopeček V., նշվ. աշխ.:

իշխանությունը թուլացրեց կրոնական տարբեր համայնքների նկատմամբ վարվող քաղաքականությունը: 1944 թ. խորհրդային մուսուլմաններին հնարավորություն տրվեց կազմավորել կրոնական հարցերի 4 վարչություն, որոնցից մեկը գործում էր Բաքվում: Վերջինս համակարգում էր Հարավային Կովկասի իսլամադավաններին՝ ներառյալ Վրաստանի սուննիներին և շիաներին[222]: Սակայն այս հոգևոր վարչությունը գործելում էր Բաքվում և միանշանակորեն չէր ընկալվում սուննի աջարների կողմից: Միևնույն ժամանակ,հաշվի առնելով Թուրքիայի կողմից մուսուլման բնակչության օգտագործմամբ ներխուժման հնարավորությունը, խորհրդային իշխանությունն Աջարիայի սահմանային գոտուց տարհանեց և այլ քրիստոնեաբնակ վայրերում տարալուծելով վերաբնակեցրեց շուրջ 4055 ընտանիք[223]: Խորհրդային իշխանությունները (նաև տեղում վրացի ղեկավարների համաձայնությամբ և միջնորդությամբ)փորձում էին արմատախիլ անել իսլամականությունն Աջարիայից:

1950-ական թթ.. Խորհրդային Միությունում կրոնական ազատության որոշակի դրսևորումներ սկսեցին նկատվել. Վերաբացվեց Բաթումի «Օրթա Ջամի»մզկիթը, որը 1932 թ. մասամբ ավիրվել և փակվել էր: Մզկիթի վերաբացումը պայմանավորված էր նաև նավահանգստային Բաթումում օտարերկրյա մուսուլմանների նկատմամբ հանդուրժողականության դրսևորման անհրաժեշտությամբ[224]:

Անդրադառնալով Խորհրդային Վրաստանի քաղաքականությանն Աջարիայի մուսուլմանների նկատմամբ, կարող ենք արձանագրել, որարդեն 1940-ական թթ.. պատմաբաններն ու ազգագրագետները լրջորեն սկսեցին զբաղվել էթնիկ, լեզվական և մշակույթային հիմքով ազգային ինքնագիտակցության վերակերտմամբ՝ բացառելով իսլամական ինքնությունը՝ այն համարելով օսմանյան անցյալի հետևանք: Նոր ազգայնական ինքնության այս դիսկուրսին, որ այդ փուլում մասամբ աթեիստական բնույթ ուներ, ակտիվորեն ներգրավվեց նաև Աջարիայի քրիստոնյա համայնքը, որը սերնդեսերունդ ապրելով իսլամական միջավայրում՝ առավել լավ էր պատկերացնում

[222]Միաժամանակ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1944 թ. նոյեմբերի 15-ի հրամանով Վրաստանի մուսուլմանական բնակչությունը տեղահանվեց սահմանային բնակավայրերից. ընդհանուր առմամբ 15.568 ընտանիք (69.869 մարդ): Տե՛ս Барамидзе Р.,Ислам и его особенности в Аджарии; https://ge.boell.org/en/2005/01/16/islam-i-ego-osobennosti-v-adzharii (21/02/2021)

[223]Sanikidze G., Muslim Communities of Georgia: Old Problems and New Challenges, *Islamophobia Studies Journal*,2018, 4 (2), 247-265, p. 251.

[224]Մզկիթը կոչվում է նաև Ազիզիե, քանի որ կառուցվել է Սուլթան Աբդուլազիզի հրամանով 1866 թ. Sanikidze G., նշվ.աշխ., էջ 264, Baramidze R.,Ethnic Georgian Muslims: A Comparison of Highland and Lowland Villages, *Caucasus Analytical Digest*, 2010,20,13-16, p.13.

իրառջև ծառացած մարտահրավերները: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ կրոնական դրսևորումներն արգելված էին հանրային տիրույթում, աջարները, հասարակության մեջ ընկալվելով վրացիներ, ընտանիքում շղարշված պահում էին իրենց մուսուլմանական ինքությունը[225]:

Հետագա տարիներին կոմունիստական վարչակարգըվրացական ազգային ինքնության մեջ ներառեց ուղղափառ քրիստոնեական բաղադրիչը:

<u>Աջարներն ազգային և կրոնական ինքնության փնտրտուքներում. հետխորհրդային շրջան</u>

Ուսումնասիրելով 1990-ական թթ. Աջարիայում իսլամադավան բնակչության թվաքանակին առնչվող տվյալները՝ նշենք, որ այստեղ բավականին հակասական թվեր կան, քանի որ ինչպես արդեն նշվեց ԽՍՀՄ տարիներին անցկացված մարդահամարներում նրանք առանձնացված չէին: Որոշ մասնագետների գնահատմամբ՝ մուսուլմանների թիվն Աջարիայում խորհրդային շրջանում տատանվել է 130.000-160.000-ի սահմաններում, այսինքն՝ ազգաբնակչության մոտ 34-42 տոկոսը[226]:

Խորհրդային վերջին՝ 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ Աջարիայի բնակչության թիվըեղել է392.432[227]. կարելի է ենթադրել, որ իսլամադավանների թիվը կազմել է 160.000-165.000:

Խորհրդային Միության կազմալուծման, աթեիզմի և կոմունիստական գաղափարախոսության քայքայման արդյունքում առաջացած«գաղափարական վակուումը»[228] խորհրդային ժողովուրդներին և ազգություններին կանգեցրեց ազգային և էթնոդավանական ինքնությունների փնտրտուքի առջև[229]: Վրաստանում կրոնի նկատմամբ հետաքրքրությունը կտրուկ վերելք ապրեց, և հետզհետե ուղղափառ քրիստոնեությունը դարձավ ազգայնական ինքնության և գաղափարախոսության

[225]Pelkmans M., Religion, Nation and State in Georgia: Christian Expansion in Muslim Ajaria, *Journal of Muslim Minority Affairs,* 2002, 22 (2), 251-273, p. 269.

[226]Hoch T., Kopeček V., նշվ. աշխ.: Որոշ հետազոտություններում նրանց թիվը հասցնում ենմինչև 175.000, , Balcı B., l Motika R., նշվ. աշխ.:

[227]Henze P.B., The Demography of the Caucasus according to 1989 Soviet Census Data, *Central Asian Survey,*1991,10 (1-2), 147-170, p.149.

[228]Huntington S. P., The Clash of Civilizations Remaking of World Order, 1997. New York, Simon and Schuster, p. 96.

[229]Agadjanian A., Revising Pandora's Gifts: Religious and National Identity in the Post-Soviet Societal Fabric, *Europe-Asia Studies,* 2001, 53 (3), 473-488, p.474.

կարևոր բաղադրիչ: Աջարիայում ևս կրոնական ինքնությունը վերաիմաստավորվեց, ինչն առաջ բերեց «իսլամ-քրիստոնեություն» հասկասությունների սրում միջհամայնքային հանրային տիրույթում: Վրաց ուղղափառ եկեղեցին, ունենալով բարձր պետական աջակցություն, սկսեց «խրախուսել» կրոնական փոքրամասնություններին՝ դավանանափոխ լինել. 1980-ականների վերջինուղղափառությունը «մոդայիկ» դարձավ Վրաստանում՝ ի հակադրություն իսլամի, որն ասոցացվում էր աղքատության և հետամնացության հետ[230]:Բազաթիվ աջարներ հավատափոխվեցին քրիստոնեության:Այս գործընթացը շարունակվեց նաև հետագայում, քանի որ վրաց հասարակական-քաղաքական միջավայրում ուղղափառ քրիստոնեության գերակայության արդյունքում իսլամը մարգինալացվեց, իսկ վրացական նոր ձևավորվող ազգային ինքնությունը խարսխվեց ուղղափառություն, լեզու, մշակույթ երրորդության վրա: Մերժվեց «մուսուլման-վրացի»ինքնության հնարավորությունը.վրացական և մուսուլմանական ինքնությունները դարձան անհամատեղելի՝ երկընտրանքի առաջ կանգնեցնելով աջարներին, ովքեր իրենց ընկալում էին այդ երկուսի մեկտեղմամբ: Խորհդային Վրաստանի պատմագրության մեջ մուսուլման աջարները ներկայացվումէին օսմանյան գերիշխանության և տիրապետության «մնացուկ». այս մոտեցումը ևս խթանեցդավանափոխմանը՝ հատկապես երիտասարդության շրջանում, ովքեր ցանկացան ազատվել այդ «պիտակից» և ներգրավվել հասարակական-քաղաքական կյանքում:

Խորհրդային տարիների կրոնական անգրագիտությունը, ինպես նաև փլուզման արդյունքում առաջացած սոցիալ-տնտեսական ճգնաժամը և ներգաղթի տեղաշարժերը ևս ուղղակիորեն նպաստեցին երիտասարդ աջարների դավանափոխոխությանը: Առաջացավ մի իրավիճակ, երբ նույնիսկ ընտանիքի մեջ կային տարբեր հավատքի ներկայացուցիչներ: Մուսուլմանական հավատն ու ինքնությունն այդուհանդերձ շարունակում էին գերակա մնալ Աջարիայի բարձրադիր գյուղական բնակավայրերում:

Միևնույն ժամանակ աջար մուսուլմանները վրաց հասարակությունում սկսեցին ընկալվել «տարբեր, ոչ լիարժեք» վրացիներ: Թեև նրանք փորձում էին կոտրել կածրատիպը և հիմնվելով ժամակակից վրացականության նախահայր Ճավճավաձեի՝

[230]Köksal P., Aydıngün A., Gürsoy H., Religious Revival and Deprivatization in Post-Soviet Georgia: Reculturation of Orthodox Christianity and Deculturation of Islam, *Politics and Religion*, 2019, 12, 317–345.

«ներքին էության», լեզվամշակութային ընդհանրության սկզբունքի վրա՝ ամրագրել վրացի համարվելու իրենց իրավունքը[231]:

Աջարիան «վերաքրիստոնեացնելու» տեսլականը դարձավ նորանկախ Վրաստանի իշխանությունների առաքելությունը, քանի որ տարածաշրջանը պատմական դարպաս է քրիստոնյա և իսլամադավան քաղաքակրթությունների սահմանագծին: Վրաց Ուղղափառ եկեղեցին, կենտրոնական իշխանություններից ստացած իր արտոնություններով, պետական կրթական քաղաքականությունը, վրացականության և քրիստոնեության օրգանական միասնականության ընկալումը, էականորեն խթանեցին ուղղափառ քրիստոնեության տարածումն Աջարիայում:

Այս գործընթացը, բնականաբար դիմադրություն և հակազդեցություն առաջացրեց տեղի մուսուլմանական համայքում և նպաստեց ներքին համախմբմանը ու ստեղծված իրավիճակից ելքեր որոնելուն[232]: Այդուհանդերձ, ինչպես Գամսախուրդիայի էթնոկենտրոն, այնպես էլ Շևարդնաձեի աշխարհիկ կառավարությունները չկարողացան կասեցնել իսլամական վերածնունդը: Վրաստանի անկախացումից հետո վերականգնվեցին և ակտիվացան մուհաջիրոբայի հետևանքով Թուրքիայում ձևավորված վրացական սփյուռքի[233] և Աջարիայի մուսուլմանների միջև կապերը. որոշ մասնագետներ նույնիսկ այն անվանեցին «Օսմանյան վերածնունդ»: Սփյուռքը զգալի դեր խաղաց իսլամական ինքնության վերաիմաստավորման գործում՝ ֆինանսական աջակցությամբ, իսլամական գրականության տարածմամբ, երիտասարդ կրոնական ակտիվիստների Թուրքիայում կրթության ստանալու հնավորությամբ[234]:

<u>Աջարների իսլամադավան համայքը արտաքին ազդեցության թիրախ. նոր իրողություններ</u>

Մինչ ԽՍՀՄ փլուզումը Վրաստանը Թուրքիայի հետ անմիջական առնչություններ չուներ՝ չնայած Աջարիայում իսլամադավան համայնքի առակայության և Թուրքիայի

[231]Zviadadze S., I ‘like’ my Patriarch. Religion on Facebook - New Forms of Religiosity in Contemporary Georgia, *Online Heidelberg Journal for Religions on the Internet*, 2014, vol.6, 164-194.

[232]Pelkmans M., Religious Crossings and Conversions on the Muslim–Christian Frontier in Georgia and Kyrgyzstan, Anthropological Journal of European Cultures, 2010,19 (2), 109-128.

[233]Թուրքիայում վրացական սփյուռքի գործունեության հայեցակարգի և գաղափարախոսության առանձնահատկությունների մասին տե՛ս՝ http://tr.muslimgeorgia.com/

[234]Balcı B., l Motika R., նշվ.աշխ., 349:

կողմից սահմանակից շրջաններում բնակվող վրացական մեծաթիվ համայքին, որ առաջացավ 19-րդ դարի վերջին մուհաջիրոբայի արդյունքում:

1991թ. Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան փորձեց ակտիվացնել իր ներկայությունը Վրաստանում, ինչը, չնայած նախնական ոգևորությանը, միաշանակ չընկալվեց ժամանակի թե՛ իշխանությունների, թե՛ նորահայտ ազգայնականների և թե՛ մտավորականների շրջանում: Թուրքիայի կողմից տնտեսական ներթափանցման փորձերն այդ տարիներին լուրջ խոչընդոտների բախվեցին՝ ի դեմս արմատական իսլամի ներթափանցման և թուրք զավթիչների հնարավոր վերադարձի սպառնալիքի: Թուրքիայից եկող «վտանգները» կանխելու համար նորանկախ Վրաստանի իշխանությունները և Վրաց Ուղղափառ եկեղեցին Աջարիում ուժեղացրին ազգայնական և քրիստոնեական ինքնության գաղափարաբանությունը՝ խթանելով և խրախուսելով դավանափոխության գործընթացը: Աջարիայի իսլամադավան համայքը խորհրդային շրջանումկտրված լինելով իսլամական ընտանիքից (ումմայից), ապրելով քողարկված և ներփակ կյանքով, ինչպես նաևբախվելով վերոնշյալ գործոններին՝ որոշակիորեն կորցրեց իր իսլամական ինքնությունը[235]:

Այդուհանդերձ Թուրքիայի և տեղի վրացական համայնքի անմիջական ներգրավվածությամբ հնարավոր եղավ մուսուլման աջարների շրջանում կրոնական զարթոնք արթնացնել և համայքը վերաինտեգրել Ումմային. կապեր հաստատվեցին Թուրքիայի և այլ երկրների իսլամական կառույցների միջև: Այդ կապերիհամակարգումնիրականացնում էր Բաթումի մուֆթիի գրասենյակը.մզկիթների և մեդրեսեների վերակառուցում և վերաբացում,աջար երիտասարդների կրոնական կրթության կազմակերպում և ֆինանսավորում, իսլամական գրականության տարածում և ինքնության վերաարժևորում: 1992 թ. 50 մուսուլման աջարների մեկնումը Մեքքա և Հաջին մասնակցությունը Աջարիայում սկզբ դրեց իսլամական վերածննդին[236]:

Իսլամական տարբեր հոսանքները ևս ակտիվացան ինչպես նախկին ողջ խորհրդային մուսուլմանական, այնպես էլ Աջարիայի շրջանում: Դրանցից ամենաակտիվը հետխորհրդային տարածքում Նուրջուն էր, որի ենթախմբերից մեկը՝ Մուստաֆա Սունգուրի ղեկավարությամբ հիմնավորվեց Բաթումում, բացեց

[235]Pelkmans M., Religion, Nation and State in Georgia: Christian Expansion in Muslim Ajaria, *Journal of Muslim Minority Affairs,* 2002, 22 (2), 251-273, p. 259-60

[236] Նույն տեղում, էջ 262

մեդրեսեներ՝ արմատավորելու և տարածելու Սաիդ Նուրսիի սուֆիական իսլամական ուսմունքը:[237]

Մյուս ազդեցիկ իսլամական ուղղությունը, որ հաստատվեց Բաթումում, կրկին Նուրսիի հետևորդներից թերևս ամենահայտնիի Ֆեթուլլահ Գյուլենին է: Գյուլենականշարժումը հիմնական ուշադրությունը կենտրոնացնեցիհետխորհրդային տարածքի թյուրքալեզու երկրների վրա, սակայն չշրջանցեց Վրաստանի, մասնավորապես Աջարիայի սուննի իսլամադավան համայքը[238]:

Այդ տարիներին Բաթումում լայն տարածում գտավ այսպես կոչված Սուլեյմանլի հոսանքն իր հիմնադիր Սուլեյման Հիլմի Թունահանի (1888–1959 թթ..) անունով, որընծագել էր Նաքշբանդի միաբանությունից և որպես «անօրեն դավանանք՝ ժամանակին չէր ընդունվում Անկարայի կողմից:Նրա կարգախոսն էր «Ամեն ինչ ըստ և հանուն Ղուրանի», իսկ կրթության հիմնական թիրախը՝ երեխաները, ում սովորեցնում էին Ղուրան կարդալ: Սուլեյմանլիները 1992-96 թթ.. Աջարիայում 6 մեդրեսե ունեին[239]:

Թուրքիայի կրոնական ազդեցությունը հետխորհրդային շրջանում չէր սահմանափակվում միայն մասնավոր նախաձեռնություններով. այն ուներ իր հստակ մշակված միջազգային կրոնական քաղաքականության հայեցակարգը, որը համակարգում էր Կրոնական գործերի նախագահությունը (Diyanet Işleri Başkanlığı)[240]: Նախագահությունը ներկայացուցչություններ բացեց նախկին խորհրդային մուսուլմանական բոլոր երկրներում, սակայն չկարողացավ դա անել Աջարիայում՝ հանդիպելով Վրաստանի իշխանությունների դիմադրությանը: Այդուհանդերձ Դիյանեթի պաշտոնյաները շատ հաճախ այցելում էին տեղի հոգևոր

---

[237]Սաիդ Նուրսիի (1876-1960թթ..) կողմից ստեղծված շարժումը, որը նրա անունով կոչվում է Նուրջու՝ սուննիիսլամիհանաֆիականմեկնության, Նուրսի իգաղափարների և սուֆիական միստիցիզմի սինթեզ է՝ հիմնված պանիսլամիզմի հայեցակարգի վրա: Այն բավական ազդեցիկ գաղափարական հիմք ունի՝ հիմնված Նուրսի իհանրահայտ «Լույսի ուղերձ» աշխատության վրա, որը Ղուրանի՝ 6000 էջից բաղկացած մեկնաբանությունէ: Balcı B., l Motika R., նշվ.աշխ., 348:

[238]Նուրջույի ուսունքից առանձնացած ամենաազդեցիկ հոսանքը՝ Ֆեթհուլահ Գյուլենի հետևորդների՝ Ֆեթիհջի կամ Ֆեթհուլահջի համայքն էր: Վերջինս մեծ հեղինակություն էր վայելում Թուրքիայում ու նրա սահմաններից դուրս: Այս համայնքի մեջ մտնում էին մտավորականներ, խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ, լրագրողներ և ուսուցիչներ: Գյուլենական կրթական կենտրոնները բարձր վարկանիշ ունեին, քանի որ ապահովում էին կրոնական կրթություն՝ սինթեզված անգլերենի բարձր մակարդակով և առաջատար տեխնոլոգիաներով: Balcı B., l Motika R., նույն տեղում: 2016 թ. Գյուլենը մեղադրվեց Թուրքիայում հեղաշրջման նախապատրաստան մեջ, ինչից հետո դրա առաջնորդի և գյուլենականների նկատմամբ սկսվեցին հետապնդումներ և զանգվածային ձերբակալություններ: Շարժումն աստիճանաբար անկում ապրեց:

[239] Նույն տեղում:

[240] Նույն տեղում

առաջնորդներին՝մուֆթիի գրասենյակի գործողությունները և կրթական ծրագրերը համակարգելու,իսլամական գրականություն և քարոզտարածելու, ինչպես նաև մզկիթներ վերակառուցելու նպատակով: Այնուամենայնիվ, այդ փուլում Դիյանեթի ազդեցությունն Աջարիայում ավելի թույլ էր և սահմանափակ, ինչը բացատրվում էր ֆինանսական միջոցների սակավությամբ:

Վրաստանում թուրքական ազդեցությունն էականորեն ավելացավ 2004 թ. հունվարին Միխայիլ Սաակաշվիլիի իշխանության գալուց հետո: Սաակաշվիլիի արտաքին քաղաքականության առանցքում Թուրքիայի հետ հարաբերությունները համարվեցին առաջնահերթություն: 2004 թ. մայիսի 20-ին նա եռօրյա այցով մեկնեց Թուրքիա, որտեղ հանդիպեց վարչապետ Էրդողանի, նախագահ Սեզերի և գլխավոր շտաբի ղեկավարի հետ, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ ռազմաքաղաքական համագործակցության մի շարք հարցեր[241]: Թուրքիայում Էրդողանի, իսկ Վրաստանում Սահակաշվիլիի իշխանության գալը զգալիորեն նպաստեց երկու երկրների միջև ռազմական ոլորտում համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը: 2007 թ. նոյեմբերին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի Թբիլիսի այցի շրջանակներում երկու երկրների միջև ստորագրված Ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագրի[242] ստորագրումից հետո Վրաստանում ուղիղ օտարերկրյա ներդրումների շարքում զգալի ավելացան թուրքական նեդրումները:

Վրաստանի հետ հարաբերություններում Թուրքիան մի կողմից հանդես էր գալիս նրա տարածքային ամբողջականության օգտին, իսկ մյուս կողմից՝ ընդգծում էր իր հատուկ դիրքորոշումն Աջարիայի ինքնավար կարգավիճակի վերաբերյալ: Թուրքիան այն դիտարկում էր որպես իր «պրոտեկտորատ» և իրականցնում էր լուրջ կապիտալ ներդրումներ՝ ավելի քան 1,4 միլիարդ դոլար արժեքով[243]:

Կարևոր է փաստել, որ վրացական հասարակական և վերլուծական որոշ շրջանակներ գտնում են, որ չնայած վրացական ղեկավարության երկրում թուրքական մեծաքանակ ներդրումներ իրականացնելու ջանքերին, այդուհանդերձ արդյունքները

[241]Saakashvili M., Georgia, Turkey "Natural Allies", տե՛սhttps://civil.ge/archives/105956, 20 May, 2004(31.01.2021).

[242]Нарчемашвили Н., Турция – самый активный партнер Грузии, http://bizzone.info/articles/1325640148.php(31.01.2021).

[243]Турция усиливает влияние на Грузию, տե՛ս՝http://www.politrus.com/2014/10/06/georgia-turkey-2/ (31.01.2021).

սպասվածից ավելի համեստ էին: Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամի նախագահ Ալեքսանդր Ռոնդելիի դիտարկմամբ (Վահրամ Տեր–Մաթևոսյանի հետ հարցազրույցից, 6.10.2014 թ.) «թուրքական մեծ կապիտալն այդպես էլ Վրաստան չեկավ»[244]: Էական էր նաև այն հանգամանքը, որ վրացական շուկան ունի սահմանափակ հնարավորություններ և հետևաբար թուրքական ներդրումների քանակը ևս սպասվածից ավելի սահմանափակ էր: Թեև Վրաստանի քաղաքական ուժերի մեծ մասը դրական էր վերաբերվում երկրում մեծաքանակ թուրքական ներդրումներին, սակայն որոշ քաղաքական ղեկավարներ իրենց անհանգստությունն էին հայտնում Թուրքիայի դերի ուժեղացման կապակցությամբ: Վրացական երազանք դաշինքի որոշ անդամների բացասական դիրքորոշումից բացի, կան նաև մի շարք արտախորհրդարանական քաղաքական ուժեր՝ հատկապես ազգայնական Ազատ Վրաստան կուսակցությունը և Վրաստանի հայրենասերների դաշինքը, որոնք անկեղծորեն քննադատում էին Թուրքիայի դերի ուժեղացումը Վրաստանի քաղաքական և տնտեսական կյանքում: Ազատ Վրաստան կուսակցության ղեկավար Կախա Կուկավան Վահրամ Տեր–Մաթևոսյանի հետ հարցազրույցում (11.10.2014 թ.) նշել է, որ իր կուսակցությունը Թուրքիան դիտարկում է որպես սպառնալիք՝ ուղղված Վրաստանի ազգային շահերին, բայց նաև շեշտել է, որ դեմ է ծայրահեղ միջոցներին և գտնում է, որ Թուրքիայի դերի ուժեղացումը Վրաստանում պետք է կանխվի դիվանագիտական ճանապարհով[245]:

Այդուհանդերձ, այդ տարիներին արդեն Աջարիան ցանկալի թիրախ էր «փափուկ ուժի» քաղաքականությամբ թուրքական ներթափանցման համար, սակայն ընդհանուր պատմական ոչ միանշանակ ընկալվող անցյալը, վրացական էթնիկ, լեզվական և մշակութային ինքնությունների առանձնահատկությունները դեռևս կարողանում էին դիմադրել Թուրքիայի համաիսլամական գաղափարաբանությանը:

<u>Եզրակացություն</u>

- Համադրելով և ուսումնասիրելով աջարների իսլամացման գործընթացի վերաբերյալ առկա հետազոտությունները, կարող ենք փաստել, որ այն ընթացել

[244]Ter-Matevosyan V., Turkish soft power politics in Georgia: Making sense of political and cultural implications; Religion and Soft Power in the South Caucasus; Ed. by Jödikcke A.;, New York, Routledge, 2017, pp. 27-28.
[245]Մանրամաս տե՛ս՝ նույն տեղում, էջ 28:

է ուժային հարկադրման և կամավոր դավանափոխության իրողությունների համատեղմամբ:

- Աջար մուսուլմանների համար հոգեբանորեն ծանր տեղահանություններն ու արտագաղթը երկուստեք ձեռնտու էր Ցարական Ռուսաստանին և Օսմանյան Կայսությանը: Ցարական իշխանությունն ազատվում էր իր համար «անհուսալի և անվստահելի» իսլամադավան բնակչությունից, իսկ օսմանյան իշխանությունը, խրախուսելով մուհաջիրոբան, իր համար կարևոր ժողովրդագրական խնդիր էր լուծում՝ աջարներին վերաբնակեցնելով քրիստոնեաբնակ կամ սակավաթիվ բնակչությամբ շրջաններում:
- Վրաստանի խորհրդայնացումից հետո աթեիզմի և կոմունիստական գաղափարախոսության ճնշման տակ Աջարիայի մուսուլնական համայքն էականորեն թուլացավ. իսլամական ինքնությունն անկում ապրեց: Հետզհետե ձևավորվող վրացական ազգային ինքնության մեջ ներառվեց ուղղափառ քրիստոնեական բաղադրիչը:
- Աջարիան վերաքրիստոնեացնելու տեսլականը դարձավ նորանկախ Վրաստանի իշխանությունների առաքելությունը, քանի որ տարածաշրջանը պատմական դարպաս է քրիստոնյա և իսլամադավան քաղաքակրթությունների սահմանագծին: Վրաց Ուղղափառ եկեղեցին, կենտրոնական իշխանություններից ստացած իր արտոնություններով, պետական կրթական քաղաքականությունը, վրացականության և քրիստոնեության օրգանական միասնականության ընկալումը, էականորեն խթանեցին ուղղափառ քրիստոնեության տարածումն Աջարիայում:
- Հետխորհրդային Աջարիան դարձավ ցանկալի թիրախ «փափուկ ուժի» քաղաքականությամբ թուրքական ներթափանցման համար, սակայն ընդհանուր պատմական ոչ միանշանակ ընկալվող անցյալը, վրացական էթնիկ, լեզվական և մշակութային ինքնությունների առանձնահատկությունները դեռևս կարողանում էին դիմադրել Թուրքիայի համաիսլամական գաղափարաբանությանը:

Institute of Oriental Studies, NAS RA

MUSLIM COMMUNITY OF ADJARA. FORMATION STAGES AND IDENTITY FEATURES

The paper aims to analyze the history of the formation of Muslim community of Adjara, the identity problems of community and its features in different historical periods – from Ottoman period to independence of Georgia. The article discusses the processes of forced and voluntary Islamization during the Ottoman rule (XV-XIX centuries) which led to the formation of Muslim community in Adjara. Because of Russo-Turkish, war of 1878-1879 Adjara passed to Tsarist Russia, which led to the migration of Muslim Adjars to Ottoman Empire, known as Mouhajiroba.

After the sovietization of Georgia, under the pressure of atheism and communist ideolody, the Muslim community of Adjara weakened significantly, and Islamic identity declined. The post-Soviet period posed new challenges for Muslim Adjars in the face of growing Georgian nationalism and the Georgian Orthodox Church's policy of conversion.

After the independence of Georgia, the Islamic community of Adjara appeared in the list of Turkey's foreign interests as a possible target of penetration.

ТАТЕВИК МАНУКЯН, ЛИЛИТ АРУТЮНЯН

ИСЛАМСКАЯ ОБЩИНА АДЖАРИИ. ЭТАПЫ ФОРМИРОВАНИЯ И ОСОБЕННОСТИ ИДЕНТИЧНОСТИ

В статье рассматривается вопрос формирования исламской общины в Аджарии, проблемы идентичности, от периода Османской империи до независимости Грузии. Обсуждаются процессы как добровольной, так и принужденной исламизации времен османского владычества (XV-XIX вв.), в результате которых сформировалась мусульманская община Аджарии.

В результате русско-турецкой войны 1877-1878 гг. Аджария перешла к царской России, что привело к переселению аджаров мусульман в Османскую империю (мухаджироба).

После советизации Грузии под давлением атеистической и коммунистической идеологии мусульманская община Аджарии значительно ослабла, пришла в упадок исламская идентичность.

Постсоветский период создал новые проблемы для мусульман аджаров в виде роста грузинского национализма и политики вероотступничества, которая осуществлялась со стороны Грузинской православной церкви.

После обретения Грузией независимости, исламское община Аджарии оказалась в центре внешнеполитических интересов Турции, какмишень, турецкой экспансии в Грузию и последовательного поглощения Аджарии.

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ, Հ. XVII

Լիլիթ Հարությունյան (ՀՀ ԳԱԱ ԱԻ)

Տաթևիկ Մանուկյան (ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՇԻԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր՝ Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան, Իրան, իսլամ, շիա, «փափուկ ուժ»

<u>Ներածություն</u>

Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով սահմանների վերափոխման արդյունքում ձևավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերն ու առաջացած անկայունությունը հարավկովկասյան տարածաշրջանում այսօր առավել քան երբևէ արժևորում է իսլամական գործոնի և հետայսու դրա ծավալման հեռանկարների ուսումնասիրության կարևորությունը: Հետպատերազմյան ձևավորված իրողությունները հայ գիտական և քաղաքական մտքին ստիպում են լրջորեն վերանայել իսլամական գործոնով պայմանավորված թե՛ ներքին, թե՛ արտաքին ազդակներն ու ուղենիշները:

Հարավային Կովկասը մշտապես գտնվել է կրոնների և քաղաքակրթությունների բախման խաչմերուկում, վերածվել ազգամիջյան ու միջպետական հարաբերությունների բարդ հանգույցի, որում ներգրավված են ինչպես

տարածաշրջանային, այնպես էլ միջազգային դերակատարներ, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ու հետաքրքրությունների փոխակերպումները և վերադասավորումներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում տարածաշրջանային զարգացումների վրա: Վերջին այդպիսի փոփոխությունները, որոնք պայմանավորված են նաև իսլամական գործոնի ակտիվացմամբ և ուժային նոր հարաբերակցությամբ, լրջագույն սպառնալիք են Հայաստանի տարածքային ամբողջականությանը:

Հայաստանի սահմանակից չորս պետություններից երեքն իսլամադավան են իրենց բնակչության բացարձակ մեծամասնությամբ: Միակ քրիստոնյա երկիրը Վրաստանն է, որտեղ իսլամը երկրորդ ամենատարածված կրոնն[246]: Մուսուլմանական համայնքները Վրաստանում համակարգված ապրում են Պանկիսի կիրճում, Քվեմո Քարթլիի շրջանում և Աջարիայի ինքնավար հանրապետությունում: Կան նաև փոքր մուսուլմանական բնակավայրեր Կախեթիի, Քվարելի, Թելավի և Սագարեջո վարչական շրջաններում (էթնիկ ադրբեջանցիներ), ինչպես նաև Ծալկայի, Ջավախքի և Գուրիայի շրջաններում (Աջարիայից այստեղ հաստատվածներ և մսխեթցի թուրքերի փոքր խմբեր)[247]: Թբիլիսիում բնակվում է մոտ 16.000 մուսուլման [248]:

Ակներև է, որ բացի Ջավախքից, մուսուլմանները գերակշիռ մեծամասնություն են կազմում Հայաստանի հետ սահմանակից բոլոր բնակավայրերում:

<u>Իսլամը Վրաստանում. պատմական ակնարկ</u>

Ներկայիս Վրաստանն արաբաիսլամական տիրապետության տակ անցավ 7-8-րդ դարերում: Երկիրը թոթափեց այդ լուծը միայն 1122 թ., երբ Դավիթ Շինարարը, ավարտին հասցնելով Վրաստանի վերամիավորումը, ազատագրեց Տփղիսը և

[246]2014 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Վրաստանում բնակվում է 400.000 մուսուլման, որը կազմում է երկրի բնակչության 10.7 %-ը: Մուսուլմանական համայնքն իր մեծությամբ երկրի երկրորդ ամենամեծ համայնքն է: http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf

[247] Mikadze E., “L’islam en Ge´orgie”, Me´moire de DEA, IEP de Paris, 1995; Meiering Mikadze E., “L’islam en Adjarie: Trajectoire historique et implications contemporaines”, Cahiers d’Etudes sur la Me´diterrane´e Orientale et le Monde Turco–Iranien, No 27, 1999, pp. 241–261.

[248] Serrano S., ‘Les Aze´ris de Ge´orgie. Quelles perspectives d’inte´gration?’, Cahiers d’Etudes sur la Me´diterrane´e Orientale et le Monde Turco-Iranien, No 28, 1999, pp. 231–251.

Քութայիսիից այստեղ տեղափոխեց մայրաքաղաքը: Չորսդարյա ընդմիջումից հետո Վրաստանում վերականգնվեց քրիստոնյաների քաղաքական գերիշխանությունը[249]:

Հետագայում Իրանի Սեֆյան շիայական դինաստիան և Օսմանյան կայսրության սուննի սուլթանները ներխուժեցին և գրավեցին Հարավային Կովկասը: Դարեր շարունակ նրանք մարտնչում էին Կովկասում գերակա դիրքեր ունենալու համար: Վերջիններիս վերահսկողությունը Վրաստանի նատմամբ խթանեց իսլամադավան թյուրքախոս և իրանական տարբեր ցեղերի հաստատմանը՝ նպաստելով որոշ շրջանների իսլամականացմանը[250]:

19-րդ դարում, երբ Ռուսաստանը հաստատվեց Հարավային Կովկասում վերոնշյալ երկու տերություններն էլ ստիպված եղան նահանջել՝ այդուհանդերձ պահպանելով իրենց որոշակի ազդեցությունը: Թեև Վրաստանում իսլամի ինստիտուցիոնալ դերն անկում ապրեց, սակայն ցարական կառավարության որոշմամբ Թբիլիսիում բացվեցին մուսուլմանական հոգևոր կրթարաններ, որոնց իրական գործառույթը սուննի և շիա հոգևորականներ կրթելու պատրվակով ցարական վարչակարգի «քարոզիչների» պատրաստումն էր:

1907 թ. Թբիլիսիում ստեղծվեց առաջին մուսուլմանական կուսակցությունը՝ «Մոդաֆ» («Պաշտպանություն»), որի գլխավոր նպատակը նահանգի իսլամադավան հանրույթի կրոնական դաստիարակության կազմակերպումն էր: Մինչ այդ՝ 1906 թ. վրացերեն թարգմանվեց և առանձին գրքով հրատարակվեց Ղուրանը[251]:

Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում բոլշևիկների իշխանության հաստատումից[252] հետո մինչև 1930 թ. խորհրդային կենտկոմը վերահոսկողություն սահմանեց կրոնական համայնքների նկատմամբ, այնուհետև, գործելով «ժողովրդի

---

[249] Վրաստանի միջնադարյան պատմության հիմահարցերի մասին մանրամասն տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 2, Միջին դարեր, Բաժին 4, Վրաստան (Վիրք) Երևան, 2016, էջ 298-392:

[250] Beradze G. and Kutsia K., “Towards the inter-relations of Iran and Georgia in the 16th–17th Centuries”, in Motika R. and Ursinus M. (eds), Caucasia Between the Ottoman Empire and Iran, Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag, 2000, pp. 121–131.

[251] Ислам в Грузии: Политика и интеграция / Исследователский отчет/, Тбилиси, 2016 , с. 8.

[252]Վրաստանի խորհրդայնացման սկզբնափուլում այստեղ գործում էր շուրջ 250 մզկիթ՝ավելի քան 600 մոլաներով: Կային հինգ բարձրագույն մեդրեսեներ, 150 կրոնական կրոնական դպրոցներ, որոնց թիվը հետագայում հասնում է 172-ի՝ չնայած 1926 թ. կրոնական առարկաները հանվել էին դպրոցական դասընթացներից: 1929 թ. ընդունվեց հանրակրթության մասին օրենքը և սկսվեց կրոնական դպրոցների վերացումը: Տե՛ս Ислам в Грузии: Политика и интеграция / Исследователский отчет/, Тбилиси, 2016, с. 8; Барамидзе Р., Ислам и его особенности в Аджарии; https://ge.boell.org/en/2005/01/16/islam-i-ego-osobennosti-v-adzharii

անունից», փակեց հոգևոր կենտրոնները՝ եկեղեցիները, վանքերն ու մզկիթները վերածելով տնտեսական պահեստների:

Այդուհանդերձ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նպատակ ունենալով ստանալ բնակչության և հոգևորականության աջակցությունը, խորհրդային իշխանությունը թուլացրեց կրոնական տարբեր համայնքների նկատմամբ վարվող քաղաքականությունը: 1944 թ. խորհրդային մուսուլմաններին հնարավորություն տրվեց կազմավորել կրոնական հարցերի 4 վարչություն, որոնցից մեկը գործում էր Բաքվում: Վերջինս համակարգում էր Հարավային Կովկասի իսլամադավաններին՝ ներառյալ Վրաստանի սուննիներին և շիաներին[253]:

Խորհրդային շրջանում Վրաստանին հաջողվեց պահպանել ազգային դրսևորումները լեզվի, մշակութային և կրոնական քաղաքականության առանցքում՝ մանևրելով խորհրդային գաղափարախոսության և ազգայնականության միջև: Սակայն ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ Վրաստանի իշխանությունների քաղաքականությունն այս շրջանում հակասական և փոփոխական էր՝ պայմանավորված նաև Մոսկվայի քաղաքական նախասիրություններով: Առանձնահատուկ մոտեցումներ կային տարբեր էթնիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Այդուհանդերձ, իսլամադավան բնակչության հավատարմությունը վրացական պետությանը դեռևս շարունակական է նաև հետխորհրդային շրջանում՝ չնայած «փափուկ ուժի» քաղաքականությամբ արտաքին կրոնական ազդեցության ծավալմանը և երկրում քրիստոնեության աճող հեղինակությանն ու առանձնահատուկ կարգավիճակին[254]:

ԽՍՀՄ փլուզմանը զուգահեռ ավելացան կրոնական ազատությունները: 1991 թ. Վրաստանի անկախացումից հետո երկրի իսլամադավաններն ակտիվորեն սկսեցին

---

[253] Միաժամանակ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1944 թ. նոյեմբերի 15-ի հրամանով Վրաստանի մուսուլմանական բնակչությունը տեղահանվեց սահմանային բնակավայրերից. ընդհանուր առմամբ 15.568 ընտանիք (69869 մարդ): Տե՛ս Барамидзе Р., Ислам и его особенности в Аджарии; https://ge.boell.org/en/2005/01/16/islam-i-ego-osobennosti-v-adzharii

[254] Վրաստանի սահմանադրության 8-րդ հոդվածն ամրագրում է «Ուղղափառ եկեղեցու բացառիկ դերը երկրի պատմության առանցքում» և երաշխավորում է վերջինիս հատուկ կարգավիճակը[254]: Անկախ Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան (1991–1992 թթ.) ուղղափառ եկեղեցուն շնորհեց առանձնահատուկ կարգավիճակ պետական ինստիտուտների և հասարակության միջև հարաբերություններում: Constitution of Georgia, at http://matsne.gov.ge; Sakartvelos sakanonnmdeblo matsne, No 8, 19.10.2018

ինտեգրվել միջազգային իսլամական ումմային[255]: ԽՍՀՄ փլուզումից հետո առանձնահատուկ կապեր հաստատվեցին թյուրքական և իրանական տարբեր իսլամական կազմակերպությունների հետ. սկսվեց վերաիսլամացման բուռն գործընթաց՝ կրոնական կրթական հաստատությունների ակտիվ վերականգնմամբ կամ կառուցմամբ, հավատացյալների և կրոնական կրթություն ունեցող անձանց թվի աճով: Այնուամենայնիվ, անկախությունից հետո Վրաստանում իսլամադավանների թվաքանակի անկում է արձանագրվել: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ շատ մուսուլմաններ՝ հատկապես ադրբեջանցիներ, հաստատվեցին Ռուսաստանում և Ադրբեջանում՝ ընտանեկան կամ տնտեսական դրդապատճառներից ելնելով:

<u>Վրաստանի շիաներ. բնակության հիմնական շրջաններ</u>

Վրաստանում մուսուլմանաբնակ շրջանները բախվում են յուրահատուկ մարտահրավերների հետ՝ պայմանավորված բազմաէթնիկ բնույթով և սոցիալ-տնտեսական իրավիճակի առանձնահատկություններով: Էթնիկ և կրոնական փոքրամասնություններով բնակեցված շրջաններում այս խնդիրներն ուղղակիորեն անդրադառնում են նաև քաղաքացիական ինտեգրման որակի վրա:

Քվեմո Քարթլիի շրջանն ավանդականորեն մուսուլմանական բնակավայր է, որտեղ մեծամասամբ ապրում են էթնիկ ադրբեջանցիներ, որոնց 93%-ը շիաներ են, իսկ 7%-ը՝ սուննիներ[256]: Այնուամենայնիվ դավանական այս տարբերությունը դժվար է տարբերակել առօրյա կյանքում. կան բարեկամական կապեր, խառն ամուսնություններ, ամուր սոցիալ-տնտեսական շփումներ, որոնց արդյունքում ձևավորվել է ինտեգրված հանրույթ:

Քվեմո Քարթլիի գյուղական համայնքները Թբիլիսին և այլ շրջկենտրոններին կապող ենթակառուցվածքները զարգացած չեն, գյուղերը հաճախ կտրված են մշակութային և կրթական հաստատություններից, իսկ ավանդական մեկուսացած կենսակերպն ու սոցիալ-տնտեսական շփումների բացակայությունը լրջագույնս խոչընդոտում է ինտեգրման գործընթացը: Վրացերենի իմացության ցածր մակարդակը

[255] Վրաստանի մուսուլմանների վարչության 2016 թ. սկզբի տվյալների համաձայն՝ երկրում գործում է 312 մզկիթ՝ ավելի քան 400 իսլամ հոգևորականներով: Կան 30 հոգևոր դպրոցներ, որոնցում ուսուցանվում է իսլամ, Ղուրան և արաբերեն լեզու: Մանրամասն տե՛ս՝ Islam in Georgia: Policy and integration, Research report, Caucasian House, The Center of cultural relations, Tbilisi, 2016, p. 15.

[256] Վերջին մարդահամարի համաձայն Վրաստանում էթնիկ ադրբեջանցիների թիվը կազմում է 233.000, որից 182.000 բնակվում է Քվեմո Քարթլիի շրջանում: Resutls of 2014 general population census. Available at: http://census.ge/ge/results/census

ևս լուրջ խոչընդոտ է տեղական մուսուլմանական համայնքների քաղաքական և մշակութային ինտեգրման համար: Լեզվական խոչընդոտի հաղթահարմանը միտված ծրագրերով փորձ է արվում բարձրացնել ադրբեջանցիների քաղաքացիական ներգրավվածությունը վրացական տեղեկատվական տիրույթում և խթանել Վրաստանի ադրբեջանական համայնքի ինտեգրման գործընթացը:

Կրթության և ինտեգրման խնդիրները Վրաստանի շիայական համայնքում

Վերջին մի քանի տարիների ընթացքում բարձրագույն կրթության այսպես կոչված «1+4 համակարգի» կիրառումը կարևոր դեր խաղաց ադրբեջանցիների՝ վրացական հասարակությանն ինտեգրելու գործում: Համակարգը նախատեսված է փոքրամասնությունները ներկայացնող (հիմնականում ադրբեջանցի և հայ) երիտասարդների համար՝ որոնք դպրոցն ավարտելուց հետո, հաճախում են մեկ տարի տևողությամբ վրացերենի արագացված դասընթացների, ապա ստանում բարձրագույն կրթություն կամ մասնագիտական տարբեր հմտություններ:

Տեղական կրթական կենտրոնների համաձայն՝ նկատելի է, որ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Վրաստանից Ադրբեջան մեկնող ուսանողների թիվը վերջին տարիներին էականորեն նվազել է[257]: Զուգահեռաբար Քվեմո Քարթլիի շրջանում ադրբեջանական բարձրագույն կրթական հաստատությունների մասնաճյուղերի թիվն էականորեն ավելանում է:

Վրաստանում անցկացված անկախ հետազոտությունները ցույց են տալիս, որ աճում է այն ադրբեջանցիների թիվը, որոնք ցանկություն ունեն իրենց երեխաներին ուղարկել վրացական դպրոցներ: Մառնեուլիի կրթական տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն՝ հանրակրթական դպրոցներում ուսանող էթնիկ ադրբեջանցիների 70%-ը նախընտրում է հաճախել վրացական դպրոցներ: Այդպիսի աշակերտների թիվը տարեցտարի աճում է[258]: Փաստենք, որ ադրբեջաներենով ուսուցանվող դպրոցներում վրացերենի դասավանդման մեթոդաբանությունը ևս բարելավման կարիք ունի[259]:

---

[257] Dvali A., Badasyan E., Problems and Foreign Policy Preferences of Kvemo Kartli and Samtskhe-Javakheti Communities, Centre for Cultural Relations, Caucasian House, Tbilisi, 2014, p. 9.

[258] Motika R., “Islam in Post-Soviet Azerbaijan”, Archives des Sciences Sociales des Religions, No 115,

[259] Метревели Е., Абашидзе Т., Жвания И., Китиашвили А., Квемо Картли: вызовы и перцпективы; Тбилиси, 2014, стр. 7-8,

Վրացերեն լեզվի իմացության մակարդակը շատ թույլ է հատկապես ադրբեջանական համայնքի ավելի տարեց սերնդի շրջանում, ինչը բացատրվում է այն փաստով, որ խորհրդային շրջանում ռուսերենն է եղել էթնիկ խմբերի միջև հաղորդակցության լեզու, և հետևաբար վրացերեն սովորելու կարիք չի եղել:

Վրաստանում էթնիկ ադրբեջանցիների ինտեգրման ևս մեկ խոչընդոտ է խառն ամուսնությունների ցածր տոկոսը՝ ադրբեջանցիների և վրացիների միջև՝ կրոնական ընդհանուր սահմանափակումների պատճառով: Ի հավելումն՝ իսլամն ու ավանդական սովորույթները, հատկապես գյուղական շրջաններում, որոշակի սահմանափակումներ են ի հայտ բերում կանանց սոցիալական ակտիվության հարցում, ինչն էլ խոչընդոտում է ինտեգրման գործընթացին:

Այնուամենայնիվ Քվեմո Քարթլիի ադրբեջանցի մուսուլմաններն ակտիվ շփումներ ունեն նույն շրջանում ապրող վրացի հարևանների հետ՝ շնորհիվ ամուր սոցիալական և տնտեսական կապերի: Շատ հաճախ տեղական քրիստոնյա և մուսուլման համայնքները միասին են նշում կրոնական և համայնքային տոները: Քվեմո Քարթլիի շրջանի մուսուլման համայնքներին բնորոշ է նաև քաղաքական ակտիվության ցածր մակարդակը և իշխանությունների նկատմամբ չեզոքությունը:

Վրաստանի մուսուլմանաբնակ շրջանների կրոնական դպրոցներում ուսուցանվում է Ղուրան, շարիաթ, կրոնի պատմություն և այլ առարկաներ[260]: Կրոնական դասընթացների նկատմամբ մեծ հետաքրքրություն են դրսևորում հատկապես դեռահասներն ու երիտասարդները:

<u>Արտաքին ազդեցությունները Վրաստանի շիայական համայնքում</u>

Վրաստանի անկախությունից հետո Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի տարբեր կրոնական կազմակերպություններ «փափուկ ուժի» կիրառմամբ հետևողականորեն փորձում են իրենց ազդեցությունը տարածել Քվեմո Քարթլիի շրջանի սուննի և շիա հավատացյալների շրջանում: Ադրբեջանը փորձում է իր ազդեցությունը տարածել գլխավորապես էթնիկ-մշակութային ինքնության գործոնի շեշտադրմամբ: Թուրքիայի ղեկավարությունը տնտեսական բաղադրիչին զուգահեռ առանձնահատուկ կարևորություն է տալիս կրոնական, կրթական, մշակութային և հումանիտար

[260] Inasaridze L., “Meskhetian return stirs Georgian dissent”, IWPR Caucasus Reporting Service, 2003, p. 163, Վերջին տարիներին Մարնեուլիից 200 երիտասարդներ են մասնակցել կրոնական դասընթացների, իսկ Քվեմո Քարթլիի շրջանից այդ թիվը հասնել է 600-ի: Մանրամասն տե՛ս Gürcistan'da Müslüman Topluluklar: Azınlık Hakları, Kimlik, Siyaset, ed. Aydıngün A., Asker A., Şir A.Y, Ankara 2016, ss. 221-223

ոլորտների նախաձեռնություններին[261]: Քվեմո Քարթլիի և Կախեթիի շիական համայքները մշտապես գտվում են նաև Իրանի տարարածաշրջանային քաղաքական օրակարգում: Իրանի կրոնական կազմակերպություններն անթաքույց աշխատում են Մառնեուլի և Գարդաբանի գյուղական բնակավայրերում, որտեղ առկա է կրթական անհամաչափություն շրջկենտրոնների համեմատությամբ[262]: Վերոնշյալ երեք պետությունների կրոնական և մշակութային ակտիվությունը դրսևորվում է մզկիթների կառուցման, իսլամական հոգևոր դպրոցների ֆինանսավորման, կրոնական գրականության տարածման և տարբեր մշակութային ու կրթական ծրագրերի իրականացման ֆինանսավորմամբ[263]:

Սակայն հետևելով վերջին երկու տարիներին ծավալվող գործընթացներին՝ նկատելի են այս տարածաշրջանում Թուրքիայի կողմից նաև Ադրբեջանով միջնորդավորված քաղաքական ակտիվացման նախաձեռնություններ, որոնք նաև միտված են Իրանի դերի և ազդեցության նվազեցմանը:

Արտաքին ազդեցության տարածման լավագույն քարոզիչներ դիտարկվում են նոր սերնդի մուսուլման հոգևորականները: Վրաստանում ավագ սերնդի հոգևորականությունն այլևս չէր կարող պատասխաններ տալ երիտասարդների զգայուն աստվածաբանական հարցերին, քանի որ ներփակված լինելով խորհրդային միջավայրում, կտրված էր իսլամական ումմայից և գաղափարական զարգացման նոր միտումներից: Հոգևորականների նոր սերունդը, որ աստվածաբանական կրթություն է ստացել Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի և Իրանի բարձրագույն կրոնական հաստատություններում, ունի բարձրակարգ կրոնական գիտելիքներ, համապատասխան քարոզչական հմտություններ և արտաքին աջակցություն՝ երիտասարդ մուսուլմանների համախմբման և հավաքագրման համար:

---

[261]Թեև այս տարածշրջանում հանդիպող առանձին դեպքերի՝ թուրքական ծավալապաշտական և գաղափարական նկրտումնումները հետխորդրդային շրջանում հիմանականում միտված էին Աջարիային և Ջավախքին: Մանրամասն տե՛ս՝ Ter-Matevosyan V., Turkish soft power politics in Georgia: Making sense of political and cultural implications; Religion and Soft Power in the South Caucasus; Ed. by Jödikcke A.;, New York, Routledge, 2017, pp. 21-41

[262] Корни насильственного экстремизма и радикализации в Азербайджане и Грузии, с. 23; http://library.fes.de/pdf-files/bueros/georgien/14973.pdf

[263] Islam in Georgia: Policy and integration, Research report, Caucasian House, The Center of cultural relations, Tbilisi, 2016, p. 25.

Նշենք, որ արտաքին ֆինանսական և գաղափարական աջակցությունն իրականացվում է բավական փակ ձևաչափով և միակ փաստը, որ մատնանշում է այսպիսի աջակցության գոյությունը դրսում տպված բազմահատոր կրոնական գրականությունն է, որը տրամադրվում է մզկիթներին ու հավատացյալներին տարբեր կառույցների միջոցով:

Պետությունը չունի վերահսկողության գործիքակազմ՝ տարածվող գրականության, ուսումնական ծրագրերի մշտադիտարկման համար, իսկ իսլամական կրթօջախներից միայն մի քանիսն են համագործակցում տեղեկատվության փոխանակմամբ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ակադեմիական կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Եզրակացություն

Վրաստանի Հայաստանին սահմանակից շրջանների մեծ մասը բնակեցված է մուսուլմաններով՝ գլխավորապես շիաներով, որտեղ առկա են մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես՝ զգալի թվով շիաներ չեն խոսում վրացերեն և հաղորդակցության հիմնական լեզուն շարունակում է մնալ ռուսերենը: Վերջին շրջանում պետությունն իրականացնում է ինտեգրման մի շարք ծրագրեր, որոնց նպատակը երկրի շիա բնակչության առավելագույն ներգրավումն է վրացական հասարակությունում:

Վրաստանի շիայաբնակ շրջաններում տարածաշրջանային երեք պետությունները՝ Իրանը, Թուրքիան և Ադրբեջանը փորձում են իրենց ազդեցությունը տարածել տնտեսական, էթնիկ, մշակութային և կրոնական գործիքակազմի շեշտադրմամբ:

Վրացական կողմից Հայաստանի սահմանակից բնակավայրերում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հետևողականորեն իրականացվում է «փափուկ ուժի» վտանգավոր քաղաքականություն՝ մեծացնելով թյուրքական տարրի ազդեցությունն ու փորձելով փոփոխել ժողովրդագրական պատկերը: Հետագայում սա հնարավորություն կտա Վրաստանի տարածքում ստեղծել Թուրքիան Ադրբեջանին կապող թյուրքական բնակավայրերի միջանցք, ինչն ակնհայտ անվտանգային խնդիրներ է առաջացնելու ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի համար:

Թուրքիայի համար Վրաստանն ունի և՛ աշխարհաքաղաքական և՛ աշխարհատնտեսական կարևորություն՝ դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա ամենակարճ և կայուն տարանցիկ ծառայելու տեսանկյունից: Հարավային Կովկասում ուժերի նոր վերադասավորման պայմաններում Անկարան և Բաքուն շարունակելու են գործադրել հնարավոր ամբողջ գործիքակազմը՝ ներդրումային, մշակութային, կրոնական, գաղափարական և ռազմական, Վրաստանն իրենց ուղեծրում պահելու համար:

SHI'I COMMUNITY OF GEORGIA: REALITIES AND FEATURES

Lilit Harutyunyan (IOS NAS RA), Tatevik Manukyan (IOS NAS RA)

SUMMARY

Due to current processes and developments unfolding in the modern world, a greater attention has been drawn to the situation pertaining to Muslim minority communities worldwide, and Georgia is no exception. The Muslim community is the largest religious minority group in Georgia. All Islamic communities and institutions in Georgia, be they Sunni or Shi'i, are theoretically under the central authority of the imam of Tbilisi's central mosque, himself dependant on the Baku-based Administration of the Muslims of the Caucasus.

The researches, conducted in Georgia have demonstrated that despite the historic experience of co-existence between diverse religious groups, the country experiences longstanding problems related to the lack of integration of various religious denominations into mainstream communities. The article examines the features of the Shia factor and the issues of external influence of "soft power" in the processes of integration and activities of religious minorities in Georgia.

ШИИТСКАЯ ОБЩИНА ГРУЗИИ: РЕАЛИ И ОСОБЕННОСТИ

Лилит Арутюнян (ИВ НАН РА), Татевик Манукян (ИВ НАН РА)

В контексте процессов и реалий относительно проблематики мусульманских меньшинств в современном мире Грузия не является исключением. Из религиозных

меньшинств мусульманская община Грузии - самая большая. Все исламские общины и институты в Грузии, будь то суннитские или шиитские, теоретически подчиняются власти имама центральной мечети в Тбилиси, под эгидой Управления мусульман Кавказа в Баку.

Исследования, касающиеся Грузии, показывают, что, несмотря на исторический опыт сосуществования различных религиозных групп, в стране существуют фундаментальные проблемы, связанные с интеграцией различных религиозных конфессий с основной общиной. В статье рассматриваются особенности шиитского фактора и проблемы внешнего влияния “мягкой силы” в процессах интеграции и деятельности религиозных меньшинств Грузии.

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ և ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 2020 Թ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (ՏԵՍԱԿԵՏ ԵՐԵՎԱՆԻՑ)

Արաքս Փաշայան, պ. գ. թ. , դոցենտ

Հանձնված է տպագրության Եգիպտոսի Ալ-Ահրամ կենտրոնի «Դիմուկրատիյա» («Ժողովրդավարություն») հանդեսին, արաբերենով, 2021 թ. հունիսին:

ԱՌԱՋԱԲԱՆ

2020թ. սեպտեմբերի 27-ին ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի անմիջական ներգրավվածությամբ, Իսրայելի՝ նշանակալից, Պակիստանի՝ որոշակի, և սիրիացի վարձկանների[264] *լայն մասնակցությամբ Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղ), բայց դե ֆակտո՝ Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Հարավային Կովկասում ստեղծվեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: 44 օր տևած պատերազմը հանգեցրեց 2020թ. նոյեմբերի 9-ի Ռուսաստան-*

[264] Are Syrian Mercenaries Helping Azerbaijan Fight For Nagorno-Karabakh?, October 15, 2020, https://www.rferl.org/a/are-syrian-mercenaries-helping-azerbaijan-fight-for-nagorno-karabakh-/30895331.html; Syrian recruit describes role of foreign fighters in Nagorno-Karabakh, 02 October, https://www.theguardian.com/world/2020/oct/02/syrian-recruit-describes-role-of-foreign-fighters-in-nagorno-karabakh

Ադրբեջան-Հայաստան եռակողմ՝ Երևանի համար կապիտուլացիոն հայտարարության ստորագրմանը[265]*: Հայկական կողմը կորցրեց Արցախի Հանրապետության 75 տոկոսը, որի մեջ մտնում էին 1991-1994 թթ. հայկական ուժերի կողմից Ադրբեջանից գրաված և բնական ռեսուրսներով հարուստ յոթ շրջանները /Քելբաջար, Ֆիզուլի, Ջանգելան, Աղդամ, Լաչին, Ջաբրայիլ, Կուբաթլի/, որոնք Հայաստանի և Արցախ համար ծառայում էին որպես անվտանգության գոտի: Նշենք, որ իր հերթին 1991-1994 թ. հայ-ադրբեջանական առաջին պատերազմի ժամանակ Ադրբեջանը օկուպացրել էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մաս կազմող Շահումյանի շրջանի մեծ մասը: Հայկական կողմի համար պատերազմի ամենադրամատիկ հանգամանքներից մեկը հայկական հնամենի քաղաք, Արցախի սիրտը համարվող Շուշի քաղաքի կորուստն էր, որը ադրբեջանցիները համարում են ադրբեջանական /Շուշա/ և նպատակ ունեն այն դարձնել Ադրբեջանի մշակութային կենտրոն: Հայկական կողմը կորցրեց նաև Արցախի մաս կազմող Հադրութի շրջանը: Թուրք-ադրբեջանական պահանջով Շուշին, կարելի է ասել, հանձնվեց՝ որպես զինադադարի նախապայման: Պատերազմը, որը թուրք-ադրբեջանական կողմը վարում էր հինգերորդ սերնդի զենքերով, մասնավորապես՝ իսրայելական և թուրքական /բայրաքթարներ/ անօդաչու թռչող սարքերի միջոցով, մարդկային և նյութական ավելի մեծ կորուստներ պատճառեց հայկական կողմին, քան Ադրբեջանին: Հայկական կողմն ունեցավ մոտ հինգ հազար զոհ, բազմաթիվ անհետ կորածներ, հաշմանդամներ, նաև ռազմագերիներ, որոնց մի մասը միայն Ադրբեջանը պատերազմից հետո հանձնեց Հայաստանին: Պատերազմի շրջանում մոտ 100.000 մարդ տեղահանվեց (փախստականների միայն մի մասը հետագայում վերադարձավ Արցախ), Արցախում ենթակառուցվածքների հիմնական մասը վնասվեց: Պատերազմի ընթացքում, հայկական կողմից յոթ տասնյակից ավել քաղաքացիական մարդիկ, զոհվեցին, այդ թվում՝ կանայք և երեխաներ, որոնց մեջ կան խոշտանգումների բազմաթիվ դեպքեր: Պատերազմական հանցագործությունները երկու կողմից էլ կարիք ունեն ուսումնասիրության և միջազգային դատապարտման: 2021թ. հունվարի 11-ին Մոսկվայում ստորագրեց Ռուսաստան-Ադրբեջան-Հայաստան տնտեսական ու կոմունիկացիաների ապաշրջափակման՝ արդեն երկրորդ հայտարարությունը, որը*

[265] Getting from Ceasefire to Peace in Nagorno-Karabakh, International Crisis group, 10 Nov, https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-conflict/getting-ceasefire-peace-nagorno-karabakh

նույնպես շրջանցում էր Հայաստանի շահերը, քանի որ բաց էր թողնում թե՛ ռազմագերիների և թե՛ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Բացի այդ, Հայաստանում դեռևս չեն պատկերացնում, թե ապաշրջափակումը ինչ առավելություններ կարող է տալ Հայաստանին: Նշենք նաև, որ 1994 թ. Հայաստանի և Ադրբեջանի միջև ձեռք բերված փխրուն զինադադարը և դրան հաջորդած քաղաքական բանակցությունների գործընթացը այդպես էլ հաջողության չհասավ: 1994 թ. հետո իրավիճակը տարածաշրջանում եղել է «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն»[266]: Այդ տարիներին եղել են բազմաթիվ սահմանային միջադեպեր, հրադադարի կոշտ խախտումներ, ռազմական գործողությունների էսկալացիա, մասնավորապես՝ 2016 թ. ապրիլին[267] և 2020 թ. հուլիսին[268]:

Լեռնային Ղարաբաղի հարցով միջազգային բազմաթիվ փորձագետներ նշեցին, որ Հայաստանը ոչ միայն ներկա լայնածավալ պատերազմին պատրաստ չէր, այլև՝ չկարողացավ գրագետ վարել պատերազմը և ձախողեց ղարաբաղյան առաջին պատերազմում ձեռք բերած գրեթե բոլոր հաղթանակներն ու հաջողությունները: Բացի այդ, Հայաստանի և Արցախի իշխանությունները մոլորության մեջ գցեցին սեփական հասարակություններին՝ պատերազմում հաղթելու խաբկանք ստեղծելով, ինչը պատերազմի ավարտից հետո հուսահատության առաջացրեց Հայաստանում և Արցախում: Ստեղված իրավիճակում, Հայաստանում ակտիվացան ընդդիմադիր և դժգոհ շերտերը, որոնք պահանջեցին օրվա իշխանությունների անհապաղ հրաժարական:

Բանալի բառեր՝ *Արցախ, Շուշի, Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա, Ռուսաստան, Իրան, պատերազմ, պայմանագիր, կապիտուլյացիա, օկուպացիա, անվտանգություն, դեբլոկադա, «բայրաքթար», ռազմագերի, աշխարհաքաղաքականություն, հակահայկական քսենոֆոբիա*

---

[266] Thomas de Waal, Black Garden. Armenia and Azerbaijan through Peace and War, New York, 2013, https://raufray.files.wordpress.com/2010/11/0814719449.pdf

[267] Nagorno Karabakh: New Opening, or more Peril, International Crisis Group, report No. 239, https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/azerbaijan/nagorno-karabakh-new-opening-or-more-peril

[268]The Nagorno Karabakh Conflict: A Visual Explainer, International Crisis Group, https://www.crisisgroup.org/content/nagorno-karabakh-conflict-visual-explainer

Ղարաբաղյան վերջին պատերազմը. հայատյացության ֆենոմենը

Պատերազմը սկսվեց սեպտեմբերի 27-ին: Ադրբեջանը ռազմաճակատի բոլոր ուղղություններով հարձակում սկսեց Արցախի Հանրապետության դեմ, ունենալով Թուրքիայի ռազմական և քաղաքական ամենալայն աջակցությունը: Արցախի դեմ օգտագործվեցին հինգերորդ սերնդի զենքեր, բայց հատկապես անօդաչու թռչող սարքեր[269]: Պատերազմում թուրք-ադրբեջանական կողմից մասնակցեցին նաև սիրիացի, այդ թվում՝ թուրքմեն վարձկաններ: Ստեղված իրավիճակում հայկական կողմը չկարողացավ դիմադրել և խայտառակ պատրություն կրեց: Արցախի Հանրապետության տարածքից բացի Հադրութից, որոշ հատվածներ Ադրբեջանը գրավեց Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի և Շուշիի շրջաններից: Պատերազմի ընթացքում Արդբեջանի կողմից մի քանի հրադադար չհարգվեց: Այն ավարտվեց Ռուսաստանի միջնորդությամբ 2020 թ. նոյեմբերի 10-ին, Հայաստանին պատրադրված կապիտուլացիոն պայմանագրով:

Թվում էր, թե ղարաբաղյան պատերազմում Հայաստանի պարտությունը, տարածաշրջանի ապաշրջափակումը խաղաղության նոր հնարավորություններ կստեղծի Հարավային Կովկասում, սակայն Ադրբեջանում հակահայկական տրամադրությունների, ատելության և քսենոֆոբիայի շատ բարձր մակարդակը լավատեսության տեղ չի թողնում: Ադրբեջանի նախագահը, ադրբեջանական մամուլը շարունակում են ծաղրել ՀՀ վարչապետին, հայաստանցի բարձրաստիճան պաշտոնյաներին, հայ ժողովրդին: Ասվածի ապացույցն է նաև պատերազմի կապակցությամբ Ադրբեջանի թողարկած դրոշմանիշը, որտեղ ադրբեջանցի սանիտարը «մաքրում» է Արցախը հայ բնակչությունից[270]: Եթե դրան գումարենք նաև ռազմագերիներին չվերադարձնելու Բաքվի որոշումը, հայ քաղաքացիական անձանց, զինվորականների խոշտանգումների ու գլխատումների բազմաթիվ վավերացված

[269] Azerbaijan's drones owned the battlefield in Nagorno-Karabakh — and showed future of warfare, Nov 12, 2020, https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabkah-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html

[270] Thomas de Waal, Unfinished Business in the Armenian-Azerbaijan Conflict, February 11, 2021, https://carnegieeurope.eu/2021/02/11/unfinished-business-in-armenia-azerbaijan-conflict-pub-83844

փաստեր[271], ապա պարզ կդառնա, որ երկու երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների հետագա զարգացման ամենալուրջ խոչընդոտը վստահության և փոխադարձ հարգանքի տոտալ բացակայությունն է, առանց որի հաղթահարման անհնար է խոսել տարածաշրջանի տնտեսական զարգացման մասին: Իր հերթին, Հայաստանի հասարակության մեջ նույնպես շարունակում են տիրապետող մնալ հակաթուրքական և հակաադրբեջանական տրամադրությունները, որոնք միշտ էլ տիրապետող են եղել թե՛ Հայաստանում, թե՛ հայկական Սփյուռքում: **Պատերազմի ավարտից հետո հաղթած Ադրբեջանի իշխանությունները, ունենալով Թուրքիայի անվերապահ աջակցությունը, Հայաստանի դեմ շարունակում են կոշտ միլիտարիստական դիսկուրսը՝ Հայաստանը համարելով «թշնամի երկիր»[272]: Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը հակահայկականությունը միշտ էլ օգտագործել է ձևավորելու «արտաքին թշնամու» կերպար, համախմբելու սեփական հասարակությանը արտաքին վտանգների առաջ: Ադրբեջանում հայեր դեմ թշնամություն ներդրված է նաև կրթական համակարգում: Ամենևին պատահական չէր 2006 թ. Բուդապեշտում ՆԱՏՕ-ի ուսումնական ծրագրի մասնակից հայ սպա Գուրգեն Մարգարյանի /վերջինս եղել է քնած/ կացնահարությունը ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովի կողմից[273]: Հայ սպայի դաժան սպանությունը քաջալերվում է ադրբեջանական հասարակության մեջ այսօր էլ: Դեռ պատերազմից առաջ** Ադրբեջանը ամենաբարձր՝ նախագահի մակարդակով հայտարարում էր, որ Հայաստանի տարածքի զգալի մասը «ադրբեջանական պատմական հողեր» են, այդ թվում՝ Երևանը[274]: Պատերազմից առաջ՝ օգոստոսին, թուրք-ադրբեջանական զորավարժություններն ուղղված էին Հայաստանի և Արցախի դեմ[275]: Պատերազմի ավարտից հետո 2021 թ. թուրք-ադրբեջանական ձմեռային

---

[271] Two man beheaded in videos from Nagorno-Karabakh war identified, https://www.theguardian.com/world/2020/dec/15/two-men-beheaded-in-videos-from-nagorno-karabakh-war-identified; Azerbaijan: Armenian prisoners of war badly mistreated, https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated;

[272] The highest authorities of Azerbaijan pursue a policy of deep hatred and enmity towards Armenians https://www.ombuds.am/en_us/site/ViewNews/1487

[273] Joshua Kucera, Azerbaijan wrestles with legacy of ax murder, May 29, 2020, https://eurasianet.org/azerbaijan-wrestles-with-legacy-of-ax-murderer

[274] Joshua Kucera, Azerbaijan President Calls for Return to "Historic Lands" in Armenia https://eurasianet.org/azerbaijan-president-calls-for-return-to-historic-lands-in-armenia

[275] Vasif Huseynov, Azerbaijan, Turkey Hold Large-Scale Military Drills Amidst Escalation of Tensions with Armenia, Eurasia Daily Monitor volume: 17 issue, 121, https://jamestown.org/program/azerbaijan-turkey-hold-large-scale-military-drills-amidst-escalation-of-tensions-with-armenia/

զորավարժություններ տեղի ունեցան Հայաստանին սահմանամերձ Կարսում[276], ինչը հետպատերազմական հայ հասարակությանը և իշխանությանը հերթական վախերի մեջ պահելու նպատակ ունի: Հատկանշական է, որ Ադրբեջանը տարիներ շարունակ զբաղված է նաև պատմական զեղծարարությամբ՝ հետևողական կերպով հայկական քրիստոնեական մշակութային կոթողներն Ադրբեջանի և Արցախի ողջ տարածքում ներկայացնելով որպես ալբանական[277]: Բացի այդ, Ադրբեջանը ամեն գնով ցանկանում է մեկուսացնել Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհից, կանխել նույնիսկ հայ, նաև՝ օտար բարձրաստիճան պաշտոնյաների և լրագրողների այցելությունը Արցախ առանց Բաքվի համաձայնության: Ասվածի ապացույցն է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի՝ Արցախ կատարած այցի նկատմամբ Ի. Ալիևի հիստերիան[278]: Անհասկանալի է, թե ինչպես է Բաքուն ցանկանում ռազմական ճանապարհով վերակազնելու վերահսկողությունը Արցախի և տեղի հայ բնակչության նկատմամբ:

Պատերազմի ավարտը ապատիա, դժգոհություն և ընդվզում առաջացրեց հայ հասարակության շրջանում, որը վերջին երեսուն տարիներին մեծ զոհողությունների է գնացել՝ հանուն Արցախի և Արցախում էթնիկ հայերի ազգային իրավունքների պաշտպանության: Հայաստանի և Արցախի հազարավոր քաղաքացիներ են զոհվել վերջին երեսուն տարիների ընթացքում: Իր հերթին, Հայաստանում իշխող էլիտաները շատ դեպքերում շահարկել են արցախյան հարցը՝ իշխանության գալու համար, շատ դեպքերում Հայաստանում առկա քաղաքական և սոցիալական խնդիրները լուծում չեն ստացել կամ անտեսվել են՝ պայմանավորված արցախյան հարցով: Հայաստանի իշխանությունները միշտ չէ, որ հասարակության հետ խոսել են բաց տեքստով: Նրանք ուժ չեն գտել բացատրել ղարաբաղյան հակամարտության կարգավորումը ձգձելու մարտահրավերները Հայաստանի ազգային անվտանգության համար: Ցանկացած զիջում Ադրբեջանին, որը կարող էր այս կամ այն կերպ կանխել պատերազմը, համարվել է դավաճանություն:

---

[276] Azerbaijani, Turkish Troops Team up for Winter Military Drills, January 18, 2021, https://caspiannews.com/news-detail/azerbaijani-turkish-troops-team-up-for-winter-military-drills-2021-1-18-46/

[277] Armenian Academy of Sciences asks Putin, Biden, Macron to assist UNESCO monitoring in Karabakh, 3 February, https://armenpress.am/eng/news/1042240.html

[278] Ilham Aliyev threatens Yerevan with ''iron fist'' for visits to Kharabakh, o7, January, 2021, https://news.ru/en/cis-countries/ilham-aliyev-threatens-yerevan-with-iron-fist-for-visits-to-karabakh/

Ի տարբերություն Հայաստանի, հաղթանակը էյֆորիա առաջացրեց Ադրբեջանում, որտեղ վերջին երեսուն տարիների ընթացքում իշխանություններին ներկայացվել է հանրային պահանջ՝ հետ բերելու Արցախը և գրավյալ տարածքները: Ադրբեջանում ևս կուտակված քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրները քողարկվում էին ղարաբաղյան հարցով: Երկու հասարակություններում էլ պատերազմը համարվում էր հիմնավորված, իսկ զոհված զինվորները համարվում էին Հայրենիքին իրենց կյանքը կյանքը նվիրաբերած հերոս նահատակներ: Երկու երկրներում էլ հասարակությունները հիմնականում համախմբվել էին իշխանությունների շուրջ, պատրաստ էին ֆինանսական, տեխնիկական, մարդկային և այլևայլ ռեսուրսներ ներդնել՝ հանուն հաղթանակի:

«Թավշյա հեղափոխությունը» և դրա հետևանքները Հայաստանի Հանրապետության համար

Ն. Փաշինյանը, «թավշա հեղափոխության» արդյունքում գալով իշխանության՝ հայտարարեց, որ ինքը ղարաբաղյան հակամարտության կարգավորումը սկսում է ոչ թե իր նախորդների, այլ՝ իր կետից: 2019 թ. օգոստոսի 6-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում նա հայտարարեց՝ «Արցախը Հայաստան է և վերջ», որը կասկածի տակ դրեց ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում երկար տարիներ ծավալվող խաղաղ բանակցությունների գործընթացը: Այդ գործընթացը, մասնավորապես՝ մադրիդյան սկզբունքները, ամրագրել էին Հայաստանի կողմից Ադրբեջանի գրավյալ տարածքների փուլ առ փուլ վերադարձը, հավասարության նշաններ էր դրել տարածքային ամբողջականության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքների միջև, բայց չէր սահմանել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Միևնույն ժամանակ, Ն. Փաշինյանը դարձավ ՀՀ առաջին ղեկավարը, ով հայտարարեց, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է ընդունելի լինի Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի ժողովուրդների համար, ինչը ավելի շատ կարել է բնորոշել որպես պոպուլիստական քայլ: Որպես կանոն, երկու կողմերը մշտապես մեղադրել են իրար ստանձնած պարտավորությունները չկատարելու և դժվարություններ ստեղծելու մեջ: Սակայն ըստ հայկական աղբյուրների, Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ

Սարգսյանը /2018/ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ծավալվող բանակցությունների ընթացքում պատրաստ է եղել 2011 թ. հունիսին Կազանում /Ռուսաստան/ ստորագրել գրավյալ տարածքները Ադրբեջանին վերադարձնելու փաստաթուղթ, սակայն Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը վերջին պահին հրաժարվել է ստորագրել այն, քանի որ Լեռնային Ղարաբաղը ներառված չի եղել վերադարձվելիք տարածքների մեջ[279]: Թավշա հեղափոխությունից հետո Ռուսաստանը բազմաթիվ անգամներ հիշեցրել է լավրովյան խաղաղության պլանի մասին, որը նախատեսում էր Ադրբեջանին վերադարձնել սկզբում հինգ, իսկ հետո՝ երկու շրջան և հայտնի էր «5+2» անունով և սկսել է շրջանառության մեջ դրվել 2015-2016 թթ.-ից ի վեր: Լավրովյան ծրագիրը նաև նախատեսում էր ռուս խաղաղապահների մուտքը տարածաշրջան, կոմունիկացիաների ապաշրջափակում և այլն: Լավրովյան պլանը քննադատությունների ալիք էր ստեղծել հայ հասարակության շրջանում, քանի որ կար այն տեսակետը, որ գրավյալ տարածքները բացառապես ծառայում են որպես անվտանգության գոտի, որպեսզի Ադրբեջանը Արցախի հայ բնակչությանը հերթական անգամ չենթարկի ֆիզիկական սպառնալիքի, ինչպես դա պատահել էր 1905-1905 թթ. հայ-թաթարական բախումների ժամանակ[280], հետագայում 1920 թ. [281], ապա՝ 1988 թ. Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում, 1990 թ. ին՝ Բաքվում[282], հետագայում՝ ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում Արցախի հայ բնակչության նկատմամբ, երբ մինչև 1992 թ. մայիսի 8-9-ի ազատագրումը, Շուշի քաղաքից ադրբեջանցիները հրետակոծում էին Ստեփանակերտը[283]: Հայ հասարակությանը լավրովյան պլանի հետ կապված մտահոգված էր այն հանգամանքը, որ հակամարտության խաղաղ կարգավորման որևէ ծրագրում հստակություն չկար Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին:

Համարվում է նաև, որ պատերազմի ընթացքում ռուսական կողմը, ի դեմս նախագահ Պուտինի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների, մի քանի անգամ

---

[279] Armenia, Azerbaijan Again Fail to Agree on Karabakh Peace Framework, 29 June, 2011, https://www.refworld.org/docid/4e421c212.html

[280] The Armenian-Azeri/Tatar bloodbath, 1905-1906, http://www.aniarc.am/2020/11/05/the-armenian-azeritatar-bloodbath-1905-1906/

[281] 1920 Shushi Massacre Laid the Foundation for Azerbaijan-Karabakh Conflict, https://asbarez.com/193185/1920-shushi-massacre-laid-the-foundation-for-azerbaijan-karabakh-conflict/

[282] In recognition of the victims of of the Baku and Sumgait pogroms, https://www.congress.gov/congressional-record/2020/01/30/extensions-of-remarks-section/article/E112-3

[283]Elias Pinteri, Shushi/Shusha, living in a symbol, https://www.balcanicaucaso.org/eng/zone/Nagorno-Karabakh/Shushi-Shusha-living-in-a-symbol-116490

դիվանագիտական խողովակներով Հայաստանի իշխանություններին զգուշացրել են պատերազմի հնարավոր աղետալի հետևանքների մասին՝ հորդորելով ընդունել լավրովյան պլանը, որը նույնպես չի քննարկում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, սակայն Հայաստանի իշխանությունները անտեսել են՝ համարելով, որ հայկական բանակը ունակ է պայքարելու մինչև վերջ: Սակայն պատերազմի 44 օրերին հայկական կողմը ձախողվեց, ինչը պատճառ դարձավ Ն. Փաշինյանի և «թավշա հեղափոխության» դեմ դեմ հայ հասարակության տարբեր շրջանակների կոշտ քննադատությանը: Ըստ այդմ՝ կապիտուլացիոն ելքով պատերազմը ավելի կանուխ կանգնեցնելու դեպքում հնարավոր կլիներ գոնե խուսափել մեծ թվով զոհերից և այլևայլ վնասներից: Մինչև օրս զոհերի, անհետ կորածների, հաշմանդամների և ռազմագերիների վերաբերյալ հստակ պաշտոնական վիճակագրություն Հայաստանում չկա:

Հարկ է նշել, որ պատերամի ավարտից մինչ օրս Հայաստանը գտնվում է լարվածության մեջ: Ասվածի ապացույցն են նաև փետրվար 25 ին Երևանում ծավալված դեպքերը: Նույն օրը ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը ղեկավար Օնիկ Գասպարյանի անունից տարածեց հայտարարություն, որում նշվում է, որ ՀՀ վարչապետը և կառավարությունը պետք է հրաժարական տան ոչ էֆեկտիվ կառավարման և արտաքին քաղաքական ձախողումների համար: ՀՀ վարչապետն այդ հայտարարությունը գնահատեց որպես ռազմական հեղաշրջման նախապատրաստություն և իր աջակիցներին հրավիրեց հանրահավաքի: Նույն օրը Երևանում տեղի ունեցան երկու զուգահեռ միտինգներ՝ մեկը ընդդիմության, որը հիմնականում կապ ունի նախորդ իշխանությունների հետ, մյուսը՝ վարչապետի աջակիցների: Նիկոլ Փաշինյանը կնոջ և զավակների հետ միացավ երթի մասնակիցներին: Նա նշեց, որ զինված ուժերը պետք է զբաղվեն իրենց գործով և չխառնվեն քաղաքական գործընթացներին: Նույն օրը երեկոյան ՀՀ պաշտպանության նախարարությունը հրապարակեց մի նոր հայտարարություն, որում նշվում էր, որ կառույցը քաղաքական գործընթացներին չպետք է միջամտի: ՀՀ նախագահը և Ամենայն Հայոց կաթողիկոսը ՀՀ քաղաքացիներին կոչ արեցին զսպվածություն ցուցաբերել:

Ռուսաստանի և Թուրքիայի հակասական շահերը Հարավային Կովկասում

Արդեն մի քանի դար է, ինչ Ռուսաստանը և Թուրքիան մրցակցում են տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու և ազդեցության նոր լծակներ ձեռք բերելու հարցում: Ռուս-թուրքական հարաբերություններն ունեն թե՛ բախման, թե՛ համագործակցության եզրեր: Այդ իրողությունը լավագույնս դրսևորվեց Սիրիայում: Չնայած հակասություններին, Ռուսաստանի առաջարկով 2017 թ. ստեղծվեց սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման Աստանայի ձևաչափը, որի շրջանակներում կողմերին, Իրանի ներգրավմամբ, հաջողվեց մշակել համագործակցության մեխանիզմներ՝ առաջ քաշված խնդիրները կարգավորելու համար: Բացի այդ, Ռուսաստանը վերջին տարիներին «անտեսում» է Թուրքիայի հայտարարությունները Ղրիմի, Ռուսաստանի մուսուլման բնակչության շրջանում հակառուսական տրամադրություններ ստեղծելու և սադրող այլ թեմաներով:

Նշենք, որ թե՛ Թուրքիան, թե՛ Ռուսաստանը հետխորհրդային շրջանում ձգտում էին Հարավային Կովկասում ռազմաքաղաքական ներկայություն ձեռք բերել, ինչը նրանք երկուսն էլ ստացան Ղարաբաղյան վերջին պատերազմի արդյունքում: Նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունից հաշված ժամեր անց ռուս խաղաղապահները սկսեցին տեղակայվել Արցախում: Ըստ պայմանագրի՝ որոշվեց ստեծել զինադադարը հսկող ռուս-թուրքական մոնիտորինգային կենտրոն, որը բացվեց 2021 թ. հունվարի 30-ին, Աղդամում: Այդ հարթակում բնականաբար կներդրվի սիրիական հակամարտության ժամանակ ձեռք բերված ռուս-թուրքական փորձառությունը:

Այսպիսով, պատերազմի արդյունքները շահեկան եղան երկու պետությունների համար յուրովի և ծառայեցին երկու պետությունների ռազմաքաղաքական ներկայության հաստատմանը Հարավային Կովկասում: Կասկածից վեր է, որ Շուշին Ադրբեջանին հանձնելու պայմանով Մոսկվան կարողացավ համոզել Բաքվին՝ միանալ եռակողմ հայտարարությանը և զինադադար կնքել Հայաստանի հետ՝ դրանով թույլ չտալով, որ Ադրբեջանը լիովին հայտնվի Թուրքիայի գրկում: Ամեն դեպքում, չնայած Ադրբեջանն այսօր հակված է Թուրքիայի հետ ամենասերտ ինտեգրմանը «մեկ ազգ երկու պետություն» բանաձևի շրջանակներում, այնուամենայնիվ, Ռուսաստանը կարողացավ ստանձնել հավասարակշռող գործոնի դեր Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում:

Իր հերթին, Թուրքիան, հաստատվելով Հարավային Կովկասում, կարողացավ շարունակել հարևան տարածաշրջաններում առաջ գնալու և ագրեսիվ քայլերով իր ազգային շահերն առաջ տանելու քաղաքականությունը: Բացի այդ, Թուրքիան հաջողությամբ իրացնում է համաթուրքականության քաղաքանության բոլոր ծրագրային դրույթները, որոնք նպատակ ունեին Ղարաբաղը վերադարձնել Ադրբեջանին: Պատերազմի ողջ ընթացքում Թուրքիան կարողացավ հստակ ադրբեջանամետ տրամադրություններ ստեղծել նաև իսլամական սուննիական աշխարհում, և հատկապես նեոսմանական տրամադրություններ ունեցող սոցցանցերում և այլն: Իսլամական աշխարհում և «գլոբալ ումմայի» ներսում Էրդողանը հավակնում է միահեծան առաջնորդության և «խալիֆայի» տիտղոսի՝ մրցակցության մեջ մտնելով իսլամական աշխարհում լայն հեղինակություն վայելող առանձին պետությունների, ինչպես օրինակ՝ Սաուդյան Արաբիայի և Եգիպտոսի հետ: Թուրքիան կարողացավ Ադրբեջանի օգտին ստեղծել ոչ պաշտոնական դաշինքներ Մեծ Բրիտանիայի, Պակիստանի, Բանգլադեշի և այլ շրջանակների հետ: Հստակ է, որ պատերազմը Արցախի դեմ իրականում վարել է Թուրքիան՝ ընտրելով շատ հարմար միջազգային և տարածաշրջանային պահ՝ քովիդով պայմանավորված համավարակը, նախագահական ընտրությունները ԱՄՆ-ում, սառնություն հայ-ռուսական հարաբերություններում՝ պայմանավորված «թավշա հեղափոխության» իրողություններով, նավթային և գազային գործոնի, ինչպես նաև կոմունիկացիաների բացառիկ կարևորություն Արևմուտքի շահառու պետությունների համար: Ակնհայտ է նաև, որ Ադրբեջանը պատերազմից հետո կորցնելու է իր սուվերենության որոշակի չափաբաժինը և պարտավորվելու է Թուրքիային շահեկան գներով գազ և նավթ տրամադրել[284]:

Իրանն աշխարհաղաքական նոր փոփոխությունների համատեքստում

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Իրանը ցանկանում էր ամեն կերպ և մեծ թափով ընդլայնել իր քաղաքական, կրոնական և տնտեսական ազդեցությունը Ադրբեջանում, ինչը Թեհրանին հաջողվեց ոչ լիովին: Բաքուն քաղաքական և քաղաքակրթական առումով կողմնորոշվեց դեպի Թուրքիան: Ադրբեջանի իշխանությունները արդեն

[284] Giorgio Comai, Nagorno Karabakh: the reasons for a war, 07.10.2020, https://www.balcanicaucaso.org/eng/Areas/Nagorno-Karabakh/Nagorno-Karabakh-the-reasons-for-a-war-205383

Հեյդար Ալիևի նախագահության շրջանից հետևողականորեն սահմանափակեցին Իրանի կրոնական և քաղաքական ազդեցությունը, մասնավորապես՝ խոմեյնիզմի տարածումը Ադրբեջանում: Հայ-ադրբեջանական հակասությունների ողջ ընթացքում, այդ թվում՝ 2020 թ. պատերազմի ընթացքում, Իրանը կողմ է արտահայտվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի վերադարձին՝ Ադրբեջան: Իրանը թույլ տվեց պատերազմի ընթացքում Պակիստանին իր տարածքով վարձկաններ տեղափոխել Ադրբեջան: Միանգամայն տարբեր շեշտադրումներ ունեին Իրանի ԱԳ նախարար Մ. Զարիֆի ելույթների տեքստային բովանդակությունը պատերազմից հետո Ադրբեջանում և Հայաստանում: Ադրբեջանում 2021 թ. հունվարին Մ. Զարիֆը հանդես էր գալիս իսլամական համերաշխության ոգով՝ շնորհավորելով հաղթող կողմին[285], որի հետ ունի էթնիկ, լեզվական, մշակութային և պատմական սերտ կապեր: Երևանում Մ. Զարիֆը նշեց, Իրանին և Հյաստանի միավորում հին քաղաքակրթական կապերն ու պատմությունը: Նա շեշտեց, որ իրենց համար կարմիր գիծը Հայաստանի տարածքային ամբողջականությունն է, մտահոգություն հայտնեց տարածարջանում ահաբեկիչների և օտար զինյալների փաստի կապակցությամբ[286]:

Ակնհայտ է, որ պատերազմի ավարտի հետ կապված Թեհրանի համար կան մի քանի մտահոգիչ հանգամանքներ՝ եռակողմ հայտարարության 9-րդ կետը՝ կոմունիկացիաների ապաշրջափակման մասին, ինչի արդյունքում Թուրքիային ու Ադրբեջանին Հայաստանի տարածքով՝ Մեղրիով, ինչպես նաև Նախիջևանի երկաթուղային և այլ ճանապարհներով միմյանց հետ կապվելու հնարավորություն է տրվում: Այս հանգամանքը սպառնալիք է ոչ միայն Հայաստան-Իրան սահմանի գոյությանը, Իրանի տնտեսական հետաքրքրություններին, քանի որ կոմունիկացիաների մեծ մասը նախկինում Իրանի տարածքով էր անցնում, այլև այն, որ Ադրբեջան-Նախիջևան, Թուրքիա-Ադրբեջան միջանցքը Հայաստանով թյուրքական աշխարհին կապող օղակ է դառնում, որը լուծելու է նաև Կասպից ծովի և ընդհանրապես Կենտրոնական Ասիայի նավթի, գազի և բնական այլ ռեսուրսների կոմունիակցիոն խնդիրները և ընդհուպ կապ ունի «Մետաքսի ճանապահի» հետ: Բացի այդ, Իրանի

[285] Zarif holds talks in Azerbaijan, January 25, https://www.tehrantimes.com/news/457374/Zarif-holds-talks-in-Azerbaijan

[286] Zarif holds talks in Armenia, January 27, https://www.tehrantimes.com/news/457460/Zarif-holds-talks-in-Armenia

համար խիստ մտահոգիչ է, որ ի տարբերությունում նախապատերազմյան շրջանի, Իրանն այժմ արևելյան շրջաններում սահմանակից է ոչ թե Արցախի Հանրապետության, այլ Ադրբեջանի հետ, ինչը հնարավորություն կարող է տալ Իսրայելին՝ օգտագործել Ադրբեջանի հետ ռազմավարական համագործակցությունը՝ լայնորեն հետախուզելու իրանական տարածքը, այդ թվում՝ ռազմավարական նշանակության օբյեկտները: Բացի այդ, Թուրքիան նպատակ ունի գրավյալ տարածքները վերաբնակեցնել Սիրիայում ապրող թուրքմենական և արաբական բնակությամբ, ինչը նշանակում է սուննիական արմատական տրամադրություններ ունեցող տարրի ձևավորում Իրանի սահմանային շրջաններում: Սրանք արդեն Իրանի ազգային անվտանգությանն առնչվող խնդիրներ են: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Իրանին միշտ է ձեռնտու է եղել Հայաստանը տեսնել որպես ուժեղ հարևան: Այս տեսանկյունից, պատահական չէ Իրանի անթաքույց հավանությունը նախապատերազմական ստատուս քվոյին: Չմոռանանք նշել, որ ընդգծված ադրբեջանամետ և թյուրքամետ տրամադրություններով է աչքի ընկնում Իրանի Ատրպատական նահանագը, որտեղ ապրող թյուրքախոս իրանցիները ողջ պատերազմի ընթացքում համակրանքով էին հետևում Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական գործողություններին: Իրանի իշխանությունների համար բավական ցավոտ հարց է նաև Մեծ Ադրբեջանի հարցը, որը ենթադրում է Ադրբեջանի և Իրանի Ատրպատական նահանգի միավորման հարցը: Այս խնդիրը ի դեպ մշտական շահարկումների առարկա է դառնում Իրան-Ադրբեջան հարաբերություններում: Նման մի սադրանք տեղի ունեցավ 2020 թ. դեկտեմբերի 10-ին Բաքվում՝ «Հաղթանակի զորահանդեսին», երբ Էրդողանը Իրանի թուրքախոս նահանգներն ադրբեջանական համարեց, ինչը հանգեցրեց Իրան-Թուրքիա կարճ դիվանագիտական պատերազմի[287]: Նշենք, որ Իրանն ի սկզբանե պատրաստակամություն է հայտնել ակտիվորեն մասնակցել Ադրբեջանի ազատագրված շրջանների վերակառուցմանը: Ամեն պարագայում, Իրանը ներկա պատժամիջոցների արդյունքում որոշակի կախվածություն ունի նաև Թուրքիայից, չնայած Թուրքիան և Իրանը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո գտնվում են մշտական մրցակցության մեջ Հարավային Կովկասի խնդիրներում: Չնայած Հայաստանի պարտությանը, Իրանը կշարունակի հետամուտ լինել Երևանի հետ կապերի սերտացմանը՝ Հայաստանը դիտարկելով որպես հավասարակշռող գործոն

[287]Turkish Iranian relations are set to become more turbulent, tuthttps://www.gmfus.org/publications/turkish-iranian-relations-are-set-become-more-turbulent

Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան հարաբերություններում՝ հետամուտ լինելով Հայաստանի տարածքի ակտիվ օգտագործմանը՝որպես այլընտրանք:

Իսլամական գործոնի նշանակությունը արցախյան պատերազմում

Արցախյան հարցում Ադրբեջանին կրոնական գործոնով պայմանավորված առաջին ամենալուրջ աջակցությունը ցույց է տվել իսլամական աշխարհի ամենամեծ կրոնաքաղաքական կառույցը՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունը արդեն 1992 թ. սկսած[288]:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից սանձազերծված 2020 թ. պատերազմի հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, ԻՀԿ գլխավոր քարտուղարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ խստորեն դատապարտելով «Հայաստանի զինված ուժերի կրկնվող սադրանքներն ու ագրեսիան» Ադրբեջանի դեմ: ԻԿՀ-ն իր համերաշխությունը հայտնեց Ադրբեջանին, Հայաստանից պահանջեց ամբողջովին և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը գրավյալ տարածքներից, երկու պետություններին կոչ արեց քաղաքական լուծման հասնել՝ հարգելով Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը[289]:

2020 թ. դեկտեմբերի վերջին ԻՀԿ արտգործնախարարների 47-րդ համաժողովին ընդունվեց «Իսլամական սրբավայրերի պաշտպանության» մասին բանաձևը, որտեղ դատապարտվեց «հայ ագրեսորների կողմից բարբարոսական գործողությունների իրականացումը, որոնք նպատակաուղղված են եղել իսլամական պատմական և մշակութային ժառանգության ամբողջական ոչնչացմանը»[290]: ԻՀԿ-ն «իր խոր մտահոգությունն է արտահայտել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ գտնվող պատմական հուշարձանների ոչնչացման և կողոպտվելու կապակցությամբ, որոնք իսլամական ժառանգության անբաժան մասն են, մասնավորապես՝ վերջերս ազատագրված Կուբաթլուի շրջանի Մամար գյուղի ավերված մզկիթը»[291]: Տեքստի շարունակության մեջ մասնավորապես նշված է. «Գրավյալ տարածքներում դարավոր

[288]Մանրամասն տե՛ս Արաքս Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր. , 2003:
[289]OIC condemns repeated provocations and aggression by Armenian military forces against Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=23879&t_ref=14184&lan=en, (28.09.2020).
[290] OIC Expresses Concern over Destruction of Islamic Historical Shrines in Occupied Territories of Azerbaijan, https://www.oic-oci.org/topic/?t_id=24928&t_ref=15226&lan=en, (11.11.2020).
[291]Նույն տեղում:

հնություն ունեցող ժառանգությունների ոչնչացումը միջազգային իրավունքի և կոնվենցիաների ակնհայտ խախտում է, մասնավորապես զինված հակամարտությունների ընթացքում մշակութային արժեքների պաշտպանության 1957 թ. Հաագայի և դրան հաջորդած՝ 1954 թ. և 1999 թթ. կոնվենցիաների»[292]:

Ակնհայտ է, որ ԻՀԿ-ն տասնամյակներ շարունակ Հայաստանի դեմ օրակարգ ձևավորել է բացառապես ադրբեջանական աղբյուրների հիման վրա: Եթե գրավյալ տարածքներում մզկիթները ոչնչացվել են, ապա ինչպե՞ս բացատրել Շուշիում հայկական հիմնադրամների կողմից հիմնովին վերանորոգված Գոհար տիկնոջ Վերին մզկիթի և մեդրեսեի գոյության փաստը[293] և հակառակը՝ պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած տարածքներում բարբարոսաբար վնասվող և անարգվող բազում հայկական քրիստոնեական հուշարձանների, դրանք ալբանական ժառանգությանը վերագրելու Ադրբեջանի սադրիչ քաղաքականության փաստերը[294]: Ինչպե՞ս բացատրել Շուշիի գրավումից անմիջապես հետո բարեկարգ մզկիթում տեղի ունեցած իսլամական աղոթքն ու հնչեցված ազանը: Հակադարձելով Արցախում մզկիթների վիճակի մասին ադրբեջանական կեղծիքներին, իրանական բլոգերներից մեկը, հղում անելով Շուշիի մզկիթը, նշում է, որ Արցախում մզկիթներն ավելի լավ վիճակում են, քան Բաքվում[295]:

Հարկ է նշել, որ Արցախյան վերջին պատերազմի ընթացքում Թուրքիայի նախաձեռնությամբ պատերազմական գործողությունների մեջ են նետվել Թուրքիայի անմիջական վերահսկողության տակ գտնվող վարձկաններ Սիրիայի տարբեր, այդ թվում՝ քրդական շրջաններից՝ թուրքոմաններ և սիրիացի արաբներ[296]: Տեղեկատվական արտահոսքեր են եղել նաև՝ Պակիստանից[297], Աֆղանստանից[298] և Լիբիայից[299] վարձկանների

---

[292] Նույն տեղում:

[293]Շուշիում վերականգնվել է Գոհար տկնոջ Վերին մզկիթը, https://escs.am/am/news/5191

[294]ՀՀ ԳԱԱ հայտարարությունը Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքների մշակութային ժառանգության պահպանության և մշտադիտարկման կազմակերպման մասին, https://www.sci.am/newsview.php?id=370&langid=1, (03.02.2021):

[295]إيران تكشف أكاذيب أردوغان والحكومة الأذربيجانية حول حماية الآثار الإسلامية, https://www.vetogate.com/, (27.02.2001).

[296]Վարձկանները հիմնականում Սիրիայում ալ-Կաիդայի ճյուղավորումը համարվող «Հայա Թահրիր ալ-Շամից», որը հայտնի է նաև «Ջաբհաթ ալ-Նուսրա» անունով, նաև՝ «Սուլթան Մուրադից», «Համզայից», «Սուլեյման շահից», «Սիրիայի ազատ բանակից» և այլն:

[297] Pakistan cradles terror in Azerbaijan-Armenia war, https://www.newdelhitimes.com/pakistan-cradles-terror-in-azerbaijan-armenia-war/, (26.10.2020).

[298]As Kabul backs Azerbaijan in conflict with Armenia, Afghans recall in fighting previous war, https://www.rferl.org/a/as-kabul-backs-azerbaijan-in-conflict-with-armenia-afghans-recall-fighting-in-previous-war/30880802.html, (07.10.2020).

մասին: Այս իմաստով, սխալված չենք լինի, եթե նշենք, որ հայկական զինված ուժերը պայքարում էին միջազգային ահաբեկչության դեմ: Չնայած Բաքուն և Անկարան հերքեցին ջիհադական գաղափարներով տոգորված վարձկանների մասնակցությունը պատերազմին, սակայն վերոնշյալի մասին կան բազմաթիվ ապացույցներ ու արձանագրումներ:

Հարկ է նշել, որ պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո Ադրբեջանին իրենց աջակցությունը հայտնեցին ոչ միայն առանձին իսլամական կրոնա-քաղաքական կառույցներ, որոնց մեջ առանձնանում է Թուրքիայի կողմից հովանավորվող պաղեստինյան «Համաս» շարժումը[300], այլև զգալի թվով մուսուլման աստվածաբաններ ու հոգևորականներ աշխարհի տարբեր կողմերից:

Պատերազմի ընթացքում Ադրբեջանին, բացի Թուրքիայից, իր աջակցությունը հայտնեց թյուրքական աշխարհը, մասնավորպես Իրանի Ատրպատական նահանգը, Իրանի, Ռուսաստանի թյուրքական ծագում ունեցող հասարակական շրջանակները, Կենտրոնական Ասիան և այլն: Ադրբեջանի հետ համերաշխ երկրների թվում հատկապես առանձնացավ Պակիստանը:

Եզրակացություն

Պարտությունը արցախյան պատերազմում և Արցախի տարածքի մոտ յոթանասունհինգ տոկոսի կորուստը անվտանգային նոր մարտահրավերներ ստեղծեց Հայաստանի համար, քանի որ Հայաստանի Հանրապետության սահմանները «մոտեցան» Ադրբեջանին: Եթե դրանք գումարենք այն հանգամանքը, որ երկու հասարակությունները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ: Քաղաքացիական խաղաղ գոյակցության մասին դեռ վաղ է խոսել, ուրեմն պարզ է, թե ինչ ռիսկեր են ստեղծվել հատկապես պարտվող կողմի համար: Հայաստանի միջազգային վարկանիշը որոշակի անկում է ապրել, այնպես որ ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է վերազինվի նոր մոտեցումներով: ՀՀ-ի համար առաջիկա տարիների համար կարևոր է նաև հետամուտ լինել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպական Միության, նաև՝ արաբական

[299] Лавров назвал число наемников в Ближнего Востока в Карабахе, https://www.gazeta.ru/army/2020/11/03/13345573.shtml, (03.11.2020).

[300] Hamas congratulates Azerbajan over Karabakh victory, https://www.aa.com.tr/en/azerbaijan-front-line/hamas-congratulates-azerbaijan-over-karabakh-victory/2038618, (10.11.2020).

աշխարհի հետ սերտ համագործակցության հաստատմանը, ինչը կարող է հավասարակշռություն ստեղծել ՀՀ-ի արտաքին քաղաքականության մեջ: Հայաստանում կա հանրային պահանջ՝ հետամուտ լինելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի խնդրին, որը Ադրբեջանի նախագահը համարեց «փակված հարց», քանի որ հինգ տարի անց, ըստ նոյեմբերի տասի հայտարարության, Ռուսաստանը պետք է դադարեցնի խաղաղապահ առաքելությունը Արցախում: Ռուսաստանը շարունակում է հերքել, թե նպատակ ունի Արցախը մտցնել Ռուսաստանի Դաշնության կազմում, սակայն դե ֆակտո Արցախում այսօր Ռուսաստանն է անվտանգության երաշխավոր[301]: Մյուս կողմից, որոշակի ազդակներ կան Թուրքիայից՝ ՀՀ-ի հետ հարաբերությունների նորմալացման հարցում, ինչը զգալի ռիսկեր է պարունակում և շատ զգուշավորությամբ է ընդունվում Հայաստանում: Խնդիրն այն է, որ նախկինում Թուրքիան Հայաստանի հետ հարաբերություններում միշտ էլ առաջ է քաշել նախապայմաններ, սակայն այժմ այդ հարցում հստակություն չկա: Մյուս կողմից, ղարաբաղյան պատերազմը Հարավային Կովկասում էապես փոխվել է իրավիճակը: Սակայն տնտեսական և ապաշրջափակման ծրագրերի արդյունավետությունը էապես կախված կլինի կողմերի միջև անվստահության մթնոլորտի թուլացման հետ:

[301] Thomas De Waal on what's next for Nagorno-Karabakh, Armenian-Azerbaijani relations, Dec 07, 2020, https://www.rferl.org/a/interview-thomas-de-waal-on-what-s-next-for-nagorno-karabakh-armenian-azerbaijani-relations/30988513.html

ԻՍԼԱՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
(ՎՐԱՍՏԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆ)

ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ, ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Արաքս Փաշայան
Լիլիթ Հարությունյան
Նազելի Նավասարդյան
Տաթևիկ Մանուկյան

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՊԱՏԱԿ

Ուսումնասիրել Ադրբեջանում և Վրաստանում ներքին և արտաքին գործընթացներում իսլամական գործոնի նշանակությունը:

ԽՆԴԻՐՆԵՐ

Համեմատական ուսումնասիրություն հետևյալ հարցերի՝ Ադրբեջանում և Վրաստանում.

○ իսլամական զարթոնքի, իսլամական ինքնագիտակցության, նոր իսլամական ինքնությունների ձևավորման, իսլամի քաղաքականացման, իսլամական քաղաքացիական ակտիվությանն առնչվող հիմնախնդիրները:

○Լուսաբանել պետություն-կրոն, պետություն-փոքրամասնություններ խնդիրներին վերաբերող հարցեր, հասարակություններում կրոնասիրության, կրոնական ծայրահեղականության ու պահպանողականության, կրոնական ու ազգային առաջնորդների ինստիտուտներին առնչվող խնդիրները:

○Վեր հանել արտաքին կրոնական ազդեցություններին ու ներթափանցումներին (Իրան, Թուրքիա, արաբական երկրներ) առնչվող հարցերը:

○Խնդիրները դիտարկել Հայաստանի ազգային և անվտանգային շահերի տեսանկյունից, այդ թվում՝ 2020 թ. Արցախյան պատերազմի համատեքստում

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ



«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ»

Պետությունն արտաքին կրոնական ներթափանցումների դեմ. աշխարհիկ կառավարման մոդելն ու դավանանքի ազատության խնդիրները

Ազգային և կրոնական ինքնության խնդիրներ

«Պաշտոնական իսլամի» կառույցները

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

AZƏRBAYCAN RESPUBLİKASI DİNİ QURUMLARLA İŞ ÜZRƏ DÖVLƏT KOMİTƏSİ

Մուբարիզ Ղուրբանլը

ԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Թեզե-փիր մզկիթը Բաքվում

ԻԱԼԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

- *Իսլամը՝ որպես ազգային ինքնության ձևավորման և համաշխարհային իսլամական ազգին ու մուսուլմանական ընտանիքին (ումմային) ինտեգրվելու գործիք*
- *Հայաստանի դեմ Ադրբեջանի քարոզչության իսլամական բաղադրիչը. Իսլամական համագործակցություն կազմակերպությունը*

ԿՐՈՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սուննի շիա համատեղ աղոթք, Հեյդարի մզկիթ, Բաքու

«ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» ՓՆՏՐՏՈՒՔԸ ՀԵՏԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հեյդար մզկիթը

Հեյդարի մզկիթ, Բաքու

Շեհդիլեր թուրքական մզկիթը

ՇԻԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՁԱԽՈՂՎԱԾ ՇԻԱՅԱԿԱՆ ՏԱՆԴԵՄ

Նոր ինքնությունների ձևավորումը. կրոնական պահպանողական շրջանակների, քաղաքական իսլամի և շիայական քաղաքացիական ակտիվության խնդիրները

Իրանական «փափուկ ուժի» կրոնական բաղադրիչը. առանձնահատկություններն ու գործիքակազմը

Ձգայունության գործակիցն ու լարվածության օջախներ. . միսիոներներ, բարեգործական, կրոնական ու մշակութային կազմակերպություններ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Մենք ընդդիմություն ենք այս կառավարությանը, որովհետև այն իրեն ենթակա է դարձրել սիոնիզմին: Սիոնիստներն իրենց վերահսկողության տակ են պահում Ադրբեջանը . . . մարգարեի ծաղրանկարները տեղ են գտնում օրաթերթերում, հիջաբն արգելվում է, մզկիթները քանդվում են, մուսուլմանական երկրում այսպիսի բաներ չեն կարող կատարվել»:

Մոսկում Սամադովի 2011 թ. -ի հունվարին դատավարության ժամանակ ճառից

ՆԱՐԴԱՐԱՆԸ՝ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԻԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴ «ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Թալեհ Բաղերզադե, Մուսուլմանական միության նախագահ, շիա աստվածաբան Հանդիպում իրանցի մարջայե թաղլիդի տիտղոսով այաթոլայի հետ, Թեհրան

Ջումա մզկիթի նախկին իմամ Իլղար Իբրահիմօղլի, Աշուրա Շեհիդների պուրակում

ՆԱՐԴԱՐԱՆԸ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ. «ԽՂՃԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ»

Իրանական կրոնական ներթափանցումների ու իրանական միջամտության մասին պետության ձևավորած կարծրատիպերը ներքաղաքական օրակարգում առավելապես կոչված են օրինականացնելու վարչակարգի բռնաճնշումները թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ ընդդիմության դեմ

ՀԻՋԱԲԻ ՕՐԱԿԱՐԳՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

ԻՍԼԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



ԹԲԻԼԻՍԻԻ ՋՈՒՄԱ ՄԶԿԻԹԸ

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Աջարիայի Ինքնավար Հանրապետություն
Քվեմո Քարթլի
Պանկիսի կիրճ

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

- ***Կազմավորումն ու հիմնական գործառույթները***
- ***Պետություն-վարչություն-մուսուլմանական համայնքներ. Համագործակցության և հակասությունների միջև***

ՇԻԱՅԱԿԱՆ ԻՍԼԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

- *Ինքնության առանձնահատկություններ*
- *Ինտեգրման հիմնախնդիրներ*
- *Կրթական ծրագրեր*

Տալավերի գյուղի մզկիթը



Մառնեուլի շիայական մզկիթ

ՇԻԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐՆ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ. ԻՐԱՆ, ԹՈՒՐՔԻԱ, ԱԴՐԲԵՋԱՆ

«Փափուկ ուժի» կրոնական գործիքակազմ. կրթություն և մշակույթ

Մառնեուլիի Խանումա Զահրա մադրասա

Ահլ ալ-Բեյթ մշակութային կենտրոն

ՍՈՒՆՆԻ ԻՍԼԱՄԻ ԾԱՎԱԼՈՒՄՆ ՈՒ ՇԻԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՆՋԸ

Ղարաջալայի սուննիական մզկիթը

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՍԼԱՄԻՑ» ՄԻՆՉԵՎ ԳՅՈՒԼԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիյանեթի համագործակցությունն Ադրբեջանի հետ

ՍՈՒՆՆԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Աղոթք սուֆիական նակշբանդիական մզկիթում, Բաքու, Քարադաղ

ԳՅՈՒԼԵՆԱԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Գյուլենական Կովկաս համալսարան
1993-2017

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՁԵՎՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ. «ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ» ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Ալի Էրբաշ Կրոնի գործերի նախագահություն Դիյանեթի տնօրեն

Ալիևի և Էրդողանի աղոթքը պատերազմի ավարտից հետո, Շեհիդիլար թուրքական մզկիթում

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ» ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏ



ԻՍԼԱՄՆ ԱՋԱՐԻԱՅՈՒՄ

- ***Աջարիայի «թուրքացման» առաջին փուլը. բռնի և կամավոր իսլամացում***
- ***Աջարական գործոնը Ռուսական և Օսմանյան կայսրությունների քաղաքականության առանցքում.***

Բաթումի Ազիզիե մզկիթը 1886-68 թթ.

Մուֆթի- Մագլասին ջաամի 1895 թ.

Բաթումի թուրքական շուկան 1860-ական թթ





Աջարիայի ամենահին՝Ախո գյուղի փայտաշեն մզկիթը 1812թ.

ԱՋԱՐԻԱՆ ԿՐՈՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

- *Աջարիայի մուսուլնական համայքը խորհրդային շրջանում. ինքնության անկում*
- *Հետխորհրդային շրջան. Աջարիան վերաքրիստոնեացնելու վրացական տեսլական*
- *Վրաց Ուղղափառ եկեղեցու դերի վերարժևորում. քրիստոնեության տարածումն Աջարիայում*



ԻՍԼԱՄՆ ԱՋԱՐԻԱՅԻ ԲԱՑ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

- *Աջարիայի «թուրքացման » երկրորդ փուլը. Իսլամական վերածնունդ*
- *Աջարիան՝ցանկալի թիրախ թուրքական ներթափանցման համար. համաիսլամական ու համաթուրքական գաղափարաբանություն*

ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱԿԸ

Բաթումի Ռեֆահիդդին Շահին Բարեկամության միջնակարգ դպրոցը (1994-2017թթ..)

ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՀԱՂԹԱՐՇԱՎՆ ԱՋԱՐԻԱՅՈՒՄ

2016թ. Բաթումում բացվեց առաջին թուրքական պետական դպրոցը

ԱՋԱՐԻԱՆ՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

- *Մեր ֆիզիկական սահմանները տարբերվում են մեր սրտի սահմաններից. հնարավո՞ր է արդյոք տարբերել Ռիզեն Բաթումից…*
- *Շատ պատմաբաններ կարծում են, որ Թուրքիայի սահմանները պետք է ներառեն Կիպրոսը, Հալեպը, Մոսուլը, Էրբիլը, Քիրքուքը, Բաթումը, Սալոնիկը, Վառնան, Արևմտյան Թրակիան և Էգեյան ծովի կղզիները …*

Ռեջեփ Թայիփ Էրդողան

«ԱՐԱԲԱԿԱՆ ԻՍԼԱՄ» ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ՍԱԼԱՖԻԱԿԱՆ ՊԼԱՏՖՈՐՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ



Սալաֆիներ, Բաքու

Կրոնի դասին, սալաֆիներ, Բաքու

ԿՐՈՆԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՋԻՀԱԴԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԻՍԼԱՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

- *Սալաֆիական իսլամը Պանկիսի կիրճում. տարածման ներքին և արտաքին ազդակներ*
- *«Ավանդական իսլամ» ու սալաֆիականություն. անցյալի և ներկայի խաչմերուկում*

Դուլիսի մզկիթ

Պանկիսի սալաֆիական համայնքը

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ՎՐԱ. ՊԱՆԿԻՍԻՑ ԱՋԱՐԻԱ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

«Մեծ ուրախությամբ նշում եմ, որ Ադրբեջանը և ողջ ադրբեջանական ժողովուրդը, ձեր իմաստուն ղեկավարության ներքո, հաջողությամբ անցան այս մեծ փորձությունը: Հանրապետության պետական իշխանությունը պատվով կատարեց իր պարտավորությունները սեփական ժողովրդի և ողջ միջազգային հանրության առջև»:

«Մեծ գոհունակությամբ միանում եմ իսլամում իմ ադրբեջանցի եղբայրների ուրախությանը՝ կապված պատմամշակութային հուշարձանների վերադարձի հետ, որոնց թվում կան Ամենազոր Ալլահի առջև ծնկի իջնելու շատ հնագույն վայրեր: Համոզված եմ, որ բոլորը կվերականգնվեն և ծառայելու են ընդհանուր մեծ գործին, որը Սուրբ Ղուրանը կտակեց մեզ. . .»

Ռուսաստանի Մուսուլմանների Հոգևոր վարչության նախագահ Ռավիլ Գայնուդինը

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

«Մեծ ուրախությամբ նշում եմ, որ Ադրբեջանը և ողջ ադրբեջանական ժողովուրդը, ձեր իմաստուն ղեկավարության ներքո, հաջողությամբ անցան այս մեծ փորձությունը: Հանրապետության պետական իշխանությունը պատվով կատարեց իր պարտավորությունները սեփական ժողովրդի և ողջ միջազգային հանրության առջև»:

«Մեծ գոհունակությամբ միանում եմ իսլամում իմ ադրբեջանցի եղբայրների ուրախությանը՝ կապված պատմամշակութային հուշարձանների վերադարձի հետ, որոնց թվում կան Ամենազոր Ալլահի առջև ծնկի իջնելու շատ հնագույն վայրեր: Համոզված եմ, որ բոլորը կվերականգնվեն և ծառայելու են ընդհանուր մեծ գործին, որը Սուրբ Ղուրանը կտակեց մեզ. . .»

Ռուսաստանի Մուսուլմանների Հոգևոր վարչության նախագահ Ռավիլ Գայնուդինը

ԳՅՈՒԼԵՆԻ ՆԱՄԱԿԸ Ի. ԱԼԻԵՎԻՆ

Гюлена жертвам конфликта в Нагорном Карабахе

Я с превеликим сожалением узнал о конфликте в Нагорном Карабахе, регионе, расположенном между Азербайджаном и Арменией.

Я прошу у Аллаха милости к павшим в ходе конфликта мученикам, и желаю терпения и стойкости их близким и всему народу Азербайджана.

Я молю Наимилостивейшего и Наимилосерднейшего Господа о том, чтобы это недопонимание между двумя соседними странами как можно быстрее разрешилось мирным путем.

Фетхуллах Гюлен

Պակիստանի աջակցությունը թուրք-ադրբեջանական տանդեմին

Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ ի համերաշխություն Ադրբեջանի. շիայականությունից մինչև թյուրքականություն

ՎԱՐՁԿԱՆ ՋԻՀԱԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԱՐՑԱԽԸ ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ / «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐԻ»/ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ. ԳՈՐՇ ԳԱՅԼԵԼԻ ԴՊՐՈՑԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Մզկիթների վիճակը Արցախում և նրա շուրջ, Աղդամ

Հաշվետվություն

« Չինաստանի Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնության իրականացումը Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում» թեմայի երրորդ եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

(01.01.21- 31.03.21 թթ.)

Ծրագրի կատարող՝ պ.գ.թ. Աղավնի Ալեքսանդրի Հարությունյան

Գիտական այս ծրագրի հիմնական խնդիրներից է եղել ուսումնասիրության շրջանակում շարունակել թեմային վերաբերող անհրաժեշտ մասնագիտական գրականության և փաստաթղթերի հավաքումը: Հետազոտվող ծրագրի շրջանակներում շարունակվել է համապարփակ ուսումնասիրության իրականացումը 2013թ. Չինաստանի նախագահ Սի Ծինպինի կողմից գործարկված Նոր Մետաքսի ճանապարհ (ՆՄՃ) կամ "Մեկ գոտի, մեկ ուղի" (ՄԳՄՈՒ) նախաձեռնութան վերաբերյալ, որը բաղկացած է ցամաքային՝ Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտուց (ՄՃՏԳ) և ծովային՝ 21-րդ դարի Ծովային Մետաքսի ուղուց (ԾՄՈՒ): Այն նպատակ ունի Ասիան և Եվրոպան կապել միմյանց Միջին և Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի և Կենտրոնական Ասիայի միջոցով: Իրենց ռազմավարական դիրքի շնորհիվ Միջին Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան կարևոր հանգույց են Ասիան, Աֆրիկան ու Եվրոպան, ինչպես նաև երեք կարևորագույն տնտեսական ծովային շրջանները՝ *Հարավ-չինական ծովը, Պարսից ծոցն* ու *Միջերկրական ծովը*, միմյանց կապելու առումով: Նշենք, որ ՄԳՄՈՒ-ն նախատեսվում է իրականացնել մի շարք միջմայրցամաքային երկաթուղիների, խողովակաշարերի, նավահանգիստների, օդանավակայանների և ենթակառուցվածքային այլ նախագծերի ընդարձակ ցանցերի կառուցման միջոցով:

Նախորդ հաշվետվությունների մեջ անդրադարել ենք Չինաստանի կողմից ԾՄՈՒ-ի շրջանակներում Հնդկական օվկիանոսի ափերին, ինչպես նաև Պարսից ծոցում և Միջերկրական ծովում ռազմական կամ աշխարհաքաղաքական ազդեցությամբ չինական հենակետեր կամ «ռազմածովային կայաններ» ստեղծելու ռազմավարությանը, որը ստացել է «Մարգարտի շարան» անվանումը՝ միաժամանակ նույնացվելով «Երկակի նշանակությամբ լոգիստիկ հանգրվանների» հետ: Անդրադարձել ենք նաև դրանց

ստեղծման պատճառներին, հետապնդած նպատակներին և հավանական դժվարություններին, որոնց հետ կարող է հանդիպել Պեկինն այդ ծրագրերի իրականացման գործընթացում:

Հիշեցնենք, որ հետազոտության ընթացքում եկել էինք այն հետևության, որ "Մարգարտի շարան"-ի ռազմավարության իրականացմամբ Պեկինը ձգտում է հասնել տարածաշրջանում գերիշխող դիրքերի և հզոր տերության կարգավիճակի՝ Հնդկական օվկիանոսից մինչև Կարմիր ծով ու Սուեզի ջրանցք նավարկության ազատություն ձեռք բերելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ու Հյուսիսային Աֆրիկայում անվտանգության հաստատմամբ իր ներկայությունն ընդլայնելու նպատակով:

Ջիբութին Ծովային Մետաքսի ճանապարհի և “Մարգարտի շարան”-ի ռազմա-վարության շրջանակներում չինական ռազմաբազայի վերածված առաջին երկիրն է հետազոտվող տարածաշրջանում, որին նվիրվել է մեկ աշխատություն: 1979 թ. հունվարի 8-ին, Չինաստանի և Ջիբութիի միջև դիվանագիտական կապերի հաստատումից ի վեր, երկու երկրների միջև հարաբերությունները կայուն զարգացում և առաջընթաց են ապրել: Ջիբութին, որը հայտնի է որպես «աշխարհի ծովային մայրաքաղաք», 2000-ականներից դարձել է աֆրիկյան մայրցամաքի ծովային հաղորդակցություններին սպառնալիք ներկայացնող ահաբեկչական խմբավորումների դեմ պայքարի նպատակով ձևավորված միջազգային ուժերի ու կոալիցիաների (այդ թվում՝ չինական) գլխավոր հենակետը:

Վերջին տարիներին Ջիբութիի՝ իբրև Ասիան, Աֆրիկան և Եվրոպան միմյանց կապող առանցքային ծովային հանգույցի հանդեպ Չինաստանի աճող հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է միջազգային ծովային երթուղիների և նավահանգիստների նկատմամբ վերահսկողություն հաստատելու հարցում Պեկինի դրսևորած հավակնություններով: Այն Չինաստանի «ՄԳՄՈՒ» ռազմավարության մաս է կազմում, որի ծովային բաղկացուցչի՝ «21-րդ դարի Ծովային Մետաքսի ճանապարհի» երկայնքով նախատեսված երթուղիների կայունության և անվտանգության ապահովման նպատակով Պեկինը «հյուսում» է լոգիստիկ կենտրոններից և հենակետերից կազմված յուրահատուկ «Մարգարտի շարան»: Ջիբութիում կառուցված չինական առաջին ծովային ռազմահանգրվանը համարվում է այդ «շարանի» կարևոր ծայրակետերից մեկը:

«Մարգարտի շարան»-ի թեմայի ուսումնասիրությանը նվիրված “«***Մարգարտի շարան»-ի ռազմավարությունը՝ որպես Չինաստանի Ծովային Մետաքսի ճանապարհի նախաձեռնության իրականացման միջոց***”, “***Մերձավոր Արևելքը և Հյուսիսային Աֆրիկան՝ որպես չինական “Մարգարտի շարան”***-ի **ռազմավարության մաս**”, և “***Ջիբութի. Չինաստանի առաջին արտերկրյա ամրոցը Ծովային Մետաքսի ճանապարհի ռազմավարությունում***” վերնագրերով աշխատություններըտպագրվել են:

Տպագրվել է նաև “***Չինաստանի փափուկ ուժի քաղաքականությունը Միջին Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում***” վերնագրով աշխատությունը: Այն նվիրված է Պեկինի հանդեպ գրավչություն ստեղծելու, տարածաշրջանում չինական ներկայությունն ապահովելու և ծավալապաշտությունն ընդլայնելու նպատակով Չինաստանի փափուկ և կոշտ ուժերի համակցման միջոցով Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի երկրներ “Պեկինյան կոնսենսուսի” և զարգացման չինական մոդելի արտահանման թեմային:

Հետազոտության նախորդ փուլում առանձին ուսումնասիրվել են նաև Թուրքիան ու Իսրայելը, որոնք իրենց ռազմավարական և աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքի շնորհիվ ընդգրկվել են ՄԳՄՈՒ-ի ծովային և ցամաքային ճանապարհների կառուցման նախագծերում:

Թուրքիային նվիրված՝ “***Չինական Գոտի ու ուղի նախաձեռնությունը և Թուրքիայի Միջին միջանցքը***” վերնագրով աշխատությունը տպագրվել է, որին նվիրված զեկույցով ելույթ է իրականացվել արտերկրյա միջազգային գիտաժողովին:

Իսրայելին նվիրված “***Չինաստան և Իսրայել. Զարգացող հարաբերություններ Գոտու և ուղու նախաձեռնության շրջանակներում***” վերնագրով հոդվածը ևս տպարգրվել է:

Երկրոդ եռամսյակում հիմնականում ուսումնասիրվել է Չինաստանի և Իրանի միջև Համապարփակ ռազմավարական գործընկերության վերաբերյալ պայմանագրի ստորագրման ու ՄԳՄՈՒ նախաձեռնության շրջանակներում համագործակցության խորացման վերաբերյալ թեմաները: Ներկայումս Իրանը, որն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ աշխարհառազմավարական և քաղաքական առճակատման նոր "Մեծ խաղում" մերձավորարևելյան հիմնական դերակատարներից է, կարևոր գործոն է դարձել նաև Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում Չինաստանի

աշխարհաքաղաքական նկրտումներում: Ավելին, որպես Մերձավոր Արևելքի անհանգիստ տարածաշրջանում անվտանգության համեմատաբար կայուն գործընկեր, Թեհրանը չինական Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնության շրջանակներում կարող է դառնալ Կենտրոնական Ասիան, Մերձավոր Արևելքը և Եվրոպան միմյանց կապող հիմնական օղակներից մեկը:

Հարկ է նշել, որ Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնությունը հենց սկզբից ջերմորեն ընդունվեց Թեհրանի կողմից: Լինելով Ասիական ենթակառուցվածքների ներդրումային բանկի (AIIB) հիմնադիրներից մեկը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը 2014թ. ապրիլի 7-ին միացավ բանկին ՝ որպես 34-րդ անդամ: 2016 թ. հունվարի 23-ին Թեհրանում Չինաստանի Նախագահ Սի Ծինպինի հետ բանակցություններից հետո Իրանը և Չինաստանը պայմանավորվեցին ընդլայնել երկկողմ հարաբերությունները և առևտուրը հասցնել 600 միլիարդ ԱՄՆ դոլարի առաջիկա 10 տարիների ընթացքում, ինպես նաև ստեղծել ռազմավարական հարաբերություններ, որն արտացոլված է 25 տարվա համապարփակ փաստաթղթում: Իրանը պատրաստակամություն հայտնեց մասնակցել Չինաստանի ԾՄՃ և ՄՃՏԳ-ով առևտրային ուղիների կառուցման նախագծերին, որոնք կարող են տարածաշրջանային մակարդակով սպասարկել Իրանի քաղաքական, տնտեսական, աշխարհառազմավարական և անվտանգային շահերը: Ստորագրվել է 17 համաձայնագիր՝ երկաթուղու, նավահանգիստների, էներգետիկայի, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների, ֆինանսների, կապի, հեռահաղորդակցման և այլ ոլորտներում համագործակցության և փոխադարձ ներդրումների ընդլայնման ուղղությամբ:

Նշենք, որ 2015 թ. Ուֆայում կայացած Շանհայյան համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթնաժողովում ՇՀԿ-ի անդամ և դիտորդ պետությունների ղեկավարները, որոնց թվում՝ Վ. Պուտինը, Սի Ծինպինը և Հ. Ռուհանին, կարևորեցին ՇՀԿ-ի շրջանակներում միասնական տրանսպորտային համակարգ ստեղծելու նախաձեռնության հեռանկարները և ընդլայնված նիստում քննարկեցին Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) և ՄՃՏԳ-ն համակցելու վերաբերյալ ծրագրերը: Այս առումով, կարևորվում է ԵԱՏՄ ոչ-անդամ երկրների հետ առևտրի գոտիների ստեղծման գործընթացում Իրանի ու ԵԱՏՄ-ի միջև կնքված և 2019թ.

հոկտեմբերի 27-ից ուժի մեջ մտած ազատ առևտրի գոտու մասին միջանկյալ համաձայնագիրը:

2020թ. հունիսին երկու երկրների միջև ստորագրվեց «Չին-իրանական համապարփակ ռազմավարական գործընկերություն» կոչվող 18 էջանոց փաստաթուղթը: Պեկինի և Թեհրանի միջև առևտրի, էներգետիկայի, ենթակառուցվածքների, հեռահաղորդակցության և նույնիսկ ռազմական համագործակցությունն ընդգրկող դեռևս կնքվելիք համաձայնագիրը ենթադրում է, որ Չինաստանը պարտավորվում է ընդհանուր առմամբ 400 միլիարդ ԱՄՆ դոլար ներդնել Իրանի բանկային, տրանսպորտային և զարգացման ոլորտներում: Համաձայնագրի հիմնասյունը պետք է լինի առաջիկա հինգ տարվա ընթացքում Չինաստանի կողմից իրանական վառելիքաէներգետիկ համալիրում 280 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրումների իրականացումը: Պայմանագրի համաձայն՝ Պեկինն ակնկալում է առաջիկա 25 տարվա ընթացքում զգալի զեղչերով իրանական նավթի կանոնավոր մատակարարումներ ապահովել:

Համաձայնագիրը ներառում է նաև Իրանում մի քանի նավահանգիստ զարգացնելու ծրագրեր, որոնց համաձայն Կիշ կղզին կամ ռազմավարական կարևորագույն Բանդար-է-Ջասկ նավահանգիստը չինական կողմին երկարաժամկետ վարձակալության կտրամադրվեն: Կապահովվի նաև Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակի (PLA) 5,000 զինծառայողի տեղակայումը Իրանի տարածքում (որոշ մասը՝ Պարսից ծոցի շրջանում՝ Չինաստանի ծովային ուժերն ամրապնդելու հեռանկարով և չինական անձնակազմի քանակը մեծացնելու հնարավորությամբ), որոնք կապահովեն նավթի, գազի և նավթաքիմիական արտադրանքի տարանցման անվտանգությունը դեպի Չինաստան: Բանդար-է- Ջասկում հենակետի առկայությունը Չինաստանին թույլ կտա ոչ միայն վերահսկել Բահրեյնում տեղակայված ԱՄՆ հինգերորդ նավատորմը, այլև Ջիբութիի և Գվադարի (Պակիստան) նավահանգիստներում ներկայության ապահովման հետ մեկտեղ կարող է մեծացնել Չինաստանի դիրքերը Հնդկական օվկիանոսի տարածաշրջանում:

Համաձայնագրով առաջիկա հինգ տարիներին նախատեսվում է ևս 120 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրում կատարել Իրանի տրանսպորտային և արդյունաբերական ենթակառուցվածքներում: Գրեթե 100 համատեղ չին-իրանական նախագիծ ընդգրկվելու են ՄԳՄՈՒ նախաձեռնությունում: Այստեղ կկառուցվեն օդանավակայաններ,

արագընթաց երկաթուղիներ, ծովային նավահանգիստներ, կամուրջներ, նավահանգիստներ, ճանապարհներ և այլ ենթակառուցվածքային օբյեկտներ: ՉԺՀ-ը զարգացնելու է ազատ առևտրի գոտիներ Մակուում՝ Իրանի հյուսիսում, Պարսից ծոցի ափին՝ Աբադանում (որտեղ Շաթ-ալ-Արաբը թափվում է Պարսից ծոց) և Քեշմ կղզում՝ բուն ծոցում: Կարևոր նախաձեռնությունների թվում են Հարավ-Հյուսիս միջանցքի (Չաբահար-Կենտրոնական Ասիա), Հարավ-Արևմուտք միջանցքի (Չաբահար և Բանդար Աբբաս-Թուրքիա և Ադրբեջան) և Պակիստան-Իրան-Իրաք-Սիրիա «ուխտագնացության երկաթուղու» զարգացումը:

Հնդկական օվկիանոսի խորջրյա Չաբահար նավահանգստի դիրքը Հյուսիս-հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի (INSTC) ուղղությամբ, մի կողմից՝ Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային, Կենտրոնական Ասիայի և Կովկասի միջև, մյուս կողմից՝ Հարավարևելյան Ասիայի, Հեռավոր Արևելքի, Օվկիանիայի և Պարսից ծոցի երկրների միջև տարանցիկ հարաբերություններով զգալի առավելություն են ապահովում Թեհրանին՝ ՆՄՃ-ին մասնակցության համար:

Չին-իրանական համապարփակ ռազմավարական դաշնագիրը կարող է թույլ տալ Չինաստանին, որն արդեն ռազմաբազա ունի Ջիբութիում, ռազմական ներկայություն հաստատել Իրանի և Պակիստանի ափերին:

Երրորդ եռամսյակում ավարտվել է վերոնշյալ թեմայով ուսումնասիրությունը, որին նվիրված "***Առյուծը և վիշապը. Չին-իրանական ռազմավարական գործընկերության նոր փուլը***" վերնագրով աշխատությունը հանձնվել և արդեն հաստատվել է տպագրության:

Չորրորդ եռամսյակում ավարտվել և տպագրության է հանձնվել Սիրիայի ժգնաժամի և Մետաքսի ճանապարհի իրականացման ուղղությամբ Չինաստանի քաղաքականությանը նվիրված աշխատանքը՝ "***Սիրիական ճգնաժամը և Չինաստանը. Սիրիայի հետպատերազմյան վերականգնումը Չինաստանի Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնության շրջանակներում" ("The Syrian Crisis and China: Post-War Restoration of Syria Within the Chinese New Silk Road Initiatives***"):

Այս հետազոտության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում վերջին տասնամյակում միջազգային հանրության համար նոր և միանգամայն լուրջ

մարտահրավեր դարձած սիրիական զարգացումներին: Ուսումնասիրվել են հետճգնաժամային Սիրիայի տնտեսության վերականգնման ուղղությամբ Չինաստանի իրականացրած մարդասիրական, վերակառուցման և ենթակառուցվածքային ծրագրերը:

Պեկինը սկզբից ևեթ արտահայտվել է այդ երկրների ներքին գործերին չմիջամտելու և նրանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը պահպանելու օգտին՝ բացառելով ուժի կիրառման և բռնի իշխանափոխության հնարավորությունը: Պեկինը գտնում էր, որ սիրիական կառավարության բռնի իշխանափոխությունը կարող է հանգեցնել տարածաշրջանային աղետի, ուստի անհրաժեշտ էր համարում սիրիական ճգնաժամի լուծման համար քաղաքական վերափոխման նոր մոդելի որոնումը: Պեկինում կարծում էին, որ Արևմուտքի կողմից պատժամիջոցների և տնտեսական այլ միջոցառումների կիրառումն այդ երկրներում Արևմուտքի հանդեպ բարեկամաբար տրամադրված վարչախմբերի իշխանության բերելու նպատակ է հետապնդում: Ըստ Պեկինի՝ Վաշինգտոնը ոչ միանշանակ վերաբերմունք էր դրսևորում տարածաշրջանի երկրների նկատմամբ՝ իր շահերից թելադրվող երկակի ստանդարտների քաղաքականություն վարելով: Մինչդեռ Չինաստանը, ի տարբերություն ԱՄՆ–ի, բավականաչափ զուսպ կեցվածք էր դրսևորում տարածաշրջանային զարգացումների նկատմամբ՝ խուսափելով ուղղակի միջամտությունից և հնարավոր բախումներից: Պեկինը համոզված էր, որ իր գլխավոր ռեսուրսը ժամանակն է, որն աշխատում է իր բուռն աճող տնտեսության օգտին, մինչդեռ ԱՄՆ–ն՝ ապավինելով իր հզորությանն ու ազդեցությանը, ավելի ակտիվ և համարձակ էր խաղում: Պեկինում զղջում էին, որ ՄԱԿ–ի ԱԽ–ի կողմից Լիբիայի քաղաքացիական բնակչության պաշտպանության վերաբերյալ ընդունված բանաձևը, որին Չինաստանը Ռուսաստանի հետ միասին ձեռնպահ քվեարկեց, իրականում Լիբիայի կառավարության դեմ ռազմական գործողությունների իրականացման արտոնագիր դարձավ: Ուստի Մոսկվան և Պեկինը այդուհետ որոշեցին կանխել ինչպես ՄԱ–ում, այնպես էլ այլ տարածաշրջաններում նման սցենարի կրկնումը: Երկու երկրները շարունակ վետո էին դնում Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ–ի ԱԽ–ի բանաձևերի վրա՝ համոզված լինելով, որ ՆԱՏՕ–ն մանիպուլյացիայի է ենթարկում ԱԽ–ն՝ Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտությունը վավերացնող բանաձև կորզելու նպատակով: Որոշ փորձագետներ էլ գտնում են, որ իրականում ՉԺՀ–ի շահերը մեծ չեն Սիրիայում,

պարզապես Պեկինը՝ որպես Ռուսաստանի հավատարիմ դաշնակից, փորձում էր Սիրիայի հարցում Ռուսաստանին սատարելու դիմաց վերջինիս աջակցությունն ապահովել Հյուսիսային Կորեայի հետ կապված խնդրում՝ վերջինիս միջուկային հավակնությունները զսպելու ուղղությամբ ավելի մեծ վճռականություն ցուցաբերելու ճնշման տակ գտնվելու պատճառով: Բացի այդ՝ Չինաստանը մտավախություն ուներ, որ արաբական վարչախմբերի անկումը «Երկնատակի» ներսում քաղաքացիական ընդվզումների ոգեշնչման աղբյուր կարող էր ծառայել: Գործնականում Պեկինը հարաբերություններ հաստատեց նաև Սիրիայի ընդդիմության հետ, ինչն արվել էր արդեն Լիբիայի, Եգիպտոսի և հյուսիսաֆրիկյան այլ երկրների դեպքում:

Այսպիսով, ճգնաժամի ընթացքում Չինաստանը Ռուսաստանի և Իրանի հետ մեկտեղ դարձավ Սիրիայի գործերում ներգրավված հիմնական դերակատարներից մեկը: Պեկինը Սիրիայում նշանակեց իր հատուկ բանագնացին՝ խաղաղ բանակցությունների գործընթացի խթանման նպատակով և հայտարարեց Դամասկոսին մարդասիրական օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև երկրի վերակառուցմանը մասնակցելու մտադրության մասին: Պեկինը Սիրիա ուղարկեց նաև ռազմական հրահանգիչների և աշխատանքներ սկսեց հակաահաբեկչական համատեղ մեխանիզմներիստեղծման և իրագործման ուղղությամբ:

Համաշխարհային տրանսպորտային և նյութատեխնիկական գործունեության ակտիվացման համատեքստում Սիրիան դառնում է Չինաստանի ՄԳՄՈՒ նախաձեռնության կարևոր ծայրակետերից մեկը: Սիրիայի ափերը կարող են Եգիպտոսի, Ջիբութիի և Իսրայելի նավահանգիստներում չինական ներդրումների միջոցով Պարսից ծոցը, Արաբական ծովը, Կարմիր ծովը և Միջերկրական ծովը կապող «արդյունաբերական նավահանգստի» դեր խաղալ: Ներկայումս ռուսական բազաներ համարվող սիրիական Տարտուս և Լաթաքիա միջերկրածովյան նավահանգիստները, իբրև Եվրոպա մուտք գործող չինական ապրանքների հիմնական ելակետեր, հետաքրքրություն են ներկայացնում Եվրասիան Չինաստանի հետ կապող չինական բազմամիլիարդանոց ենթակառուցվածքների, հեռահաղորդակցությունների և էներգետիկ ծրագրերի և նախաձեռնությունների տեսանկյունից: Եթե Պեկինին հաջողվի լրացնել Սիրիայում ԱՄՆ-ի և ԵՄ-ի թողած վակուումը և ավելի համակարգված կերպով ընդլայնել իր վերահսկողությունը Սիրիայի նկատմամբ, ապա վերջինս "ետնամուտք"

կարող է ծառայել դեպի արևմուտք Պեկինի ծավալապաշտության իրականացման ճանապարհին:

Այնուամենայնիվ, չնայած ճանապարհաշինության և նավթի արդյունահանման ոլորտում չինական բիզնեսի կողմից ներդրումներ կատարելու պատրաստակամությանը, վերջիններիս հիմնական նախապայմանը Սիրիայում քաղաքական կայունությունն ու բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումն է, որի համար դեռ երկար և համառ պայքար կարող է ընթանալ: Եվ քանի որ Սիրիայում պատերազմի ավարտով Չինաստանի համար այդ սպառնալիքը շատ ավելի իրական է դառնում, ուստի Պեկինի համար Դամասկոսի հետ փոխգործակցության շատ ավելի կարևոր ոլորտ է դառնում ահաբեկչության դեմ պայքարը: Այն կապված է հատկապես ցամաքային և ծովային Մետաքսի ճանապարհների զարկերակները «սեղմող» Իրանի Քրդստանի և Բալուչիստանի տարածքներում գործող զինյալների ակտիվության դեմ պայքարի հետ:

Խնդիրն այն է, որ 2012թ. մայիսից Սիրիա են տեղափոխվել «Արեւելյան Թուրքեստանի Ազատագրական շարժման» (ETIM) մարտիկները՝ Ասադի վարչախմբի դեմ պայքարում «ալ-Ղաիդա»-ին եւ ծայրահեղական այլ կազմակերպությունների միանալու նպատակով: Պեկինին խիստ մտահոգում է ՄԱ-ից Կենտրոնական Ասիա (ԿԱ) եւ Արեւելյան Թուրքեստան իսլամական ծայրահեղականության ալիքի տարածման հնարավորությունը, որը կարող է լուրջ սպառնալիք ներկայացնել ոչ միայն ՉԺՀ-ի անվտանգությանը՝ վերջինիս արեւմտյան սահմանի երկայնքով, այլեւ Հարավային Ասիայի խաղաղությանն ու կայունությանը: Թերեւս այդ պատճառով Պեկինը խստացրեց իր վերահսկողությունը Չինաստանի Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի նկատմամբ, որտեղ բնակվում են մոտ 22 մլն սուննի մուսուլմաններ, ներառյալ 10 մլն ույղուր, որոնց մեջ, անշուշտ, քիչ չեն իսլամիստ արմատականները: Մերձավոր Արևելքում եւ Կենտրոնական Ասիայում արմատականության եւ ծայրահեղականության աճի ֆոնի վրա Պեկինը ձգտում է կանխել եւ սահմանափակել չին մուսուլմանների, գլխավորապես՝ ույղուր անջատողականների ակտիվության հնարավոր դրսեւորումները:

Հետազոտության **չորրորդ եռամսյակում** ուսումնասիրվել են նաև Պարսից Ծոցի՝ Իրաքի ու ՊԾՀԽ-ի (Պարսից Ծոցի Համագործակցության Խորհդրի) անդամ երկրների (Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման, Կատար, Քուվեյթ,

Բահրեյն), Լևանտի երկրների (Լիբանան, Հորդանան, Պաղեստին), ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի երկրների (Եգիպտոս, Լիբիա, Ալժիր, Թունիս, Մարոքքո, Եթովպիա, Սուդան) հետ Չինաստանի ՄԳՄՈՒ նախաձեռնության շրջանակներում իրականացվող նախագծերն ու ծրագրերը՝ էներգետիկ, ենթակառուցվածքային, տրանսպորտային ու հեռահաղորդակցության, առևտրա-ներդրումային և գիտատեխնիկական ոլորտներում: Այս թեմաների վերաբերյալ ևս երկու հոդված առաջիկա երկու ամսվա ընթացքում կհանձնվի տպագրության:

Ավարտին են հասցվել նաև մենագրության (մոտ 300 էջ) հետ կապված աշխատանքները, որը գտնվում է տպագրության փուլում:

<u>Հետազոտության ընթացքում տպագրված հոդվածներն են՝</u>

1. ***"String of Pearls" Strategy as a Measure for the Implementation of The Chinese Maritime Silk Road Initiative***, Международный научный журнал "Современные востоковедческие исследования", Казань, International Science Journal "Modern Oriental Studies", Kazan, Vol. 2, No. 2, 2020, pp. 101-121. ISSN. Российский индекс научного цитирования (РИНЦ) https://www.academia.edu/43643483/_STRING_OF_PEARLS_STRATEGY_AS_A_MEASURE_FOR_THE_IMPLEMENTATION_OF_THE_CHINESE_MARITIME_SILK_ROAD_INITIATIVE
2. ***China's Soft Power Policy in the Middle East and North Africa***, Collection of Papers from the Fifth International Conference on Chinese Studies THE SILK ROAD, Organized by Confucius Institute in Sofia 30-31 May 2019, Confucius Institute in Sofia, 2020, pp. 153-163. ISSN. https://www.academia.edu/43745431/China_s_Soft_Power_Policy_in_the_Middle_East_and_North_Africa; https://confuciusinstitute.bg/wp-content/uploads/2020/07/The-Silk-Road-2019.pdf
3. ***China and Israel: Evolving Relationship Within the Belt and Road Initiative,*** Asian Journal of Middle Eastern and Islamic Studies, Vol. 14 Issue 3, Taylor and Francis Group, Shanghai International Studies University, 2020, pp. 410-429. ISSN https://www.tandfonline.com/eprint/2W2BJ45ANTEUHS5IFGSH/full?target=10.108

0/25765949.2020.1808378;
https://www.tandfonline.com/eprint/2W2BJ45ANTEUHS5IFGSH/full?target=10.1080/25765949.2020.1808378#aHR0cHM6Ly93d3cudGFuZGZvbmxpbmUuY29tL2RvaS9wZGYvMTAuMTA4MC8yNTc2NTk0OS4yMDIwLjE4MDgzNzg/bmVlZEFjY2Vzcz10cnVlQEBAMA==;
https://www.academia.edu/44247778/China_and_Israel_Evolving_Relationship_within_the_Belt_and_Road_Initiative_and_Road_Initiative

4. ***Chinese Belt and Road Initiative and Turkey's Middle Corridor***, Международный научный журнал "Современные востоковедческие исследования", Казань, International Science Journal "Modern Oriental Studies", Kazan, Vol. 2, No. 5, 2020, pp. 76-91. ISSN. Российский индекс научного цитирования (РИНЦ). https://www.academia.edu/44262980/Chinese_Belt_and_Road_Initiative_and_Turkey_s_Middle_Corridor
5. ***Djibouti: China's First Overseas Stronghold in The Maritime Silk Road Strategy***, Eastern Asian Studies, Vol. IV, IOS NAS RA, Yerevan, 2020. ISBN. https://www.academia.edu/44360330/DJIBOUTI_CHINAS_FIRST_OVERSEAS_STRONGHOLD_IN_THE_MARITIME_SILK_ROAD_STRATEGY?fbclid=IwAR0tj9rd4KKd9U2J5bDKdT4z4PmBwP1MFxBF6A5grspdRgCtXXC5hATkx6s
6. ***Middle East and North Africa as a Part of Chinese String of Pearls Strategy***, ORBIS LINGUARUM, Vol. 18, Issue 3, Езиков свят, Филологическия факултет при ЮЗУ „Неофит Рилски", Благоевград, България, 2020, pp. 60-71. (DOI: CEEOL, ERIH PLUS, Ulrich's Periodicals Directory, RISC and Scopus).

Հետազոտության չորրորդ փուլի համար տպագրության հաստատված հոդվածներն են՝

1. ***The Lion and The Dragon: A New Stage in Sino-Iranian Strategic Partnership***, Международный научный журнал "Современные востоковедческие исследования", Казань, International Science Journal "Modern Oriental Studies",

Kazan, Vol. 2, No. 6, 2021. ISSN. Российский индекс научного цитирования (РИНЦ).

2. *The Syrian Crisis and China: Post-War Restoration of Syria Within the Chinese New Silk Road Initiatives,* Asian Journal of Middle Eastern and Islamic Studies, Taylor and Francis Group, Shanghai International Studies University, 2021.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ժողովածուի վերաբերյալ, որում տպագրվել է թեմային առնչվող հոդված՝

- ***Տպագրվել է «Արեվելասասիական ուսումնասիրություններ» խորագրով ժողովածուի հերթական հատորը***, Azg.am, 2020-11-12. https://azg.am/AM/2020111311?fbclid=IwAR1pGjbf3KQ6WNdk21yW9AfNq59xfnhlN8w2HBnkbuqC6pAPT_B9d-Blw0k

ՀԵՌԱՀԱՐ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝

1. XIII Международная научно-практическая конференция «РОССИЯ – КИТАЙ: ИСТОРИЯ И КУЛЬТУРА», Институт международных отношений Казанского (Приволжский) Федерального Университета, Казань, 8-10 октября 2020 г.

Զեկույցի թեման՝ Chinese Belt and Road Initiative and Turkey's Middle Corridor.

Ծրագրի ղեկավար՝ պ.գ.թ. Աղավնի Հարությունյան
ԳԱԱ ԱԻ Միջազգային հարաբերությունների
բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար
առաջատար գիտաշխատող